ՍՏ. ԶՈՐՅԱՆ

I

ՆՈՎԵԼԱՆԵՐ

891.99
Զ-83

ՀՐԱՏ — 1931

19 NOV 2011





891.99
Չ-83
93

ՍՏ. ՉՈՐՑԱՆ

ՅԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

ՍՏ. ՉՈՐՑԱՆ

ՆՈՎԵԼԼՆԵՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ԼՐԱՑՐԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

12 APR 2013

30083

Պետհրատի տպարան
Գրաո. № 6292 (բ)
Հրատ. № 1570
Պատ. № 1653
Տիր. 3.000.

105434



Բանաստ

ՑԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Ջազդր է հիշել յերբեմն մանկութեան որերը։

Ցերը նստում ես ու մտաբերում, թե այս-ինչ տարին այս պատահեց, այն-ինչ որը՝ այս, զգում ես մի անծայր սիրտանք։ Մանկութեան ամեն մի դեպք, յուրաքանչյուր մի անցք, լինի դա չնչին, ուրախ թե տխուր, անուշ է թվում։

Մանկութեանս հիշելով, չգիտեմ ինչու, նրա բոլոր որերն էլ ինձ յերևում են լուսազարդ, յերկինքը կապույտ, արտերը սիրող, դեմքերը ժպտուն։

Մանկութեանս հիշելով, դարձյալ չգիտեմ ինչու, առաջին պահ տեսնում եմ միայն փոքրիկ, անհանգիստ մանուկներ, որ վազվզում են փայտե ձիեր հեծած. տեսնում եմ կաչաղակի բներ ծառերի վրա, որ հեռվից նմանում են ճղների արանքն ընկած հովվի փափախի. սալյակները՝ բարտիների կառաբին, որ ձագ ուած մեղուների պես սևացրել են ճղները, և նորածին հոլթեր, որ պոչները ցցած վազում են փողոցներով։ Տեսնում եմ սագերի դեղին ձագեր, որ անվախ լողում են ջրերի յերեսին, և յես նրանց նայելով զարմանում եմ, որ այդքան փոքր են ու չեն խեղդվում. տեսնում եմ մեր ծեր շանը շեմքի մոտ նստած, որ դունչը թաթերին դրած՝ աչքի տակով հսկում է անց ու դարձողին։ Շուից անմիջապես հետո տեսնում եմ մեր շեկ, յերկար մազերով և հավաքնից շարունակ

ձու գողացող կատվին, վոր մռռոցով ննջում է տատիս ծնկանը, և, վերջապես, իմ ծեր, իմ բարի տատին, վոր ձմռան յերեկոյին, ոջախի առջև նստած, իր սև տեր-ողորմյան քաշելով, պատմում է ինձ դևերի, քաջքերի մասին, իսկ յես՝ մի փոքրիկ ու մխամիտ տղա՝ հափշտակությունից ու յերկյուղից բերանս բաց, ունկընդրում եմ նրան։

Բայց այս բոլորից հետո՝ տեսնում եմ անհայտության խավարից—վաղուց մոռացված դերեզմաններից հանդես են գալի հարազատ ու ծանոթ դեմքեր և իրրև մի հին, վաղեմի յերգի կտոր, ականջիս հնչում է նրանց կենդանի ըրուլյը, ու յես, կարծես աշկարա, նրանց բերանից լսում եմ սիրելի խոսքեր, մոռացված խոսքեր։

Լսում եմ, թե ինչպես տանուտեր Արսենը հայհոյում է հորս, ծեր քահանա տեր-Սարգիսը գանգատվում է իր յեկամուտի պակասությունից, քեռի Սիմոնը խոսում է անտառում թագնված դանձի մասին, իսկ հարևան Պետրոսը հավան չի կենում յերկաթուղուն։

Մանկությունս մտաբերելով, յես առանձնապես եմ հիշում հարևան Պետրոսին ու յերկաթուղին, վորի առաջին սուլոցը մեր գյուղում հնչեց այնպես, ինչպես վոր, ս. Գրքի ասելով, Գաբրիելյան փողը պիտի հնչի ահեղ դատաստանի ըրը՝ իրարանցում գցելով մարդկանց մեջ։

Հարևան Պետրոսին յես հիշում եմ մանավանդ այն ժամանակ, յերբ յերկաթուղով վորևե տեղ եմ գնում կամ դժգոհություն եմ լսում յերկաթուղու մասին։

Այս յերկուսին իրար հետ հիշելուս պատճառն այն է, վորովհետև սրանք... Բայց այդ մասին ավելի լավ է սկզբից պատմեմ։

Ինչպես հայտնի յե, առաջներում, նախքան յերկաթուղին, մեր գյուղացիները ճանապարհորդում էին ձիերով, ճոռացող սայլերով և աղմկարար ու ճանապարհներից փոշու ամպեր բարձրացնող փուրգոններով։ Ամենից շատ, իհարկե, փուրգոններով։

Ինչպես մեր շրջանի բոլոր ավաններում ու շեներում, այնպես էլ մեր գյուղում կային մի քանի փուրգոններ, վորոնց գործը այն եր լինում, վոր մարդ էին տեղափոխում գյուղից քաղաք, քաղաքից գյուղ կամ գյուղացիներին տանում էին սուրբ Գևորգ ուխտի։ Այդ փուրգոնատերերը բոլորն էլ իրար նման մարդիկ էին—յերկար միրուքով և մալականի ձևով կտրած մազերով։ Նրանք իրենց հագուստներով էլ մի քիչ նման էին մալականի և հեշտությամբ չոկվում էին գյուղացիներից, ինչպես գարին ցորենից։

Այդ փուրգոնատերերից մեկն էլ մեր հարևան Պետրոսն եր։ Նա էլ հագնվում եր մալականի պես, մազերը կտրում եր մալականի նման և յերեխ նրա փափախը, սև դեմքն ու սև մազերը չլինեին, կարելի յեր կարծել, վոր նա իսկապես մալական է։

Լավ մարդ եր հարևան Պետրոսը։

Ցերը իր քառաձի փուրգոնով նա վերադառնում եր քաղաքից, մենք՝ յերեխաներս աղմուկով ընդառաջ էլինք գնում նրան և ծառս լինում փուրգոնի ճաղերին։ Մեր այդ խանդավառությունը նկատելով, նա զրպաններից հանում եր կանֆետ ու խնձոր և ձայն ձեզ, լակոտներ» ասելով, ցրում գետնին։ Մենք, իրար թակելով, հավաքում էլինք կանֆետն ու խնձորը և գնում շրջապատում նրան իր փառը՝ լսելու, թե ինչ

լավ լավ բաներ պիտի պատմի, կամ տեսնելու, թե ինչ
ե բերել քաղաքից։

Ցավ այնպիսի բաներ եր բերում նա քաղաքից իր
տղաների համար, վոր չես միշտ նախանձում էլի նրանց։
Իր տղաների համար նա բերում եր յերբեմն ճաւավոր
կոշիկներ, շվի, ծոպավոր գոտի, թյուրքական ֆես և,
վերջապես, այնպիսի բաներ, վոր իմ հայրը յերբեք չեր
առնում ինձ համար... Մի խոսքով՝ հարևան Պետրոսը
շատ եր սիրում իր յերեխաներին։ Բայց նա ավելի
սիրում եր իր փուրգոնը և ձիերին, և ամեն անգամ
պարծենում եր, վոր իր փուրգոնի և ձիերի նման չի
գտնվի վողջ նահանգում։

— Հապա. մերը չմնոնի Պետրոսի ձիերի,— ասում
եր նա,—նրանց նման ձի վորտեղ կա... Սրանք հրե-
ղեն են, վոչ թե ձիեր... Մի անգամ Ցերևանի ճամպին
ամենքի ձիանքն էլ հոգնեցին, վեր թափվեցին, իսկ
իմոնք, աչքով չտանք, ենպես էլին գնում, վոնց վոր
թևավոր,—ֆը՛ռռռ... Մալադեց...

Ու այս ասելով, հարևան Պետրոսը գոհունքյամբ
ծծում եր ծխամորճը և աչքերը ծոր տալի։

Նա,—մռռաց ասել,—մի սովորություն ուներ.
միշտ մեր տուն կգար և ձմռան յերկար յերեկոներին
հորս հետ կնստեր սջախի առջև ու զրույց կաներ զա-
նազան բաների վրա և ամեն խոսքի վերջում կկրկներ.

— Եսպես բաներ, հարևան...

Մի անգամ, շատ լավ միտս է (և ինչպես միտս
չլինի այդ արժանահիշատակ որը), այդպիսի մի զրույ-
ցի ժամանակ հայրս ասաց նրան.

— Պետրոս, հիմի ձեր գործը վատ կլինի, ասում
են, յերկաթի ճամպա պետք է գա...

— Բարով, հազար բարի,— ասաց հարևան Պետ-
րոսն անտարբեր,—գա էլ, գնա էլ. ինձ ինչ...

— Վոնց թե,— ասաց հայրս,—սիրը եղ յերկաթի
ճամպեն վոր գա, նրանից հետո ամեն բան՝ մարդ,
ապրանք՝ մաշինով կտանեն-կբերեն, ենպես վոր էլ
փուրգոնի գործ քիչ կլինա...

Այս խոսքերի վրա հարևան Պետրոսը չերուխը
հանեց բերանից և զարմացած՝ հորս նայեց։

— Վոնց թե,— ասաց նա, լսածը կարծես լավ
չհասկանալով,—մաշինեն փուրգոնի բանը կարա՞ անի։

— Իհարկե,— պատասխանեց հայրս,—մաշինեն
ենպես բաներ և անում, վոր փուրգոնն ըսկի չի կա-
րող անել։

— Ե՛հ, դու էլ բան ես ասում,—խնդաց հարևան
Պետրոսը և նորից չիբուխը կոխեց բերանը։

— Ցես քեզ հաստատ բան եմ ասում,— ասաց
հայրս և սկսեց բացատրել, թե յերկաթուղին ինչեր և
անում։

Նա ասում եր, թե ինքը լրագրում կարդացել է
(հայրս լրագիր եր ստանում), վոր այդ գնացքը մեր
խոտի ամբողջ դեզը մի որում կարող է տանել «մին-
չև Ֆրանգստան», իսկ մեր ամբողջ գյուղը իրա տա-
վարով ու մարդկանցով կտեղավորի իր մեջ։ Նա ուրիշ
շատ բաներ էլ պատմեց, բայց դրանցից միտս է այն
խոսքը, թե գնացքը կարող եր հարևան Պետրոսի փուր-
գոնն իր ձիերով, ջրի դուլով ու զարու խախալով մի-
քանի րոպեում թռցնել քաղաք։

Հորս խոսքերը լսելով, յես զարմանում էլի, թե
ինչպես կարելի յե փուրգոնն իր ձիերով տանել այդ-
պես. ապա այդ գնացքը չի կոտրվի՞, կամ ձիերը նրան

քացի չէն տա։ Մինչ կես ղարմանում էլի այսպես, հարևան Պետրոսը, ծխամորճը քաշելով, բեղի տակ ծիծաղում էր հորս խոսքերի վրա։ Ցավ կերը հայրս վերջացրից իր բացատրությունը, նա ծխամորճը հանեց բերանից, մոխիրը թափ տվեց ոջախի մեջ ու ղարձավ հորս.

— Հը՛մ, մերը մեռնի Պետրոսի ֆուրգոնի, որ մաշինեն նրա բանը պտի անի... Ադա, մի տեղ որ լուծ ու վոժժեր (կերասանակներ) չըլի, նրանով կարելի՞ կա մարդ ու ապրանք առնել-բերել...

— Ինչ ասում եմ, որ կարելի կա,— ասաց հայրս, և նոլից սկսեց բացատրել շոկնակառքի առավելությունները։

Նա աշխատում էր հարևան Պետրոսին համոզել, որ կերկաթուղու գնացքը կարողանում է ամեն բան տանել. բայց հարևան Պետրոսը չէր համոզվում ամենևին և շարունակ կրկնում էր խնդալով.

— Հարևան, մի հավատա... Հարևան, մի հավատա...

Ցավ դրանից հետո ով որ գյուղում խոսում էր կերկաթուղու, և մանավանդ գնացքի առավելությունների մասին, հարևան Պետրոսը միշտ ասում էր ժպտան կերեսին.

— Հարևան, մի հավատա։ Նա ֆուրգոնի տեղն ըսկի չի բռնի...

***

Հորս և հարևան Պետրոսի խոսակցությունից հետո, չեմ հիշում (չեմ հիշում, որովհետև մանկությունը

սահման չի դնում ժամանակի և տարածության մեջ), թե որքան ժամանակ անցավ, կերբ կհկավ կերկաթուղին։

Անցավ մի տարի թե պակաս, միտս չէ։ Միտս է միայն, որ, այդ զրույցից հետո, մի որ մեր գյուղում կերևացին պսպղուն կոճակներով ու կերկաթաճիա կոշիկներով մեծավորներ, ապա հայտնվեցին ինչ-որ կացնավոր մարդիկ և սկսեցին կտրել մեր անտառի մի մասը.—Թրըխկ հա թրախկ... թրախկ հա թրը՛խկ... Ցավ ինչպես եկին կտրում մեր լավ-լավ ծառերը... վաղ առավոտից մինչ ուշ կերեկո ողջ թնդում էր թրըխկոցի ձայնից։ Կտրում եկին բոլոր կանաչ, ծաղկած ծառերը՝ լորին, բոխին, կաղնին ու կեչին. կտրում եկին և այն տանձի ու խնձորի ծառերը, որոնց տակից մենք ամեն տարի տանձ ու խնձոր եկինք հավաքում թխու դնելու համար... Այդպես՝ չանցավ միքանի որ, մի առավոտ ել տեսանք, որ մեր սիրուն անտառի կեսը չկա, և նրա տարը կանգնած է մերկ, տակից խուզած գլխի նման։

Անտառը կտրելուց հետո սկսեցին տարը ճղել։ Ամեն որ լսում եկինք դղրդոց, պայթյուն և ինչ-որ զարհուրելի ձայներ տարի կողմից, որ շատ ժամանակ ինձ թվում էր, թե ուզում են մեր գյուղը քանդել կամ մի աղետ բերել նրա գլխին։ Միտս է նույնպես, որ տարը ճղելուց հետո կամուրջ շինեցին մեր գետի վրա, կերկաթներ գցեցին և, այս բոլորի վերջում, մի որ ել մեր գյուղում լսվեց մի այնպիսի սուր սուլոց, որ մեր լեռներում ու ձորերում չէր հնչել կերբեք։ Այդ շոգը լսելուն պես գյուղում բոլորն իրար անցան, ինչպես մի մեծ հրդեհի ժամանակ։

— Մաշինեն յեկավ, մաշինեն յեկավ,—ասում էին միմյանց։

Ցավ մարդ, կին, յերեխա—անից, հանդից, գործի վայրից, բանի տեղից, վրը բոբիկ, վրն անդրակ, վազում էին դեպի յերկաթուղին։

Ներանցից շատերը շտապելուց տանում էին իրենց հետ ձեռքի գործիքները՝ յեղան, փոցխ, գերանդի, ջրի կուժ։ Մի կին, շատ լավ միտս ե, շտապելուց ձեռքին տանում եր կերակրոտ շերեփը, մի ուրիշը—դոշնոցը լիքը գետնախնձոր։

Տեսնելով՝ բոլորը գնում են, մենք էլ՝ մայրս ու յեղբայր նիկս, հորս հետ գնացինք «մաշինեն տեսնելու»։ Ճանապարհին պատահեց հարևան Պետրոսը։ Նա կանգնել եր փողոցում և հեգնանքով նայում եր «մաշինեն տեսնելու» գնացողներին, նայում եր և ուզում եր ասել կարծես, թե՝ «դուք բոլորդ էլ անտաուններ եք. ինչ կա, վոր վազում եք եդպես»։

— Դուք էլ եք գնում,—հարցրեց նա մեզ, յերբ մոտեցանք։

— Հա,—պատասխանեց հայրս,—չես գալի։

— Ինչպես յերևում է, ձեր բանն էլ է հատել,—ասաց նա գլուխն ոլորելով։

— Ի՞նչ կա վոր,—նկատեց հայրս,—նոր բան է, յերեխեքն ուզում են տեսնել, կուզես դու էլ արի։ Արի, գնանք, արի։

Հորս առաջարկի վրա հարևան Պետրոսը «չեմ ու չում» արավ, այս ու այն կողմը նայեց և վերջը ասաց.

— Գիտեմ, մի բան չի, հաստ վոր ասում ես, գնանք։ Գնանք տեսնենք հլա եդ ինչ զատ է, վոր եսքան խոսում են. տեսնենք բանի նման է, թե...

— Հիմի կտեսնես, ելի,—ասաց հայրս և սկսեց հավատացնել նրան, վոր «մաշինեն» շատ լավ բան է, վոր ինքը մի ամիս առաջ տեսել է Լոռու ձորերում (նա իսկապես տեսել եր) և անչափ զարմացել։

Ցերը մոտեցանք յերկաթուղուն, տեսանք մեր ամբողջ գյուղն այնտեղ։ Ահել, ջահել ու յերեխա՝ ամեն տեսակ գործիքներով ու իրերով զինված, հավաքվել էին շոգեկառքի ու վագոնների շուրջը և դիտում էին զարմացած։

— Թափվել են ճանճերի պես,—ասաց հարևան Պետրոսն արհամարհանքով.—կարծես կաթողիկոս է յեկել կամ նաչալնիկ. վոնց վոր չտեսներ ըլեն։

Այս ասելով՝ նա մարդկանց հրեց այս ու այն կողմ և ինքը մոտեցավ շոգեկառքին։

Մենք հետևեցինք նրան։

Ցե, կար ժամանակ անխոս դիտում եր նա շոգեմեքենան ամեն կողմից, ինչպես մսագործը ժորթելու անասունը. ձեռքը քսում եր նրա կողերին, կարծես առյլը կանգնածը իր ձին լիներ, և շարունակ քիթը վեր եր քաշում։

Ու յերբ ամեն բան դիտեց վերջացրեց, դարձավ հորս.

— Սա յե, հարևան, սա յե, վոր ֆուրգոնի բանը պտի ան։ի։—Ցավ խնդաց հորս վրա։—Վայ, վայ, հարեվան... Են վոր սարսաղը գլխից ձեռ վեր կունի ու սրա վրա կնստի... Սա ինչ բան ե։

— Մի՛ ասի, Պետրոս,—նկատեց հայրս,—յերբ բանին, կտեսնես ինչ բան ե։

— Ե՛հ, ինչ ուզում ե ըլի,—շարունակեց հարևան Պետրոսը,—հիմի վոր բանի նման չի... Սրա վրեն նըս-

տողը պետք է ժամ ու պատարագ անի, նոր նստի. թե չէ, մին էլ տեսար տարավ սար ու ձոր քցեց. համ ինքը պտի փշրվի, համ վրեն նստողը...

Հարևան Պետրոսի այս խոսքերի վրա հայրս բացատրեց, որ, ճիշտ է, գնացքն էլ ընկնում է յերբեմն, յերբ ճանապարհը քանդված է լինում կամ յերբ ուղևորը միացնող մեխերը հանում են. բայց դա միշտ հո չի պատահում։

Հորս բացատրությունը լսելուց հետո, հարևան Պետրոսը ծիծաղեց փառ-փառ։

— Տեսնում ես,—ասաց,—բա որ ասում եմ՝ ծիծաղում են վրես .. Մի մեխ հանելով որ ես ահագին բանը պտի ընկնի փշրվի, էլ ինչացու յես... Ի՞նչ եմ տվել ֆուրգոնին. մերը չմեռնի՜... Նստի, վոժժերը ձեռդ առ ու յալլա—ֆը՜ռա։ Մալադեց... Ցերբ ուզես, կկազնեցնես, յերբ ուզես, կքշես, թե չե--սա ինչ ես...

Ցեվ նա ձեռքը դեպի գնացքը մեկնելով, նորից ծիծաղեց փառ-փառ.

— Հա-հա, հա-հա...

***

Այդ որվանից շոգեկառքն իր վագոններով սկսեց գնալ-գալ շարունակ։ Որական մի քանի անգամ լսվում եր նրա սուլոցը, և նրա այդ սուլոցը լսելիս, մենք՝ յերեխաներս կառուրները յելնելով, նայում եյինք, թե վոնց է գնում նա ամպի նման ծուխ հանելով, վորի բեկորները ընդունելով ուղտի, ձիու և վարդապետի կերպարանք՝ արագ վազում եյին վագոնների յետևից, բայց նրանց չհասնելով, կես ճանապարհին, կարծես շատ հոգնելուց, հալվում եյին շնչասպառ։ Ցեվ ամեն

անգամ վագոնների այդ յերթը տեսնելով, մենք՝ յերեխաներս, ուրախ աղմուկով, վագոնների նման շարվում եյինք իրար յետևից և շվոցով պտտվում կառուրներին այնքան ժամանակ, մինչև վոր դուրս կգար մի տնաստեր և կբողոքեր, վոր մենք կոտրում ենք ոճորքները կամ հող ենք թափում յերդիկից։ Ցեվ, չգիտես ինչու, ում կառանն էլ «մաշինա» եյինք խաղում, միշտ հարևան Պետրոսն եր դուրս գալի բողոքելու. «Ի՞նչ եք ձեններդ քցել թաղ ու թառակ,—ասում եր նա ձեռքը գոտին խրած.—կորեք ձեր տները»։ Ինձ մանավանդ զարմացնում եր այն, վոր հարևան Պետրոսն այժմ շատ քիչ եր քաղաք գնում։ Առաջ, ամեն շաբաթ նա ֆուրգոնը բեռ եր բարձում և ձիերի բոժոժների ուրախ զընգզընգոցով մեկնում քաղաք. այժմ, սակայն, շաբաթներով մնում եր տանը, յերբեմն միայն աղը ու փեչին եր կրում իր արտերը կամ ճալաքար ու թուխ եր բերում այգու ցանկապատերը կարգի բերելու։

Մի որ, շատ լավ հիշում եմ, յերբ նա ֆուրգոնով մասրի թփեր եր բերել, հայրս հարցրեց նրան.

— Ինչպես յերևում է քաղաք գնալու գործը պակասել է, հարևան։

— Ջե՛, ո՛վ է ասում,—պատասխանեց հարևան Պետրոսը.—Գործ ինչքան ուզես. բայց ուզում եմ այգու պատերը շինել. վոչխար ու տավար մտնում են, պատրուանները ուտում...

Ցեվ այսպես ամեն անգամ, յերբ հայրս հարցնում եր գործի մասին, նա միշտ ասում եր՝ գործ շատ կա, բայց ինքը չի ուզում գործի գնալ, վորովհետև բան ունի, պետք է վերջացնի։

— Գիտես, հարևան,--ասում եր նա,—գործ շատ

կա, բայց մարդ պետք է իր տան համար էլ մտածի, թե չէ։

— Իհարկե,—ասում էր հայրս.—պետք է մտածի։ Իսկ չես կարծում հյլի, թե մաշինեն պակասեցրել է գործդ։

— Չէ, ըսկի էլ չէ,—ասում էր հարևան Պետրոսը,—ինչ պակասեցնել։ Գործ, չերը ուզես, կա... Մաշինեն ֆուրչոնի բանը հո չի՞ կարող անել...

Ուշաբաթներն անցնում էլին շաբաթների հետևից, բայց հարևան Պետրոսը, ի մեծ զարմանս իմ, շարունակ մնում էր տանը և քաղաք չէր գնում։ Մինչդեռ՝ չես ուզում հյլի, որ նա շուտ-շուտ քաղաք գնա և բոժոժների զընգզընգոցով վերադառնա այնտեղից, որպեսզի մեր դռնով անցնելու ժամանակ կանֆետ ու խնձոր տա ինձ։ Բայց նա չէր գնում, այդ պատճառով ձիերին էլ գարի չէլին տալիս ամեն որ, վոչ էլ թիմարում հյլին առաջվա նման, այլ տանում էլին դաշտերը կամ անտառի բացատները արածացնելու։

Այսորվա պես հիշում եմ, թե ինչպես նրա տղաները (հարևան Պետրոսն ուներ չորս տղա) հնձնում էլին ամեն մեկը մի ձի և քշում դեպի դաշտերը. իսկ նրա կինը, որ մարդու պես սիրում էր իրենց ֆուրգոնը և ձիերին, ամեն անգամ գնացքի սուլոցը լսելիս, չգիտեմ ինչու, անիծում էր նրան։ Ցավ անիծելիս միշտ կրկնում էր այս խոսքերը.

— Ձենդ կտրվի, խնդրել եմ աստծուց...

Մինչ կինն անիծում էր այսպես, հարևան Պետրոսն անխոս շարունակում էր իր ֆուրգոնով քար, փայտ և աղբ կրել։ Այդ գործի մեջ նա, ըստ իր սովորության, էլ չէր յերգում, մեզ՝ յերեխաներիս հետ հա-

նաքներ չէր անում, մի բան, վոր ինձ շատ էր զարմացնում։ Բացի դրանից, վերջերս մեր տունն էլ շատ սակավ էր գալիս և ընդհանրապես խուսափում էր հարևաններից, ինչպես խռոված կամ մինչև սրտի խորքը վիրավորված մի մարդ։ Սակայն շուտով պատահեց մի դեպք, վոր նրա տրամադրությունը փոխեց միանգամայն և վերադարձրեց նրան իր նախկին ուրախությունը։ Այդ դեպքը հարևան Պետրոսին պատճառեց նույնիսկ մեծ հրճվանք։

***

Ինչպես էր պատահել, չգիտեմ, մի որ մեր գյուղից մի կով էր ընկել գնացքի տակ և յերկու կես յեղել։ Դեպքը մանվան բոթի պես խոսույն տարածվեց գյուղում. դա չլսված բան էր արդեն. ինչպես, գնացքը կով և սպանե՞ւ... այ քեզ տարօրինակ բան... Ու բոլորը, ինչպես գնացքը գալու առաջին որը, շտապեցին դեպքի տեղը։ Այդ բանն իմացավ և հարևան Պետրոսը։ Պատմությունը լսելուն պես նա բարձրաձայն խնդաց նստած տեղը։

— Հապա վոր ձեզ տաում էլի՝ ծիծաղում էլիք վրես,—ասաց նա գլուխը հաղթական շարժելով։—Հիմի տեսաք։ Յերեկ մին, հսոր յերկու՝ ինչեր արավ... Ես էլա մեկ, դեռ ուր և տասնումեկ... Սպասեցիք դեռ, սպասեցեք...

Յեվ նորից գլուխը հաղթական շարժելով ու ծիծաղելով գյուղացիների անմտությանն վրա, վոր թողին յերկաթուղին գյուղը գալու, սկսեց թվել, թե դեռ ինչ անհավոր աղետներ պետք է բերի յերկաթուղին մեր գլխին։—Եսոր կգա ընկավ գնացքի տակ, եզուց յեկը

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ... ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ... ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

կընկնի, մյուս որը տավարածը, մի ուրիշ որ յերեխա, մի այլ որ մարդ, հետո կին, և այն ժամանակ ինչ կլինի դյուղի վիճակը:

— Հը՛մ, վրես ծիծաղում եյիք,— ավարտեց նա դառը խնդալով.—տեսաք հիմի...

Նրա ուրախությանը չափ չկար. նա իրեն համարում եր հաղթական:

Ու մի ամբողջ շաբաթից ավելի դյուղի փողոցներում շրջելով՝ ամեն մի պատահողի պատմում եր կովի դեպքը և ավելացնում, որ գնացքը քանդելու յե դյուղացիների տունը, կտրելու յե նրանց հացը, և շատ ուրիշ բաներ. և միշտ, որպես որինակ, բերում եր կովը: «Ձեզ որինակ են որվա կովը»... Ու այս ասելով, առաջարկում եր, թե լավ կլինի խնդիրը տան տեղությանը, որ «մաշինեն» ուրիշ տեղով բանեցնի:

— Գրենք թե՝ աղբիր, չենշ ուզում. քո ջլան ել քեզ ըլի, քո ոգուտն ել. աշխարհը մեծ, դու միջին, քո մաշինեն տար որ կողմով կուզես բանեցրու, միայն թե մեր դյուղից հեռացրու...

— Սարսող բաներ ես խոսում,—նկատեց հայրս:

— Վռնց թե սարսող,— ծուլ յելավ հարևան Պետրոսը ցամաքը դցած ձկան նման:—Հապա լավ կլինի, որ ամեն որ ջլասվենք... Քեզ եմ հարցնում. լավ կլինի՞... Տեսար հսոր կոչը ապանեց, եզուց ինձ կապանի, գալ որ քեզ... Հետո ես ձեր կտանի...

Մինչ հարևան Պետրոսն աշխատում եր համոզել հորս, հայրս, սակայն, չգիտեմ ինչու, բերի տակ շարունակ ծիծաղում եր նրա վրա, իսկ նրա վերջին խոսքերը լսելով՝ այնպես քրքջաց, որ ինձ թվաց, թե մեր լավ հարևանը պիտի խռովի և այլևս մեր տուն

չգա: Բայց սխալվում եյի: Այս խոսակցությունից հետո նա ելի մեկ-մեկ գալիս եր մեր տուն բանի, կամ յերբեմն հորս հետ պրույց անում առաջվա պես: Սակայն մի որ պատահեց մի բան, որ նա այլևս, իսկապես, վոտ չդրեց մեր տուն:

Մի որ, յերբ հայրս իր առած գարին քաղաք եր ուղարկել յերկաթուղով, մեր տուն յեկավ հարևան Պետրոսը և տխուր ու անխոս նստեց տախտին: Դեմքից յերևում եր, որ յեկել և մի կարևոր բան ասելու, բայց, ըստ յերևութին, չգիտեր կամ մտածում եր ինչպես սկսի:

— Ի՞նչ կա, հարևան,—հարցրեց հայրս:

— Վոչինչ,—պատասխանեց հարևան Պետրոսը, և հառաչեց:

— Ի՞նչ ե պատահել. տխուր ես յերևում:

— Վոչինչ,—կրկնեց հարևան Պետրոսը, և նորից հառաչեց.—Ե՛հ... ել վոչ հարևանություն մնաց, վոչ բարեկամություն,—ասաց նա պատերին նայելով,—աշխարհը խարաբ յեղավ...

Ցեվ նորից լռեց:

— Ի՞նչ ե յեղել որ,—հետաքրքրվեց հայրս:

— Ե՛հ, վոչինչ, վոչինչ,—ասաց հարևան Պետրոսը, նորից պատերին նայելով: Վոչինչ...

Ցեվ յերկուսն ել լռեցին: Հայրս նայում եր հարևան Պետրոսին, իսկ հարևան Պետրոսը՝ պատերին:

Կարճ լռությունից հետո հարևան Պետրոսը դարձավ հորս և մեղմ, շատ մեղմ ձայնով հարցրեց.

— Գարին ղրկեցի՞ր...

— Հա,—պատասխանեց հայրս, այս անգամ ել ինքը պատերին նայելով:

— Հը՛մ,—շրթունքները սեղմեց հարևան Պետրոսը և լռեց, ու քիչ հետո շարունակեց.—խմի, ձիանքն ետեղ, ֆուրգոնն ետեղ, դու...

Նա էլ չշարունակեց. իսկ հայրս չկարողանալով իսկույն պատասխանել, նախ գլուխը կախեց ամաչկոտ հարսի նման և ապա՝

— Գիտես, հարևան,—ասաց,—չես ուզում ելնի, որ շուտ տեղ հասնի, դրա համար մաշինով դրկեցի, թե չե՝ միշտ էլ քու ֆուրգոնով չեմ դրկե՞լ... Ես անգամն եսպես չեղավ. ինչ արած...

Նորից չերկուսն էլ լռեցին ու միացին իրար դեմ նստած, մինչև որ մայրս կանչեց նրանց ճաշի։ Հարևան Պետրոսը, որ դեպք չեղած ժամանակ կճաշեր մեզ մոտ, այդ որը հրաժարվեց։

— Շնորհակալ եմ,—ասաց,—դուք անուշ արեք։

Ու նեղացած, որտում քայլերով դուրս գնաց։

Ցավ այդ որվանից այլևս մոտ չդրեց մեր տուն, նույնիսկ դաղարից մեզ հետ խոսել. վոչ միայն չեր խոսում, այլև, յերբ մեր շունը, հորթերը կամ հավերը գնում ելին նրա դուռը, նա փետ ու քարով քշում եր նրանց, քթի տակ քրթմնջալով։ Մանավանդ խեթ աչքով եր նայում ինձ և չեր սիրում, յերբ գնում ելի նրանց տուն՝ տղաների հետ խաղալու։

Ու այս բանն ինձ վշտացնում եր՝ սաստիկ. պատճառն ինչ և, որ հարևան Պետրոսը չի սիրում ինձ...

***

Այժմ իմ հիշողությունները պատվում, պատվում և կանգ են առնում հարևան Պետրոսի ձիերի վրա։

Տեսնում եմ ահա նրա ձիերը՝ նիհար, վոսկրները

կաշվի տակ ցցված, պոչերնին ցանցառ ու կարճ, նրա տղաների հետ գալիս են դաշտից կամ առվից։ Գալիս են նրանք տխուր ու դանդաղ քայլերով, ինչպես կըռվում պարտված ամբոխահար զինվորները, որ զգում են, թե այլևս արժանի չեն իրենց կերին ու անվան։

Տեսնում եմ ահա, հարևան Պետրոսն իր այդ ձիերից յերկուսը ցուց և տալիս յերեք անծանոթ մարդու և ասում նրանց.

— Մի հատ ձիանք են. սաղ նահանգում չկա։ Յերևանի ճամպին...

Ու քիչ հետո այդ անծանոթ մարդիկ, որ յերկար փափախ ունեն ու յերկար շորեր, տանում են նրա ձիերը մեր տան առջևից, սանձերից բռնած։

Ի՞րանից հետո տեսնում եմ՝ հարևան Պետրոսի ձիերից մեկը, մի սև, ճակատը սպիտակ ձի, պառկել և նրա դռանը, և այդ ձիու գլխին հավաքվել են ղրաչինները, ինքը հարևան Պետրոսը, նրա կինը, յերեխաները և շունը։ Ձին պառկել և յերկար ու մեկ, վոտքերը մեկնել, ու գլուխը ղրել գետնի վրա։ Ցերեկն բարձրացնում և գլուխը ու խփում գետնին։ Ցավ յերբ նա գլուխը բարձրացնում և ու զարկում գետնին, փոքրիկ շունը հաջոցով վրա յե պրծնում նրան, իսկ հարևան Պետրոսի փոքրիկ աղան, որի անունը մոռացել եմ հիմա, հացի կտորը ձեռքին բռնած, խնդում և ուրախությունից։

Սրանից հետո էլ վոչինչ չեմ հիշում վոչ հարևան Պետրոսի և վոչ էլ նրա ձիերի մասին, վորովհետև այդ ժամանակ կյանքը մի հարվածով կտրեց ինձ իմ սիրած տնից, իմ լավ ընկերներից և նետեց մի աղմկալի քաղաք, ուր յես սովորում եյի անպիտան քերակա-

նութիւնն և մեռած լատինական լեզուս, ուր ինձ կերա-
կուր եկին տալիս աքաղաղի պատկերով զարդարված
պնակով և մետաղե ժանգոտ դդալներով, ուր բոլորը
քայլում եկին պատերի տակով և ուր ամենքը ոտար
եկին ինձ:

Մոտ վեց տարի տևեց այս տխուր պանդխտու-
թիւնը, յետը վերջապես դարձա մեր տուն: Ցեվ յետը
դարձա տուն, այնտեղ արդէն շատ բան եր փոխված:
Մեռել եր իմ սիրելի տատս, չկար և մեր ծեր շունը,
իսկ մեր վանա կատուն գողացել եկին ինչ-որ անցորդ
բոշաներ: Դառնալով մեր տուն՝ հետաքրքրվում եկի,
թե ինչ և կատարվել ինձանից հետո. և հետաքրքրվե-
լով՝ հարց ու փորձ եկի անում ամեն բանի մասին ու
դիտում ամեն ինչ: Ցետս, ի միջի այլոց, հետաքրքրվեցի
և հարևան Պետրոսի, նրա կնոջ և նրա տղաների վի-
ճակով: Ամենից շատ ինձ հետաքրքրում եր, իհարկե,
նրա տղաների վիճակը, թե ուր, վորտեղ են նրանք
և վորքան են արդյոք մեծացել: Ու կանգնած մեր լու-
սամուտի առջև, նայում եկի դեպի նրանց տունը, մեկն
ու մեկին տեսնելու հուսով: Բայց վոչ-վոք չեր յերևում:
Ցեվ առաջին բանը, վորի բացակայությունն իսկույն
զարկեց իմ աչքին, դա հարևան Պետրոսի ֆուրգոնն
եր: Մի րոպե լինթադրեցի, թե հարևան Պետրոսը
գուցե քաղաք և գնացել, բայց յետը իմ հետաքրքիր
հայացքը թափառեց նրա տան բակում, տեսա, վոր
նրա ֆուրգոնի կեռ ծածկն ընկած եր պատի տակ մի
անկյունում և հավերը նրա վրա թառած, արևի դիմաց
քրքրում եկին իրենց փետուրները: Քիչ հետո, սակայն,
դուրս յեկավ հարևան Պետրոսի կինը՝ տարիքին անհա-
մապատասխան պառաված, գոգնոցի փեշերը բռնած,

և կուտ տվեց հավերին: Այդ տեսնելով, յես դարձա
մօրս և հարցրի, թե ինչ են անում հիմա հարևան
Պետրոսն ու նրա տղաները:

Մայրս չգիտեր վորտեղ են իսկապես նրա տղա-
ները, բայց հարևան Պետրոսի մասին հայտնեց, վոր
նա ծառայում և մեր գյուղի կայարանում...

... Այո, պարոնները, նա մինչև այսօր էլ ծառա-
յում և մեր գյուղի կայարանում:

Ցերբ դուք ճամպորդեք դեպի Կարս, ձեզ կհան-
դիպի մի փոքրիկ կայարան, վորի առջև, հսկայական
կերոնների նման, կանգնած են յերեք բարտի ծառ, և
վորը ունի մի արբեցող կայարանապետ, մի հեռագրիչ,
պելենոտ դեմքով մի տոմսավաճառուհի և մի ջրի
տակառ, վորի ջուր խմելու ամանը շաքարի թելով
կապած է նրան:

Այդ կայարանում դուք կտեսնեք սպիտակ մո-
րուքով, կիսամուշտակով և ավելը կռան տակին մի
ծերունի: Դուք կտեսնեք նրան կայարանի լապտերի
ապակին մոտ կանգնած և ձեռքերը կրծքին խաչած:

Նա ամեն որ, որը յերկու անգամ, կանգնում է
այդտեղ և սպասում, վոր գնացքը հեռանա: Իսկ յերբ
գնացքը շվոցով շարժվում է տեղից, և մարդիկ ցրվում
են իրենց տները, նա վերցնում է ավելը կռան տակից
և սկսում է սրբել պլատֆորմը մարդկանց թողած
կեղտից, վորի մեծ մասը լինում է արևածաղկի սերմ
և ընկուզի կճեպ:

Դա հենց ինքը մեր հարևան Պետրոսն է:

1915.

ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Կան մեհյավոր, մեհյակ սրտեր
անհայտ անտես հեռուներում,
խոր ու մթին անտառներում...
—Ո՞վ է նրանց վողջույն բերում...
Մոլդավական յերգից

Այդ տունը վաղուց, շատ վաղուց և կանգնած անտառի մեջ։

Ցես նրան հիշում եմ դեռ մանկությունից։

Այնտեղ, ուր փողոտ խճուղին, ինչպես մի գորշ ժապավեն, ոճավորուած վոլորումներով, իմ ծննդավայրից վազում է դեպի Սևան, այնտեղից միշտ յերևում է նա՝ անտառապատ սարի գլխին բազմած։ Ծառերի միապաղաղ կանչի մեջ այդ սպիտակ շենքը անցորդներին թվում է ինչ՝ վոր խորհրդավոր բան։ Աղոթասեր ոտարականին թվում է մատուռ կամ վանք, իսկ Ռուսաստանից նոր յեկած պետական պաշտոնյային սրտում զարթեցնում է հազար ումի կասկած, թե արդյոք հակապետական գործերի մի վորջ չի՞ դա, արդյոք կեղծ զրահները չեն կորում այնտեղ... Բայց թե ոտարականը և թե պետական պաշտոնյան սխալվում են միշտ։ Այդ սպիտակ տունը, վոր գոռոզ կերպով բազմել է անտառի գլխին,—հանրակացարանն է ծծումբի հանքի բանվորների, վորոնցից, սակայն, գատարկ է հիմա։ Կար ժամանակ, վոր նա այդ վայրի տեղում

իրենից ներկայացնում եր մարդկային մի վեթակ, վորի մեջ բազմաթիվ ձեռքեր եյին աշխատում առավոտից մինչև յերեկո և բազմաթիվ ղլուխներ եյին ննջում յերեկոյից մինչև առավոտ։ Բայց այժմ գատարկ է նա, ինչպես ծառի վրա հյուսված թռչունի մի բուն, վորի մեջ յեղած ձագերը իրենց մոր հետ թռել են վաղուց։ Նրա տերերը թղթախաղում անանկանալով՝ փակեցին հանքը, փակեցին հանրակացարանը և գնացին հանգըստանալու քաղաքում... Բայց նրանք այնքան բարի յեղան, վոր չհեռացրին իրենց ծեր ծառային և թողին նրան այդ տանը պահապան։

Այդ ծառան քեռի Վարսան է, սպիտակ միրուքով մի փոքրիկ ծերունի, վոր շաբաթը մի քանի անգամ, յերկաթածայր գավազանը ձեռին, ուսը պինվորի հատ կոշիկներով, իջնում է գյուղ և կնսորին վերադառնում՝ մի փոքրիկ կապոց կամ մի տոպրակ թեր գցած։

Նա և իր պառավը վաղուց եյին ապրում այդտեղ իրենց հավերի և ծեր շան հետ միասին։

*Ծեր ամուսիններն իրենց կենդանի զեմքերով, խոսելու յեղանակով, շարժ ու ձևով այնքան նման եյին իրար, վոր կարելի յեր կարծել, թե խստապահ կրոնավորից դաստիարակված քույր ու յեղբայր են։ Ցերկուսն ել խոսում եյին ծոր տալով, զգուշ և իրարից ակնածելով, ինչպես նոր պսակված ժամանակ։ Ինչպես պսակի առաջին որերին, այնպես ել հիմա, չեյին վստահանում իրար անուն տալ, և միմյանց կանչում եյին «այ տո»։—«Նոր հավերին կուտ տվել ես, այ տո»,—հարցնում եր ծերունին։—«Ինարկե, այ տո. ինարկե տվել եմ»,—պատասխանում եր պառավը։ Ցեվ այդ «այ տո»-ն նրանք արտասանում եյին այնպես, ինչպես

արտասանում են «հոգիս»—«սիրելիս»։ Զավակները չուշնեննալով, ծերերն այդ անտառի մեջ իրենց հոգատարությունն ու խնամքը նվիրում էին հավիրին, պառավ շանը, այդ տանը և նրա մեջ կեղած իրերին։

Առավոտները զարթնելով՝ պառավը նախ և առաջ կուտ էր տալիս հավերին, մաքրում էր նրանց բունը, լրբեին հանդիմանում նրանց. ապա ոջախի վրա լափ էր պատրաստում շան համար։ Իսկ ծերունին նախ պտտում էր տան շուրջը, հետո մտնում ներս և սենյակները մեկ-մեկ դիտում, տեսնելու հո բան չի՞ պատահել։

Տունը և նրա մեջ կեղած իրերը առհասարակ մեծ անհանգստություն էին պատճառում ծերերին։ Ավելի անհանգստանում էր պառավը։

—Ա՛յ տո, մի բան չպատահի տանը,—լրբեին ասում էր նա խորհրդավոր, կարծես մի բան գուշակելով։

—Ինչ, այ տո,—հարցնում էր ծերունին թագուն լրկյուղով։

—Ո՛վ և իմանում, այ տո. հարամին շատ,—ավելացնում էր պառավը, նոր կասկած զգելով իր ծերունու սիրտը։—Բան չգողանան..

—Ով կհամարձակվի,—ասում էր ծերունին, աշխատելով հանգստացնել և՛ պառավին և՛ իրեն.—լեթե մի բան ըլի, Բողարը կիմացնի...

Բողարը ծեր շունն էր. նա իսկապես զգաստ և աչքաբաց էր. հարկ լեղած դեպքում հնչեցնում էր իր խռպոտ ձայնը անտառի լուության մեջ։

— Վոր իմացնի, ինչ պիտի անես,—առաջ էր տանում խոսքը պառավը, ակնարկելով ամուսնու ծերությունը։

— Ա՛յ,—ասում էր ծերունին աչքերը հառելով պատից կախված հրացանին։

— Հիսուս ու Քրիստոս,—խաչակնքում էր լրբեսը պառավը տագնապով,—ինչեր ես ասում, այ տո...

Նրանց անհանգստությունն ավելանում էր մանավանդ այն ժամանակ, լրբ գիշերը փոթորիկ էր լինում անտառում։ Ցերբ տունը շրջապատող վիթխարի ծառերը խուլ, անվերջ շառաչում էին քամուց և խոր անտառը դրնդում էր խավարի մեջ, ու դրա հետ միաժամանակ քամին ծղրտում հալածական դևի նման,—ծերերին թվում էր, թե ծառերի արանքում և թե պատերի տակ վիսում են հազար չար, հազար ավազակ։ Անկողնի մեջ, համակ լսողություն դարձած, ականջ էին դնում փոթորկի ձայնին և մինչև լուսացքուն չէր գալիս նրանց աչքերին։ Նրանց անհանգստությունն աճում էր ավելի ձմեռ ժամանակ։ Ցերբ ձյունն սպիտակ շուրջառ էր քցում ծառերի վրա, և հավքերը, նույնիսկ ագռավները հեռանում էին նրանց բնակարանի մոտից, ծեր ամուսինները փակվում էին իրենց սենյակում։ Պառավը նստում և բրդե գուլպա լրբ գործում, իսկ ծերունին շուտ-շուտ փայտ էր ավելացնում վառարանի կրակին։ Անհրժեշտ չիրմությունը ձմեռ ժամանակ զարթեցնում էր հին-հին հիշողություններ. և նրանք պատմում էին իրար անցած դեպքեր, մոռացված զրույցներ. լերբեմն պառավը լերանի լրբ տալիս գյուղում ապրողներին, վոր տեղյակ են ինում աշխարքի բանին և շուտ-շուտ ժամ են գնում։

— Վոչինչ, այ տո, Ջատիկը գա, ճամպեն բացվի, դու լել կերթաս,—մխիթարում էր ծերունին այդպիսի դեպքերում։

Բայց հաճախ պառավին պաշարում եր մի անորոշ տխրություն և նա դառնում եր Ծերունուն.

— Ա՛յ տո, ինչ պիտի անենք, յեթե հանկարծ եստեղ մի բան պատահի մեզ։

— Ի՞նչ կարող և պատահել,—միամիտ հարցնում եր Ծերունին։

— Ո՛վ և իմանում, այ տո, հանկարծ հիվանդացանք, վռնց պիտի տերտեր կանչենք ճաշակելու։

— Եհ,—խնդում եր Ծերունին,—տերտերն ինչ ենք անում, այ տո, առանց տերտերի յել յոլա կերթանք։

— Վռնց թե... առանց ճաշակելու մեռնել,—զարմանում եր պառավը, և փոքը ինչ լռելուց հետո ավելացնում.—Չե, այ տո, յես առանց ճաշակի չեմ կարող մեռնել... Եսորվանից ասում եմ—հենց վոր ծանր հիվանդանամ՝ տերտեր կկանչես։

— Ե՛հ, այ տո, ինչի յես տխուր բաներ ասում—նկատում եր Ծերունին ակնհայտ դժգոհությամբ,—Ուրախ բաններից խոսի...

Պառավը լռում եր մի փոքր՝ մաքի յեռևից ընկած, և կրկին դառնում Ծերունուն.

— Ի՞նչ լավ կլիներ, այ տո, յեթե գեղում ապրեյինք։

— Իհարկե,—պատասխանում եր Ծերունին,—իհարկե, լավ կլիներ. իսկ յեթե մի զավակ ել ունենայինք, վոր մեզ պահեր...

Ցավ նրանք, յերկուսը միասին, հառաչում եյին առանց իրար յերեսի նայելու։

Հառաչում եյին ու լռում...

Ծերևի այսպես յերկար կշարունակվեր նրանց կյանքը, յեթե չպատահեր մի տխուր դեպք։

* * *

Ծերունին ազատ ժամերին սիրում եր պտտել անտառում։ Ամառվա և աշնան որերին նա յերկար տարածություններ եր անցնում չոր փայտ ու պտուղներ հավաքելու։ Այդպիսի դեպքերում ծեր, բրդոտ շունը զառամ քայլերով միշտ հետևում եր տիրոջը, իսկ պառավը շեմքում՝ ձեռը ճակատին, նայում եր նրանց յետևից։

Մի անգամ՝ գարնանը, այդպիսի շրջագայությունների ժամանակ, Ծերունին շան շնորհիվ գտավ յեղնիկի մի փոքրիկ ձագ՝ սուր—սուր ականջներով, վորն այնուհետև դարձավ Ծերերի հոգատարության ամենասիրելի առարկան։ Սկզբում փոքրիկ կենդանուն նրբանք կերակրում եյին գյուղից բերած կաթով, ապա յերբ նա սկսեց իրեն հավաքել, նրան ուտեցնում եյին թրջած հաց, սառը կերակուր, կանաչ խոտ և ծառի տերև։

Պետք եր տեսնել, թե ինչպես Ծերերը խնամքով, փոխ-փոխ, խոտ եյին մոտեցնում փոքրիկ յեղնիկի դնչին, ինչպես եյին գուրգուրում նրան և սովորեցնում ման գալու յեղանակը։ Պառավը նրա համար փափուկ խոտերից շինել եր մի անկողին, ուր միշտ հանգիստ մշշոցով հանգստանում եր փոքրիկ կենդանին։ Ինած տեղը այնքան անուշնական ու թույլ եր յերևում, վոր պառավը յերկյուղով մտածում եր, թե չլինի մի բան պատահի նրան։

— Ա՛յ տո, վախենում եմ թե մի բան պատահի

սրան,—յերբեմն կասկած եր հայտնում պառավը,— ինչ ուտեցնենք, վոր լավ ըլի։

Ծերունին մի փոքր միտք եր անում և ասում.

— Ինչ վոր իրա մերն ե ուտում. խոտ, տերև, ջուր։

Բայց պառավը դրանով չեր գոհանում. նա պահանջում եր, վոր ծերունին շուտ-շուտ կաթ բերի գյուղից։ Ցեղնիկի ձագը նրան թվում եր իրրև մի վորը յերեխա, վորին պետք ե լավ ուտեցնել, խնամել, զուրգուրել. և նա շատ ափսոսում եր, վոր չի կարող իմանալ փոքրիկ կենդանու սրտի ուզածը։ Հաճախ գրկում եր նրան ու հարցնում.

— Ի՞նչ կուզես, բիժո ջան։

Փոքրիկ անասունը միամիտ, մոլոր հայացքով նայում եր պառավին և արտում խոնարհում թաղծոտ աչքերը։ Այդ տեսնելով՝ պառավը սեղմում եր նրան գրկին և համբուրում նրա գլուխը, աչքերը, ականջները։

— Բիժո ջան, բիժո ջան...

Կարճ ժամանակում ծերերը, մանավանդ պառավը, այնպես ընտելացան յեղնիկի ձագին, վոր չեր նամի բոպե չեր յերևում, յերկյուղով հարցնում եին իրար.

— Բիժոն ո՞ւր ե, ախ տու։ Զըլի թե՜...

Ու տաղնապով այս ու այն կողմն եին ընկնում «բիժոյին» վորոնելու։ Հաճախ գտնում եին շան մոտ նստած կամ նրա հետ խաղալիս։ Ինչպես վորդին կորցրած ծնողը գտնի գավակին, այդպիսի դեպքերում մեծ եր լինում ծերերի ուրախությունը. փոխե-փոխ համբուրում եին յեղնիկին և գրկած տանում տուն՝ ժպտալով, հանդիսավոր, ինչպես մի նորակնունքի։

Մի անգամ, սակայն, աշնան առաջին որերին, փոքրիկ յեղնիկն անհետացավ հանկարծ։

Այդ որը ծերունին տանը չեր. նա գնացել եր գյուղն ալյուրի։ Ուստի պառավը մենակ դուրս յելավ վորոնելու։ Ցերկար փնտռեց յեղնիկին տան շուրջը, պատերի տակ, հավանոցում, շան մոտ, և վոչ մի տեղ չգտավ։

— Բիժո, բիժո,—կանչում եր նա և ինքն իր հետ խոսում. «Տեսնես ի՞նչ յեղավ, տեսնես ո՞ւր գնաց»։

Ինքն իրեն խոսելով՝ մի առ մի նայեց մասրի թփերը, մտավ մացառների մեջ, կանչեց, վորոնեց, բայց յեղնիկը չերևաց։

Այդ տեսնելով, նա տան դուռը կողպեց, շանը վերցրեց և մտավ անտառ։ Նրան թվում եր, վոր յեղնիկը տեսել և իր նման մեկին ու հետևել նրան. թե չե, մտածում եր նա, ի՞նչ պետք և պատահած լիներ։

Մի չոր ճղափայտ ձեռին, շունն յետևից, քայլում եր պառավը նեղ արահետով և շուռ-շուռ կանչում.

— Բիժո, բիժո...

Նրա ձայնը կորչում եր շառաչող ծառերի աղմուկի մեջ։ Բարձրացած խուլ փոթորիկն ալեկոծում եր անտառը, և հոգմաձար տերևները, ինչպես դեղնապուշն թիթեռների անհամար խմբեր, պտտվում եին ծառերի արանքում, ասես մի չար ձեռքից հալածված։

Ջնայելով վատ յեղանակին, պառավը շարունակում եր առաջ գնալ և խրախուսել շանը։ Անցնելով սայթաքուն-սարփ տեղերից, չոր ճղափայտերի կույտերի վրայից, անելով անսովոր վերելք ու վայրէջք, նա թեև սաստիկ հոգնել եր, քրտինքը թաթիվում եր

քունքերից, բայց և այնպես չէր դադարում վորոնելուց ու կանչելուց։ Շունը լեզուն հանած, հոտոտելով վազում էր այս ու այն արահետով և շուռ-շուռ տիրուհուն նայում, ըստ յերևութին իմանալու, թե բավական չի արդյոք վորքան փնտռեցին։

Յերբ հասան մի փոքրիկ բացատի, շունը հանկարծ կանգ առավ և ականջները սրեց։ Մոտիկից, շատ մոտիկից լսեց ինչ-վոր ճիչ, վոր նման էր անասունի ձայնի։

— Բողոր, նա չե՞ բիժոն—ճչաց պառավը ուրախացած։

Շունն իսկույն հասկացավ տիրուհու միտքը և առաջ վազեց։ Պառավը ուրախությունից դողացող քայլերով հետևեց նրան։

— Նա չե, նա՜... Բիժո՜, բիժո՜...

Նրանք անցան բացատը և նորից մտան ծառերի մեջ, դիմելով ձայնի կողմը։ Սակայն այնտեղ, ուսկից լսվեց ճիչը, վոչինչ չերևաց. վերևից միայն, մի ծառի կատարից, ինչ-վոր թռչուն թռավ թևերը թափահարելով։

Մի քանի րոպե պառավը ճնշոց կանգնած՝ խաբվածի պես շուրջը նայելով։ Ապա գարձավ շանը.

— Չե՛, Բողոր, բիժոն չէր. բիժոն չէր...

Իրիկնաժամ էր արդեն, յերբ պառավը ձեռնունայն ու հուսահատ տուն վերադարձավ։ Փոքրիկ յեղնիկը չեբևաց վոչ մի տեղ։ Տուն դառնալով, նա զգաց մի խոր դատարկություն տան մեջ ու իր սրտում։ Նրան թվում էր, վոր մի հսկայական բան պակաս է, և ամեն բան այնպես չէ, ինչպես կարգն է։ Ցավ նրան վշտացնում էր վոչ այնքան կորուստը, վորքան անողնական վի-

ճակը փոքրիկ կենդանու։ Ու մտածում էր, թե ինչ պիտի պատահած լիներ նրան.—տեսնես գել հանդիպեց թե մի ուրիշ գազան, իմ խեղճ բիժո...

Ծերունին գյուղից յեկավ մի փոքրիկ տոպրակ ալյուրով։ Պառավի տիրությունը տեսնելով, նա անհանգստացավ։

— Ի՞նչ է պատահել, այ տո՛

Պառաւը իր մոլոր հայացքը հառեց ծերունու դեմքին։

— Բիժոն չկա, այ տո՛... Ման յեկա՛, չկա՛... չգտա՛...

Ծերունին զարմացավ։ Պառավը մանրամասն պատմեց յեղելությունը։

Այդ միջոցին նրանց քունը չտարավ։ Ցերկար մտածում եյին, խոսում, թե արդյոք ինչ պատահած կլինի փոքրիկ կենդանուն, արդյոք վնդջ է։

— Ա՛յ տո, տեսնես վնրտեղ կլինի հիմի,—շուռ-շուռ տարցնում էր պառավը։

— Ցեսիմ, այ տո, ով է իմանում...

— Զըլի՛ վորսկան մարդիկ բռնեցին։

— Դժվար թե՛... Շատ կարելի յե մոլորվել է մի տեղ։

— Կամ ով գիտի վոտքերն ընկել է պատատուկների մեջ... չի կարում դուրս գա՛...

— Ետ էլ կպատահի, այ տո՛...

— Առավոտը գնամ ման գտնու։

— Չա՛, այ տո, հա՛, գնանք. յես էլ կգամ... Իմ խեղճ բիժո՛... իմ խեղճ բիժո՛...

***

Առավոտյան վաղ ծերերը յելան կորած յեղնիկին վորոնելու։ Ծերությունից կքած ուսերով նախ ան-

ցան տան շուրջը, նայեցին բոլոր անկյուններըը, փոսերը, խոռոչները, և վոչինչ չգտնելով, տունը վակեցին ու մի-մի փայտ ձեռներին մտան անտառ։

Շունը հետևեց նրանց։

Արևը նոր ծագում եր։ Ծառերի և ծառերի վրա փայլում եր ցողը, աշնանային այն առատ ցողը, վոր յերբեմն հեշտացնում է գիշերը տեղացած անձրև։ Հազիվ մի քանի քայլ եյին արել, բայց նրանց վոտքերն ու փեշերը շաղից թրջվել եյին արդեն։ Նրանք այժմ գնում եյին այն կողմը, ուր պառավը չեր յեղել առաջին որը։ Ծառերի կախ ընկած ճղները թաց տերևներով շուտ-շուտ դիպչում եյին նրանց գլխին, յերեսին, յերբեմն էլ ճյուղերին հյուսված վոստայնը կպչում եր նրանց դեմքին, բայց այդ ամենին անուշադիր՝ առաջ եյին գնում նրանք չորս կողմն աչք ածելով։

— Ա՛յ տո, ով գիտի մի տեղ քնել է,—կասկած հայտնեց պառավը։

— Շատ կարելի յե, գիտես, այ տո,—կանգ առավ ծերունին.—լավ կանեմ մի կանչեմ։

Ցել նա մի քանի անգամ իրար վրա կանչեց.

— Բիժո, բիժո... բիժո ..

Ձայն չկար։ Անտառի մեջ շարժում չեր լսվում։ Միայն ծառերից կաթում եր ցողը՝ հատ-հատ, ծանր կաթիլներով։

Մի փոքր տեղ գնալուց հետո ծերերը բաժանվեցին իրարից՝ առանձին վորոնելու։ Շունը գնաց պառավի հետ, իսկ ծերունին մնաց մենակ։ Նա գիտեր, վոր յեղնիկները սովորաբար նստում են ծառերի բների մոտ ու թփերի մեջ, ուստի և շուտ շուտ նայում եր

ծառերի բներին ու թփերին, իսկ պառավը հետևում եր միայն շան գնացած ուղղությունները։

Ծողը շարունակում եր կաթել անտառում, ինչպես խախուտ տանիք ունեցող բնակարանը անձրև ժամանակ։

Առանձին-առանձին վորոնում եյին նրանք և շուտ-շուտ ծառերի խորքից կանչում իրար.

— Ա՛յ տո, հե՛յ... գտա՞ր...

— Չե՛, այ տո, չե՛... Դու գտա՞ր։

— Չե՛... չե՛...

Ցել արձագանքը, կարծես նրանց ծաղրելու համար, կրկնում եր. «Չե՛, չե՛...»։

Ցերկար ու ապարդյուն վորոնելուց հետո նրանք, վերջապես, նորից գտան իրար և վերադարձան տուն։ Պառավը չեր ուզում դատարկ ձեռքով տուն դառնալ և կամենում եր շարունակել վորոնումը. բայց ծերունին համոզեց նրան, վոր դա զուր է։ Այժմ պառավի ուսերն ավելի եյին կքել, քրտինքը ծածկել եր նրա դեմքը, և նա դժվարանում եր խոսել։ Ծերունին նույնպես լուռ եր։

— Ցես ախր յերազը տեսա, այ տո... Ցեսա, վոր եսպես բան պտի պատահի,—ասաց պառավը խորհրդավոր, հազիվ-հազ շնչելով.—Հիմի դու ինձանից վախեցիր, այ տո,—ավելացրեց նա ավելի խորհրդավոր։

— Ինչեր ես ասում, այ տո...

— Ե՛հ,—հառաչեց պառավը և լռեց։

Ցերբեք նա այնքան հուզված չեր յեղել, վորքան այդ յերկու որը, մանավանդ այդ րոպեին... Փոքրիկ յեղնիկի անհետացումը վրդովել եր նրա հանդիստը և նա մի վայրկյան չեր կարողանում մոռանալ նրան։

Հետևյալ ամբողջ որը պառավը անցրեց տխուր։ Մի որվա մեջ կարծես նիհարեց, իսկ յերկրորդ որը միայց անկողնում պառկած։ Նա թեթև հազում եր։

— Ի՞նչդ ե ցավում, այ տո,—ասում եր Ծերունին, նայելով պառավի պղտոր աչքերին։—Դու բիժոյի համար իսկի մի մտածի. յեկող տարի մի ուրիշը կգըտնեմ... Փառք աստծու, անտառում շատ կան...

Պատասխանի փոխարեն՝ պառավը խզզացնում եր միայն և թաց աչքերով նայում ամուսնուն։ Մյուս որը նա Ծերունուն կանչեց իր մոտ և ասաց.

— Ա՛յ տո, լավ կլիներ, վոր յես ճաշակվեյի։

Ծերունին լուռ նրան նայեց։

— Տխուր բաներ մի խոսա, այ տո,—ասաց նա։

— Ջե, այ տո. չե՛... Տեսնում եմ, վոր չե՛...

Պառավի աչքերում փայլեցին արցունքներ։ Ինչ լռելուց հետո, նա շարունակեց.

— Դու քեղ լավ կպահես, այ տո... Շորերդ չթողնես կեղտոտ. շանը սոված չպահես, խեղճ կենդանի յե... Հավերին էլ լավ մտիկ արա...

Ծերունին ջանում եր արցունքները զսպել։

— Ինչի յես տխուր բաներ ասում, այ տո։

— Ջե, այ տո,—շարունակեց պառավը,—լավ կըլի, վոր ճաշակվեմ։ Բայց ամենից լավ կլիներ, այ տո, լեթե մի անգամ էլ ժամ գնայի, խորանը համբուրեյի՛... էլ բան հարկավոր չեր։ Կամ թե չե մեն էլ տեսնեյի իմ հերանց տունը...

— Դեռ կտեսնես, այ տո, կտեսնես,—հույս տվեց Ծերունին։—Ուրերը չհատան։ Ցեթե կուզես, մի շաբթից հետո կերթանք։

Պատասխանի փոխարեն՝ պառավը բերանից մի խոր հառաչանք թռավ, և նա լռեց։

Ծերունին կոացավ դեպի նա։

— Ա՛յ տո, ինչ յեղավ քեզ։ Ա՛յ տո,—կանչեց Ծերունին։—Ա՛յ տո, կուզես գնամ տերտեր կանչեմ...

Պառավը չեր պատասխանում։

Նա արդեն մեռել եր։

Հաջորդ որը Ծերունին իջավ գյուղ և մի սալ տարավ սպիտակ տուն՝ պառավի մարմինը փոխադրելու։ Թաղեցին նրան գյուղի գերեզմանատան ծայրում։ Թաղումից առաջ Ծերունին խնդրեց տերտերին, վոր պառավին ճաշակի։ Ցավ յերբ քահանան կատարեց նրա խնդիրքը, նշխարքի մի փոքրիկ կտոր դնելով մեռելի սառած շրթունքների արանքը, Ծերունին շատ գոհ մնաց, վոր անկատար չթողեց իր պառավի փափագը։

* * *

Այժմ սպիտակ տան մեջ Ծերունին ապրում է մենակ՝ իր շան հետ միասին։ Շուտ-շուտ նա իջնում է գյուղ և այցելում պառավի գերեզմանը։ Առաջվա պես դարձյալ հսկում է իրեն պահպանության հանձնված տանը և նրա մեջ յեղած իրերին, սպասելով կրկին, թե տերերը կգան մի որ և հանքը նորից կսկսի գործել։ Հաճախ նստում է նա իր կացարանի շեմքին և, հայացքը հեռուն նետած, հիշում իր պառավին ու ինչ-վոր լուռ դղրնում ինքն իրեն։ Ցերբեմն էլ—այս լինում է առանձնապես յերեկոները,—յերբ մութն իջնում է անտառի վրա, նա դառնում է վոտքերի մոտ պառկած շանը և խոսում նրա հետ,

— Եդպես, Բոզար, այ տոն էլ չկա,—ասում է նա

մեկմ, մտերիմ ձայնով,—նա մեզ մենակ թողեց ու գնաց։ Նա էլ չի գա, Բոզար, էլ չի գա։ Անխիղճ այ տո, խեղճ այ տո...

Շունը գունչը թաթերի վրա դրած, լուռ նայում է տիրոջ դեմքին ու աչքերը խոնարհում։ Նա հասկանում է, թե խոսքն այն պառավի մասին է, վորն իր համար լավ եր պատրաստում և վոչը հիմա գնացել է ուր-վոր...

Տհաճելով շան կարեկից լռությունը, ծերունին վոգևորվում և ավելի և շարունակում է իր գրույցը։

Մինչ այդ մութն ավելի ու ավելի թանձրանում է և անտառում, և ներանք յիրկար-յիրկար ճռում են միևնույն տեղը նստած...

1916.

ԱՆՏԱՌՈՒՄ

I

Բրմաւոտա անտառները մեծաձառ են ու խիտ։ Հարյուրամյա կաղնիներ կան՝ խլխլոտ ու կիսաչոր ճղներով, պառավ վոստակալած բոխիներ, ճերմակիբան կեչիներ և անուշարույր լորիներ։ Բոլորը խիտ, իրար գրկած տարածվում են սարերն ի վեր և նստրանում գագաթների մոտ։ Մշտական խոնավություն և տիրում նրանց տակ ու մութ, և այդ խոնավության ու սթության մեջ աճում են նարնջագույն ծառեր ու դեղնագույն կանաչներ, վոր հիշեցնում են արևագուրկ մանուկներ։ Ամենից ուշ կաղնիներն են կանաչում այնտեղ, ամենից շուտ՝ լորիները, ապա կեչին ու թխկին են արձակում իրենց մածուցիկ տերևները և, հերթով, մյուս ծառերը։ Թվում է մի անբևեռեթ արհեստավոր հենքի առիջքին նորանոր գույներ ու նախշեր և ավելացնում։ Գարունն այստեղ գալիս է դանդաղ, քայլ առ քայլ, զգուշաբար... նախ անտառի փեշերն են կանաչում, ապա կանաչը որեցոր բարձրանում է վեր... Կանաչող ծառերի հետ միասին, գրեթե առանց տերև արձակելու, ծաղկում են վայրի տանձենին ու խնձորենին՝ իրենց սպիտակ ծաղիկներով։ Մուգ կանաչ փոնի վրա՝ նրանք թվում են ճերմակ չարսավ գցած թլթլուհիներ՝ գորշ ամբոխի մեջ։ Ծառերն այսպես մեծանում են, չորանում վոտի վրա և մի որ, փոթոր-

կից արմատահան, տապալվում գետին, ուր նրանք փտում են դանդաղ, և նրանց փտած մարմինների մի-ջից աճում են նոր տունկեր։ Իսկ չորացած վոստերն ու ճղներն այստեղ թափվում են այնպես, ինչպես իրեն-ձորուտում հատած խնձորները քամուց։ Յեվ տարեց՝ տարի այդ ճղափայտերը կուտակվում են իրար վրա ու գետինը ծածկում, այնպես վոր անտառ մտնողն սոխված և քայլել նրանց վրայով և շրջապատը լըս-նել վոտի տակ չարդվող ճղների ու վոստերի ճար-ճատյունով։ Անտառի խորքում տեղեր կան, ուր ճղա-փայտերը թափված են այնպես, վոր թվում է մեկը խնամքով կլոտուկները և արել։ Բայց այդ բոլորը քա-ժու գործն է։

Գեղացիք, իհարկե, շատ դոհ են, վոր ցախն այդպես առատ և անտառում. նրանք հեշտությամբ շալակներ ու քաշաններ են շինում ու տանում տուն, իսկ վոմանք՝ գյուղի կամ մոտիկ քաղաքի շուկայում ծախելու։ Այդպես եր անում և Յեֆթարանց Ալեքսանը դեռ լերիտասարդ հասակից։ Իսկ այժմ, լերբ քառա-սունն անց եր արդեն, շարունակում եր զբաղվել դը-րանով, վորովհետև ուրիշ արհեստ, գործ չուներ, և մի որավար հողն ու բոստանը չեր տալիս այն, ինչ պետք եր ընտանիք պահելու. իսկ նա ուներ պառավ մայր, կին և յերիք յերեխա... Որր մի յերկու շալակ հերիք եր լինում տան ծախսին։ Յեվ լավն այն եր, վոր այդ չուր մանր փայտի համար հարկավոր չեր թույլ-տվություն վերցնել անտառապետից. կարող եր կրել, ինչքան ուզում եր, միայն թե չոր լիներ։ Իսկ թացի համար խիստ եյին և խիստ ել տուգանում եյին։ Բայց վերջերս Ալեքսանը մեկ-մեկ, չոր փայտի հետ, տանում

եր և թաց փայտ. դոմի մարդակները փակել եյին, մի քանիսը նույնիսկ կոտրվել-կախ ընկել. հարկավոր եր նորոգել—դրա համար ահա Ալեքսանը չոր փայտի գը-նալիս կտրում եր և կանաչ ջահել կաղնիներ, իրրև մարդակացու և հատ-հատ, կանաչների մեջ թագ-ցընելով, մոտիկ ընկած ժամանակ տանում տուն։ Նա այդ մարդակացուները կտրում եր անտառի խորքում, վոր կացնի ձայն չլսվի և առհասարակ աչքաառում եր, վոր անտառապահը—Վանոն իրեն չտեսնի, վորով-հետև լեթե թաց փայտը ձեռին տեսներ բանը վատ կլիներ. մեծ տուգանք կդնեյին, գուցե և բանտարկե-յին, ինչպես անում եյին ընդհանրապես։ Մի հինգ վից մարդակ տարել եր արդեն, տարածն էլ հետը կբռնեին՝ էլ տակիցը չեր կարող դուրս գալ։ Ահա թե ինչու, նա առաջ եր գնում մեծ զգուշությամբ, հաճախ կանգ եր առնում և աչք ածում շուրջը։ Վորովհետև ամեն հանդիպումին Վանոն, ասում եր նրան. «Հը, մեր տղա, չորը տանում ես՝ տար, բայց մի թաց ճիպոտ ես կտրել—վայ քեզ»...

Այս սպառնալիքը հիշելով էր, վոր Ալեքսանը միշտ առանձին զգուշությամբ եր քաշում մարդակա-ցու փայտը. նա թոկը թաց, խլխլոտ կաղնու վիզը դը-րած՝ ձգում եր կանաչների միջով, և փայտն ոձի պես սողում եր նրա յետևից։ Շուտ-շուտ նա քրտնած ճա-կատը սրբում եր թևքերով, խլշկոտում, կամ կանգ առնում ու ականջ դնում։ Յեվ առհասարակ աշխատում եր գնալ խիտ տեղերով ու, վորքան կարելի յե, անձայն։

Մի որ էլ այդպես մարդակացու տանելիս՝ նա հանկարծ խշրտոց լսեց. կանգ առավ վախեցած ու ա-կանջ դրեց.—այդ հանկարծահաս քամին շրշեց տերև-

նել ու անցավ։ Ալիքսանը շարունակից ճանապարհը, վտանգին զգուշությամբ փոխելով ու ականջ դնելով։ Բայց մի քանի րոպեից նրան թվաց պարզապես, թե վտանգն էլ չկա։ Նորից կանգ առավ։ Դարձյալ ծառերն նրին շրշում, մեկ էլ քիչ հեռու մի նապաստակ էր վազում չոր տախերի վրայով։

Ճանապարհը շարունակելով՝ Ալեքսանը դուրս եկավ մի բացատ, որը ամբողջ ծածկված էր հասած խոտով։ Բայց նա բացատ չմտավ. կանգնեց բացատի պռնկին, ծառերի տակ ու աչք—ածեց մարդ չի՞ երեվում արդյոք։ Նրա զգուշ հայացքը թափառեց բացատության մեջ ու մարդ չտեսավ։ Սրտապնդած՝ քայլերը փոխեց նորից, բայց վոչ թե բացատով, որ ավելի կարճ էր, այլ ծառերի արանքով գնաց ձախ. հարկավոր էր զգուշ լինել։ Նա գիտեր, որ անտառում բոլոր ճանապարհները տանում են գեպի բացատները. ուստի բացատ դուրս գալը վտանգավոր համարելով՝ գերադասեց գնալ նորից ծառերի տակով, որ հանկարծ հեռու Քանի գնում՝ քրտինքը ծածկում էր մարմինը, դեմքը ու ծլում ճակատից։

Սակայն, մի փոքր տեղ գնալուց հետո, նա հանգիստացավ, մտածելով, որ գեթ մինչև հիմա վանոն—անտառապահը չերևաց, և հազիվ թե գա, ու աշխուժացած ձիգ տվեց փայտը, որ նրա գեմից սողալով գլխատված ոձի պես պոչը խիթում էր դես ու դեն—ծառերին, ցախերին ու կոճղերին։ Իսկ Ալեքսանը, կամենալով զոտին խրած, քա ում էր ու մտածում, որ սրբանավ մարդակնելի խիվը կլինի ութ, ևս մի տասը մարդակ—նա կարող է արդեն գոմի կտուրը նորոգել և աշնանը, յերբ տավարն եժան է լինում, մի յերկու եզ ծոզի առնել, և մի յերկու տարուց հետո յերկու կով կունենա...

Այժմ նա գնում էր ձորակի յեզրով, ներքևում լեռնային վտակը խշշում էր քարե-քար դիպչելով, և Ալեքսանն ուրախ էր, վոր ջրի աղմուկի մեջ իր շարժումը, քայլվածքը չի լսվի։ Բայց քանի գնաց էր լշենում, անտառն այնքան նոսրանում էր. ծառերի արանքով յերևում էր արդեն դաշտի հեռուն։ Նա կանգնեց, վերջին անգամ թևքով սրբեց ճակատի քրտինքը, դուրս կախ ընկած կացինն ուղղեց ու սկսեց կամացուկ իշնել դեպի անտառի պռունկը։ Հազիվ, սակայն, յերկու քայլ էր արել՝ նկատեց մի գլուխ, որ մասրի թփի այն կողմից նայում էր իրեն՝ փայտի պես դիք ու քմծիծաղով։

Վանոն էր—անտառապահը՝ սև որածայր փափախը գլխին, իսկ փափախի ճակատին՝ անտառապահական նշան։

Ալեքսանին այնպես թվաց, թե քարով խփեցին ծնկներին. նա կանգ առավ իսկույն և զգաց, որ վտանգը դողում են տակին։ Այ քեզ բան...Մինչդեռ նա վտանգն անցած էր համարում...

Բայց մինչ Ալեքսանն ուշքի կգար—Վանոն առաջ յեկավ՝ հրացանն ուսից կախած, փամփուշտակալը կրծքավր գցած։ Ցավ այնուհանդերձ Վանոյի հետագա խոսքերը Ալեքսանին թվաց յերազում և լսում.

— Տո, քանի անգամ եմ ասել քեզ՝ թաց փետ չկտրես...

Ալեքսանն անխոս ձեռի թոկը ցած գցեց և, իմանալով, որ այդպիսի դեպքերում անտառապահներն ա-

մենից առաջ կացինն են խլում, ձեռը բնաղդաբար տա-
րավ դեպի մեջքը և կացինը շոշափեց։

—Բա չես ամաչում, տո՛,—մոտեցավ Վանոն, փայտին նայելով, վոր ընկած եր կանաչների մեջ, կտրած ճղների տեղն սպիտակ, մի յերկու տեղ էլ դեռ վոստեր կային՝ տերևները ծայրին։—Բա ես բանս ա... ջուրը կաթում ա, չե՞,—շարունակեց Վանոն՝ գլուխն որորելով։—Հիմի յես ի՞նչ անեմ քեզ, հը՞...

Ալեքսանը իրան կորցրած՝ խեղճ-խեղճ նայեց Վանոյին. նրա մտքումը անցան տանը պահած մարդակները (յեթե սա բռնի, նրանք էլ կբռնի, և ինքը կորած ե), ու վորոշեց ալաչանքով շարժել նրա գութը և ներողամտություն։

— Դե, Վանո ջան, սխալվել եմ... մարդակ եր պետք. գոմս փուլ ա գալի։ Բախշի...

Վանոն աչքերը վոլորեց։

—Լավ ա... Ցես մեղավոր եմ, վոր գոմդ փուլ ա գալի,—ասաց վրդով։—Մարդակ ա պետք, շան վորդի, իրավունք առ։ Գիտես վոչ, վոր առանց իրավունքի թաց փետ կարել չի կարելի։

Վանոն և՛ զայրացած եր և՛ ուրախ։ Զայրացած եր, վոր նա—Ալեքսանը չոր փայտ կրկլու պատրաստ վակով—ծառեր ե կտրում. ուրախ եր, վոր փայտի գողը ձեռն ե ընկել։

—Իրավո՞ւնք... Ախր, Վանո ջան, փող վո՞րտեղից...

Ցեվ Ալեքսանն աղաչական նայեց նրան, ուզեց խնդրել, վոր ների, բայց Վանոն թույլ չտվեց շարունակելու։

—Ցես մեղավոր եմ, տո, վոր փող չունես. ի՞նչ իմ բանն ա, վոր չունես... Դե՛, քաշի գնանք...

Քաշիլ-գնալ—նշանակում եր կտրած փայտը տանել տանուտերի մոտ արձանագրություն կազմել և կամ բանտարկվել կամ տուգանք տալ։ Դրանից եր, վոր Ալեքսանը տեղից չշարժվեց և փորձեց նորից ներողամտություն հայցել.

—Վանո, քեզ մատաղ...Բախշի...

—Քաշի գնանք, ասում եմ։

—Վանո ջան... տուն՝ս մի քանդի։

—Գլուխս մի տանի։ Քաշի։

—Ինչ վոր արժի՝ կտամ, Վանո...

Ալեքսանին թվում եր, թե մարդիկ կլսեն իրենց, ու խոսում եր կամաց, գրեթե շշուկով։ Բայց Վանոն նրան լսել չեր ուզում և, ընդհակառակը, նրա շշնջոցին պատասխանում եր բարկությամբ, կրկնելով, վոր նա լավ կանի ավելորդ չխոսի, այլ փայտը քաշի՝ գնան։ Ալեքսանը, սակայն, քարացել եր. նա տեղից չեր ուզում շարժվելը Նրան թվում եր՝ շարժվել—նշանակում և վտանգի բերան ընկնել. տուգանվել վոչ միայն այս կտորի համար, այլ և մյուս մարդակների, վոր տանն ելին։ Տեսնելով՝ նա չի շարժվում, Վանոն ինքը մոտեցավ նրան.

—Դե վոր եդպես ա, կացինդ տուր...

Ցեվ, ասելուն պես, ձեռը մեկնեց անմիջապես՝ կացինը նրանից խլելու։ Բայց Ալեքսանը տեղը փոխեց, թույլ չտալով, վոր Վանոն կացինը հանի իր գոտուց։

—Տո՛ւր, ասում եմ,—բարկացավ Վանոն։

Ալեքսանն ուզում եր բանն ելի մեղմութեամբ վերջացնել.—Թող հլա, Վանո. Թող...

Այս անգամ Վանոն անխոս վրա պրծավ կացինը խլելու, բայց տեսնելով նա խուսափում և տալուց և աչխատում և յեռանը թագցնել—հայհոյեց, և այդ հայհոյանքին հետևեց մի ապտակ թե բռունցք (հարվածն այնքան անակնկալ եր և ուժեղ, որ Ալեքսանը չկարողացավ վորոշել) իյավ Ալեքսանի ականջին ու դեմքին միաժամանակ։

Ծավից՝ Ալեքսանը բնազդաբար ձեռը դցեց անմիջը տալս նրա ձեռը բռնելու և, ձեռքի փոխարեն, բռնեց չերեզկայի լայն թևքը ու քաշից դեպի իրեն՝ չթողնելու, վոր նորից խփի. բայց այդ բանը անտառապահն այնպես հասկացավ, թե Ալեքսանն ուզում է իրեն բռնել ու ձեռը բարձրացրեց և դարձյալ՝ Ալեքսանի ականջակոթին։

Այս յի րկրորդ, նույնպես անսպասելի հարվածից հետո՝ Ալեքսանը ձեռը բարձրացրեց յերրորդ հարվածից պաշտպան վելու, բայց Վանոն, ուսի հրացանը ձեռն առնելով, յերևի նրան սպառնալու մտքով, վրա բերեց Ալեքսանի և կոդքին։ Այդ կատարվեց մի ակնթարթում։ Ալեքսանն «ահ» արավ ու բռնեց հրացանի փողը և ապա, հենց վոտի տակ ընկած մի արշինաչափ փայտ վերց նելով՝ բարձրացրեց ու իջեցրեց։

Ու այնուհետև, Ալեքսանն ինքն էլ չիմացավ, թե ինչպես, ձեռի փայտն իջեցնելուն պես (նա նույնիսկ չզգաց՝ փայտը բանի դիպավ թե վոչ) Վանոն կարած ծառի պես տապալվեց ձեռքին՝ տերևների ու կանաչների վրա. հրացանը նետվեց մի կողմ, ինքն ընկավ յերեսն ի վար, գոտում ամբացրած դաշույնի ծայրը

խրվեց հողի մեջ, և այդ պատճառով միայց թևքված։ Ալեքսանին թվաց՝ նա սահելուց ընկավ և զարմանքով նկատեց, վոր նրա քունքից արյան չիթեր ցայտեցին կանաչների վրա։ «Ես արյունը վիրտեղից», մտածեց նա, ապա մի յերկու վայրկյան տպշած նայեց Վանոյին վոտից-գլուխ։

«Մեռավ, թե՞ ուշը գնաց», մտածեց Ալեքսանը, և տեսնելով քունքի արյունը չի դադարում և Վանոն էլ շարունակում է մնալ անշարժ, նա, փայտը թողնելով, փախավ...

Մի առ ժամանակ գնում եր արագ-արագ, գրեթե վազելով, վորքան կարելի յե վազել խիտ անտառում. կամ լինքն եր դիպչում ծառերի բներին, կամ ծառերի վոտաչնապատ ճյուղերն իր յերեսին։ Բավական տեղ գնալով՝ քայլերը դանդաղեցրեց, և հանկարծ նրան այնպես թվաց, թե մեկն յետևից գալիս է՝ խաչամը խշխշացնելով ու ցախերը կոտրտելով։ Կանգ առավ.—ծառերն էլին խշշում, նապաստակներ էլին դուրս թռչում թփերից ու, մի առ վայրկյան կանգնելով, ականջները ցցում խոտերի միջից, հետո ամբողջ մարմնով ձգվելով, ինչպես զորան ափից ջուրն ընկնի, ցատկում էլին հանկարծ և անհետանում։

Համոզվելով, վոր վոչ-վոք չկա—նա ճանապարհը շարունակեց, բայց այս անգամ զգաց լինչ-վոր բան և դիպչում յետևը։ Նա սարսափած յետ դարձավ, ձեռը յետ տանելով, և ձեռը դիպավ կացնին, վորի զոտուց կախ ընկած կոթը դիպչում եր աղորին։

Նա թեթևացած շունչ քաշեց։ Բայց խմորն և եթ նրան թվաց, թե լինչ-վոր տնքոց է լսում։ Զլինի այդ Վանոն է տնքում։ Ականջ դրեց։ Նորից ծառերը խշշում

ելին, և նրանց խշշոցի միջից կարծես տնքոց եր լսվում։
Նրա մեջ կասկածներ զարթնեցին. ով գիտի Վանոն ուշագնաց եր լեղել, հիմա ուշքի գալով, տնքում է։ Այդ բանը մոտաոնջութեան մեջ գցեց Ալեքսանդրին. ու իր կասկածն ստուգելու համար՝ նա գգուշութեամբ յետ դարձավ լեկած ճամպով։ Ու մի քանի րոպեից հասավ այնտեղ, ուր, նրա կարծիքով, ընկել եր Վանոն։

Բայց անտառապահը չկար։

Ալեքսանդրն թվում եր տեղը նույնն եր, բայց թե ինչու՞ անտառապահը չկար, չեր հասկանում։ Նրա մարմնով մի սարսուռ անցավ.—Ուրեմն վեր է կացել գնա՞ել... Ուրեմն խղուր չեր, որ իրեն թվաց, թե մեկը քայլում է անտառում... Բայց մթթե սա նույն տեղն է։

Նա զննեց շրջապատը. տեղը նման եր—նույն դեղնավուն կանաչը, նույնպիսի թփեր, լորիներ... Բայց չկար այստեղ իր կտրած կաղնի մարդակացուն։ Այս հանգամանքը սիրտ տվեց նրան, ու նա քայլերը փոխեց դեպի առաջ և, մի յերկու քայլից, տեղը գտավ։ Վանոն պառկած եր նույն դրութեամբ—յերեսն ի վայր, ձեռներն, ինչպես առաջ, լայն տարածած, դաշույնի պատյանի ծայրը հողը խրված... Ուրեմն վոչ մի շարժում չեր արել. հրացանն ընկած եր առաջվա պես՝ թփին դեմ ընկած, փափախը գլխից մի արշին հեռու. քունքից գնացող արյունը կանգ եր առել կարծես ու լերզացել։

«Մեռած ա տեսնես թե ուշագնաց», մտածեց Ալեքսանդրը կրկին և ուշեց վոտը նրա վոտին խփելով

ստուգել այդ, բայց վախեցավ և նույնիսկ ձեռք տալ չհամարձակվեց։

Յերևում եր, սակայն, վոր անտառապահը ինչպես ընկել եր, այնպես էլ մնացել եր անշարժ։ Կենդանութեան վոչ մի նշան... Դա և զարմացրեց և վախեցրեց Ալեքսանդրին։ Այդ րոպեին նա չգիտեր ինչ է ցանկանում—Վանոն մեռած լինի՝ լավ է, թե՞ ուշագնաց։ Վճռեց եր լավ—յերկուսն էլ հավասար վախ ելին պատճառում նրան, ու հեռանալ էլ չեր կարողանում... Նայում եր անտառապահի փռված մարմնին, նայում եր շուրջը և, ծառերի արանքով, դեպի հեռու դաշտը։

Մի քանի վայրկյան կանգնելուց հետո, տեսնելով անտառապահը չի շարժվում և շուրջը վոչ-վոք չկա, նա հանկարծ կռացավ, բռնեց Վանոյի վոտներից ու քաշից դեպի ցած... Քաշելիս, նրա վոտներն ընկան մի գոգ ընկած տեղ։ Կանգ առավ։ Փոսը լիքն եր անցած տարվա տերևներով։ Նրա ուշադն էլ հենց այդ եր։ Մի յերկու րոպեի մեջ՝ նա տերևները յետ տվեց ու անտառապահին՝ շորերով, դաշույնով գցեց այդ փոսը։ Քունքից յեկող արյունը լերզացել եր յերեսի և ուսի վրա. վիկն այնպես թույլ եր, վոր քաշելիս գլուխը դես ու դեն եր ընկնում՝ տունկից կտած ճմերուկի նման։

Անտառապահին փոսում տեղավորելուց հետո՝ Ալեքսանդրը նրա գլխարկն ու հրացանը նույնպես գցեց փոսը և ապա սկսեց խաշամը վրա տալ արագ-արագ։ Ցերը ձեռները հոգնեցին—վրա տվեց վոտներով։

Փոսը խնամքով ծածկելուց հետո՝ նա թոկը հանեց մարդակացուի վզից, դրեց թևի տակ և, փոխանակ

կարճ ճանապարհով գյուղ իջնելու, բարձրացավ ու անտառով գնաց դեպի վեր...

II

Տուն վերադարձավ Ալեքսանը շատ ուշ, յերբ որը մթնում եր արդեն. վերադարձավ հոգնած, դառարկա-ձեռն ու առանց կացին։ Դեռ բակի դուռը չհասած՝ նկատեց, վոր կինը՝ յերեխան գրկին՝ սպասում և ի-րեն, կնոջ հարցին՝ ինչու ուշացավ, պատասխանեց, թե շատ հեռուներն եր գնացել—գրա համար։

— Բա ինչու յես դատարկ,—շարունակեց կինը արտակարգ հետաքրքրությամբ, վորովհետև դեռ չեր պատահած, վոր Ալեքսանը դատարկ տուն գար, իսկ յերե յեկել ե՝ նշանակում ե—արտակարգ բան և պատահել—կամ կացինն են խլել կամ կոտրած փայտը տարել տանուտերի մոտ՝ արձանագրությունն կազմելու։ Նրա մտքով անցավ նույնիսկ, թե կարող և պատահել անկամ մարդուն բանտարկած լինեն։ Ահա ինչու տպավորված եր, իսկ Ալեքսանին այնպես թվաց, թե կինը մի բան և նկատում իր վրա (յերևի նայվածքը, դեմքը կամ հագուստն այնպես և, վոր անհանգստացնում և նրան), և կնոջ հարցը—(«ինչու յես դատարկ»)—թեև անսպասելի չեր իր համար, բայց պատասխանն ուշացրեց.

— Մարդակի ի ման գալիս վերևներում,

կինը զարմացավ.

— Ախ, ներքևում չկար։

Ալեքսանը պատասխանեց մի դժվար քմծիծաղով.

— Ներքևո՞ւմ... Բա կացնի ձևնը, ուզում ես դան տեղն ու տեղը բռնեն...

Ու Ալեքսանին թվաց, թե իր բերանով մի ուրիշն և խոսում և ինքը լսում ե նրան. թվաց նույնպես, թե այդ ձայնը դողում ե և ավելի բարձր և հնչում, քան պետք ե։ Նա ձեռի «մի բուռ ցախը», ինչպես կինն եր պատմում հետո, տեղավորեց պատի տակ, ապա յերբ յետ դարձավ, կինը հարցրեց. Բա կացինն ո՞ւր ա...

Հարցն անսպասելի յեր Ալեքսանի համար։ Նա մոռացել եր կացնի գոյությունը, մոռացել եր, վոր կացինն ընկել-մնացել և անտառում։

—Կացինը։ Թողի ձիրում։ Պահել եմ մի փչակում։ Հետս բերելի—կբռնելին։ Ավելի լավ և նետել մնա, ամեն որ հո տանելու չեմ...

— Ախր մի-մին եստեղ ել ա պետք գալի,—նկատեց կինը։

— Պետք ա, եղուց կբերեմ. հո չեմ թողնելու,—պատասխանեց Ալեքսանը, կնոջ առաջն ընկնելով ու դեպի տուն դնալով։

— Ի՞նչ ուներս յեփած։

Նա սաստիկ քաղց եր զգում։ Կինը նրա առաջը գրեց այդ որն յեփած կերակրի մնացորդը։ Ալեքսանն սկսեց արագ արագ ուտել, առանց բրդելու, ինչպես անում եր միշտ։ Մեկ գդալն եր բերանը տանում, մեկ հացի կտորը կծում, և այնպես շտապ, կարծես աճապարում եր մի տեղ։ Ու միաժամանակ նայում եր սենյակի անկյուններըը, իրերին, յերեխաներին, վոր տախտի վրա՝ փայտից ու փալասներից տիկնիկ եյին խաղում ու ծիծաղում։

— Մի քիչ կամաց կեր, մեջքովդ չգնա,— ասաց կինը, աչքը մարդու ուտելուն։— Ի՞նչ ես վռազում։

Նա շարունակեց փոքր ինչ հանդարտ, բոլոր ժամա-

նակ եվ յերեխաների կողմը նայելով։ Ուսերից հետո, հանվեց ու մոտավ անկողին։

— Բեզարեվ եմ,—պատասխանեց նա կնոջ զարմանքին։

— Կուզես վոտներդ լվանամ,—առաջարկեց կինը։—Կհանգստանաս ..

— Չէ,—հրաժարվեց նա, վերմակի տակ շուռ-մուռ գալով։ Քիչ հետո քունն մոտն և յերեխաներն ու կինը։ Բայց Ալեքսանի քունն խակուն չտարավ։ Նա յերեսն արել եր դեպի պատը ու լսում եր, թե ինչպես են մշմշում յերեխաները, ինչպես և խռմփացնում կինը և ինչպես խուլ անցնում են սայլերը հետու ճամպով։ Կամ-ոց-կամաց, սակայն, նրանը յեկավ։ Ու աչքը կպցրել եր թե չե—նա իրեն զգաց անտառում։ Փոթորիկ եր. անտառը դրնգում եր. հոդմակած ծառերի կատաբները կոտրում էլին և վրիվխարի լախտերի նման զարկում իրար։ Հարյուրամյա կաղնիներն ու հաճարինները ճարճատում էլին և արմատոտ տապալվում գետին։ Ցիվ ամբողջ անտառը կարծես խուճապի մեջ եր. թվում եր Ալեքսանին, թե ամեն ծառ ուզում և իր գլուխը փրկել, բոլորը միասին, թվում եր, վրնջում են փախս առած ձիերի ջոկի նման ու վազում։ Ամբողջ անտառը վազքի մեջ եր։ Հարյուրամյա կաղնիներն ու հաճարինները ճարճատյունով ընկնում էլին իրար յետևից, և Ալեքսանը վազում եր անտառով, վազում տապալվող ծառերի տակ չընկնելու համար։ Բայց ընկնող ծառերը կարում էլին ճանապարհը և դժ վարացնում նրա վազքը։ Նա ճիգ եր անում ընկած ծառերից անցնելու, բայց հազիվ լոք եր տալիս մեկից, մյուսն եր ընկնում, և այսպես անվերջ... Մեկ էլ, այդ ընդհանուր խուճապի մեջ նրա առաջն յելավ Վանոն՝ հրացանն ուսին... Ու հանկարծ ամեն ինչ փոխվեց։ Վանոն նստել եր նրա կրծքին և ուզում եր կացինը խլել։ Ալեքսանի շունչը կտրվում եր. ուզում եր վեր կենալ, բայց չեր կարողանում։ Վանոն քարի պես ճնշում եր նրան, և Ալեքսանը տնքում եր, հևում։ Վերջապես, նա դուռաց, և իր ձայնից զարթնեց՝ քրտինքի մեջ կորած։ Ու եվ չկարողացավ քնել։

Կինը, զարթնելով, մի յերկու անգամ հարցրեց.

— Ի՞նչ յես զարթուն։

— Հեչ, քունս չի տանում,— պատասխանեց։

Նրա քունն, իրոք, չեր տանում։ Անթիվ, անտեսանելի մտքեր եյին անցնում գլխով։ Մտածում եր, ի միջի այլոց, թե անտառից վերադառնալիս իրեն հո տեսնող չեղավ։ Թեկուզ ինքը մարդ չեր նկատել, բայց թվում եր նրան, վոր մի գուցե ուրիշները տեսած լինեն իրեն... Ու աշխատում եր հիշել, թե վորտեղից անցնելիս ինչ կար... Ինքը՝ մինչև գյուղ՝ մարդ չտեսավ, և հակառակ կողմից գյուղ մտնելով՝ հենց գյուղի ծայրին պատահեց Միրզանց Գարսևանի տղին, վորին և «բարբիկուն» ասաց։ Հենց Գարսևանի այդ տղեն կարող և վկայել, վոր ինքն այդ որը իրիկուն յեկել և գյուղի այդ կողմից. դա հերիք չե՞ մի թե, վոր իրեն ազատեն կասկածից... Իսկ առավոտյան անտառ գնալիս՝ մեկն արդյոք պատահել եր իրեն—նա չեր հիշում, վորքան եվ լարում եր հիշողությունը... Այդպես ժամեր անցան։ Պառկած՝ լսեց, թե ինչպես առաջին աքլորը կանչեց իրենց տնից քիչ հետու, հետո, բավական ուշ, կակազելով պատասխանեց նրան իրենց ջահել աքլորը, ապա, քիչ հետո, բառաչեց հարևան Հարոնի

կովը։ Դա նշան եր, վոր Հարոն զարթնել և. կոչն այդ ժամին բառաչում եր տիրոջը տեսնելիս։

Լույսը չբացված՝ նա վեր կաց ավ, հագնվեց ու դուրս յեկավ բակը։ Ջանադան ժամանակ բերած մարդակնե-րը դարսված եյին գոմի պատի տակ. վերցրեց դրանք և մեկ-մեկ տարավ կոխեց ցանկապատի տակ բուսած մարդաթյ յիլինջների մեջ։

Ցերեկը չորսը թագցրել եր արդեն, յերբ կինը, վոր նույնպես շուտ եր վեր կենում, մոտեցավ նրան։

— Եդ ինչո՞ւ յես պահում։

— Ինչո՞ւ,— կնոջ հարցը կրկնեց Ալեքսանը, ա-ռանց գլուխը բարձրացնելու։— Բա թողնեմ, վոր դան շարաչ բցեն։

— Մինչև հիմա չեն յեկել, եսոր պլանի գաճն,— շարունակեց կինն անփույթ։

Ալեքսանը պատասխանեց դարձյալ առանց գլու-խը բարձրացնելու։

— Ո՛վ ա խմանում։ Ավելի լավ ա մարդ զգույշ ըլի...

Նա չասաց, թե ինչու պետք և զգույշ լինել։ Բայց նա դարձյալ լսեց իր ձայնը, ու դարձյալ նրան թվաց, թե ձայնը իրենը չի, այլ լսում և մի ուրիշի ձայն։

Մարդակները թագցնելուց հետո՝ նա գրավվեց ցանկապատով, կարգի բերից ծուված տեղերը, դուրս ընկած ձողերը ամրացրեց։ Առավոտները սովորաբար նա յեթե շալակ եր ունենում՝ տանում եր շուկա, իսկ յեթե վոչ—գնում եր անտառ՝ նոր շալակ բերելու։ Բայց այժմ արևը բարձրացել եր արդեն, նա ցանկապատից

չեր հեռանում։ Այդ եր պատճառը, վոր կինը հարցրեց։

—Եսոր մերին չե՞ս գնում...

— Չե, եսոր գործ ունեմ բազարում,— պատաս-խանեց նա, և չասաց դարձյալ, թե ինչ գործ ունի։ Ու կրկին նրան թվաց, թե ուրիշի ձայն և լսում։

Յեվ, իրոք, ցանկապատի գործը վերջացնելով՝ նա գնաց շուկա։ Տարօրինակ թվաց առանց շալակի շուկա գնալը։ Այնպես եր սովորել շալակի— անհար-մար եր զգում։

Հենց շուկայի ծայրին նրան հանդիպեց շալա-կով ցախ առնողներից մեկը— վարժապետը։

— Փայտ չունե՞ս,— հարցրեց նա։

— Ցերկու որ և մերին չեմ գնում, վարժապետ. տանը գործ ունեմ։

— Ինձ մեր փայտ և պետք, չկա,—ասաց վար-ժապետը մոտենալ։—Եգուց կարող ես բերել, կամ եսոր ճաշից հետո։

— Տեսնենք, կաշխատեմ,— Ալեքսանն ուսերը վեր քաշեց ու քալելն ուղղից դեպի շուկայի այն մասը, ուր կանգնած եյին իր ընկեր-շալակտարները, նրանք ցախերը ծախած՝ շալա՛ի թոկը ձեռներին՝ զբ-ուսում եյին։ Այդտեղ եյին գաղթական Փիլոսը. գաղ-լիկ Սերոբը, չհե՞տ Խաչերեսը և յերկու ուրիշ տղա։

—Հը՞, Ալեքսան, եսոր լե ցախ չես ի բերի,— հարցրեց Փիլոսը։

— Չե,— պատասխանեց Ալեքսանը մոտենա-լով։—Ցերկու որ և տանը գործ ունեմ։ Դուք բերի՞լ եք։

— Բերինք լե, ծախեցինք լե։

— Վանուն հո բան չասավ,— հարցրեց Ալեքսա-

նը, թեև պիտեր, վոր Վանոյի խոսքը ցախ բեխողնեբին լինում եր այն, վոր միշտ մատ եր թափ տալիս և նախազգուշացնում, վոր թաց ծառ չկորնեն։ Բայց Ալեքսանին հետաքրքրում եր մի խոսք լսել Վանոյի մասին, և հասկանալ՝ վորևե բան գիտե՞ն նրանք թե վոչ։ Փիլոսի պատասխանից՝ «չեմ լե պատահել» չերեվաց, վոր բան չգիտեն։

Նա խոսքը փոխեց։

— Լավ ծախիք, տղերք։

Ելի այնպես, ինչպես միշտ։ Շալակը 20—25 կոպեկ։

— Հա. յես տաս չայի կորցրի,— շարունակեց Ալեքսանը ախորժելով։ Ցերկու որ ե մերին չեմ գըտնում։

Ասաց ու նայեց ընկերներին, սպասելով, թե կըհարցնեն, յերևի, իր անտառ չգնալու պատճառը։ Բայց, նրա սպասումին հակառակ, վոչինչ չհարցրին, և Ալեքսանն զգաց, վոր նրանք ուբախ կլինեն նույնիսկ, վոր ինքը բնավ անտառ չգնա, վորպեսզի շուկայում ավելորդ փայտ ծախող չլինի։

Ցերբ ընկերները շարունակեցին իրենց ընդհատված զրույցը, վորը չեր վերաբերում վոչ փայտին, վոչ անտառին և վոչ ել շուկային,—Ալեքսանը հետացավ, մոածելով, թե նրանք չգիտեն, յերևի, վոր Վանոն չկա, վոր նա յերեկ և այսոր տուն չի յեկել...Բայց Վանոյի կինը ճո կիմանա.— անցավ հանկարծ Ալեքսանի մտքով, ու մոածեց՝ չանցնե՞լ արդյոք անտառապահի տան մոտով, տեսնելու ինչ կա։ Բայց չէ, չէ... վանեց իրենից այդ հանկարծական միտքը ու նորից գնաց տուն։

Պարապ չնստելու համար՝ վերցրեց ուրագը և սկսեց տան առջևի խնձորիների համար նեցուկները շինել։ Ծառերը թեև բռնել եյին, բայց այնքան ել ծանրաբեռնված չեյին. այնուամենայնիվ Ալեքսանը նեցուկները դրեց ավելի կախված ճղների տակ։

— Վրեն ինչ կա վոր, այմարդ, դուչար ես տալիս,— ասաց կինը։

— Մի ասի. մեն ել տենաը չդիմացավ։ Խնձորի ծառը նազուկ ծառ ա։

— Բա ասոր ել մերին չես գնում,— նորից հետաքրքրվեց կինը։

— Չե, հլա տեսնենք։

— Բա կացինը թողել ես. կգողանան, չե...

— Չեն գողանա,— ծոր տալով պատասխանեց Ալեքսանը։

Իրիկնապահին նա նորից դուրս յեկավ տնից մի բան լսնանալու։ Անտառապահի տունը գտնվում եր բլուրի վրա, գրեթե գյուղի ծայրում։ Ասում եյին, վոր նա դիտմամբ գյուղի ծայրին և բնակվում, վորպեսզի լավ հսկի անտառին։ Ասում եյին, վոր նա դուբրիճ (հնոտադիտակ) ունի. գնում և աչքերին ու լուսամուտից նայում անտառ մտնողին ու այնտեղից դուրս յեկողին. և լավ տեսնում-ճանաչում և, ինչպես կողքին կանգնած մեկին, վորից հետո գնում և, բռնում ու տուգանել տալիս։ Թե վորքան ճիշտ եր դուրբինի պատմությունը և վանոն ուներ արդյոք այդ դուրբինը,—վոչ-վոք հաստատ չգիտեր, վորովհետև վոչ-վոք չեր տեսել։ Այդ յեզրակացնում եյին հավանորեն նըրանից, վոր Վանոն շատ ժամանակ մարդկանց վրա

յիր հասնում հենց ծառը կտրելու միջոցին, կամ փայտի դողին բռնում եր հենց գլուզ մտնելիս։

Ալիքսանն ինքն էլ չիմացավ, թե ինչպես քայլերն ինքնաբերաբար տարան նրան մինչև վանույի տունը։ Մի նիհար կին՝ յերկու յերեխայի հետ՝ տան առջևի փոքրիկ բոստանում քաղհան եր անում, իսկ յերեխաները, ծակած արևածաղիկների տակ նստած, հաց էին կոծում։ Ալիքսանն անցավ, նրանց կողմը նայելով։ Կինը տարված եր աշխատանքով ու վոչ մի նըշան չկար, թե անհանգիստ ե. յերեխաները նույնպես. նրանցից մեկը նույնիսկ գլուխ ծիծաղով խոսում եր ինչ-վոր։ Առնասարակ անհանգստության նշան չեր յերևում։

«Աերենն դեռ բան չգիտեն», անցավ Ալիքսանի մտքով, և նա կրկին, դանդաղ քայլերով, վերադարձավ տուն։

Հետևյալ որը նույնպես անտառ չգնաց։ Կնոջ հարցումին պատասխանեց, թե մեկը գործ և խոստացել, պիտք և անի. դա ավելի ոգուտ ե, քան անտառից մի շալակ ցախ բերելը։ Ու գնաց շուկա։ Շրջեց այն տեղերը, ուր մարդիկ հավաքվում էին, զրուցում։ Կանգնեց մի յերկու խմբի մոտ ու լուռ ականջ դրեց։ Խոսում էին զանազան բաներից, և վոչ-վոք Վանույի մասին։ Հետացավ, նորից գնաց այն կողմը, ուր սովորաբար հավաքվում էին շալակտաքները։ Նրանք էլ Վանույի մասին վոչ մի խոսք։

Զարմանալի չեր։ Անտրոշուքյունը անհանգստացնում եր նրան։

Կեսորից հետո նա կրկին անցավ անտառապահի տան կողքով։ Կինը դարձյալ, յերեխաները մոտը, քաղ-

հան եր անում։ Ցավ զարձյալ անհանգստության վոչ մի նշան։ Դա ինչ եր նշանակում։ Մի թե կինը չի հետաքրքրվում մարդով։ Թե սովոր ե մարդու մի քանի որվա բացակայությունը—դրա համար հանգիստ ե։ Մի քանի որով բացակայելը, յերևի, սովորական բան ե նրա համար։ Մեկ էլ, յերբ կինը նայից յերեխաների կողմը—Ալիքսանին այնպես թվաց, թե նա մտահոգ ե։ Ով գիտե ուրիշ բան ե պատահել,—անցավ նրա մըտքով, և հին կասկածը նորից պղտորեց նրա սիրտը.—Չլինի, վանոն ուշագնաց եր և, մի առ ժամանակ մըտնալով. յեկել ե տուն։ Կասկածը զարձավ յեղերգություն, ու այնքան հավանական, վոր նա յերկյուղով հեռացավ անտառապահի տան մոտերքից։—Ինչ կա վոր, շատ կարելի յե ուշագնաց եր, հիմա յեկել ե, բայց առայժմ չի յերևում։ Պառկել ե, դուցե, մինչև վերքի լավանալը... Իսկ յեթե այդպես լիներ, չե՞ վոր կըխոսեյին, թե վանոն անտառում վիրավորվել ե...Բայց վոչ վոք չի խոսում, իսկ կինը մտահոգ ե միայն, և վոչ անհանգիստ... Մեկը մյուսից տարբեր բաներ էին անցնում Ալիքսանի գլխով, և ամենից համառորեն այն, վոր անտառապահը. կարող ե պատահել, ուշքի գալով. յեկել ե տուն. առայժմ, յերևի, բուժում ե վերքը և այսոր-եգուց դուրս կգա վրեժխնդիր լինելու... Մեկ էլ, պպատանալով, գտնում եր, վոր հազիվ թե այդպես լինի. չե՞ վոր իր ձեռով գցից նրան փոսը ու խաշամը վրա տվեց։ Բայց ինչո՞ւ կինը հանգիստ ե... Ինչո՞ւ վոչ վոք չի խոսում... Չե, այստեղ ինչ-վոր մի բան կա...

Մտքի հետ ընկած՝ Ալիքսանը վերադառնում եր տուն, յերբ նրա գլխում մի նոր միտք ծագեց.— լավ

չէր լինի գնալ անտառ և տեսնել այնտեղ՝ իր փոսում և վանդն, թե վոչ։ Ցնծի այնտեղ չլինի, ուրեմն պարզ է— չկայ և։

Մի ժամ հետո՝ նա արդեն անտառումն էր։

Այս անգամ նա, առանց դժվարության, գտավ անտառապահի տեղը և ագահորեն վրա ընկավ տեղաբնիկների թեյ տալուց կուշտացած, հևալով թեյ ավող տերևները, թեյ տվող չերկու ձեռքով, և հանգիստ չուռնչ քաշեց այն ժամանակ մրայն, երբ նախ չերևաց անտառապահի չերկարաճիտ կոշիկի ծայրը, ապա վոտը մինչև սրունքը։

Ալեքսանն ուղղվեց և թևքով սրբեց ճակատից ծլլող քրտինքը։ Ապա, մեկեն ցնցվելով, ուշքի չեկավ և սկսեց ծածկել վանդի բացված վոտը։ Ցետ տված տերևները վրա տվեց արագ արագ ու հարթեց։ Բայց տերևները չելին պառկում այնպես, ինչպես ինքն էր ուզում. այնինքն չէր չերևում, վոր հնուց պառկած տերևներ են. ամեն մի տեսնող կկռատեր, վոր նոր են լցրած, վորովհետև հնուց պառկած տերևների չերեսը միատեսակ չոր է լինում, և բոլորը միատեսակ գույն են ունենում։ Իսկ այստեղ խառն եյին—մի քանիսը չոր, մի քանիսը խոնավ. կային այնպիսինները, վոր արդեն փտում եյին։ Մի խոսքով՝ նկատվում էր, վոր հին տերևները տակն ու վրա արված են, և ամեն մարդ պարզ կտեսներ, վոր այստեղ մի բան կա... Այդ միտքն այնպես վախեցրեց նրան, վոր նա սկսեց մոտիկ թափված չոր ցախերը հավաքել ու թափել տերևների վրա։ Նա այդ բանն անում էր արագ ու անկարգ, տենդով բռնվածի պես։ Սկզբում մի քանի գիրկ վերցրեց արջի նման · ու բերեց թափեց տերևների

վրա, ապա ցրեց փոսի լայնքովը մեկ. հետո նորից բերեց՝ թափեց, բերեց՝ թափեց, այնքան, վոր ել տերևները չելին յերևում համարյա։ Վերջին գիրկ ցախը հավաքելիս՝ նա վոտնաձայն լսեց, ու, մինչ անելիքը կվորոշեր, տեսավ գաղթական Փիլոսին, վոր թոկը ձեռին առաջ էր գալիս։

Ալեքսանը շարունակեց ցախ հավաքել։

— Բարի որ, տղա,—ասաց Փիլոսը։—Ի՞նչ կընես։

— Հևչ, փետ եմ հավաքում,— պատասխանեց Ալեքսանը, առանց գլուխը բարձրացնելու, շարունակելով հավաքել մանր, անպետք ցախեր, վորոնց նշանակությունն չի տալիս վոչ մի շալակտար։

—Եսի խախվը հորի՛ կհավաքես,—նայեց արհամարհանքով Փիլոսը նրա հավաքած ցախերին։

Ալեքսանն ելի առանց գլուխը բարձրացնելու,

— Վոչինչ, ծախելու համար չի. կտանեմ մենք կվառենք...

Փիլոսը խոսեց մի քիչ ել և թոկը ձեռին գնաց վեր։ Իսկ Ալեքսանը, աչքը նրա յետևից, հավաքած վերջին գիրկ ցախը փոքրիկ շալակ արավ, կապեց մնջքի գոտիով և, փոխանակ շալակելու, ինչպես անում էր սովորաբար, կռնատակը դրած վերադարձավ տուն, մտածելով, թե արդյոք Փիլոսը մի բան հանկացավ թե վոչ...

III

Անցավ մի չերկու որ ևս։ Գյուղում սկսեցին խոսել, թե չերեք չորս որ է անտառապահը չկա։ Ասում եյին, վոր չորս որ առաջ գնացել է անտառ և չի վերադարձել։ Վանդի կինը՝ չերեխաները հետը՝ գնացել

եր տանուտերի մոտ և խնդրել, որ ամուսնուն գըտ-
նեն։ Ցավ տանուտերը մարդիկ եր ուղարկել անտառ՝
Վանոյին փնտռելու, և գալաո՝ պրիստավին հայտնելու։
Խոսում եյին, թե անտառ գնացողները Վանոյին վո-
րոնել են ամեն տեղ — չեն գտել իսկ պրիստավը, ա-
սում եյին, կարգադրել է՝ նրան գտնելու համար շներ
բերել։ Այդ շների մասին հրաշքներ եյին պատմում.
ուր էլ լինի, ասում եյին, գողացած ապրանքը թե
լինքը գողը, թեկուզ յոթ գաղ հողի տակ թաղնված,
գտնում են։ Այդպես և կորած մարդուն և դիակը։ Շատ
հոտառու յեն... Պատմում եյին, որ հազար մար-
դու մեջ գտնում են և՛ գողին և՛ մարդասպանին։ Ցեթե
նույնիսկ, ասում եյին, գողը կամ մարդասպանը տանը
նստի և դուրս չգա մարդամեջ — շները գտնում են
նրան և փեշից քաշելով բերում դատարան։

Ալեքսանը շարաթից ավելի ցախ բերելու չգնաց։
Հարցասեր կնոջը պատասխանում եր միշտ միևնույնը՝
—«գործ ունեմ», կամ հնարում եր պատմություններ —
մի որ մեկին պիտի տեսներ, մի ուրիշ որ մեկը կան-
չել և, յերրորդ որը՝ «սիրտս ցավում և»։ Բայց տանն
ել չեր նստում։ Գնում եր շուկա, նայում ցախ ծա-
խողներին, ախոսում, որ տան գործը չի թողնում
իրեն անտառ գնալու. մոտենում եր մարդկանց և ան-
խոս ականջ գնում նրանց զրույցներին (այդտեղ եր,
որ լսեց Վանոյին վորոնելու և շներ բերելու մասին).
յերբեմն անցնում եր գյուղական դատարանի մոտով,
տեսնելու՝ շները չեն բերել արդյոք։ Որական մի ան-
գամ դուրս եր գալիս գյուղից, անցնում Վանոյի տան
կողքով։ Դա դարձել եր արդեն պարտականության
պես մի բան։ Վանոյի կինն այժմ առաջվա պես հան-

գիստ քաղհան չեր անում բոստանում. Ալեքսանը նը-
րան գտնում եր կամ արցունքն աչքերին, յերեխա-
ների հետ դատարան գնալիս կամ այնտեղից դառ-
նալիս, և կամ տան շեմքին նստած լաց լինելիս։ Նրան
տեսնելիս՝ Ալեքսանը յերեսը շրջում եր և արագ անց-
նում։

Վանոյի մասին տարբեր բաներ եյին խոսում.
յենթադրում եյին, որ նա կամ ավազակների յե հան-
դիպել կամ լողանալիս (նա սովորություն ուներ ան-
տառի տակով անցնող գետում լողանալ), գուցե, խեղդ-
վել և գետում։ Կար և այն կարծիքը, թե գույքի գա-
նահ յե հանդիպել անտառի խորքում. չե որ, ինչ-
քան ասես, արջ, գայլ կա անտառի խորքում։ Մեծա-
մասնության կարծիքը, սակայն, այն եր, որ անտա-
ռապահը կամ սպանվել և կամ խեղդվել, այլապես մի
տեղից կերևար։ Այդ կարծիքին եր և գյուղի տանուտե-
րը, որ մի ջահել մարդ եր և փառասեր. սիրում եր
աչքի ընկնել պաշտոնի մեջ, այսինքն այնպիսի գոր-
ծեր անել, որ դրանց մասին խոսեն, որ դրանք
դուր գան հասարակության, որպեսզի իր ընտրու-
թյան ժամանակը լրանալուց հետո՝ նորից ընտրվի։
Ցավ դա յիր, որ քաղաքից շներ եր պահանջել։ Այդ-
պես եյին խոսում շուկայում։ Մի տարորինակ բան եր
նկատում Ալեքսանը. ցախ բերողները կարծես ուրախ
եյին, որ Վանոն չկա և կարող են ուզած փայտը
բերել։ Մի անգամ այդպես եյ ասաց Փիլոսը. «լավ
ցախ եր ըշտա։ Վանոն կթորդեր որ»... Թեև շուկայում
քիչ եյին խոսում Վանոյի մասին, բայց գյուղական
դատարանում նոր մարդիկ եյին յերևացել — ատրաժ-
նիկներ, որ ձիեր հեծած՝ գնում եյին անտառները

պատելու։ Ցեվ շարունակ խոսում էին ելի, թե շուտով չներ են բերելու։ Այդ չները սարսափ էին գցում Ալեքսանի սիրտը։ Ինչ կլինի, չէթե հանկարծ գան ու քնած տեղը հարձակվեն վրան, կամ վտղոցով անցնելիս՝ փեշից բռնեն։ Ու զարմանում եր, թե ինչպես կարող են չներն այդքան իմաստուն լինել։ Ցեվ նրա միտքը կորչում եր տարակուսանքների ու զարմանքի մեջ։ Այդ բոլորը նրան թվում եր հրաշքի պես բան, բայց հնարավոր. մարդու ձեռքից ինչ ասես չի գա։ Ամենից զարմանալին այն եր, որ ասում էին, թե չները նախ սպանվածին են գաղնելու, ապա սպանողին։ Պետք ե, ասում էին, սպանվածի հոտն առնեն, որպեսզի սպանողին գտնեն։ Ուրիշ կերպ չի կարելի։ Ցեվ զրանից եր, որ այժմ մի համառ միտք եր պատել նրան—ինչպես անել, որ անտառապահի դիակը չգտնեն։

Դա եր պատճառը, որ նա չորս որ հետո նորից գնաց անտառ՝ հետքերը կորցնելու։

Բայց ինչպես միշտ, այս անգամ ել նա անտառում ավ որ թե կարճ ճանապարհով, որ ուղիղ կտաներ դեպի փոսը, այլ գնաց կողմնակի ճամպով։ Նա այդ անում եր նրա համար, որ մարդ չտեսնի իրեն, և տեսնողը չհիշեցրի, թե ինքը գնում և այն կողմը... Բայց չնայած այդ զգուշությանը՝ հենց անտառի պռնկին, փոսից մի յերկու հարյուր քայլ ցած, տեսավ Փիլոսին, որ ցախ եր տանում՝ շալակի տակ կռացած։ Տեսավ այնքան մոտիկ, որ զարմացավ, թե ինչպես նա իրեն չնկատեց։ Նրանց բաժանում եր ընդամենը ծառերի և թփերի մի խումբ։

«Լավ որ չտեսավ»,—մտածեց Ալեքսանը, ու

կանգ առավ մի առ ժամ, մինչև Փիլոսը բավական հեռացավ, դուրս յեկավ անտառից. ապա ինքն զգուշությամբ բարձրացավ վեր՝ դեպի փոսը։ Փոքր ինչ գնալով դուրս յեկավ մի նոսր տեղ և ծառերի արանքից նայից գյուղի կողմը՝ անտառ բերող ճանապարհներին։ Չամոզվելով յեկող չկա—քայլերը փոխեց։ Այժմ նա գնում եր մի նեղ արահետով, վորը տեղ տեղ ծածկված եր մամուռով և հաճախ անհետանում եր խիտ, սյուների պես շարված լորինների արանքում։ Այդպես գընաց մինչև ձորակը, վորտեղից գալիս եր արդեն քարերքար դիպչող վտակի խշշոցը։ Հազիվ ձորակին եր հասել, վոր անցնի այն կողմը և մոտենա փոսին,—մոտից, շատ մոտից խոսոց լսեց։ Վոտը կախ արավ։ Նա չիմացավ՝ շարունակի թե կանգնի։ Ցերկընտրանքն այնքան դժվար թվաց, վոր մի քանի րոպե տատանվում եր։ Մինչ այդ ձայները կարծես ավելի մոտեցան և մեկը հարցրեց.

— Ալեքսանն...

Ալեքսանը ծուլ յեղավ քնից վեր թռչողի պես. խլչկոտեց, և զգաց, վոր բերանը չորանում է։ Մի տաս քայլ դենը՝ լորինների տակ նստած եին յերեք հոգի. իրենց գյուղացիներն եին—մեկը Դանանց Մուկուչն եր, մյուսը Շահոյանց շեկ Մարտինը և յերրորդը՝ վորսկան Վասիլի տղա Ռուբենը։ Կարծես քարով խփեցին Ալեքսանի ծնկներին. քիչ մնաց վոտները ծալվեն։ Դրանք այն մարդիկն եին, վոր մի քանի որ եր ահա, տանու տերի հանձնարարությամբ վորոնում եին վահոյին։ Ցեվ իսկույն Ալեքսանի գլխով այն միտքը անցավ, թե չլինի սրանց Փիլոսն է բերել՝ տեղը ցույց տվել։ Իզուր չեր, վոր այն անգամ տեսավ իրեն։

Ցերեկի, բերել եր սրանց տեղը ցույց տվել ու ինքը գնում եր։ Ապա ինչո՞ւ կանչող ձայնը (նա ճանաչեց — դա Դանանց Մուկուչի ձայնն եր) ուրախ եւ Ըստ յերեւույթին ուրախ են, վոր իրեն էլ կտան...

Նա վեռ ուշքի չեր յեկել, յերբ նույն Մուկուչը կանչեց նորից.

— Արի, Ալեքսան, արի տեսնենք ձեր ես գնում։

— Ցախի յեմ գնում,—պատասխանեց Ալեքսանը, խեղճ-խեղճ առաջ գալով և աչքի տակով նրանց դննելով։

— Ցախի՞... Բա թակդ ձեր ա,—շարունակեց Մուկուչը։

Ալեքսանն զգաց, վոր սուտը բռնվում եւ նա տաքությունն ու սառնությունն զգալ միաժամանակ։ «Սրանք ամեն բան գիտեն»,—անցավ նորից նրա մտքով ու մտածեց, վոր էլ թագցնել չի կարելի, վոր դրանք փիլոսի շնորհիվ ամեն բան տեսել են, յերևի... բայց նրանց հարցին մի բան պատասխանելու համար՝ ասաց, վոր վերևում ուրիշ թոկ ունի, նրանով պիտի բերի։ Նրան թվաց, սակայն, վոր իր պատասխանը կասկածով ընդունեցին։

— Թոկը հե՞չ, Ալեքսան. դու սպիչկից խաբար տուր—սպիչկա չունե՞ս,—ասաց յերիտասարդ շեկ Մարտինը, մի ձեռով ծխախոտի տուփը ծոցից հանելով, մյուսով ճակատի քրտինքը թևքով սրբելով (յերևում եր՝ նրանք հոգնած են. ըստ յերևույթին նոր էլին նստել, վոր քրտնած էլին)։

Այդ հարցը օիրա տվեց Ալեքսանին. նա ձեռը տարավ ծոցը և, լուցկու տուփը հանելով, տվեց Մարտինին։

— Դե նատի, մի պապիրոս փաթաթեմ,—և Մարտինը ծխախոտի տուփը ծոցից հանելով՝ սկսեց լրագրի թղթով պապիրոս շինել։

Ալեքսանը նստեց ականջ. նա կուզեր լուցկին թողնել ու գնալ, բայց հարմար չեր...

— Ցես ասի, վոր ես կողմը զուր ենք գնում,—խոսեց Մուկուչը դժգոհ, շարունակելով կարծես ընդհատված մի զրույց։—Իսկ դու հենց հայ ես տալիս. «գնանք հա գնանք»,—դարձավ նա ընկերոջը, վորսկան վասիլի տղա Ռուբենին։

— Բա ման գալն էլ վոնց կլինի, ախպեր,—արդարացավ Ռուբենը։—Ասում են՝ «ման եկեք»—պիտի ման գաս, թե՞ չե։ Ամեն կուռ (կողմ) գնացինք, ես կուռը չգայի՞նք... Բա ուզում ես մի տեղ նստենք ու յիտ գառնանք, թե չկա։ Խիղճն էլ լավ բան ա...

Ինչի՞ մասին են խոսում։ Ալեքսանն իրեն չեր զգում. նա ամբողջովին լսողություն եր դարձել։

— Չկա էլի, ջանըմ, իրեք որ ա ման ենք գալի—չկա,—դժգոհեց վերջը շեկ Մարտինը։—Ասում են՝ «սպանել»։ Սպանողը հո չի բերի առաջիդ վեր քցի։ Ով գիտի վոր քարի, վոր քոլի տակովն ա արել...

— Ե՛հ, ինչ գիտեն սպանել են,—սիրամարեց նորից Մուկուչը։—Չնենց «սպանել» են ասում, կարծես սպանողի կողքին են եղել... Դու ինչ կասես, Ալեքսան,—դարձավ նա գունատ նստած Ալեքսանին։—Ես վանդոլին թշնամի-բան ունեի...

Ալեքսանն անմիջապես չպատասխանեց. նա ոդի պակասություն զգաց կարծես և ուսերը վեր քաշեց։

— Ցեսիմ...

— Եվ՝ Սարթ մարդ եր...

Ալեքսանն ուսերը վեր քաշեց կրկին։

— Ի՞նչ ես կարծում, Ալեքսան,—շարունակեց Մուկուչը,—եղ մարդուն սպանած կըլլեն թե ուրիշ բան ա պատահել։

Ալեքսանը նայեց Մուկուչին, ընկերներին, և նրան այնպես թվաց դարձյալ, թե ամեն բան գիտեն և ուզում են իրեն փորձել։ Ու մեքենաբար ուսերը վեր քաշեց դարձյալ։

— Ցեսիմ...

— Ե, դու յել՝ «յեսիմ, յեսիմ»... Բա ամեն որ մերուն ես ըլում։

— Ցես մի շաբաթ ա մերին չեմ յեկել... Տանը գործ ունեյի... ասաց Ալեքսանն ու նորից տաքութլուն զգաց, և նրան թվաց, թե դեմքից հիմա մի բան կհատկանան։

— Լավ, ինչքան չըլնի կիմանայիը—թշնամի ունի, չունի։ Մերու մարդ ես։

— Ինչ իմանամ՝ ով եր հետն ընկած։ Ինձ վոր վատ բան չի արել մարդը։ Շնորհակալ եմ։ Իմ հասկանալովը ամենքի հետ էլ լավ եր։ Մեկ-մեկ հնպես դիպչողական խոսք կասեր, բայց եզպես խոսք ով չի ասում...

— Դու հնենց ես խոսում, այ տղա, կարծես մի բան գիտես, հը՞,—ընդհատեց Մուկուչը։

— Ցե՞ս... Ալեքսանի քրտինքը նորից վրա տվեց։ Բան ասի՞ր... Ցես մի շաբաթ ա մերին չեմ յեկել... Բայց, ո՞վ ա իմանում, մարդ ա... կարիլե յա գաչաղների յա պատահել... Եղ վերի կողմերն, ասում են, գաչաղներ կան—Ծաղկոտ յուրդից տավար են քշել են որը...

— Ե՛, գաչաղը նրա հետ ինչ գործ ուներ,—մի-

ջամտեց վորսկան Վասիլի տղա Ռուբենը, Ալեքսանի ասածը դատարկ բան համարելով։

— Ով գիտի՞, ախպեր, վոր շան վորդին ա սպանել, հիմի արի դու ջառմեն քաշի,—դժգոհեց Շահոյանց Մարտինը, մեկնած վոտը դժվարությամբ ծալելով։—Հալից ընկանք... Ով գիտի ում ա ծեծել, ում ա շորաֆ գցել...

— Կնիկը կիմանա ում հետ ա յեղել կռված,—նկատեց Մարտինը, պապիրոսի մնացորդը կանաչների մեջ գցելով, և ավելացրեց տարակուսած։—Ես, հիմի գնանք ինչ ասենք։

— Վոր չկա հո ստեղծելու չենք,—նեղացած վեր կացավ Մուկուչը։

Մյուսներն էլ վեր կացան, ու խոսելով իջան։

Ալեքսանը թեթևացած շունչ քաշեց և կամաց գնաց վեր, սպասելով վոր նրանք հեռանան։ Իսկ յերբ նրանք չոր ցախերն ու վոստերը ճռճռացնելով իջան ցած, և այդ ճռճռոցը կամաց-կամաց լռեց, նա քայլերն ուղղեց դեպի փոսը։

Նա զարմացավ, վոր փոսի յերեսը մնացել եր նույնը. վոչինչ չեր փոխվել։ Նայեց, նայեց մի յերկու վայրկյան, ապա հանկարծակի տենդով բռնվածի պես, սկսեց ցախ ու տերև լցնել փոսը։ Նա աշխատում եր հեռաքերը ծածկել, կորցնել։ Ինչպես անցյալ անգամը, այնպես էլ հիմա, նա ցախը հավաքում եր և խոտախառն ու տերևախառը, գերկ արած, բերում-լցնում փոսը, իսկ տերևները յերկու ձեռով ածում նրանց վրա։ Թվում եր անտառում տոթ կա, ողի պակասություն. նրա շունչը նեղվում եր. քրտինքը ծլլում եր ճակատից ու ականջատակերից։ Բայց Ալեքսանն ասես չեր

նկատում այդ։ Նա մոռացել եր և՛ իրեն, և՛ շրջապատը, և գործողությունը։ Նրան դիակավարումը միայն մի միտք —փոսը լցնել, ծածկել այնպես, որ կողքից անցնելիս՝ մեկի գլխով կասկած չանցնի, որ վոչ մի շուն չկարողանա հետքը գտնել...

Իրիկնադեմ եր, երբ տուն վերադարձավ։

Այդ որը նրան բերից մի ուրիշ անակնկալ ևս։

Տուն գալով՝ կնոջից իմացավ, որ պրիստավից ու անտառապետից հրաման և յեկել տանուտերին, թե, ինչ ուզում և լինի, պետք և—վողջ կամ մեռած—վանոլին գտնել։ Ցավ դրա համար հարց ու փորձն արել մի քանի մարդու, իմանալու, թե վերջերս Վանոն ումհետ եր թշնամի, ումից եր մեծ տուգանքի յենթարկել կամ ձեռել։ Այդ պատճառով բռնել ելին Իպլթանց Վոսկանին ու Խառատանց Սեթին։ Մի ամիս առաջ Վոսկանին ձեռել եր Վանոն, նրա գոմեշները բացատի խոտերում բռնելով, իսկ Խառատանց Սեթին տուգանել եր, հայտնի չե ումից կորած մի ծառի համար։ Կնոջ ասելով, կանչել ելին դրանց և հարց ու փորձել, թե ինչ գիտեն վանոյի մասին։ Պատասխանել ելին, որ բան չգիտեն. վանոյից, ասիլա և, նեղացել են ձեռի, տուգանքի համար, բայց նրա դեմ բան չեն ունեցել։ Այնուամենայնիվ, յերկուսին ել բանտարկել ելին կասկածով։ Այս մասին Ալեքսանը լսեց վոչ միայն կնոջից, այլև շուկայում։ Իսկ հետևյալ որը տեսավ, թե ինչպես Խառատանց Սեթի կինը՝ արցունքն աչքերին, բաղի պես որորվելով, կապոցով ուսերիք և տանում մարդու համար։ Նույն որը յերեկոյան տեսավ, թե ինչպես Իպլթանց Վոսկանի կինը՝ Շամամը՝ յերեք մանկահասակ յերեխայի ձեռներից բռնած՝ դատարանի առաջ

խոսում եր գղիր Ցականի հետ, թե արտերը ճնացել են անքաղ, տունը անտեր, յերեխերը սոված։ Շամամը վոչ թե խոսում, այլ ճչում եր, ծլրտում, վոտները գետնին խփում, վոր մարդն անմեղ և, վոր նա հավ անգամ չի մորթում, ուր մնաց մարդ սպանի։

— Ձեր մարդասպանին գտեք, իմ անմեղին ազատեք, գոռում եր նա։

Այս խոսքերից Ալեքսանի մարմինով մի տաք հոսանք անցավ, և նա յերեսը շրջեց ու գնաց տուն, աշխատելով դանդաղ քայլեր անել, վոր չկարծեն, թե ինքը շփոթված և կամ իր մեջ մի բան կա։ Կես ճանապարհին, սակայն, չկարողացավ իր լարվածությունը պահել և հանկարծ թուլություն զգաց ծնկներում։ Ցավ յերբ տուն հասավ ու լսեց կնոջ խոսքերը, թե՝ ոչինչ ա պատահել, դեմքիդ առնգ չկա—նրան այնպես թվաց, թե կինը մի բան և կասկածում։ Բայց իսկույն իրեն հավաքեց.

— Հիչ... ինչ պըտի պատահի։

— Ցեսյմ... ես քանի որ ա դու աչքիս ուրիշ տեսակ ես բևում։

Ու կինը փորձող հայացքով (այդպես թվաց Ալեքսանին) նայեց իրեն։

— Վոչ փետի յես գնում ախր, վոչ գործի։ Դարդ ունեցողի պես սաղ որը պոտվում ես գեղում։ Գիչերը կարգին չես քնում, առավոտը լուսը չբացված՝ վեր ես կենում։ Ինչ կա ախր։ Ասում ես գործի յեմ գնում ու տունը մի կոպեկ չես բերում...

— Խոսում ես ելի,—յեղավ Ալեքսանի պատասխանը, և նա մտավ ներս, ջուր խմեց կժից ու պառկեց ետախտին, յերեսը դեպի պատը։

Նա զարմացած եր Վոսկանի ու Սեթի բանաստեղծությամբ. ինչ կանեն տեսնես այդ մարդկանց, մարդիկ, վոր մոտիկ են իրեն. Սեթը մինչև անգամ ազգական եր գալիս։ Հանկարծ տանեն-դատապարտեն, ինչ կլինի նրանց կանանց, չբևեռանների գրությունը։ Հիմա հենց արտերը ճնացել են անքաղ... Չգնամ մի որ, չերկու որ հնձի... Բայց չեն ասի՝ ինչու չես հանկարծ արտացավ դառել. քո տունը թողել ես քաղցած, արանց արտերը հնձում։ Կասկած կտանեն... Ուրիշ մեկը եզպես բան չի անում, ինչու միայն Ալեքսանն և անում... Չե, կկասկածեն... Բայց շատ կարելի չե քննեն և մի քանի որից բաց թողնեն։ Դատարանը սխալ չի անի. կհասկանա անմեղ են—կթողնի։ Իսկ մինչև թողնելը՝... պիտի տանջվեն իր պատճառով... Ցավ նա մտածում եր—լավ չի լինի գնալ հայտնել, վոր ինքն և վանոյի հետ կռվել, սպանել ու թագցրել. թող անմեղ մարդկանց բաց թողնեն... «Ցեթե մեղքս խոստովանեմ՝ պատիժս թեթև կըլնի» մտածում եր Ալեքսանը. «կամ գուցե սկի պատիժ էլ չտան»...

Բայց չերկու որ նա տատանվում եր.—գուցե առանց իր խոստովանության էլ՝ եզուց կամ մյուս որը բաց թողնեն նրանց։ Սակայն մի առավոտ,—գա աղաների լանտարկության չերրորդ թե չորրորդ որն եր,—Ալեքսանը հաստատ վճռով գնաց գյուղական դատարան՝ իր վորոշումը հայտնելու։ Բայց չերբ հասավ դարան և տանուտեր Մահտսի ձայնը ականջն ընկավ—չետ դարձավ... Տուն չգնաց, այլ քայլերն ուղղեց դեպի շուկա, և հետո նկատեց, վոր գյուղից դուրս և չեկել ու խոսում և ինքն իրեն։ Զարմացավ, թե ինչ-

պես և հասել այստեղ և, ով գիտե, ինչ և խոսել հանապարհին...

Այդ գիշեր էլ ինչպես առաջին գիշերը, նա չքնեց և գնո լուսը չբացված՝ վարթնեց, հագնվեց ու մտավ բոստան, անցավ-նայեց ծառերին։ Իսկ չերբ կինը վեր կացավ և, ինչպես միշտ, ամեն բանից առաջ սկսեց հավերին կուտ տալ,—Ալեքսանն իրեն անհարմար զգաց.—կինն էլի պիտի հարցնի, թե հասը ինչ և անելու... Ավելի լավ չե՞ միանգամից վերջ տալ այս դրության։ Ցավ նա վճռեց նորից՝ գնալ դատարան—ինչ լինելու չե, թող լինի... Բայց նախ քան հայտնիչ գուրս կգար—կինն առաջը կտրեց։

— Գիտե՞ս, եզուց մեր Սեթին տանում են քաղաք—գործը քննեն...

— Քաղա՞ք... Ո՞վ ասավ,—հարցրեց Ալեքսանը, ներսը ինչ-վոր տառնուքյուն զգալով։

— Երեկ կնիկն եր մղկտում,—շարունակեց կինը։—Բա ըսենց յավ ու պատիժ կըլեր, ալ կրակվին դրանք։ Մի տուն լիքը երեխեք...

«Չե, գնամ, քանի թեզ ա»...—մտածեց Ալեքսանը, ու գուրս գնաց։

Բայց այս անգամն էլ դատարանի գուռը հասնելն ու չետ դառնալը մեկ արավ։ Դարձյալ չկարողացավ ներս մտնել։ Դատարանի դռանը վարժապետը խոսում եր գիվը Ծականի հետ։ Ցեթե վարժապետը չլիներ, նա գուցե գնար և ամեն ինչ ասեր։ Բայց սմաչեց վարժապետից. ինչ կմտածի իր մասին։

Մյուս որն արդեն նրանց տանելու որն եր։ Ալեքսանը վեր կացավ սովորականից շուտ և, ինչպես միշտ, գուրս յեկավ բոստանը, բայց ձեռը բան չբռնեց։ Ան-

հանգիստ եր և չեր կարողանում մի տեղ կանգնել։ Գնում-գալիս եր ու նայում մարգերին, ծառերին (մի անգամ նույնիսկ նայեց յեղինջների մեջ թագցրած մարզակացուներին, վոր թագցնելու որից չեր նայել), վչինչ չեր գրավում. ամեն բան այնպես անպետք եր թվում, և յերանում եր մի պահ նայել մի բոլորինակ եր թվում, վոր արևը պայծառ և, թռչունները յերգում են, արևածաղիկները ժպտում։ Ինչ հետո նա դանդաղ դուրս յեկավ բակից և ուղիղ գնաց դատարան...

Ցավ այնուհետև՝ տեսնողները պատմում են, վոր նա ժամից ավելի անհանգիստ, թափառուն հայացքով շրջում եր դատարանի ժոռերքը և շարունակ, ականջները խլացած, նայում դիպի դատարանի բակը, ուր մեծ բազմություն եր հավաքվել—մարդ, կին, յերեխա... դրանց մեջ եյին և բանտարկյալների կանայք, վոր բարձրաձայն լաց եյին լինում... Բոլորն յեկել եյին քաղաք տարվող Վոսկանին ու Սեթին տեսնելու, ճանապարհ գցելու... Պատմում են նույնպես, վոր Ալեքսանը շարունակ նայում եր դրանց, բայց, չգիտես ինչու, չեր ժոռենում մյուս հետաքրքիրներին։ Իսկ յերբ, բավական սպասեցնելուց հետո, Վոսկանին ու Սեթին, պահակներով շրջապատած, դուրս բերին բակը, հանկարծ հավաքված բազմության աչքը ճանաչելով՝ առաջ յեկավ նա՝ Ալեքսանը, մոտեցավ պահակներին, այլայլված, գունատ ու ձեռները բարձրացրեց.

— Կանգնեցեք... Սպասեք...

Նա նման եր խենթի։ Ցավ մարդիկ, իսկապես, կարծեցին նա խենթացել է, վորովհետև այդ բացականչությունը միայն խենթը կարող եր անել և, բացի դրանից, այնպես այլափոխված եր դեմքը։

— Հեռու՛ ձամպա,—գոռացին պահակները հրացանները նրան մեկնելով, իսկ տանուտերն առաջ յեկավ սաստող դեմքով։

— Ի՞նչ ես ուզում Հեռու...

Բայց Ալեքսանը դիրքը չփոխեց. վոչ էլ բարձրացրած ձեռն իջեցրեց։ Զարմանքի լռություն իջավ դատարանի բակում, և այդ լռության մեջ լսվեցին Ալեքսանի հևաշունչ, հատ-հատ խոսքերը.

— Կանգնեցեք... Սրանք անմեղ են... Վանոյին յես... յես եմ սպանել...

Բազմությունը, տանուտերը, բանտարկյալները,— բոլորը կանգ առան զարմացած, և մի խուլ «ահ» լսվեց, կարծես բոլորի բերնից։ Ցավ մինչ մարդիկ զարմացած եյին այդ անսպասելի հայտարարությունից, շատերը նույնիսկ չեյին հավատում դրան, համարելով այդ խենթի զառանցանք,—Ալեքսանը շարունակեց այս անգամ, հավեմատարար հանգիստ.

— Ասում եմ՝ սրանք անմեղ են... Վանոյին յես... յես եմ սպանել ու... անտառում թաղել...

——

Բանտարկված Վոսկանին ու Սեթին արձակեցին և, նրանց փոխարեն, բանտարկեցին Ալեքսանին։

Բայց վոչ-վոք չեր հավատում, վոր նա Վանոյին սպանել և պատահաբար։

1915.

ՉԱՓԱՐԱՄԱՆ

Թիֆլիսի Սալոմեական բազարով, ուր ծախում են թթու դրած վարունգ, կեղծած յուղ, գողացած շորեր և հին վոտնամաններ, անցնում էր մի յերիտասարդ մարդ՝ մի փոքրիկ կապոց ձեռին։

Նա դնում էր ծանր ու մոլորուն քայլերով և շրջունակ շուրջը նայելով, ինչպես տան հասցե վորոնող ոտարական. և դրա հետ միասին նրա դեմքն ուներ մի այնպիսի արտահայտություն, վորպիսին ունենում են միայն քննադատությունից պաշարակված բանաստեղծները՝ կես-վիրավորված, կես-ամոթահար։

Յեթե նրա գլխին՝ անգլիական հին կեպիի փոխարեն լիներ ֆրանսական լայնեզր գլխարկ, կարելի յեր կարծել, վոր նա գյուղական ուսուցիչ է և քաղաք է յեկել իր համար գլխարկ գնելու կամ ներկայացում տեսնելու. իսկ յերթե նա՝ իր մի քիչ յերկար և շատ հագած լիներ բենգինով սրբած մի նեղ բաճկոն, կարելի յեր յենթադրել, վոր գավառական քաղաքից յեկած մանր գործակատար է։

Բայց, իսկապես, վոչ այս եր, վոչ այն, այլ, յեթե հիշողությունս չի խաբում, մի բանտարկյալ (իսկ վոստիկանական արձանագրության համաձայն մի «գող»), վոր նոր եր դուրս յեկել Մետեխի բանտից։

Ո՛, վորպիսի խնդությամբ թնդաց նրա սիրտը, յերբ բանտի յերկաթե դռները բացվեցին նրա առաջ և նա դուրս յեկավ փողոց, ուր փողոցի նման մանր անձրև եր մաղվում յերկնքից։ Այդ ժամանակ նա, իհարկե, շատ բան ղգաց, ինչպես բանտից դուրս յեկող ամեն մարդ. սիրելի թվացին նրան մարդիկ, բացլուսամուտներով տները, յերթևեկող կառքերը և յերկրնքից իջնող մանրահատ անձրևը։ Բայց, սրանցից զատ, նա ղգաց նաև մի ուրիշ բան. հայտնի չե վո՛ր նկուղից, վո՛ր անից կամ վո՛ր ճաշարանից նրան հասավ կերակրի անուշ հոտ և նրա մեջ զարթեցրեց տոլմա ուտելու փափագ։ Ու մտավ նա առաջին պատահած ճաշարանը։ Յեվ յերբ բոլորովին ճաշից կշտացավ, սկսեց մտածել իր ղրուքյան մասին, ինչպես բնականաբար անում են մարդիկ կշտանալուց հետո։ Մտածում եր, թե ուր պիտի գնա հիմա և վո՞րտեղ պետք է գիշերի. քաղաքում չուներ ազգական ու մոտ բարեկամ, իսկ ձեռին կար ընդամենը մի մանեթ, վորից 30 կոպեկ տվեց ճաշին։ Նա մտածեց հեռավոր ծանոթների մասին, իրենց լոռեցիների մասին, վորոնցից ամեն մեկը մի գործ ուներ քաղաքում։ Մտածեց գնալ դերձակ Ոհանեսի մոտ և ոգնություն խնդրել նրանից միքանի որվա համար, մինչև վոր գործ կգտնի. բայց հետո հիշեց, վոր մի տարի առաջ չեր կատարել նրա հանձնարարությունը. գյուղից գալու ժամանակ լուրի չեր բերել դերձակի համար։ Ապա ուզեց գնալ կոշկակար Նիկոլի կուշտը. սակայն այստեղ ել անկարելի գտավ. մի անգամ վիճի միջոցին ինքը կոշկակարին անվանել եր բուրժուա, և կոշկակարը սաստիկ վիրավորվել եր։ Հետո նա մտածեց դիմել ուրիշ հայրենակիցների՝ բազում

Սարգսին, գործակատար Բագրատին կամ դաբբին Սիմոնին. բայց նորից անհարմար բաներ հիշեց և, վերջապես, վորոշեց ուղղակի դիմել խանութպան Աբելին, վորը իր հանդուգն յալ հոր լավ ծանոթն եր. վորին իր հայրն եր «մարդ շինել», գյուղից քաղաք բերելով։ Աբելը ամենահուսալին թվաց նրան։

Յեվ այժմ ահա, Սալոմեայի բազարի ազմուկի միջով, գնում եր նա մանրավաճառ Աբելի մոտ ոգնություն խնդրելու։ Գնում եր ու մտածում Աբելի մասին, նրա խանութի մասին, ուր յեղել եր միայն յերեք տարի առաջ, և նրա ցուցանակի մասին, վորի վրա նկարված եր շաքարի մի գլուխ և տանձ ու խնձորով լիքը մի ապակյա վազ։ Այսպես մտածելով, միաժամանակ չեր կասկածում, վոր Աբելը մերժի իրեն։

— Իհարկե չի մերժի,—ասում եր նա ինքն իրեն,—քանի վոր հերս և մարդ շինել նրան։ Յեթե իմ հերը չլիներ, նա հիմի տրեխները հագին չորան եր... Իսկ յեթե «չեմ ու չում» անի, ձեռնափոխ կուզեմ, հետո կտամ...

Այս մտածումներով հասավ Աբելի խանութին և, կանգնելով, ապակիների միջից նայեց ներս։ Խանութում կար միայն մի գոգնոցավոր փոքրիկ տղա, վորն ինչ-վոր ծամում եր արագ-արագ։ Յերիտասարդն սկզբում որորվեց անվստահության մեջ. մանե՞լ թե չմտնել. ապա մի քիչ ավելի պարզ պատկերացնելով իր դրությունը, վոր դիջերելու տեղ չունի, ճարելու փոդ,—համարձակությունն ներշնչեց իրեն ու մտավ խանութ, փոքրիկ տղան նրան տեսնելով՝ արագ հանեց բերնի ծամոցը և կոխեց գրպանը։

— Ինչ կա ուզում,—հարցրեց նա համարձակ նայնով։

Յերիտասարդը տատանվեց մի րոպե։

— Յես ուզում եյի...—փնթփնթաց նա։ Պարոն Աբելը, խագեյինդ հասել և... տանն և...

— Հա՛. ճաշում և... կուզե՞ք կանչեմ։

Յերիտասարդը նորից տատանվեց. անհարմար ժամանակ յեկավ. յերեք մի քիչ հետո գար, լավ կլիներ... Բայց վոչինչ. թող կանչի, յերեք այդ չի խանգարի հաշվելուն։

Յեվ փոքրիկ տղան արագ անցավ խանութի յետևը, իսկ յերիտասարդը մոտեցավ առևտրասեղանին և մինչ Աբելի գալը, սկսեց դիտել այնտեղ դրված հասա, միատեսակ խփավոր շաքարամաններըը, վոր սովորաբար գործ են ածում միայն գյուղական քահանաները և քաղաքի սարկավագները։ Նա մեկ մեկ վերցնում եր նրանց խուփը, դիտում անտարբեր և մտածում, վոր Աբելն իրեն դժվար թե ճանաչի. անա յերեք տարի յի՛ չի տեսել... Բայց յերեք ճանաչի յերեի շատ կուրախանա. չե՞ վոր իր հոր շնորհիվ և այս խանութի տերը դարձել. և, անկասկած, չի մերժի, կոգնի իրեն... «Իսկ յերեք իմանա, վոր գողությանն համար եմ բանտ նստել, դժվար թե մի բան տա,—մտքում խոսում եր նա,—յերբեք չի հավատա, վոր անմեղ եմ յեղել և այդպես էլ դուրս եմ յեկել... Չե՞ վոր մարդիկ չեն հավատում բանտից դուրս յեկածի անմեղությանն»... Յեվ նա ուզեց դուրս գալ խանութից, հետանալ, վոր իր հայրենակիցը վոչինչ չիմանա իր մասին, բայց հետո մտածեց, վոր վատ բան կկարծեն յետևից, և ծանր մտածեց, վոր վատ բան կկարծեն յետևից, և ծանր

Ու հենց այդ րոպեին միջապատի յետևից լսվեց

արագ քայլերի ձայն։ Յերիտասարդը ինչպես ձեռքը դրել եր շաքարամանի վրա, այդպես էլ մնաց անշարժ, վոր բան չկատածեն։

Ներս մտավ ձեռքերը իրարից հեռու բռնած (յերևի յուղոտ լինելու պատճառով) մի միջահասակ մարդ, մի իսկական լոռեցի՝ բարի և ռամիկ դեմքով, վրի գլխի ու յերեսի ալեխառն կարճ մազերը նմանում էին վողնու փշերի։

Ներս մտնելով՝ նա հարցրեց.

— Ի՞նչ եք կամենում։

— Յես,—սկսեց յերիտասարդը շաքարամանի խուփը շարժելով,—յես ուզում եյի...

Նա չփոթվեց մի րոպե ճաշը կիսատ թողած մարդու առջև, վոր անհամբեր աչքերով նայում է իրեն.

— Յես ուզում եյի...—շարունակեց նա այս անգամ էլ շաքարամանը շարժելով։

Խանութպանն անհանդիստ շարժում արավ և, տեսնելով, վոր յերիտասարդը շարունակում է շաքարամանին նայել, հարցրեց.

— Ի՞նչ, շաքարաման եք ուզում... Դա կարժենա մի մանեթ...

«Ձանձրացրեց»,—մտածեց յերիտասարդը և ուզեց հասկացնել, թե ոչ և ինքը։

— Գիտե՞ք, յես քեռի Սեչանի տղեն եմ,—ասաց նա և կարմրեց, ու իսկույն մտածեց, վոր հիմար բան ասաց. Ինչ կարիք կար...

— Քեռի Սեչանի՞,—զարմացավ խանութպանը.— մեր քեռի Սեչանի՞...

— Այո,—ուրախացավ յերիտասարդը, վոր գործը լավ սկսեց։

Հիմա յերևի Աբելը հարց ու փորձ կանի իրեն...

— Հա՛. ղեկ վոր մեր քեռի Սեչանի տղեն եք, ձեզ կարելի յե մի բան պիղնել,—շարունակեց խանութպանը,—տվեք 90 կոպեկ ու տարեք. շատ լավ ապրանք է, չեք փոշմանի...

Յերիտասարդը լռեց։ Նա մտածում եր ինչպես շարունակել սկսածը. բայց ուշում եր, վոր Աբելը շարունակի և հարցեր տա իրեն. սակայն Աբելը լռում եր և ձեռքերը իրենից հեռու բռնած անհամբեր նրան եր նայում։

— Հը՛մ, ձեռք չի՞ տալի...

— Յես... գիտե՞ք...—խոսեց յերիտասարդը և ուզեց ասել, վոր ինքը բանտից նոր է դուրս յեկել, կարիքի մեջ է, բայց դարձյալ լռեց։

Ինչ կարիք կա այդ ասելու, ինչ կարիք կա...

— Հավատացեք՝ պակաս չի կարելի.—առաջ տարավ իր խոսքը խանութպանը.—եղ էլ ձեր խաթեր հա մար եմ տալի։ Դրա նմանները միշտ ծախում ենք մեկ ու քսանով, ձեզ տալիս եմ 90-ով, Ապրանքի մասին էլ խոսք չի կարող լինել. ոպեցկի (Ոդեսսայի)։ լավ, դիմացկուն։ Յեթե չկոտրեք, քսան տարի կդիմանա...

Յերիտասարդն որորվեց յերկմտության մեջ։

— Գիտե՞ք, յես նոր եմ դուրս յեկել բանտից, այնպես վոր...—փորձեց շարունակել նա, բայց նորից նայելով խանութպանին ու փոքրիկ տղային՝ լռեց դարձյալ։

Աբելը դարձյալ անհամբեր շարժում արավ. մի այնպիսի շարժում, վոր հատուկ է միայն ճաշը կիսատ թողած կամ մի տեղ շտապող մարդկանց։

— Համարյա թե առքի գինն եմ ասում,— ասաց նա շտապ-շտապ,—առքի գինը...

Ցերիտասարդն իր հայրենակցի ձայնից զգաց, որ դժդոհություն և պատճառում նրան. դուցե դժդոհություն և պատճառում և այն փոքրիկ տղային, որ այնպես համարձակ, ամբարտավան աչքերով նայում է իրեն. և նա դուրս գալու քայլ արավ։

— Ջուռք չավե՞ց,—հարցրեց խանութպանը։

Ցերիտասարդն արհեցավ։

— Վո՛չ, թանգ է։

— Դուք վո՞րքան կարող եք տալ։

Նա դիտմամբ ցած գին ասավ.

— Յոթանասուն կոպեկ։

— Վնաս է լինում...

— Ավել չեմ կարող,—պատասխանեց յերիտասարդն ակամա և շտապեց դեպի դուռը։

— Տվեք ութսուն։

— Ավել չեմ կարող,—կրկնեց յերիտասարդը հաստատ ձայնով, և գոհ մնաց ինքն իր ձայնից, իր պատասխանից, ու դուռը բանալով վատքը դրեց շեմքը։

— Լավ, համեցեք, համեցեք, տարեք,—կանչեց խանութպանը նրա յետևից.—համեցեք... քանի վոր մեր քեհվե Մեչանի տղեն եք, ի՛նչ արած...

Ցերիտասարդն անխոս յետ դարձավ, տվեց 70 կոպեկ, ունեցած ամբողջ դուժարը, և շաքարամանն առնելով՝ դուրս գնաց։

Միքանի րոպեից արդեն նա քայլում եր նորից նույն Սալդաթակի բազարով, նույն կապոցի հետ մի նոր շաքարաման ձեռին...

1916.

ՊՍՊՆ ՈՒ ԹՈՒՌԸ

(ԻԴԻԼԼԻԱ)

Ցեփրեմ պապը շատ ծեր եր։

Վաղուց նրա աչքերը չեյին տեսնում, ականջները ծանր եյին լսում, իսկ գլուխը շարունակ դողում եր հասած արևածաղկի պես։ Դողում եյին և նրա սառը, չոր ձեռները. այնպես վոր յերբ նա թանով ապուր եր ուտում կամ շորվա, կերակուրը միշտ կաթկթում եր նրա սպիտակ, մի քիչ ել կանաչած մորքի վրա։

Բացի դրանից, Ցեփրեմ պապը չեր կարողանում յերկար մանգալ, հեռու տեղ չեր գնում և միայն արև որերին, յերբ սիրտն ուզում եր զբոսնել տան առաջի պարտեզում, կանչում եր թոռան—Աստղիկին և նրա առաջնորդությամբ, ձեռնափայտը ձեռին, կամաց-կամաց մանգ եր գալիս ծառերի տակ։ Հետո Ցեփրեմ պապի ատամներից չատերը թափվել եյին, դրա համար ել վոչ մին եր կարողանում ուտել, վոչ չոր հաց։

Շատ ծեր եր Ցեփրեմ պապը։ Տանը նրան այնքան ել չեյին սիրում և ամեն բան չեյին տալիս ուտելու։ Բայց նա սիրում եր ամենքին. և ամենից շատ փոքրիկ Աստղիկին. պատմում եր նրան հեքիաթներ, առակներ, պատմում եր ուրիշ տղաների, աղջիկների մասին և այն մասին, թե ինչու յեն ընկնում աստղերը յերկնքից։ Ցերեկն՝ կոպեկներ եր բախշում նրան, վոր

կանֆետ առնի... Ցավ դրա համար Աստղիկը պապին շատ եր սիրում. ամեն անգամ բռնում եր պապի ձեռից և առաջն ընկած մանր ածում ծառերի արանքում ու բացատրում, թե վոր ծառը վորքան և բռնել և թե ինչեր և բռնել մասրի թուփը... Սակայն Աստղիկը շատ եր ափսոսում, վոր պապը չի տեսնում այդ բոլորը. և վորովհետև պապը չեր տեսնում, Աստղիկը խըղճում եր նրան և ավելի սիրում։

Մի բան, սակայն, դուր չեր գալիս Աստղիկին,— վոր պապը հիվանդանում եր շուտ-շուտ։

Այժմ էլ՝ յերեք շաբաթ եր անա պապը հիվանդ եր, Ցերը նա հազում եր, Աստղիկին թվում եր, թե չոր տերևները են խշխշում նրա կրծքի տակ, իսկ քընած տեղը այնպես եր խոխոջացնում, մինչ կարծես խեղդում եր նրան... Քանի որ եր պապը ուզում եր դուրս գալ արևի տակ զբոսնելու, բայց տատը չեր թողնում. ասում եր՝ կմրսի... Ցավ Աստղիկը զարմանում եր տատի վրա, թե ինչու յե նա այդպես անխիղճ մեծժում պապին։ Ինչ կա վոր, մտածում եր նա, թող պապը դուրս գա, ելի տուն կգա... Բայց տատը և մայրիկը չեյին թողնում։ Ցավ քանի նրանք չեյին թողնում, պապն ավելի չեր ցանկանում դուրս գալ...

Ցավ անա մի որ պապն անսպասելի վեր կացավ անկողնից։ Աստղիկն այդ որը շատ լավ և հիշում— կիրակի յեր. տատն ու մայրիկը գնացել եյին ժամ, իսկ հայրիկը քաղաքումն եր։ Ցերը ինքը՝ Աստղիկը փողոցից յեկավ տուն, տեսավ պապը նստել և անկողնում և ձեռքերով բան և փնտռում կողքին։

— Ի՞նչ ես ուզում, պապի,—հարցրեց Աստղիկը։

— Շորերս,—ասաց պապը դողալով։

Աստղիկը տվեց նրան կապան, չուխան, վոտնավանները և գդակը։ Պապը դողդողալով հագնվեց և փայտը ձեռին դուրս յեկավ պատշգամբ ու նստեց այնտեղ՝ տախտի վրա, արևի դիմաց։

Այդ որը պապի դեմքը շատ տարորինակ եր։ Աստղիկը նայում եր նրան և զարմանում, թե ինչու այդպես մտամոլոր և պապը և ինչի յե ականջ դնում նա։

Պապն իսկապես ինչ-վոր բանի ականջ եր դնում. գլուխը բարձր բռնած, աչքերը խուփ, նա կարծես կամենում եր լսել, թե ինչ և կատարվում գյուղում և գյուղից դուրս... Քանի ժամանակ եր դուրս չեր յեկել տնից և դրա համար, խորը շունչ քաշելով, ուզում եր լսել կարծես դրսի կյանքը... Մի քանի տարվա կուրությունը սրել եր նրա լսողությունը, ուստի և նա պարզ լսում եր մեղուների յերգը ոդի մեջ բարտիների տերևների ուրախ ճքճքոցը և յերեխաների զվարթ աղմուկը մի հեռավոր տան բակից։ Նրա ականջին եր հասնում և յեկեղեցու առնական զանգահարությունը, վորը կարծես թրթռում, խաղում եր ոդի մեջ և, շունչը կտրած, ընկնում գետին։

Զանգերի ղողանջը Ցեփրեմ պապի հոգում զարթեցնում եր անցած-մեռած հիշողություններ, և նա իրեն տեսնում եր յերեխա, վոր Զատկին հոր հետ գընում եր յեկեղեցի, ու զանգերը ղողանջում եյին այդպես հանդիստ ու միալար... Հետո նա իրեն տեսնում եր ջահել ու առողջ, վոր նույնպես ջահել մի աղջկա հետ, թև թևի տված պսակի յե գնում, ու զանգերն ել ղողանջում եյին այդպես թրթռալով... Վերջապես, նա տեսնում եր իրեն հասակն առած տղամարդ, վոր գե-

րանդին ձեռքին խոտ եր հնձում դաշտի մեջ... Զնգում եր գերանդին, լորերը թռչում ելին խոտի միջից, խոտը լաս-լաս գարսվում եր շարքով և այսորվա պես դարձյալ ղողանջում ելին ժամի զանգերը...

Այս բոլորը հիշելով, Ցեփրեմ պապը հանկարծ ղպաց հնձած խոտի հոտ և, բերանը բանալով, խորը շունչ քաշեց։

Աստղիկը, վոր բոլոր ժամանակ նայում եր հիվանդ պապին, հանկարծ զարմացավ, տեսնելով պապի դեմքը պայծառացած։

Պապը նորից խորը, յերկար շունչ քաշեց։

— Աստղիկ։

— Ինչ է, պապի։

— Ինձ տար բաղը։

— Բա վոր մրսես, պապի,—ասաց Աստղիկը, տարակուսանքով նայելով պապի կույր աչքերին։

— Չեմ մրսի, աղջիկս, գնանք...

Ցեվ պապ ու թոռ ձեռք-ձեռքի տված՝ մտան պարտեզ։ Ծերունին ձեռը թոռանը տված, քայլում եր նրա յետևից և հարցնում, թե ինչպես են ծառերը, բոլորն էլ ծաղկե՞լ են արդյոք. ծաղիկները թափվե՞լ են, թե վոչ։

— Թափվել են, պապի, թափվել են,—ասում է Աստղիկը։

— Պտուղները յերևե՞ւմ են ծառերի վրա։

— Այո, պապի, շատ...

— Եղ լավ է,—ասում է պապը,—եղ լավ է։

Ասելով հասան փոքրիկ պարտեզի ծայրը, վորտեղից մի փոքրիկ դռնակ եր բացվում փողոցի վրա։ Պապն այդտեղ կանգ առավ և նորից շունչ քաշեց։

— Գնանք տուն, պապի,—ասում է Աստղիկը։—կմրսես, տատը կբարկանա...

— Չե, բալիկս, չեմ մրսի,—հանգստացնում է պապը և շարունակում շունչ քաշել։

Մի փոքր այսպես կանգնելուց հետո պապը հարցրեց.

— Հանդն եստեղից մոտիկ է, չէ՞, Աստղիկ։

— Հա, պապի, իհարկե, մոտիկ է։

— Դե վոր մոտիկ է, աղջիկս,—ասաց պապը,—ինձ տար հանդը, դու յել քեզ համար ծաղիկ կքաղես։

Աստղիկն ուրախացավ.

— Հա, պապի. հենքան ծաղիկ կա հանդում...

Մի քանի րոպե անց արդեն՝ գյուղացիները զարմանքով տեսան իրանց բակերից, թե ինչպես հիվանդ Ցեփրեմ պապը թոռան ձեռից բռնած գնում եր դեպի դաշտը։ Նրանք գնում ելին դաշտ և մոռացել եյին, վոր տանը մարդ չկա և դռները բաց են հավերի ու մուրացկանների առել։

Փոքր հետո նրանք դուրս յեկան դաշտը և յերկար ժամանակ գնում ելին խոտերի միջով։ Պապը քայլում եր կռացած և հևում ամեն մի քայլն անելիս, բայց կարծես չեր հոգնում. իսկ Աստղիկը պապի ձեռը բռնած առաջնորդում եր նրան և շարունակ խոսում. «պապի, դեսն արի», «պապի, առաջիդ քար կա», «պապի, լոք տուր...»։ Ցեվ ձեր պապը, թոռան ձայնին հնազանդ, կատարում եր նրա բոլոր պահանջները լոք եր տալիս ջրի վրայից, թեքվում եր այն կողմը, ուր քաշում եր իրեն փոքրիկ աղջիկը։

Բավական տեղ գնալով՝ պապը կանգնեց, շունչ

քաշեց բերանով և հարցրեց Աստղիկին, թե ինչ տեղ են գանվում իրենք։

— Լավ տեղ ենք, պապի,— պատասխանեց Աստղիկը.— Ենքան ծաղիկ կա...

Պապը շունչ քաշեց դարձյալ և հարցրեց.

— Անտառը մոտիկ է, հա...

— Չա, պապի, հրես մոտիկ։ Դու տեսնում ես վոր...

Պապն առանց պատասխանելու, կուշտ աչքերը բարձրացրեց և ականջ դրեց։ Այս անգամ նա ուզում եր լսել անտառի ձայնը։ Ցավ ահա պարզ նրա ականջին եր հասնում հինավուրց անտառի խշշոցը, վոր նմանում եր գետի շառաչյունին։ Անտառը խշշում եր այնպես, կարծես բոլոր ծառերը միասին յերգ էյին ասում, Ինչ լավ է խշշում անտառը, մտածեց պապը։ Այդ խշշոցը նուրնն եր, ինչ վոր շատ-շատ տարիներ առաջ։ Այդպես եր խշշում նա, յերբ ինքը յերիտասարդ եր. այդպես եր խշշում մերին, յերբ նա հասակն առած տղամարդ եր... Այդ խշշոցը նուրնն է, առաջվանը. նուրնը կլինի և միշտ...

Ու Ցեփրեմ պապը տխուր հառաչանքով նստեց կանաչների վրա հանգստանալու, իսկ Աստղիկը սկսեց ծաղիկները քաղել և վաղել թիթեռների յետևից։

Նստած տեղը, բոլոր ժամանակ, Ցեփրեմ պապը շարունակում եր ականջ դնել։

Այժմ անտառի խշշոցի հետ նրա ականջին եր հասնում առվի քչքչոցը... Նա ճանաչում եր այդ առուն. հնձի ժամանակ քանի՜ անգամ եր հաց կերել նրա մոտ... Առվի քչքչոցի հետ Ցեփրեմ պապի ականջին էյին հասնում և թռչունների յերգը,—այդ ար-

տույտներն էյին յերգում,—և խոտերի շրշյունը, և հովից որորվող թփերի շշունջը, իսկ հեռվից գալիս եր դարձյալ չկկղեցու զանգերի ձայնը ու խառնվում անտառի խշշոցին։

Ի՜նչ լավ է խշշում անտառը...

Այսպես եր մտածում պապն իր սրտի խորքում, և նրա շրթունքները դողում էյին հուզմունքից. ուզում եր ազոթել, բայց մի՛տքն ազոթքի խոսքեր չէյին գալիս... Մի փոքր հլ ականջ դնելով այդ ծանոթ, հարազատ ձայներին, պապը հանկարծ կուացավ և գլուխը խոնարհեց գետին...

Ցերկար համբուրում եր նա կանաչով ծածկված հողը և անդուլ արցունքներն առատորեն թափվում էյին նրա աչքերից... Մի փոքր էլ, մի փոքր էլ, և նա ուժասպառ ընկավ կանաչների վրա...

Քիչ հետո, յերբ Աստղիկը ծաղիկներ գրկած վերադարձավ պապի մոտ, զարմացավ, վոր պապը պառկել է...

«Պապն ինչո՞ւ է քնել հապես»,—մտածեց նա և ձայն տվեց։ Բայց պապը նրան չպատասխանեց։

Այդ ժամանակ Աստղիկն ավելի մոտեցավ նրան և շարժեց ձեռը.

— Պապի, այ պապի,—կրկնում եր ձեռքը քաշելով պապի յերեսին, գլխին.—Վեր կաց, գնանք... Դե, պապի, վեր կաց, տատը կբարկանա...

Պապը դարձյալ չեր զարթնում, Իսկ Աստղիկը շարունակում եր շարժել նրա ձեռը, գլուխը, պաղպաղում եր, վոր զարթնի։ Բայց պապը ժա՜ժ չեր գալիս...

Այդ տեսնելով, վերջապես, Աստղիկը վորոշեց և

վազեց տուն՝ հայտնելու, որ պապը քնել է դաշտում ու չի զարթնում...

Բայց պապը չէր քնել...

Գնացին տեսան պապը մեռել էր դաշտում։

Յերբ Աստղիկն այդ իմացավ, նա չէր կարողանում հավատալ, որ պապը մեռած լինի. նա չէր հավատում և նրան, թե պապին կտանեն իրենց տնից և նա էլ յետ չի գա...

«Հապա ել ով կպատկի նրա տնկողնուժ,—մտածում էր նա,— ով կնազնի նրա չուխան...»։

Յեվ յերբ մյուս որը տերտերները պապին տարան ժամ, Աստղիկն սպասում էր, թե պապը կվերադառնա. բայց մութն էլ ընկավ, նա չկավ... Իսկ յերբ տան դռները փակեցին, որ քնեն, Աստղիկը սաստիկ տխրեց ու լաց լեղավ վերմակի տակ։

Նա լաց էր լինում ու մտածում, թե ինչու տան դռները փակեցին. չե որ պապը կարող է գալ գուցե հենց հիմա յել յեկել ու կանչվել է դռան առաջ...

Լաց լինելով մտածում էր, թե ով պետք է այնտեղ մանր ածի պապին. չե որ նա չի տեսնում, կարող է քարի դեմ առնել կամ վտը ջուրը թցել...

Ա՛խ, տեսնես կլինի մնկը,—մտածում էր Աստղիկը,—մի բարի տղա կամ մի բարի աղջիկ, որ խնդա պապին մանր ածի աչտեղ...

1916.

ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Ձյուն է գալիս...

Սպիտակ փաթիլները, ինչպես խնձորենու ծաղկաթերթեր, դողալով ու յերկյուղած իջնում են տապիքների վրա, մարդկանց գլխին, ուսերին, ձիերի մեջքին, ծառերի ճյուղերին ու հեռագրաթելերին, և գիշերային թիթեռների պես պատվում վառված լապտերների շուրջը։

Կարծես մի անողոք, մի հսկայական ձեռք յերկնային բարձունքից խախտում-թափում է նրանց ցած, որ գան թաղվեն փողոցների ցեխերի մեջ։

Ցեվ ահա վախվխելով իջնում են նրանք։ Ուրիշ մարդկանց թվում իջնում են նրանք և ծեր ամուրի Պողոսի ուսերին ու գլխին, որ վերարկուի ոձիքն ականջներին քաշած՝ պաշտոնատեղից դառնում է տուն։

Նա հենց նոր դուրս յեկավ հազուստեղենի խանութից, ուր գործակատար է յերկար տարիներից իվեր, և հիմա շտապում է տուն ընթրելու։

Ծեր Պողոսն այսպես է... Նա միշտ տանն է ընթրում և միշտ շուտ է տուն գնում։ Նա այն ամուրիներից չէ, որոնք սրճարաններում մնում են մինչև գիշերվա ժամը 12-ը, սիրում են դերասանուհիներ, խոհարարուհիներ, պես-պես փողկապներ և մյուսցի կանեփես։ Վոչ... Պողոսն այդպիսի բան չգիտե, նա շատ հավատ է իր կենցաղավարության և ձգտումների մեջ.

քնում և յերեկոյան ժամը իննին, զարթնում և վեցին, յերբ Թիֆլիսի գործարանների սուլիչը աշխատանքի յի կոչում բանվորներին. խմում և թեյ, ճաշին ուտում և մի տեսակ կերակուր, իսկ յերեկոյան՝ ինչ կպատահի... Առաջ նա սիրում եր մորը, իսկ հիմա, նրա մահից հետո, իր վիշտն և ուրախությունը բաժանում և մոր թողած կատվի հետ... Այսպես և ծեր Պողոսը։ Բայց նա ունի և իր հոգսը—չլինի թե մի հիմար բան պատահի և հանկարծ գործից հեռացնեն իրեն, կամ տանտերը սենյակի քրեհն ավելացնի... Պետք և զգույշ լինել...

Չնայած ցուրտ և, բայց ծեր ամուրին տուն և դառնում ուրախ տրամադրությամբ։ Նրա մտքերը թափառում են իր փոքրիկ սենյակում, պատվում հացի սեղանի շուրջը, նայում են պապից կախված մոր պատկերին, սեղանի ծայրին նստած կատվին և կանգ են առնում անկողնի վրա, ուր իր հետ մեռասին գիշերները ննջում և մոր թողած ժառանգությունը... Վանա կատուն։ Սակայն նրան ավելի զբաղեցնում և ընթրիքը... Այսոր ձկան գլուխ կա տանը...

Բայց ահա նա մոտենում և իր սենյակին, պատրաստվում թափ և տալիս վրայի ձյունը, բանալին յերկու պտույտով բանում և դուռը և մտնում ներս։ Ներս մտնելով, սպասում և, մոր կատուն մթան մեջ անա կքավի վտանգերին և կմլավի, թե՝ «սոված եմ»։ Այսպես և հասկանում ծեր ամուրին կատվի մլավոցը... Բայց կատուն այսոր, հայտնի չե ինչու, չի քսվում նրա վոտներին. ինչ և պատահել... Ամուրին զարմանում և մի քիչ. ասենք այդպիսի դեպք հաճախ և պատահում. զարմանալու վոչինչ չկա... Նա վառում և լամպը

և նայում այս ու այն կողմ. կատուն զարձյալ չի յերևում։

— Վիրահեղ ես, եյ,—ասում և ամուրին և կանչում.—փխի՛, փխի՛, փխի՛...

Կատուն դանդաղ դուրս և գալիս մահճակալի տակից և գլուխը կախ, անշարժ կանգնում տիրոջ առաջ։

— Բեզիդ եյի վատ ես, հա,—խոսում և Պողոսը։—Ով դիտի սոված ես... վոչի՛նչ, հիմի ուտելու բան կտամ քեզ ..

Վերջին խոսքերն արտասանելով՝ նա գնում և դեպի հացի սեղանը. բայց դեռ սեղանին չհասած՝ կանգնում և մեխվածի պես։

— Դրա համար ես մուրթդ կախել հա,—հանկարծ զառնում և կատվին բարկացած,—ախ, դու անպիտան, ախ, դու անամոթ...

Յեվ նա զայրույթով վոտքերը թափ և տալի կատվի վրա։

Չնայած իրեք՝ Պողոսը ձկան պնակը ծածկել եր մի ուրիշ պնակով, բայց կատուն, այդ անպիտանը, այնուամենայնիվ կերել և ձուկը։

— Սա քանիկերորդ անգամն և, վոր այսպես ես անում, անամոթ... Կգայի, մինակ չեյի ուտի, քեզ էլ կտայի... իսկ դու, ագահ անասուն, վերցրել ու կերել ես առանց սպասելու,—ասում և ամուրին վորդուն խրատող հոր յեղանակով և դիմում բարկացած.—Անպիտան, անպիտան։

Կատուն յերկյուղով շարժում և պոչը և գնում անկյունում նստում։ Նա զգում և, վոր հանցավոր և, ուստի և գլուխը կախում և կրծքին։

— Ջհ, ինչպես տեսնում եմ, դու արդեն չափը

անցնում էս,—շարունակում է Պողոսը ձեռքերը թափահարելով.—Անցյալ որը բաժակն էս կոտրել, են որը սերն էս կերել, հարր էլ ձուկը... Սա ինչէ է... իսկ ինչ փուճ բանն է, են չէս անում... Դիշերները մկները հանգիստ չեն տալի, դու տերը չես ըլում և վերցնում էս ձուկն ուտում...

Կատուն պոչը սեղմում է վոտներին և գլուխն ավելի խրճեցնում, ինչպես մեղապարտը դատախազի առաջ։

Ծե, ամուրին շարունակում է բարկացած անց ու դարձ անել։ Նրան ավելի զայրացնում է կատվի համարձակությունը, վոր ձուկը կերել և ամբողջապես և միայն վոսկրափշերն է թողել։ գոնե մի կողմն ուտեր, էլի վոչինչ. բայց նա կերել և բոլորովին... Ցավ Պողոսի բարկությունն աճում է ավելի։ Նա վոտը թափ է տալի հանցավոր կատվի վրա բացականչում.

— Դուրս, դուրս նատիզից, անպիտան...

Ու դուռն արագությամբ բանալով՝ նա կատվին անում է պատշգամբը և ինքը նստում մտածում, թե ինչով ընթրի այս չերեկո. վոչ հաց կա, վոչ պանիր. ճաշարան չարժե գնալ՝ համ թանգ է, համ անհաքուլ... Ու մտածում է չերկար։

Մինչ նա մտածում է այսպես, դուրսը կատուն քավում է դռանը, թռչում լուսամուտի գոգը և չանգռում ապակիները։

— Սատկի՛ր, սատկի՛ր,—ասում է ամուրին,—բայ չեմ անի, սատկի՛ր...

Ու այս ասելով՝ նա ավելի հաստատ է նստում տեղը, կամենալով ցույց տալ, կարծես, թե իր վճիռն անխախտ է։ Բայց կատուն նորից վոտները քսում է

դռանը, թռչում է լուսամուտի գոգը և ապակիները չանգռելով՝ մլավում։

Ինչպես յերևում է, մրսում է։

— Սատկի՛ր,— ասում է ամուրին նորից,—ձուկը կուտե՞ս...

Սակայն կատուն այս անգամ սաստկացնում է մլավոցը, վոր անշուշտ հասնում է հարևանների ականջը։ Նա իր չանգերով նորից բաղխում է դուռն ու լուսամուտը, և ծեր ամուրին թվում է, թե կատուն իր մլավոցով ասում է.

«Ների՛ր, ների՛ր. ել չեմ անի»։

— Քեզ չպետք է ներել, անպետա՛ն,— ասում է ամուրին.—դու ամենևին չես խրատվում... Ու այս ասելով՝ նայում է պատից կախված մոր պատկերին, վոր իր հայացքը կարծես ասում է. «Ների՛ր, Պողոս, մեղք է, ների՛ր». հետո մտածում է, վոր ձկան գլուխն ուտելով՝ ինքը առանձին բան չեր շահի, չուտելով ել՝ վոչինչ չի կորցնում։

«Ցենթպատրենք թե սկի չկա»,—մտածում է նա ինքն իրեն, և գտնում է, վոր իր արածը այնքան ել լավ բան չի. կատվին թողել և դուրսը մլավելով, հարևանները կխմահան, այդ ել մի ամոթ... Ցավ մի փոքր տատանվելուց հետո, նա գնում է դեպի դուռն ու ասում.

— Հը՛մ. ել եպես բան կանե՞ս... Ցուրտը կեբար. խրատվի՛ր հիմի...

Ու մի քանի րոպեից փակ դուռը բացվում է կըրկին և կատուն մտնում է ներս։

Նա մռռոցով քսվում է ծեր ամուրիի կոշիկներին,

վարտիքի ոտակրին, կարծես չնորհակալություն և հայտնում.

— Այսպես, սիրելիս, այս քեզ խրատս,—մատը թափ է տալիս ամուրին.— այլևս անդամ չհամարձակվիս... Իսկ չեթե համարձակվեցիր՝ վայ քեզ... Այն ժամանակ ինչ կուզես արա, ել դուռը բաց չեմ անիլ։ Հասկանում ես. վոր յես ասում եմ բայ չեմ անի, նշանակում է՝ բաց չեմ անի...

Սակայն կատուն, վոր միշտ լսում է այս խոսքերը, ըմբռնում է մեկայն այն, վոր ինքը ինչ էլ ուտում է թագուն, վորքան էլ բարկանում է տերը ու դուրս անում իրեն, բայց և այնպես, ամեն անգամ էլ դուռը բացվում է իր առաջ։

Անցնում է մի ժամ. ծեր ամուրին լուլուը հանգցնելով մտնում է անկողին, իսկ կատուն, մեջքը բարձրացնելով ու ձգելով, կծկվում է ու պառկում նրա վոտների վրա։

Փոքը անց՝ ցածրիկ սենյակը լցվում է քնի հանգիստ մշտոցով...

1916.

ՄԱՅԹԵՐԻ ՎՐԱ

Իմ սենյակի լուսամուտը բացվում է մի փողոցի վրա, ուր քաղաքապահ վոստիկան չի կանգնում։ Ինչ ասել կուզի, վոր այս հանգամանքը հաճելի չի ինձ. բայց այստեղ իմ նպատակը չէ պատմել այդ վոստիկանի մասին։ Աստված նրա հետ։ Ցնս ուզում եմ ասել—քանի վոր իմ փողոցի վրա վոստիկան չկա, այդ պատճառով այնտեղ՝ առավոտից մինչև յերեկո՝ ազատ վոտորմուքյուն են հավաքում յերկու մուրացկան։ Մեկը մի զառամ ծերուկ է Դարվինի նման՝ մեծ գլխով ու սպիտակ խոիվ մորուքով. աջ վոտքը փայտից է, այնպես հատա ու կոպիտ, վոր հիշեցնում է սապոդի ճաքի կաղապար՝ անթաթ ու անկրունկ. և վորովհետև թրխկում է անախորժ, այդ պատճառով մեն է գալիս հենակով, ու մեշտ ինչ-վոր քրթմնջում է քթի տակ, վոր դժվար է իմանալ—որ հնում է թե անիծում... Մյուսը՝ մի ջահել կին է—առողջ, արևավառ դեմքով ու բակեյի աչքերով։ Մեն է գալիս արձակ-համարձակ և կուրծքը մեշտ դուրս քցած։ Զգիտեմ ինչու, նրա տեսքն ինձ միշտ հիշեցնում է լեռնային գյուղ, բարձր սարեր, նեղ արահետներ, վոր ձգվում են անտառի միջով, վիթխարի ժայռեր, վորոնց տակ փրփրած աղմկում է սարից իջնող վտակը։ Ցնվ, դարձյալ չգիտեմ ինչու, իմ յերևակայությունը սիրում է պատկե-

բացնել նրան այս վայրի բնութեան մեջ։ Դա նրանից է, յերևի, վոր նրա աչքերն այնպես նման են բազկի աչքիրի, իսկ լանջը հպարտ է, ինչպես լեռան աղջկա կուրծք։ Կին է թե աղջիկ—չգիտեմ, բայց զարմանալի շարժուն է, ինչպես անդիկ և կայտառ, վորպես սարյակ։ Ձմեռ թե ամառ նա անդադար յերթևեկում է բոլորիկ վոտներով և ինչ-վոր ճովողում անցորդներին՝ թևերը շարունակ շարժելով։

Փողոցը, վորի վրա բացվում է իմ լուսամուտը, բավական բանուկ փողոց է։ Մի քաղաքամասից մյուսն անցնելու համար դա ամենակարճ և ամենահարմար ճամպան է. ուստի և այնտեղից անցնում են ամեն տեսակ մարդիկ, և շատ հաբուռատներ։ Իմ փողոցի վրա փայտե վոտով ծերունին բռնում է հարավցին մայթը, իսկ ջահել կինը՝ հյուսիսայինը։ Յուրաքանչյուրն իր մայթին նայում է իրրև սեփականության վրա, ուր անցորդները շահատու կամ անշահ հաճախորդներ են։ Ծերունին մուրում է շատ ժամանակ նստած, իսկ ջահել կինն անընդհատ յերթևեկում է իր մայթի յերկարությամբ և հաճախ որհնանքի ու խնդրանքի խոսքերով, ձեռն անցորդներին պարզած, հետևում է նրանց մինչև փողոցի անկյունը։ Յեվ, վորքան նկատել եմ, ամեն անգամ բան չի ստանում։ Այդպես չի, սակայն, ծերունկը։ Նա կանգնած ժամանակ անգամ տեղից չի շարժվում. սպասում է խեղճ մինչև վոր անցորդը մոտենա։ Յեվ յերբ վոր մոտենում է մեկը—նրա ցամաք շուրթերը քրթմնջում են ինչ-վոր... Ու ինձ թվում է՝ նա տեղից չի շարժվում նրա համար, վորովհետև մոտածում է (յերևի յերկար տարիների փորձ է), վոր յեթե մեկը վողորմություն տալու լինի—կտա առանց այլևայլի, իսկ յեթե վոչ—վորքան կուզես յետևից վազիր... Ծերևի այսպես է մտածում նա... Բայց թվում է, վոր ծերունկը տեղից չի շարժվում ավելի շուտ իր փայտե վոտի պատճառով։ Ձի վոր այնպես դժվար է փայտե վոտով ու հենակով քայլել նեղ մայթի վրա։ Բացի դրանից, նրան, հավանորեն, ախորժելի չէ իր փայտե վոտի թխկոցը՝ թը՛խկ-դըը՛խկ, թը՛խկ-դըըխկ... Այսպես է թվում ինձ։ Ցեթե նրա վոտն առողջ լիներ, գուցե չահել կլնող նման, նա էլ հետևեր անցորդներին։ Բայց քանի վոր այդ չի կարող, դրանից է, յերևի, վոր միշտ նախանձով ու ատելությամբ է նայում յերիտասարդ կնոջ կողմը, իսկ կինն, իր հերթին՝ բազեական աչքերից շարունակ զզվանք ու արհամարհանք է թափում նրա գլխին։

Ցես այս շատ լավ եմ նկատում, վորովհետև շատ ժամանակ նրանք կանգնում են իմ լուսամուտի մոտերքը։ Վորքան էլ կարճատես, նկատում եմ այնուամենայնիվ, թե ինչպես վոտաքորիկ կինը քիթ է վեր քաշում ծերունկի վրա, և յես նրանց նայվածք ներից հասկանում եմ, թե ինչ են ուզում ասել իրարու։ Ծերունու նայվածքն ասում է.

— Աներես, անպգամ, չես էլ կորչում այստեղից։

կնոջ նայվածքը պատասխանում է.

— Ի՛, հողեմ պառավ գլուխդ. չես էլ սատկում։

Բանը, սակայն, միայն նայվածքներով չի վերջանում։ Ջահել կինն իր վարմունքներով յերբեմն սատկիկ վրդովում է ծերունուն, վորովհետև որը մի կամ յերկու անգամ իր մայթից անցնում է ծերունու մայթը։ Նա այդ անում է այն ժամանակ, յերբ նկատում է, վոր նրա մայթով գալիս է հարուստ մի ան-

ցորդ։ Տեսնելով կինն անցավ իր մայթը և պատրաստվում է արդեն ձեռ մեկնել յեկողին, ծերուկն անմիջապես վեր է թռչում տեղից, հենակը դնում կռան տակ և վոտքը թրխկացնելով շտապում դեպի կինը։ Հասնելով՝ զայրագնած հրում է նրան մայթից և քըրթմընջում ինչ-վոր։ Նա, հավանորեն, հայհոյում է հակառակորդին, վորովհետև այդպիսի դեպքերում կինը գազազած յետ է դառնում և բռունցք թափ տալիս։ Այդ ժամանակ ծերունին աստիճները սեղմած՝ գլուխը շարժում և սպառնալից կամ հենակը թևատակից հանելով՝ սպառնում նրանով հակառակորդին։ Ցեվ ջահել կինը չանչերով ու փնթփնթոցով հեռանում է նրանից։ Բայց պատահում է յերբեմն, վոր նրանք հեշտությամբ չեն հեռանում իրարուց։ Կինը զայրացած՝ բռունցքը մոտեցնում է ծերունու դեմքին, իսկ ծերուկը՝ հենակը պատրաստ՝ աշխատում է խփել նրան։ Ու սկսվում է կռիվը։ Կինը ճարպկորեն բռնում է ծերունու սպիտակ, խճճված միրուքը, ծերուկը, բերանը լայն բացած, ջանում է կծել հանդուգն կնոջ ձեռքերը, ուսերը և անգամ դեմքը։ Քաշքշոցը շարունակվում է այնքան, մինչև վոր յերևում է մի նոր անցորդ... Այս բանը կրկնվում է գրեթե ամեն որ, ու ամեն անգամ իրարից բաժանվում են զայրացած մռմռոցով ու փնթփնթոցով։ Կինն ասում է չանչելով, այսինքն ինձ թվում է, վոր նա ասում է.

— Հողեմ գլուխդ, չես ել սատկում...

Իսկ ծերուկի դեմքն արտահայտում է.

— Լիրբ, անզգամ. ինչ գործ ունես իմ մայթի վրա. կանգնիր քու կողմը...

Այսպիսի խոսքեր չես լսում իմ յերբեմն, վորով-

հետև նրանց կռիվը յերբեմն կատարվում է իմ լուսամուտի առջև։

Ցերկու որ առաջ նրանք զարձյալ կռվեցին։ Ցեվ այդ կռիվը յես լավ տեսա, վորովհետև այդ ժամանակ լուսամուտին հակած՝ նայում եյի փողոցին, ուր ձյունն իջնում եր սղոցի թեփի նման կարծր հատիկներով։ Ողը ցուրտ եր, մարդիկ ման եյին գալիս կրկնակոշիկներով ու ոձիքները բարձրացրած։ Ծերունին, հենափայտը պատին հենած, նստել եր մայթին՝ իջնող ձյունի տակ և մեկ-մեկ ժաքրում եր միրուքին թափվող ձյունահատիկները, իսկ ջահել կինը, ձեռները տրորելով, բոբիկ գնում-գալիս եր շարունակ, վոր չմրսի։ Հանկարծ ծերունու մայթին յերևաց փարթամ հագնված մի պարոն՝ որիորդի հետ թևանցուկ։ Նրանք ծիծաղում եյին ամբողջ յերեսով, և նրանց ուրախ տրամադրությունից յերևում եր, վոր առատաձեռն պիտի լինեն։ Ցերևի այդպես ել յենթադրեցին մուրացկանները, վոր իրենց ակնկալող նայվածքներն ուղղեցին նրանց։ Զույգին տեսնելուն պես՝ ծերուկն շտապեց յելնել տեղից, հավանորեն առաջ գնալու— գոնե մի յերկու քայլ։ Բայց մինչ կբարձրանար տեղից, ջահել կինն արագ՝ այծյամի նման անցավ նրա մայթը և ձեռ մեկնեց յեկողներին։ Ցենթադրությունը սխալ չեր. ուրախ պարոնն իրոք առատաձեռն յեղավ, նա կանգ առավ, հանեց նախ սպիտակ ձեռնոցը, ապա դրամագլուխը գրպանից ու արծաթե մի դրամ մեկնեց ջահել կնոջ։ Իսկ ծերունու մոտով անցավ առանց նրան նայելու .. Այս բանը սաստիկ վրդովեց ծերունուն։ Հազիվ յերկու քայլ եր արել նա, յերբ այս բոլորը կատարվեց. բայց և այնպես նա կես-ճանապար-

հին կանգ չառավ, հենակը սեղմեց թևի տակ և— թըխկ-դըխկ - անսպասելի արագությամբ սլացավ դեպի հակառակորդը։

— Կիրը,—գոռաց նա ատամները սեղմած։— Տուր հոգ, թե չե...

Կինն արհամարհանքով ծիծաղեց.— Հա հա-հա...

— Տուր, ասում եմ,—գոռաց նորից կաղլիկը, ավելի մոտենալով.— Տուր...

Նրա աչքերը ցայտում էին ատելություն ու զվարանք։ Բարկությունից բեղերի ու հոնքերի մազերը ցցվել էին փշերի պես։ Բայց չհոգ կինն, ըստ երևության, չէր վախենում նրանից և, կուրծքն էլ ավելի դուրս քցած՝ նայում էր նրան սովորական արհամարհանքով։

— Տուր, ասում եմ,— պահանջում էր ծերուկը, քալլ առ քայլ սպառնալից դեպի կինը գնալով։— Տուր... Նրա պահանջն այնքան հրամայական էր ու համառ, որ կինն էլի ծիծաղեց նրա ավելորդ յուղանդի վրա։ Ծիծաղելով՝ նա արհամարհանքով նայում էր ծերուկին գլխից-գլուխ, հեգնելով կարծես նրա անզորությունը, փայտե վոտը, մաշված հենակը, որ դողդողում էր նրա թևի տակ։ Այդ նայվածքն ու ծիծաղն այնքան վիրավորական ու վոչնչացնող էին, որ ծերուկն այլևս չհամբերեց։

— Կիրը,—գոռաց դարձյալ, հենակը բարձրացնելով։— Քեզ ասում եմ՝ տուր, անզգամ...—Ու փորձեց խփել նրան, բայց կինն արագ բռնեց նրա հենափայտը և սկսեց քաշել դեպի իրեն։ Ու չերկար քաշքըշուկից հետո՝ խլեց հանկարծ հենակը ծերուկից։ Բայց կաղլիկն անմիջապես թափով բռնեց նրա թևը

և, չերևի, սաստիկ սեղմեց, վոր չահել կինն խլուկյուն ձեռը քցեց նրա միրուքը .. Ու մի քանի րոպե նրանք կռվում էին այսպես. կինը ձգում էր ծերունու միրուքը, իսկ ծերուկը, հազիվ կանգնելով փայտե վոտի վրա, բերանը լայն բացած, աշխատում էր կծոտել կնոջ ձեռները, ուսերը, անգամ դեմքը։

Կռիվը, գուցե, չերկար տևեր, եթե չպատահեր այն, ինչից այնպես դողում էր ծերուկը։ Հենակից զրկված՝ նա հանկարծ ծանր կոճղի պես, անպատճառով ընկավ աջ կողքին, այսինքն փայտե վոտի վրա, ու գլորվեց մայթն ի վայր։ Այդ տեսնելով՝ կինը ձեռի հենակն անմիջապես քցեց գետին ու անցավ իր մայթը՝ նույն հաղթական քայլերով, կուրծքն էլի դուրս քցած։

Ծերուկը, հավանորեն, սաստիկ ցավ զգաց. Նա մի քանի րոպե չշարժվեց տեղից, իսկ յերբ ուղղվեց-նստեց՝ սարսափելի գունատություն կար դեմքին։ Զնայած դրան, նա այնուամենայնիվ նստած տեղից սկսեց մեկը մյուսի յետևից քարեր նետել դեպի հակառակորդը... Բայց կինն այլևս չէր նայում նրան, վորովհետև մի նոր գույգ էր գալիս իր մայթից։

Հետևյալ որը ծերուկը չեկավ փողոց։ Նա չեկավ և մյուս որը։

Ցավ մի ամբողջ շաբաթ է արդեն նա չի յերևում։

Վճռեցի և արդյոք,—հարցնում եմ ինքս ինձ ամեն անգամ, յերբ լուսամուտից նայում եմ փողոց։ Ու վորոշում եմ իմանալ ծերունու ուր լինելը։ Սակայն անցնում են որեր, շաբաթներ—ծերուկը չկա, և յես չեմ իմանում նրա ուր լինելը։ Ցավ մի որ ասա, վերջապես, մոտենում եմ վոտաբոբիկ չահել կնոջն ու ա-

սում՝ «ձեր և ճն ձերունին»։ Նա իմ հարցից ոչինչ չի հասկանում։

Ցեխ բացատրում եմ.

— Են ձերունին, որ փայտ վառ ուներ և քեզ հետ վողորմություն եր հավաքում այստեղ։

— Ա՛, — բացականչում և անտարբեր ջահել կինը։ — Նա մնաել ա վաղուց...

Ու, խոսքը չավարտած, շտապում, և մայթն ի վեր, ուսկից գալիս և մի նոր անցորդ։

Այժմ ջահել կինը մենակ ե. նա տիրում և իրկու մայթին էլ. մեկից մյուսին անցնելիս՝ նա իրեն ավելի ուրախ, կայտառ ու հաղթական և զգում, քան առաջ։

1914.

ՈՐԻՈՐԴ ՄԱՐԻԱՄԸ

Ընկերուհիները պրուցելով կեսգիշերին վերադառնում եյին տուն։ Ներանք հենց նոր դուրս յեկան պարահանդիսից և այժմ, լուռ փողոցով անցնելով, խոսում եյին այդ մասին։

— Ինչ ուզում ես, ասա, — ասում եր Շուշանը, որ նիհար, բարձրահասակ մի որիորդ եր՝ թուխ-նի քթով և մանկաբարձուհու տեսքով, — չես շատ հավանեցի այն պարոնի պարը, որ վոտքերը խփում եր իրար և ձեռքերը մեջքին դնելով այսպես եր անում...

Այս ասելով՝ որիորդ Շուշանը ձեռքերը կանթեց մեջքին և իրանը շարժեց։

— Եհ, թող, իսեր աստծո, — նկատեց ընկերուհին՝ որիորդ Մարիամը, որ ավելի կարճ և ավելի տարիքով եր Շուշանից — դու պարի մասին սկի գաղափար չունես։

— Թող այդպես լինի. բայց իմացիր, որ նա շատ լավ եր պարում, — չսրունակեց Շուշանը և, ոճից խայթված կամ դրամաքսակը կորցրած մարդու պես, ցնցվեց ու թողեց ընկերուհու թևը։

— Ի՞նչ պատահեց, — հարցրեց Մարիամը, նրան նայելով։

— Ջիչ ինաց մոռանայի, — խոսեց Շուշանը, նորից ընկերուհու թևը բռնելով։

— Ինչը՝

— Լսիր՝ ասեմ՝ Ես բարձրահասակ պարոնին տեսայ, որ մեր լեռներ կանգնած եր...

— Վարին՝

— Են որ ինչ նման մերուք ուներ՝

— Հա՛, ինչ կա որ... Նա առաջ մեր բակումն եր ապրում՝ ճանաչում եմ...

— Հենց եդ պարոնը վաղը կամ մյուս որը ֆեզ առաջարկութիյուն է անելու,—ասաց Շուշանը լուրջ դեմքով՝

— Եհ, թող, իսեր ասածո, նեղացավ Մարիամը,— հանաքների ժամանակ չե՝

— Հավատացնում եմ, Մարիամ, լես իմ ականջով լսեցի, թե ինչպես նա՝ իրեն մոտ կանգնած կնոջ հետ խոսում եր քո մասին. մի քանի անգամ նուչնիկ մատով ցույց տվին քեզ՝

— Թող կատակներդ՝

— Անկեղծ եմ ասում, Մարիամ. նրանք քո մասին էյին խոսում. և մինչև անգամ նկատեցի, որ այն պարոնը կարծես սիրահարված լիներ քեզ վրա, այնպես եր նայում...

— Վերջապես, թող հիմարութիյուններդ,—հուզվեց Մարիամը և, ձեռքը խլելով ընկերուհուց, նեղացած առաջ քայլեց՝

— Լսիր, Մարիամ,—ասաց Շուշանը հասնելով և բռնելով ընկերուհու թևը.—ուրեմն չես հավատում, որ ճիշտ եմ ասում՝ Որս գերեզմանը վկա, սուտ չեմ ասում... Հիմա հավատում ես՝

Որիորդ Մարիամն այլևս չեր կարող չհավատալ, վորովհետև գիտեր, որ ընկերուհին սուտ տեղը չի

լերդվի մոր գերեզմանով՝—Ուրեմն մի բան կա, մտածեց նա և, հետաքրքրութիյունը թագցնելով, ասաց.

— Չեմ հավատում՝

— Ազնիվ խոսք՝ Ես իմ ականջով լսեցի՝

— Ինչը՝

— Այն, որ են պարոնի մոտ կանգնած կինը ասաց. «Գնա ու առաջարկիր, ամոթ բան չի»՝ Մի քիչ հետո ել, քեզ նայելով՝ շարունակեց. «Լավ, բարի որիորդ է յերևում՝ Վաղը կամ մյուս որը գնա՝ Իսկ են պարոնն ասում եր. «Թեև որիորդը լինձ ծանոթ է, բայց վախենում եմ մերժի»՝ «Չի մերժի,—ասաց կինը.— Թեկուզ մերժի ել, հո քեզ չի ուտի»՝ Ես քանը լսեցի, իսկ ես քանը քիչ բան ե...

— Հետո՛ել ինչ ասին,—հետաքրքրվեց Մարիամը՝

— Հետո ելի խոսեցին, որ լավ չլսեցի. բայց լավ նկատում եյի, թե ինչպես նայում էյին քեզ և, կարծես, ուզում էյին մոտենալ բան ասելու,—մարդիկ խանգարեցին...

Որիորդ Մարիամը, որ սկզբում չեր ուզում լսել ընկերուհուն, այժմ, նրա յերդումից հետո, նրա յուրաքանչյուր խոսքին առանձին նշանակութիյուն եր տալիս և ամեն մի խոսքի մեջ աշխատում եր խոր իմաստ գտնել՝ Ճիվ նա, որ արդեն յերեսուն մեկ տարեկան եր և դադարել եր ամուսնութիյան մասին մտածելուց, մանավանդ որ արդեն համոզված եր, թե ինքն այլևս վոչ թարմութիյուն ունի, վոչ գեղեցկութիյուն,—ընկերուհու հայտնութիյունից հետո զգաց, թե ինչ-որ մի հաճելի բան շարժվեց կրծքի տակ. կարծես մի ջերմ ձեռք շոշափեց նրա սիրտը, և նա մտածեց ամուսնութիյան մասին.—գուցե դեռ ամեն ինչ կորած չի...

Ընկերուհուց բաժանվելով՝ շտապեց տուն. իսկ յերբ մտավ իր սենյակը, նա առանց լամպը վառելու, խավարի մեջ նստեց անկողնի վրա և տարվեց մտածումներով։

Հարևան բնակարաններից ձայն չեր լսվում։ Բոլորը քնած եյին. կողքի սենյակում հանդստանում եր նրա կարի մեքենան և մեծ ու յերկար սեղանը, վորի վրա աշխատում եյին նրա աշակերտուհիները։

Անկողնի վրա նստած՝ որիորդ Մարիամը հիշեց այն հաշվապահ պարոնին, յերբ նա իրենց բակումն եր ապրում. հիշեց նրա դիմապծերը, շարժուձևերը, աշխատեց մտաբերել նրա այն հարցալից ժպիտները, յերբ ամեն անգամ հանդիպելիս լերևում եր նրա թուխ դեմքին։ Հիշեց և այն դեպքը, յերբ մի անգամ նա բակի դուռը բաց արավ իր առջև։ Հիշեց և այն, յերբ իր ձեռնոցն ընկել եր և նա, իր յետևից գալու ժամանակ նկատելով՝ վերցրել եր և տվել իրեն...

Հիշելով այս ամենը, Մարիամը մտածեց.

«Ուրեմն նա վաղուց և սիրում ինձ»։

Ու գլուխն առնելով ափերի մեջ, մատները խրեց մազերը և նորից տարվեց հիշողություններով։

Այս անգամ մտաբերեց իր մանկությունը, յերբ սովորում եր ծխական դպրոցում, յերբ աստվածաբանությունը, յերբ աշակերտուհի յեր դերձակուհու մոտ։ Մտաբերեց իր լվացարար մորը, այն չոր, կենճռոտ դեմքով պառավին, վոր ամեն ինչից դժգոհ եր և միշտ անիծում ու ձեծում եր իրեն։

Մտաբերեց Մարիամն այս ամենը և նրա կրծքի տակ, այժմ ավելի մեծ չափով, շարժվեց ամեն ինչ,

ինչպես սառուցը գարնանը, և նա արտասվեց. ու արտասվելով դարձյալ հիշեց հաշվապահին։

Ցեվ բավական ժամանակ այսպես լուռ, խավարի մեջ նստելուց հետո, նա վերջապես դանդաղորեն հանվելով մտավ անկողին և յերկար ժամանակ չկարողացավ քնել։ Կրկին անգամ լաց յեղավ բարձր գըրկած ու կրկին անգամ հիշեց հաշվապահին։

— Ահա թե ինչու իրեն հանդիպելիս միշտ ժպտում եր նա,—մտածում եր որիորդ Մարիամը.—ուրեմն նրա մտքում բան կար. ապա ինչու այդ բանը շուտ չեր հայտնում։ Ցերբ հաշվապահն ապրում եր իրենց բակում, միշտ մի տեսակ եր նայում իրեն. և նա այժմ ե հասկանում, թե ինչու յեր այդպես նայում...

Մյուս որը Մարիամը զարթնեց մի այնպիսի տրամադրությամբ, վոր յերբեք չեր ունեցել, և փոխանակ ամենօրյա աշխատանքի շորերը հագնելու, հագավ տոնական յերկնագույն զգեստները, մազերը հարդարեց հայելու առաջ և յերկար ժամանակ դեմքը դիտելով, գտավ, վոր ինքը այնքան էլ տգեղ չի, ինչպես կարծում եր մինչև այժմ, ինչպես, գուցե, կարծում եյին ուրիշները...

Ցեվ, մազերն ուղղելուց հետո, ուրախ դեմքով դուրս յեկավ պատշգամբ։ Այրի տանտիրուհին նկատելով կենվորուհու ուրախ տրամադրությունն ու զարդարանքը, հարցրեց.

— Տեղ ես գնում, որիորդ։

— Վո՛չ,—պատասխանեց Մարիամը ժպտալով։

— Հապա ինչու յես եդպես հագնվել. կարծեցի հարսանիք ես գնում։

— Հետո կասեմ,— ասաց որիորդը խորհրդավոր և մոտենալով աշակերտուհիների մոտ, սիրալիր ժպտաց ամենքին, շոյեց մի քանիսի գլուխը, ապա նստելով նրանց քով՝ սեղանի մոտ, սկսեց կատակներ ու հանաքներ անել հետները։

Այդ անելով, միաժամանակ բոպե առ բոպե ըսպասում եր, վոր ահա հաշվապահը կգա։ Նա չի կասկածում, համոզված ե, վոր կգա... Բայց ժամեր անցան, և հաշվապահը չերևաց։ Իսկ ճաշին, յերբ աշակերտուհիները ցրվեցին իրենց տները, յերբ որիորդ Մարիամը սկսել եր կասկածել, հանկարծ յերևաց հաշվապահը՝ փայտը ձեռքին, բեղերը սրած։ Նա հագնված եր մաքուր ու կոկ, ինչպես նորափեսա։

Որիորդ Մարիամը, վոր այդ ժամանակ պատրաստուհի եր, հաշվապահին տեսնելով՝ իսկույն ներս մտավ, սրտի թրթռումով կանգնեց հայելու առաջ և դողդողացող ձեռներով սկսեց շորերն ու մազերը կարգի բերել։ Նա մտավ ներս, վոր ցույց տա, թե զբաղված ե և չեր սպասում հաշվապահին։

Զանցավ մի րոպե՝ այրի տանտիրուհին հայտնեց այցելուի մասին։

Որիորդը հաշվապահին ընդունեց իր համեստ ընդունարանում և, սառիկ հուզումից կարմրելով, առաջարկեց նստել։

— Խնդրեմ,— ասաց նա սենյակի մի հատիկ բազկաթոռը ցույց տալով։

Հաշվապահը նստեց։ Իսկ որիորդը տեղավորվեց գահավորակի վրա։ Նրա սիրտը փոքրիկ մուրճի պես խփում եր կրծքին, վորի զարկից նրա յերակները դողում էին ցնցվելով։

— Եհ, ինչպես եք, որիորդ,— սկսեց հաշվապահը առ վայրկյան լռությունից հետո, յերկու ձեռքով մազերն ուղղելով։ Գիտեք, յերբ մտա այս բակը, իսկույն հիշեցի այստեղ անցրած կյանքս և բոլոր կենդանիներին։ Հիշում եք, որիորդ, յերբ սպրում էի պիմայի սենյակում...

— Այո, ինչպես չե,— ասաց որիորդ Մարիամը կարմրելով և պգալով, վոր ահա սկսվում է անսպասելին։

— Բացի ձեզանից, որիորդ,— շարունակեց հաշվապահը,— առաջվա կենդանիներից այստեղ կան, թե տեղափոխվել են։

— Մի քանիսն այստեղ են...

— Արդյոք այստեղ է այն ուռաը, վոր ամեն որ ծեծում էր կնոջը և գիշերները յերգ ասելով լաց լինում։

— Վախ, նա մեռավ։

— Ներեք։ Իսկ այստեղ է այն հայը, վոր միշտ Ավետարանից և Քրիստոսից եր խոսում. «Ավետարանում գրված չի,— ասում եր,— Հիսուսը չի ասել»...

— Վախ, նա այստեղ չե,— պատասխանեց որիորդը։— Բայց իմացեք, վոր մեր տանտերը ինքնասպանություն գործեց։

— Վախ, ինչքա՜ հաճար,— հետաքրքրվեց հաշվապահը։

Որիորդը վարանեց իսկույն պատասխանել։

— Ձգիտեմ. ասում են կնոջ պատճառով։

— Աա,— արտասանեց հաշվապահը մտածկոտ և լռեց, ասես ինչ-վոր մի բան հիշելու համար։ Նրա լռությունից ոգևորված, որիորդ Մարիամը, «ներողություն» ասելով, դուրս գնաց թեյ պատրաստելու, և կրկին ներս գալով, նստեց առաջվա տեղը։ Նրա սիրտն

այժմ ավելի ուժեղ եր բաբախում. կարծես նոր լարված մի խանգարված ժամացույց կար նրա կրծքի տակ, որը գործում եր արագ-արագ ու անհամաչափ։

— Եհ, ուրիշ ինչ եք անում, որիորդ,— շարունակեց հաշվապահը ծիծաղկոտ աչքերով նայելով նրան։

— Ոչինչ,— ասաց որիորդ ժպտերես, փոքր ինչ ամաչելով։

— Իսկ ես ահա թե ինչ եմ մտածել, որիորդ... կարո՞ղ եք ներհակաբել ինձ։

— Ոչ... հազիվ արտասանեց որիորդն ամոթխած բայց լավ զգաց, թե բանն ինչումն է։

— Տես, գիտեք, որիորդ,— սկսեց հաշվապահը,— դեն, ասենք այդ ամենի հետ էլ պատահում է. մեր որերում նուրնիկ ծերերն էլ չեն ճանում այդ բանից, այնպես որ դա ամոթ բան չպետք է համարվի և... կարիք չկա մութ խոսքերի դիմելու...

Այս խոսքերի վրա հաշվապահը մատները շարժեց մտացրիվ, իսկ որիորդ Մարիամը ամոթխածությունից գլուխն իջեցրեց. նա շնչազուրկ սպասում եր հաշվապահի խոսքերին։

Բայց հենց այդ ժամանակ փոքրիկ աղախինը մատուցարանով ներկու բաժակ թեյ բերեց պաքսիմատով ախեյի հետ և իսկույն դուրս գնաց. Ներանք ըստ կրտսերին թեյել։ Մի քանի րոպե լռելուց հետո, նախկին կենսվորներին հիշելով, վերջապես թեյը, որից հետո հաշվապահը շարունակեց առաջվան լեզվանակով։

— Գիտեք, որիորդ, ինչի չեմ կկել ձեզ մոտ... Զգիտեմ, ձեզ հայտնի՞ չե, թե ոչ, բայց կարծում եմ, հայտնի պիտի լինի, որ ես չունեմ ո՛չ հայր, ո՛չ

մայր, ո՛չ մտերիմ ծանոթ ու բարեկամ, որոնց դիմելի իմ խնդիրքով, իմ սրտի ուզածն ասելու...

Որիորդ Մարիամը աչքի տենկով նայեց հաշվապահին և նրա սիրտը լցվեց տագնապով ու հուզումով։

— Ցավ որովհետև ո՛չ-ոք չունեմ, որիորդ,— շարունակեց հաշվապահը,— չես ինքդ եմ... Այսինքն, դա, իհարկե, ամոթ բան չե. բայց և այնպես...

Հաշվապահը նորից շարժեց մատները, կարծես չվստահելով միտքը հայտնել. Իսկ որիորդ Մարիամը կարմրեց պուտի պես։ Մի հաճելի քաղցր արբեցում պաշարել եր նրան և նա, շունչը պահած, սպասում եր հաշվապահի վերջին խոսքին։

— Դուք ինքներդ գիտեք, որիորդ, որ ամուսնությունը շատ վաղուց ընդունված մի բան է. ասենք կան մարդիկ, որ սկի չեն ամուսնանում, բայց նրանք ինչի՞ չեն նման. ամեն մեկը մի չոր փայտ։ Ուրիշ բան է, իհարկե, ամուսնացող մարդը։ Ընտանիքը մի առանձին քաղցրություն ունի։ Յեթե մենակ ապրվեր, ասում Յեվալին չեր առեղծ... Ինչպես տեսնում եք, որիորդ, ասում ինքն է սահմանել ամուսնությունը, այնպես որ այդ բանը ամոթ չի համարվում։

Որիորդ Մարիամը չեր վստահանում որևէ խոսք ասել. Նրան հաճելի չեր լսել այդ ամենը, և լսելով՝ մի տեսակ սիրտանք եր զգում։

— Ամուսնությունը, որիորդ, որ կա, մի սուրբ բան է,— շարունակեց հաշվապահը նայելով որիորդի կարմրած դեմքին։— Ամուսնությունը յեթե չլինի՝ մարդիկ էլ չեն լինի։ Ցես շատ եմ մտածել, որ յեթե մարդիկ չամուսնանային, աշխարհը ինչի՞ նման կլիներ. յերեխեք վո՛րտեղից կլինեյին... Այնպես որ, որիորդ, շատ մտածելուց հետո, վորոշել եմ ամուսնանալ...

Որիորդ Մարիամի սրտի զարկերն ավելացան և նրա վողջ մարմնով մի հաճելի սարսուռ անցավ։ Նա, ամոթից կարմրելով, աչքերը հառեց հատակին և լսպասեց հաշվապահի առաջարկութեան խոսքին։

Հաշվապահը լռեց մի փոքր. ըստ յերևութին տատանվում եր ինչպես արտահայտի միտքը և ինչպես սկսի։

— Ձեվ ալիմ, որիորդ,— ասաց նա վերջապես,— յեկել եմ ձեզ մոտ, յեկել եմ վստահութեամբ և հույս ունեմ, վոր...

Այս անգամ որիորդ Մարիամը գլուխն ավելի խղճցրեց, նստած տեղը կուչ յեկավ և, սրտի բախումը զսպելու համար, ձեռը ղրեց կրծքին։

—... Հույս ունեմ, վոր խնդիրս չեք մերժի։ Ձես, որիորդ, յեկել եմ խնդրելու, վոր դուք... բարի լինեք իմ կողմից... առաջարկություն անել ձեր ընկերուհի Հայկանուշ Իգիթյանին և նրա ծնողներին...

Որիորդ Մարիամին թվաց, թե յերկրաշարժ յեղավ, վորի հետևանքով սենյակը իր կարասիներով ընկրկեց շարժվել։ Ինչո՞ւ այսպես մթնեց։

— Այս ասում եմ ձեզ, որիորդ, նրա համար,— առաջ տարավ իր խոսքը հաշվապահը,—վորովհետև դուք մոտ ծանոթ եք թե որիորդ Հայկանուշին և թե նրա ծնողներին... Ձես, որիորդ...

Հաշվապահը դարձյալ ինչ-վոր ուզում եր ասել, բայց, նայելով որիորդին և նկատելով նրա այլայլումը, լռեց խղճուկ։

Այս դեպքից հետո որիորդ Մարիամը մի շաբաթ հիվանդացավ. իսկ հաշվապահը սկսեց ուրիշ միջնորդ վորոնել։

1914.

ՍՈՒՏԸ

Նարգիզը հասակն առած աղջիկ եր, գրեթե ամենահասակավորը գյուղի աղջիկների մեջ. բայց դեռ վոչ-վոք խոսք չեր արել նրան ուզելու։ Պատճառը, յերևի, այն եր, վոր դեմքը չէոտա եր և մի փոքր ել կաղում եր աջ վոտից։ Բայց գյուղում այդպիսինները, ինչպես գիտեք, մեծ մասամբ մարդու յեն գնում. և այն հանգամանքը, վոր նրան ուղող չկար—վշտացնում եր թե տնեցիներին և թե ավելի, իհարկե, իրեն՝ Նարգիզին։

Ամեն ձմեռ, յերբ սկսվում եյին նշանդրեքների ու հարսանիքների շրջանը—Նարգիզը մռայլվում եր և սրտաղողով սպասում, թե ինչ և լինելու... Տան մեջ ամեն փսփսոց նրան խորհրդավոր եր թվում, ամեն նայվածք՝ հանդիմանություն... Բայց յերբ մինչև սուրբ Սարգսի պասը վոչ-վոք չեր գալիս—նա հուսահատվում եր, տխրում և բախտը փորձում ս. Սարգսի գիշերը, այսինքն՝ ցեխուրի մեջ փոխկնճռ եր յցնում և, տնեցիներից ծածուկ, տանում-դնում գոմի կտուրը։ Ու ամբողջ գիշեր չեր քնում, մտածելով, թե ինչ կպատահի գիշերը—արդյոք կգա սուրբ Սարգիսը և ձիով կանցնի իր փոխինձի վրայից, պատի հետքը թողնելով նրա վրա... Ցերեկ անցնի և պատի հետք թողնի—նշանակում ե թե նրա բախտը այսոր չե եգուց, այս

տարի չե—մյուս տարի կամ մի այլ տարի կբացվի... Ջե վոր հում դրած փոխինձին սուրը Սարգիսն իր տունի գիշերը խփում է ձիու պայտով կամ ձիու վոտի հետք է թողնում—նա հասնում է մուրազին... Այդպես եր լսել նա, այդպես ելին անում շատերը։ Ու գիշերը՝ յերկար չեր քնում, իսկ յերբ աչքերը կպչում եր—վեր եր թռչում և մտածում կրկին, թե առավոտը տեսնես ինչ և բերելու իրեն... Իսկ առավոտը, դեռ լույսը հազիվ բացված, հագնվում-գնում եր գոմի կտուրը և, սրտի անհուն հուզումով, նայում փոխինձին—չկա՞ արդյոք սուրը Սարգսի ձիու պայտի հետքը... Ցավ ամեն անգամ տուն եր դառնում սրտաբեկ, տխուր, արտասվակալած աչքերով, աշխատելով հուզումը թագցնել տնեցիներից, յերբեմն էլ գնում-նրբտում եր առանձնացած մի տեղ ու լալիս... Վորքան էլ, սակայն, աշխատում եր արածը, տխրությունն ու հուզումը թագցնել, նրա հարսը՝ Ցեսթերն այնուամենայնիվ նկատում եր ամեն բան և, խղճահարությունից թե ինչից, դժվար և ասել, գլուխն որորում եր միշտ.

—Ախեղճ,—ասում եր նա, հասկանալով տալի վիշտը։—Հալբաթ ես տարիյել բան չի դուրս յեկավ...

Ու սիրտ չեր անում բան հարցնել, վորովհետև առանց հարցնելու յել ամեն ինչ պարզ եր լինում նրա դեմքից ու շարժուձևերից։

Մի քանի շաբաթ, մի ամբողջ ամիս և ավելի Նարգիզի ծաղկատար դեմքին ժպիտ չեր գալիս...

* * *

Ցավ մի անգամ ահա—վերջին անգամը—յերբ Նարգիզը փոխինձով լի տիփուրը ձեռին, մթնով դուրս յեկավ տնից,—հարսը՝ Ցեսթերը իր սենյակից նկատեց նրան ու հետևեց տեսնելու, թե ուր և դնելու տիփուրը։

Նա կանգնեց լուսամուտի առաջ ու գաղտագողի նայեց Նարգիզի յետևից։ Մթնշաղ գիշեր եր. լուսինն ամպի տակից կաթնագույն լույս եր փռել գյուղի և շրջակայքի վրա, և այդ լույսի տակ ամեն ինչ աներջևույթ կերպարանք եր ստացել։

Նարգիզը, տիփուրը ձեռին, կաղալով գնաց դեպի գոմը, կանգնեց քարե սանդուխքների առաջ, փեշերը հավաքեց մի ձեռով, մյուսով տիփուրը բռնած, կամաց-կամաց լուսնոտի պես բարձրացավ գոմի կտուրը։ Այնտեղ նա տիփուրը դրեց ցած, յերեսը դարձրեց դեպի արևելք, ձեռները բարձրացրեց մի տեսակ հանդարտ շարժումով, խաչակնքեց, ապա զգուշությամբ, շուրջը նայելով՝ իջավ և կաղալով յեկավ-անցավ այն լուսամուտի առջևից, ուր կանգնած եր հարսը։

—Մեղք ա ե՜, —ասաց հարսն ինքն իրեն ու դըլուխն որորեց։—Մի նալ (պայտ) ըլեր՝ խփելի, խեղճ աղջիկը հանգստանար...

Ու հիշեց, թե ինչպես իր մորաքույրը այդպես եր արել իրենց հարևանի աղջկա համար... Թե ինչպես այդ աղջիկը ուրախացել եր և ամենքին ցույց տվել ս. Սարգսի ձիու պայտի հետքը... Հարսը հիշեց ալս դեպքը և ժպտաց։

Ու քիչ հետո, յերբ տանն ամեն ինչ խաղաղել եր,

այսինքն բոլորը քնել եյին, հարսը մտավ մառանը և քիչ հետո դուրս եկավ այնտեղից մի պայտ ձեռին, ու Նարգիզի նման շուրջը նայելով, զգուշությամբ գնաց-բարձրացավ գոմի կտուրը...

* * *

Հետևյալ առավոտ, լույսը հազիվ բացված, յերբ տնեցիները դեռ քնած եյին, Նարգիզը բարձրացավ գոմի կտուրը։ Մի առանձին հուզումով, քարե սանդուղով բարձրացավ վեր, և յերբ դողացող սրտով մոտեցավ տեփուրին նրա աչքերն ուրախությունից ջրակալեցին և ծնկները դող ընկան, և նրան պաշարից մի անուշ հուզում։—Տեփուրում փռված փոխինձի յերեսին պարզ, վորշ յերևում եր պայտի հետքը...

Հարսը, վոր հետաքրքրությունից նույնպես վաղ զարթնել, հետևում եր Նարգիզին, իր սենյակի լուսամուտից նկատեց, թե ինչպես Նարգիզը ժպտադեմ ու փայլող աչքերով իջավ կտուրից։ Ուրախությունից այնպես թեթև եր քայլում—կաղությունը չեր նկատվում։

Ցեվ այդ որն ամբողջ Նարգիզն ուրախ եր, աշխուժ, ժպտերես. տան ամեն բանն ուզում եր անել ինքը։ Վառարանի համար փայտ բերելիս՝ քթի տակ ինչ-վոր յերգանման բան եր մռմռում. հարսի յերեխաներին գրկում եր, համբուրում, իսկ փոքրին, թեյի ժամանակ, ծնկանը դրած կերակրեց, ինչ վոր քիչ եր պատահում, ու բոլոր ժամանակ բոլորի հետ աստիճ-խոսում, կատակում եր, վոր նույնպես հազվադեպ բան եր։

Հարսը նայում եր նրան ու ինքն իրեն ժպտում։

Զգիտես հեգնում եր թե խղճում։

Իսկ Նարգիզը հրճվում եր հոգու խորքում և մտածում, վոր ս. Սարգիսը, վերջապես, խղճաց իրեն։

Ու այդ որվանից նրա տրամադրությունը միշտ բարձր եր, միշտ սպասում եր մի անակնկալի... Ցերը, հարևաններից բացի, կողմնակի մարդ կամ կին եր յերևում տանը—նրա սիրտը ճխում, ծուլ եր լինում—չլինի՞ խնամխոս են յեկել...

Տարինեն անցնում եյին—նա սպասում եր։

Դարձավ հինուն և ավելի տարեկան—սպասում եր դարձյալ...

Ու այդպես էլ մեռավ, հավատացած, թե սուրբ Սարգիսն եր իր ձիու պայտը խփել փոխինձին...

1913.

ՀՐԵՇՏԱԿԸ

Գարոյի ուրախութիւնը չափ չկար։

Սայլի վրա նստած՝ շարունակ այս ու այն կողմն էր նայում և հրճվանքից ժպտում։

Նրա կողքին, սայլի վրա, պառկած էր փոքրիկ Վարթուշը՝ ծանր հիվանդ. նրա մոտ նստած էր մայրը՝ տխրադեմ ու լացակումած, և մատաղի գառը՝ փոքրիկ վոտները բարակ թոկով կապկպած։ Իսկ սայլի առջևից գնում էր նրա հայրը՝ ձեռքերը քամակին, խուճացած գլխարկը աչքերին քաշած։ Նա գաշտի նորածիլ արտերին նայելով՝ մտածում էր ինչ-որ։

Նրանք ուխտ էին գնում։

Հիվանդ Վարթուշին տանում էին կամակատար խաչը, որ գիշերն այնտեղ ճնշան, առավոտյան մատաղ անեն, որ Վարթուշը լավանա։

Թիվ քաց անող ընկնավորն այդպես էր ասել։

Գարոն, որ նիհար կազմվածքով, մոտ յոթ-ութ տարեկան աշխուժ յերեխա յեր՝ սև, խոշոր աչքերով, ճիպոտը ձեռին շարունակ քշում էր յեզներին և խոսակցում մոր հետ։

— Մայրիկ,—հետզհետե հետաքրքրվում էր նա,— խաչը վրնց է լավացնում հիվանդին։ Նա ինչ է անում որ... Դեղ ունի՞...

— Խաչը՜... մեռնեմ նրա սուրբ զորութեանը,—յերբեմն խաչակնքից մայրը,—խաչը, մատաղ, սուրբ է. նա զորութիւն ունի. յերբ մենք ուխտում ենք, նա հայտնում է աստծուն։ Աստված էլ հրեշտակին ղրկում է, որ հիվանդին լավացնի... Հասկացար... Դե, յեզներին քշի, որ շուտ հասնենք։ Այնտեղ դու յել աղոթք կանես, որ Վարթուշը լավանա։

Գարոն ճիպոտը վրա բերից յեզներին և նորից հեռաքրքրվեց։

— Մայրիկ, բաս եդ հրեշտակը ինչով է վեր գալիս աստծու մոտից. ձիո՞վ թե՞...

Մայրը տխուր ժպտաց, հիվանդ Վարթուշին նայեց և ասաց.

— Ձև, մատաղ, հրեշտակը թևեր ունի. նա թռչում է ներքև ու էլի բարձրանում։

Գարոն նայեց յերկնքին։

Նա զարմանում էր, թե հրեշտակն ինչպես է այնքան բարձր տեղից թռչում գետին, մինչդեռ ինքը, Մոսոանց Ծուրիկը և Վահեն իրենց հավանոցի կտրից չեն կարողանում ներքև թռչել, կամ իրենց աքաղաղը և սև ապը գոմի կտրից հազիվ են թռչում. իսկ հրեշտակը... «Նրա թևերը մեծ կլինեն», մտածեց Գարոն։

— Մայրիկ, նրա թևերը մե՞ծ են։

— Ո՞ւմ թևերը,—մտազբաղ ասաց մայրը.—հրեշտակի՞... հա, բա՛ս... իհարկե մեծ են։

Գարոն զարձյալ լռեց։ Նա մի առժամանակ նայեց նորածիլ արտերին, վորոնք սայլի անիվների ամեն մի արագ պտույտի հետ՝ շարունակ յետ-յետ յերթում արագորեն։ Նրանց հետ պտտվում ու յետ էր գնում և ամբողջ դաշտն իր թփերով ու ծառերով։

Գարոն մտածմունքի մեջ ընկավ։

Ապա, փոքը անց, մորը գառնալով նա հարցրեց.

— Մայրիկ, հրեշտակը ազգ չե լինում, թե՞ ազգիկ

Մայրը դարձյալ ժպտաց Գարոյի միամիտ հարցի վրա և անտարբեր պատասխանեց.

— Տղա չեր, ազգիկ եր

Գարոն կրկին լռեց։

Սայլը միօրինակ ձայն բարձրացնելով շարունակ առաջ եր գնում արագորեն։

— Տր-րա, տր-րա, տր-րա տր-րա — միակերպ չեր դում եր ին անիվները՝ գլորվելով տեղ-տեղ կանաչ ճանապարհով։

Ցեղ արտերն ու թփերն եր անիվների պտույտի հետ դարձյալ չետ-չետ երին գնում, իսկ լեզնիերը, պոչերնին շարժելով, քայլում երին շատ ու դժկամ, կարծես զգում երին, որ իրենց գրկել են կիրակնօրյա հանգստից, ուստի և աշխատում երին ժամ առաջ տեղ հասնել և ազատվել բեռից։ Իսկ մատաղի սև գառը չերբեմն թաք եր տալիս կապված վոտքերը և երի հանդարտ նիրհում։

«Վոր թևեր ունենայի, չես ել կթռչեյի,— մտածում եր Գարոն,—այ, Վարթուշն ել վոր լավ լիներ, նա ել կթռչեր, Մոսոանց Սուրիկն ել...»։

Ու նա չերևակայում եր, թե ինչպես և հրեշտակը թռչում, ինչպես և խաչը՝ սպիտակ շարերը հագին, գըլխում աստծու մոտ, հայտնում մոր ազոթքը նրան ու հրեշտակի հետ վերադառնում։

— Մայրիկ, խաչն ել և թռչում։

— Հա, բա՛ս։

Նրանք կրկին լռեցին։

— Քիչ հետո, չերբ արեգակը ծածկվեց սարի չետև,

սայլը հասավ փոքրիկ բլրակի գլուխը, մատուռի մոտ։

Ցերբ սայլը կանգնեց, մայրիկը հիվանդ վարթուշին գրկեց ու տարավ մատուռի ներսը. հետո հայրիկը դառը վերցրեց և նույնպես ներս տարավ։ Ցերբ նրանք դուրը բացին ու ներս մտան, մի քանի ծտեր շփոթված, թռթռալով, դուրս չկան մատուռի նեղ պատուհանով։

Աչաքարերը համբուրելով՝ մայրիկը չերեսին խաչ քաշեց, Գարոն ամեն կերպ մորը նմանեցնելով՝ հետևից նրա որինակին։ Հետո մայրիկը կամաց ու հապիվ լսելի ձայնով սկսեց աղոթել։ Այդ ժամանակ նրա աչքերի մեջ արտասուք եր չերևում։

Գարոն ուշադիր դիտում եր մորը. ուզում եր ինքն ել աղոթել, մորից սովորած աղոթքի խոսքերն ասել, բայց սպասեց դեռ... Առայժմ նայում եր մորը և միաժամանակ մտածում, թե խաչը ինչպես պիտի գնա աստծու մոտ, վոր հրեշտակին բերի։

Ցերբ մայրիկը, աղոթքը վերջացնելուց հետո, սկսեց մատուռի մեջ վարթուշի համար տեղ պատրաստել, Գարոն, մոտենալով, հարցրեց.

— Մայրիկ, ես գիշեր հիմի հրեշտակը կգա՞

— Հա, բա՛ս, մատաղ, դու չել աղոթք արա, վոր քո ձենը լսի...

Մոմերը, միմյանց կողքի, դողդոջուն բոցերով վառվում երին խաչաքարերի վրա և թուլորեն չերերում։

Դուրսը ժանգառքը կոխեց, բարակ քամի չիր փչում և նրա հետ ել հատ-հատ անձրև եր կաթկթում։

— Մայրիկ, վռնց աղոթեմ. ասեմ՝ տեր վողորմյա, Հիսուս-Քրիստոս, լավացրու...

— Հա՛, եղպես, եղպես,—պատասխանեց մայրը, առաջվա պես անտարբեր և թեթևած մոմերն ուղղեց։

Ցերը բոլորովին մթնեց, հայրիկը ճաց դուրսը, չեզների մոտ, նրանց պահպանելու, վոր գողերը չտանեն, իսկ մայրը նստեց Վարթուշի գլխավերևը։

Վարթուշը տնքում եր։

«Ով գիտի գլուխը շատ է ցավում»—մտածում է Գարոն նրա կողքին պառկած, ու սկսում է ականջ դնել։

Դուրսը անձրևը շարունակում է կաթկթել։ Հայրիկի ու չեզների ձայնը չի լսվում։ Ով գիտի թրջվում են անձրևի տակ։ Չի՛ վոր կմրսեն... Մայրիկը Վարթուշի մոտ ննջում է, իսկ մատաղի գառը, գլուխը փորին դրած, կամաց մշշում։

«Ցեսնես հրեշտակը յե՞րբ պիտի գա...»։

Գիշեր է դառնում. չերկու վառվոդ մոմերի բոցերը շարունակում են չերերվել. նրանց հետ չերերվում են և մատուռի պատերը։ Մայրիկը նստած քնել է Վարթուշի մոտ. նրա գլուխը մին բարձրանում է, մին ցածրանում, Վարթուշն էլ քնած է։

Բայց Գարոյի քունը չի տանում. նա պիտի արթուն մնա, վոր հրեշտակին տեսնի։

Ու սկսում է չերևակայել, թե նա ինչպես պիտի գա։

Ա՛յ, նա կգա այն ծակից, մատուռի փոքր ու նեղ պատուհանից. թևերը թափ տալով կմոտենա Վարթուշին. կորհնի նրան, վոր լավանա, և ելի կթողնի ու կթռչի՛...»։

Գարոն շուրջն է նայում։

Մատաղի գառը դարձյալ մշշում է հանդարտ։ Մայրիկն ու Վարթուշը քնած են առաջվա նման։ Մոմերը քիչ է մնում հանգչեն։

Խաղաղ է ներսը. ձայն-ծպտուն չկա։

Միայն դուրսը անձրև է գալիս ելի։

Գարոն ուզում է աղոթել։ Չի՛ վոր մայրիկն ասաց՝ աղոթի, վոր հրեշտակը գա Վարթուշին լավացնի։

Ցեվ նա ձեռները իրար վրա, մորը նմանեցնելով, դնում է կրծքին, աչքերը հառում մատուռի պատուհանին ու սկսում աղոթել...

Արտասանում է մորից սովորած խոսքերը.

— Տեր, վողորմյա... Հայր մեր, լավացրու մեր Վարթուշին,—ասում է նա կամաց, շատ կամաց և զգուշ, ու մտածում, վոր չեթե Վարթուշը լավանա, միասին կխաղան, և հայրիկը չի տխրի, մայրիկն էլ լաց չի լինի։

Նա անկանոն խաչակնքում է չերեսն ու շարունակում.

— Հայր մեր, վոր... Հիսուս-Քրիստոս, ձեռնեմ սուրբ. քեզ մատաղ ենք բերել, դու լավացրու մեր Վարթուշին...

Նա մոր նման խոնարհելով՝ համբուրում է մատուռի հատակը և դարձյալ չերեսը խաչակնքում...

Մի փոքր ժամանակ է անցնում։ Գարոն աչքերը պատուհանից չի հեռացնում։

Սպասում է հրեշտակին։

Նա կգա... Չի՛ վոր մայրիկն ասաց .. կգա և, թևերը թափ տալով, կմտնի ու...

Այդ ժամանակ հանկարծ, շատ մոտից լսվեց մի մրդկըտացող ձայն. դուրսն, ասես պատի տակ, մի չերեխա չեր լալիս։

«Ես ոմ յերեխան ե անձրևի տակ լաց ըլում»,— վախեցած մտածեց Գարոն և աչքերը խփեց։

— Վույ, վույ, վույ...— կրկնվեց նույն ձայնը, այս անգամ ավելի աղեկտուր, ավելի տխուր։

«Չլինի՞ հրեշտակն ե։ Չե՛, հրեշտակն այդպես չի անի... են յերեխա յե լաց լինում. ով գիտի մերը կորցըրել ե, կամ գիլերն են տարել»։

Գալոն խղճաց յերեխային և հիշեց մոր խոսքերը, թե չար տղին գելերն ու սատանաները գիշեր ժամանակ գողանում են ու տանում-ուտում...

Այդ մաքից սարսափած՝ նա գլուխը կսխեց վերմակի տակ, աչքերն ավելի ամուր սեղմելով. բայց յերբ կրկին լսվեց նույն ձայնը, նա սրտաճաք կերպով զարթեցրեց մորը։

— Ի՞նչ ե, մաման, յերկյուղով ու քնաթաթախ հարցըրեց մայրը։

— Մայրիկ, վախում եմ գիլերից. ախ...

— Քնիր, մաման, քնիր հետդ գել չկա...

— Գելերը յերեխա յեն տարել, ախ. հրեն լաց ե լսում...

Նույն ձայնը կրկնվում ե նորից։ Մայրիկը հանգըստացնում ե Գարոլին և ասում, վոր նա յերեխա չի, այլ քոռ բուն ե։

— Քնիր, բալիկ, քնիր...

Վուչ, Գարոն չի քնի. նա թեև վախում ե այդ ձայնից, բայց պետք ե արթուն մնա մինչև հրեշտակի գալը։

Ցեվ մայրիկը նորից նստած քնում ե Վարթուշի մոտ։ Մաշաղի գառն ել քնած ե։ Մուները վաղուց հանգել են և ժատուռի մեջ մութն ե։ Դուրսը շիշփալով անձրև ե գալիս դարձյալ։

«Հայրիկը հիմի թրջվել ե... Սարգարն ու Ծաղիկն ել թրջված կլինեն»,—մտածում ե Գարոն հոր և յեղբների մասին. բայց շուտով թողնում ե այդ և նորից սկսում մտածել հրեշտակի մասին։

«Ինչո՞ւ չեկավ. ով գիտի խաչը դեռ նրա մոտ չի հասել։ Վոր հասած լիներ՝ կգար... Մայրիկը սուտ չի ասում. . Բա եսքան ժամանակ ինչո՞ւ չեկավ... Անձրև ե, ով գիտի վախենում ե թրջվի, դրա համար չի գալիս...»։

Ցեվ Գարոն սրտանց ափսոսում ե, վոր անձրև ե. յեթե անձրև չլիներ, շուտ կգար։ Դուցե հենց հիմա յել գա, բայց ուշանում ե անձրևի պատճառով...

Բավական ժամանակ ե անցնում. անձրևը կտրվում ե, քոռ բուն ել ձայն չի հանում։ Ներսն առաջվա նման մութն ե։ Մաշաղի գառը քնած մշմշում ե։ Բայց Գարոն չի քնում. նա աչքերը հառած մատուռի նեղ անցքին՝ սպասում ե հրեշտակի գալուն... Սակայն նա չկա։ Ո՛վ գիտի ինչ ե պատահել։ Մութն ե, գիշեր, յերևի մրսում ե կամ վախենում, վոր չի գալիս... Մի քիչ ել, նա կգա, կգա և Վարթուշին կորհնի, վոր լավանա... Ու յերբ Վարթուշը լավանա, հայրիկն ու մայրիկը կուրախանան, իսկ ինքը նրա հետ, առաջվա նման, միասին կխաղան և իրենց տան դռան ավազի վրա տնակներ, քներ ու ճանապարհներ կշինեն...

Մտածելով՝ Գարոն սկսեց ննջել. ապա քնեց։ Նա մեկել զարթնեց այն ժամանակ, յերբ պատուհանից արդեն բարակ լույս եր ներս ընկնում և կամաց-կամաց մեծանում։ Մի քանի, թե մի մեծ խումբ ծտեր ծլվլում

ելին դուրսը։ Քիչ հետո հայրիկը անձրևից թրջված և կարպետի նման կոշտացած չինելն ուսերին ներս մտավ և, յերեսը խաչակնքելով, մատաղի գառը տարավ դուրս։ Նա տխուր մայում եր։

Գարոյին թվաց, թե նա լաց եր լինում և լաց լինելով՝ մորը կանչում... Ցնրևի իմացել ե, վոր պիտի մորթեն, դրա համար լաց և լինում... Գարոն խղճաց նրան և տխրեց։ Բայց նա տխրեց ավելի, թե ինչու հրեշտակը չեկավ։

«Ինչո՞ւ չեկավ, ինչո՞ւ...»,—մտածում և Գարոն յերկար և հասկանալ չի կարողանում, թե ինչու։

— Մայրիկ, բա ինչո՞ւ հրեշտակը չեկավ,—հարցրեց նա մորը,—ասում եյիր՝ աղոթիր—կգա...

Մայրը, վոր այդ րոպեյին մի ծնկով չոքած՝ կրակ եր անում մատաղի համար, պատասխանեց.

— Ցեկած կլինի, դու չես տեսել, մատաղ...

Գարոն մտածմունքի մեջ ընկավ։

...Մի քանի որ անցնելուց հետո, նա մի առավոտ վեր կացավ և տեսավ՝ մայրիկը լաց և լինում. նրա հետ լաց եյին լինում Մոսոանց Սուրիկի մայրիկը, Մարան տատը և ուրիշ հարևան կանայք։ Վարթուշին դրել եյին իրենց առաջ ու լաց եյին լինում։ Հայրիկն էլ եր լաց լինում. բայց նա մայրիկի նման ձայն չեր հանում։ Նա ձեռքը ծոցը դրած՝ անց ու դարձ եր անում, և նրա աչքերից արտասուք եր գալիս...

Այդ որը տերտերը չեկավ և մի քանի մարդկանց հետ, գիր կարդալով՝ Վարթուշին տարավ ժամ։ Բայց ծյուս որը Վարթուշը ժամից տուն չեկավ, ինչո՞ւ—Գարոն չգիտեր. և յերբ նրան հայտնեցին, թե Վարթուշը

մեռել և ու էլ տուն չի գա, նա տստիկ տխրեց և դնաց իրենց գոմի պատի տակ նստեց ու լաց յեղավ...

Նա լաց եր լինում ու մտածում, թե ինչու Վարթուշը մեռավ. ինչու մայրիկը թողեց, վոր մեռնի. վոր տերտերը նրան ժամ տանի... Բա ինչու հրեշտակը չեկավ նրան լավացնի։ Ջե վոր մայրիկն ասաց՝ աղոթք անենք, նա կգա, Վարթուշին կլավացնի... Հապա ինչու չեկավ։

Սուսլիկ մայրիկը խաբեց։

Նա լաց եր լինում ու մտածում և այն մասին, թե այսուհետև էլ ում հետ պիտի խաղա և ում հետ պիտի անակնեք, բներ ու ճանապարհներ շինի դռան ավազի վրա...

1912.

ԿԱՏԱԿ

Այն ամառանոցը, ուր պատահել է այս դեպքը, այնքան փոքր է, որ աշխաբհագրական մեծ քարտեզում ասեղի ծայրի չափ էլ տեղ չի բռնում և անունը նույնիսկ չի նշվում։ Հենց այդ պատճառով էլս էլ չեմ ուզում հիշել նրա անունը. միայն այսքանը կասեմ, որ նրա բնակիչները՝ ուսանողից սկսած մինչև չուներորը, մեծ մասամբ կառապաններ են և պատահելիս կայարաններին վերակացուներ։ Բայց մորովհետև, յեր-կաթուղիների պատճառով, պատահելիս կայարաններից շատերը վերացել են արդեն, այդ կառապանների և վերակացուների մի մասը այժմ զբաղվում է—ամառը կալամբ ու վիճնաիճնաձոր ցանելով, իսկ ձմեռը՝ բամբասանքով (որ կատարվում է ողեանեռում) ու դահլիճներին գանգատ ներկայացնելով (մորոնք առավելապես լինում են անցած տարում արածեցրած առտոնների, կրած խարթների, գողացված հոբելների և խոնկարների մասին)։

Կյանքն այդ ամառանոցում անցնում է միակերպ, ձարձրալի, տխուր... Այնպես մոր յերբ նրա բնակիչները լսում են պատահելին ապրելիկ գանգակների հնչյունով զնգզնգոցը, կամ յերբ տեսնում են, մոր փոշոտով անցնում է մի կսկարդավոր, պապուն կոճակներով պարտանյա,—մեծ ու փոքր զուրս են թափվում

տներից ու խանութներից կամ պուրներից լուսամուտներից հանելով՝ հետաքրքիր ու խուզարկու աչքերով դիտում են նոր յերեույթը։

Այսպես է այդ ամառանոցը։

Բայց, պիտի խոստովանել, մոր այդ ամառանոցի ջուրը թեթև է, ձուն եժան, սրը՝ կազդուրիչ ու կենարար։ Այդ պատճառով էլ այնտեղից միշտ անպակաս են ամառոդները։

Այդ հռչակավոր ամառանոցում կա (յես յենթադրում եմ, մոր նա հիմի էլ կա, մորովհետև նա այդպես շուտ չեր կարող մեռնել) մի, մոչ պակաս հռչակավոր, ամառանոցատիրուհի, մոր այնտեղ հայտնի յի «Պառավ կատարինե» անունով։ Դա մի այրի կին է և մի զավակի մայր։ Կլինի մոտ վաթսուն տարեկան. սիրում է ամեն որ պատմել մեկնումն բանելը, թե մորպեսի մարդիկ են յեղել անցյալ ամառ իր տանն ապրողները, թե ինչպես պյուղապիներն արածեցնում են իր արտերը և թե ինչպես ինքը մի անգամ տեսել է հայոց կաթողիկոսին, մոր իրեն «մայրիկ» է ասել, և մորի սպիտակ մորուքի մեջ ձավարի հատիկներ են յեղել։ Այս ամենի մասին պատմելիս՝ նա բայց չի թողնում և մոչ մի մանրամասնություն։

Մի տարի այս պառավ կատարինեին տանը ապրում եյինք չորս հոգի ամառոդներ։ Մեկը մեզնից մի ջահել այրի յեր, մի իսկական գեղեցկուհի, մորին պատկերելու համար շատախոս վիպասանը կարող եր նվիրել առնվազն տասն յերես նկարագրություն, բայց յես կբավականանամ միայն յերկու խոսքով. նա նման եր Դեզդեմոնային. մանն եր գալիս միշտ սևեր հագած և միշտ սպիտակ շղիկը հետը։ Յերկրորդը՝ բազմելի մի

ամուրի հաշվապահ էր, որ սիրում էր խոսել իտալական կրկնակի հաշվապահության մասին և նույն իսկ ճաշի միջոցին հովանոցը միշտ կողքին էր պահում. յերրորդը ընկերս էր, որ մասնակցում էր ամառանոցում գտնվող զբաստանի հերկայացուցիչներին, և միշտ շշոցները էր վաստակում. իսկ չորրորդը՝ յես, որ, պարապ լինելով, ձուկ էի որոնում գետում։

Յես ու ընկերս ապրում էինք մի սենյակում, պատավի բնակարանի աջ կողմը, հաշվապահը՝ ձախ, իսկ Ջահել այրին ասանձին բնակարանում, մեր սենյակների դիմաց, իր տարեց աղախնի հետ միասին, որը մինուճար ժամանակ և խոհարարուհի էր, և՛ բարապանուհի, և՛ լվացարար և՛, վերջապես, զբոսակուռհի (նա կարում էր տիրուհու սպիտակեղենը)։

Ջահել այրին իր գեղեցկությամբ ամառանոցում ստեղծել էր յերկրպագուների մի խայտաբղետ բանակ, որին, սակայն, վոչ մի ուշադրության չէր արժանացնում և ամեն տեսակ անպարկեշտ ու սիրագեղ հայացքների հանդեպ՝ միշտ իր շնիկն էր շոյում ու գրկում։ Իսկ ընկերոջս և ինձ նայում էր այնպես, ինչպես նայում են հեռագրաթելերի սյուներին կամ անթիվ անգամ տեսած արձաններին, և մեր հարգալից բարևներին կամ չէր պատասխանում կամ պատասխանում էր այնպես, ինչպես գեներալը գինվորներին։

Սակայն, մի առանձին վերաբերմունք էր ցուցց տալիս դեպի հաշվապահը, որը, ճիշտն ասած, գրգռում էր մեր նախանձը։

Ամեն անգամ, յերբ հաշվապահը, խորը գլուխ տալով, բարևում էր նրան, այրին ժպտում էր դեմքը մեկ և գլուխը մտերմաբար շարժում մի քանի ան-

գամ։ Մենք այս բանը բացատրում էինք նրանով, որ Ջահել կինն ատում է կնամեծար և կնորս մարդկանց, իսկ դեպի հաշվապահը սիրալիր է նրա համար, որովհետև վերջինս հատակավոր է (նա կլիներ մոտ հիսուն տարեկան), չանդուգն ու ցինիկ դեմք, և այրին նրան ընդունում է հոր տեղ ու հարգում։

Այլ կերպ դժվար էր բացատրել, որովհետև անկարելի չէր կարծել, թե Ջահել կինը համակրում է հաշվապահին, որը մի տգեղ և, չեթե կարելի չէ ասել, խուճապած մարդ էր։ Ջմռուանամ հիշել, որ ամառանոցում նրան «յապոնացի» էին անվանում, և այդ նրա համար, որովհետև իր կարճ հասակով, բրոնզագույն դեմքով, պաճա քթով և վոլքրիկ ու չերեսի մեջ թաղված նեղ աչքերով հիշեցնում էր իսկապես յապոնացու։ Բայի դրանից, նա լռակյաց ու սակավախոս մարդ էր. ճաշի ժամանակ յես, ընկերս և հաշվապահը ճաշում էինք առանձրությունից, նրա հետ միասին) ունեցած մեր զրույցներին նա գրեթե չէր մասնակցում, և չեթե չէրբանի մի բան ասում էր, նրա խոսքը, չգիտեմ ինչու, միշտ վերջանում էր նրանով, թե մարդկանց համար վոլքան մեծ և ոգտակար գիտությունն է իտալական կրկնակի հաշվապահությունը և թե ինքը քանի շաբթում է սովորել պա։

— Սովորելը մի քիչ դժվար է, բայց ոգուտը մեծ, — ավարտում էր նա իր խոսքն ամեն անգամ և խորհուրդ էր տալիս մեզ՝ ինձ, ընկերոջս և տանտիրուհուն սովորել այդ ոգտակար գիտությունը, որովհետև առանց դրան մեր հաշիվների մեջ անթիվ սխալներ կարող ենք անել։

* * *

Նա, ինչպես ասացի, ամուրի չէր և մոտ հիսուն տարեկան. չերիտասարդ ժամանակից, ինչպես ինքն էր ասում, հաշվապահի պաշտոնով մտել էր նավթարդյունաբերական մի ֆիրմա և մինչև այդ տարիքը ծառայել էր այնտեղ՝ քաղաքից չերբեք դուրս չգալով. նա պարծանքով էր հիշում, որ պաշտոնից մի որ չէր բացակայել և միայն հիմա չէ, որ բժիշկների խորհրդով չէկել և ամառանոց։ Իր պաշտոնին այնպես էր վարժվել, որ ամառանոցում էլ՝ որոշ ժամերի՝ նստում էր սենյակում և ինչ-որ հաշիվներ տեսնում։ Իսկ մնացած ազատ ժամանակը կանգնում էր պատշգամում և շրջնակ գաղտուկ հայացքներ նետում դեպի ջահել այրու բնակարանը։ Ցեվ չերբ տեսնում էր այրուն՝ որևէից չերևելիս կամ պատշգամ դուրս գալիս, խոր կերևա էր տալիս նրան և արժանանում պայծառ ու դուրեկան ժպիտի։ Պատահում էր չերբեմն, ճաշի միջոցին, նա կողմնակի խոսք էր գցում այրու մասին և հարցնում տանտիրուհուն, թե ով է նա, վիրաեղացի է թե վիրքան ժամանակ պիտի ապրի ամառանոցում։ Պատասխանները կարծես չբավարարված, նորից նայում էր դեպի այրու լուսամուտը, ուր չերբեմն չերևում էր ջահել կինը՝ շնիկը գրկին կամ մի վորևե պատկերազարդ ժուռնալ ձեռին։

Հաշվապահի բոլոր շարժուձևերից, արտահայտություններից չէս և ընկերս նկատում եչինք, վոր նա անտարբեր չէ դեպի այրին, և նրա սիրալիր վերաբերմունքը այլ կերպ է ընդունում։

Ցեվ չեչինք սխալվում։

Մենք, վոր նույնպես անտարբեր չեչինք դեպի ջահել կինը և միշտ, առիթով կամ անառիթ, նայում եչինք նրան և նրա բնակարանի կողմը, վերջին որերը մի քանի անգամ իրար վրա տեսնում եչինք, վոր այրու ննջարանի լուսամուտում վաղ առավոտյան դրբվում է մի մեծ ծաղկեփունջ՝ կազմված գույն-գույն վարդերից և ամառանոցի միակ այգեպանի ծաղկանոցում միայն գտնվող քրիզանթեմ, լալտար, գանգակ և այլ ծաղիկներից։

Մենք հաստատ գիտեչինք, վոր ծաղկեփունջը այրին ինքը չի դնում իր լուսամուտը, վորովհետև առեն անգամ ծաղկեփունջը տեսնելիս՝ նա սաստ դեմքով հրաժարում էր ապահովել հետացնել այն։ Նրա դեմքից պարզ չերևում էր, վոր այնքան էլ գոհ չէ այդ բանից։ Ցեվ չերևի այդ էր պատճառը, վոր նա, կարծելով թե փունջը չես կամ ընկերս ենք դնում իր լուսամուտը, այլևս վոչ նայում էր մեզ վրա, վոչ էլ պատասխանում մեր բարևին։

Պետք է ասած, վոր այս բանը սաստիկ վշտացնում էր մեզ, և այդ պատճառով հետաքրքրվում եչինք չափազանց, թե ով, այդ վիր հանդուգն է ծաղկեփունջ դնում ուրար լուսամուտ, ուրիշ մարդկանց գցում կասկածի տակ ու ինքը թագնվում վախկոտի պես։

Զարմանալի բան է. մտածում ես չերբեմն, թե սիրահարները մի թե չեն կարող առանց ծաղկի սեր հայտնել։ Սիրահար մարդը, ով էլ նա լինի՝ շինական թե քաղաքացի, միշտ տեսնում եք, սիրո մեջ ծաղիկ է խաղացնում։ Ծաղիկն ինչ գործ ունի այդտեղ, մտածում ես... Բայց վոչ. ծաղկի մեջ, կարծես, մի ուրիշ

բան կա. մի ինչ-որ կախարդական ու հմայիչ պարզություն... Թվում է թե՝ այն, ինչ չի կարող հայտնել լեզուն, այն, ինչ չի կարող ասել սիրտը, այդ ամենը կարելի չի հայտնել և ասել միմիայն ծաղկով... Մի հեքիաթ կա, որ ասում է, թե սերը աշխարհի գութն է, ծաղիկը նրա ժպիտը, և թե սերն ու ծաղիկը ծնվել են միասին, մի նյութից, ստեղծագործության առաջին օրը։

Սակայն թողնենք ռոմանտիզմը։

Ո՞վ պետք է լիներ, վերջապես, այդ սանտիմենտալ մարդը, որ իր սերը ծաղկով և գիշերներով էր հայտնում։

Մենք յևթագրում էինք, որ դա ռոմանտիկ վեպեր կարդացած մարդ պետք է լինի, որը, նրանց ազդեցության տակ, իր սերը հայտնելու միակ միջոցը ընտրել է ծաղիկը և գիշերը։

Բայց սխալվում էինք։

Չանազան յևթագրություններ անելուց հետո, վորոշեցինք իմանալ՝ ով է ծաղկեփնջի անհայտ ասպետը։ Նախ մտածեցինք գնալ ծաղկավաճառի մոտ և հարցնել՝ ով է իրենից գնում այս-ինչ տեսակի ծաղիկները. բայց հետո ավելի լավ համարեցինք գիշերը հանգցնել մեր սենյակի լույսը և արթուն հսկել, տեսնելու, թե ով է մոտենալու ջահել կնոջ լուսամուտին։

Այդպես էլ արինք։

Վաղ յերեկոյան լույսը մարեցինք և, խավարում նստած, աչքերնիս հառեցինք «դյուքիական թամարի դղյակի» կողմը։

Թեև լուսին չկար, բայց լուսամուտներից ընկնող լույսերով կարելի էր տեսնել և ճանաչել յեկողին։

...Բավական ժամանակ անցավ, վոչ վոք չերևավաց։ Ամառանոցի յերաժշտախումբը լռեց, քիչ հետո լսեցինք, թե ինչպես ամառողները հնչուն ծիծաղով փողոցներով ցրվեցին իրենց տները. ռոսսնդից յեկավ և այրին. տեսանք, թե ինչպես հանվեց, հանգցրեց ճրագն ու քնեց։

Անցավ մի յերկու ժամ ևս, դարձյալ՝ վոչ վոք։ Սկսեցինք հուսահատվել ու ձանձրանալ, կարծելով վոր արդեն ուշ է և այս գիշեր այլևս չի կրկնվի ծաղկեփնջի նվիրատվությունը։ Ու այն է՝ քիչ եր մնում հանվելինք պառկելու, մեկ էլ մեր ականջին հասավ գաղտնի քայլերի ձայն։ Մենք սրեցինք մեր տեսողությունը և փոքր հետո, նկատեցինք, վոր մեկը շուրջը նայելով, ինչպես գավազիր, և զգույշ, վորպես գող, լայն քայլերով, ձեռին ինչ-վոր բռնած՝ մոտեցավ այրու լուսամուտին։ Յեվ վորովհետև նա քայլում եր անընական քայլերով և թիկունքը մեզ դարձրած, մենք չճանաչեցինք նրան։

Լուսամուտին մոտենալով՝ այդ տարօրինակ մարդը, այդ գիշերաշրջիկ ասպետը, իր ձեռքի բանից, վոր ըստ յերևույթին ծաղիկն եր, հոտ քաշեց, հետո ուղղեց այն և ապա, վոտքերի ծայրերի վրա կանգնելով՝ դրեց լուսամուտի գոգը։

Այս արարողությունը կատարելուց հետո, նա, յերեսը լուսամուտին դարձրած, մի քանի քայլ յետ գնաց ու կանգ առավ։

Մի յերկու վայրկյան լուսամուտին նայելուց հետո, նա ձեռքերը գրպանը կոխեց և անմեղ ձևով, կարծես վոչինչ չեր արել, քայլերն ուղղեց դեպի մեր պարտեզը։

Ցավ այդ ժամանակ, կարող եք չհավատալ, թե ոմն տեսանք... Հաշվապահին։

Այս ամենից հետո, այդ նույն գիշերը մենք, կատակի համար, վորոշեցինք և հետևյալ որը այրուձիից հաշվապահին գրեցինք մի կարճ, շատ կարճ նամակ, վորի մեջ ջահել կինը իբր թե հայտնում եր հաշվապահին, վոր ինքը շատ զգածված և թարմ, ցողալի ծաղկեփնջից և նրա նվիրական սիրուց, ու խնդրում և նրան մյուս որը յերեկոյան բարեհաճել իր մոտ «մի բաժակ թեյի»։

Նամակը գրեցինք բարակ ու մանր տառերով, աշխատելով ամեն կերպ ձեռագիրը նմանացնել կնոջ ձեռագրի, վոր կասկածի տեղիք չտանք, թեև վստահ եյինք, վոր հաշվապահն այնքան էլ նրբամիտ չի, վոր կարողանա ձեռագրերը տարբերել իրարուց։

Նամակը պոստ-արկղը գցելով, սպասում եյինք, վոր հետևյալ որը կստեղծվի մի շատ զավեշտական դրություն և առիթ կտա անսպառ ծիծաղի, սակայն...

Ցես խղճի խայթ եմ զգում։

* * *

Նամակը գրելու հաջորդ որը, չգիտեմ ինչպես եր պատահել, տանտեր վորսորդի շունը խեղդել եր մեր տանտիրուհու հավերից մեկը. այդ պատճառով խեղճ պառավը, վշտից ճաշը ուշացրած լինելով, շարունակ «ներողություն» եր խնդրում և, նոր տանտիրուհու դուրս գալով, հուզարկավորի դեմքով պատմում եր մեզ դեպքի տեղի ունենալու ընթացքը հաշվապահին իր անբամեան հոգնած ձեռնին։

Նա նախ «ներողություն» խնդրեց հաշվապահից, վոր ճաշը ուշացել է, հետո բացատրեց, վոր այդ բանում մեղավորը բնավ ինքը չէ. մեղավորն այն «անտեր շունն է, վոր այս վորձանքը բերեց իր գլխին։

— Վոր իմանաս ինչ տեսակ հավ եր, լացդ կգա,— շարունակեց նա տխրությամբ հաշվապահին դիմելով,— որ չեր անցնում, վոր ձու չածեր. տարեկը յերկու անգամ թուխս եր նստում. մի հատ ձուն ինչ է, չեր փչացնում... Մի ուրիշ, ուրիշ տեսակ հավ եր. ինքը գալանցկի (հոլլանդական), ձվերը մեծ-մեծ։ Կուվի հետ չեյի փոխի...

Ցավ պառավը պատմեց, թե ինչ ոգուտ և ավել այդ հավը իրեն և թե ումից և առել ու ինչ գնով։ Հավը նա գնեց մի հույնից կես փութ խնձորով. հույնը չեր տալիս, ալաչեց-խնդրեց, նոր միայն զիջեց և հետի «սև գրողի տարած» հարևանի շունը խեղդեց ու թողեց։

— Սրանով եղ անտերը յերկու հավ և խեղդում խնձանից,—ավարտեց նա պատմությունը.—յերկուսն էլ գալանցկի...Հիմա վոր սուզը գանգատ տաս, կասեն կատաբրենն հավի համար գանգատ և գնում...

Խոսելով, պառավը միևնույն ժամանակ շերեփը ձեռքին խոհանոց եր մտնում, գուբս գալի, սեղանի լուրեքը ծածկում և հավերին կանչելով հատում մեկ-մեկ։

Ցես և ընկերս ձեացնում եյինք, թե վշտակցում

տեղը բռնելով նա ժպիտը դեմքին հարցրեց մեր առողջությունը, մի բան, վոր յերբեք չեր արել և ապա հանաքով նկատողություն արավ տանտիրուհուն ճաշն ուշացնելու համար։

Տանտիրուհին էլ կարծեք հենց այդպիսի մի բանի յեր սպասում, վոր հավի պատմությունը նորից սկսի։

Նա նախ «ներողություն» խնդրեց հաշվապահից, վոր ճաշը ուշացել է, հետո բացատրեց, վոր այդ բանում մեղավորը բնավ ինքը չէ. մեղավորն այն «անտեր շունն է, վոր այս վորձանքը բերեց իր գլխին։

— Վոր իմանաս ինչ տեսակ հավ եր, լացդ կգա,— շարունակեց նա տխրությամբ հաշվապահին դիմելով,— որ չեր անցնում, վոր ձու չածեր. տարեկը յերկու անգամ թուխս եր նստում. մի հատ ձուն ինչ է, չեր փչացնում... Մի ուրիշ, ուրիշ տեսակ հավ եր. ինքը գալանցկի (հոլլանդական), ձվերը մեծ-մեծ։ Կուվի հետ չեյի փոխի...

Ցավ պառավը պատմեց, թե ինչ ոգուտ և ավել այդ հավը իրեն և թե ումից և առել ու ինչ գնով։ Հավը նա գնեց մի հույնից կես փութ խնձորով. հույնը չեր տալիս, ալաչեց-խնդրեց, նոր միայն զիջեց և հետի «սև գրողի տարած» հարևանի շունը խեղդեց ու թողեց։

— Սրանով եղ անտերը յերկու հավ և խեղդում խնձանից,—ավարտեց նա պատմությունը.—յերկուսն էլ գալանցկի...Հիմա վոր սուզը գանգատ տաս, կասեն կատաբրենն հավի համար գանգատ և գնում...

Խոսելով, պառավը միևնույն ժամանակ շերեփը ձեռքին խոհանոց եր մտնում, գուբս գալի, սեղանի լուրեքը ծածկում և հավերին կանչելով հատում մեկ-մեկ։

Ցես և ընկերս ձեացնում եյինք, թե վշտակցում

ենք պատավին, բայց դաղտուկ դիտում էինք հաշվապահի մշտապես մռայլ դեմքի ուրախ կերպարանափոխությունը, վորից և յեղրակացնում էինք, վոր նա-նամակն արդեն ստացել է։ Իսկ հաշվապահը, հակառակ իր սովորության, վոր միշտ վշտակցում էր մեր մշտապես վշտակիր տանտիրուհու բոլոր վշտերին, այդ որը անտարբեր և նույնիսկ հեգնանքով էր վերաբերվում նրա խոսքերին, և աչքի տակով շարունակ ծոցագրպանին էր նայում, ուր, ըստ յերևութին, հանգչում էր նամակը։

Ճաշը, չնայած տանտիրուհու վշտին, այնուամենայնիվ ուրախ անցավ, շնորհիվ հաշվապահի։ Այդ սակավախոս ու մռայլ մարդը դրեթե անճանաչելի յեր դարձել։ Տանտիրուհուն նա մխիթարում էր հանաքներով ու հեգնանքով, իսկ մեզ առաջարկում էր խմել հավի կենացը։ Հաշվապահի այս ուրախ տրամադրությունը և ազատ շարժ ու ձևերը կասկած չեյին թողնում, վոր նա ստացել է մեր նամակը և ուրախությունից դարձել է շատախոս։ Նրա շատախոսությունն այնքան առաջ գնաց, վոր ճաշի միջոցին, յերբ պատռվը նորից հիշեց հավի ամեն որ ձու ածելու և յերկու անգամ թուխս նստելու հանգամանքը, նա սկսեց հաշվել, թե տարեկան իսկապես վորքան ուժտա կբերեր այդ հավը մեր խեղճ տանտիրուհուն։ Ցեվ այդ հաշվետուությունն առիթ յեղավ, վոր նա նորից խոսի իտալական կրկնակի հաշվապահության մասին։

— Աստված եք, յերիտասարդ պարոն, հաշիվ լսանալը այնքան էլ կարևոր բան չէ, դարձավ նա ընկերոջս, վոր նույնպես փորձեց հաշվել հավի ուժտը, բայց գլուխ չհանեց.—այ, յեթե հաշվապահություն ուսերած լինեիք, իսկույն կհաշվեյիք։ Իսկ յեթե իտալական կրկնակի հաշվապահություն իմանայիք, վորքան ուժտակոր կլինեիք։ Հապա... Պիտի սովորել։

Ճաշից հետո յես և ընկերս քաշվեցինք մեր սենյակը, վոր այնտեղից դիտեինք, թե հաշվապահն ինչպես պիտի գնա ջահել կնոջ մոտ։

Ցեվ նա մեզ յերկար սպասել չտվեց։

Շնորհիվ նրա, վոր ճաշն ուշացավ, այդ պատճառով էլ յերեկոյան թեյի ժամը շուտ վրա հասավ, այսինքն այն ժամը,—յերբ հաշվապահը պիտի գնար այցի իր «յերազների թագուհուն»։

Տեսնելու բան էր այդ այցը։

Հաշվապահը հագել էր տոնորյա մուագույն ըզգեստները. կապել էր նոր վողկապ, ժամացույցի գեղին շղթան մեկնել էր կրծքին՝ ժիլետի մի գրպանից մյուսը, ճաշից հետո մաքուր ածիլել էր տվել յերեսը և բեղերի ծայրերը կորել։ Ցեվ, պետք է ասած, բավական գեղեցկացել էր։ Այժմ նմանում էր յեվրոպական ճանապարհորդությունից վերադարձող յեվրոպացած յապոնացու։

Ցերբ նա հովանոցը ձեռքին մտավ այրու բնակարանին, մի լուռ վարանքով կանգ առավ, շուրջը նայեց, յերևի տեսնելու՝ իրեն նայող կա թե վոչ, և ապա անվստահ ու յերկչոտած քայլերով, ինչպես հավատացյալն է մտնում տաճար կամ՝ նորեկ աշակերտը դպրոց, բարձրացավ պատշգամբը։

Այստեղ նրան դիմավորեց ջահել կնոջ պատավ աղախինը։ Նա խոնարհ, բայց զարմացած աչքերով, ինչ-վոր բան հարցրեց հաշվապահին և մտավ տիրուհու սենյակը։

Մինչ ապահինը այրուն կհայտներ իր այցելության մասին, հաշվապահն սկսեց շտապ-շտապ, բայց խնամքով ուղղել փողկապը, վոր շատ ուղիղ եր, հարթել մազերը, վոր նույնպես կոկ եյին, մի խոսքով՝ դեղեցիկ յերևալու համար անում եր բոլորը. ժամացույցի շրթան եր շակում, մատները քսում եր բեղերին և պանագան դիրք ընդունում, ինչպես անում են լուսանկարվելու պատրաստվող մարդիկ։ Բայց ինչ ել անում եր խեղճ մարդը՝ հետևն տարեկանից պակաս չեր յերևում և դեմքը հիշեցնում եր ելի յապոնացու։

Փոքը անց՝ դուրս յեկավ ապահինը և, նույն դարմացած աչքերով, նրան հրավիրեց ներս։

Հաշվապահը ներս մտավ այնպես, ինչպես մի հարարակ հպատակ կմտներ իր իշխանի անմատչելի դղյակը՝ զարված ինքնավարականությամբ ու խորին ակնածանքով։ Այնուհետև չտեսանք, թե ինչ և կատարվում ներսը. համակ հետաքրքրությունն դարձած, սպասում եյինք դրծի յելքին, ինչպես հալը կսպասի իր զավակի ծնվելուն։

Միևնույն ժամանակ անում եյինք պանագան յենթադրություններ, թե մի գուցե այրին իսկապես լուրջ ընդունի նրան, իբրև սիրահարի, և հայտնի, վոր ինքն այդ այցելությանը վաղուց եր սպասում, կամ թե հաշվապահն ինքը վոչ մի խոսք չլսանա ստացած նամակի մասին և նրա այցը այրին հասարի սովորական այցելություն և թեյով ու մուրաբայով պատվի նրան։

Սակայն, այդ յենթադրություններն իզուր եյինք անում։

Այն, ինչ կատարվեց—մեր բանականությունն ու յենթադրությունը բնավ չեյին նախատեսել։

Ներս մտնելուց հետո՝ չանցավ տաս-տասնինգ րոպե, յերբ հաշվապահը նորից դուրս յեկավ այրու սենյակից... Բայց ինչպես։

Ջեմ կարծում, թե Ադամը դրախտից ալտաքսվելու ժամին ունենար այնպիսի դեմք, ինչպիսին ուներ հաշվապահը։ Նա պլխիկը եր՝ վորպես հանցավոր և դունատ՝ ինչպես հոգեդարձ։ Թվաց թե ձեռացել և մի քանի տարով և ավելի յե նամանվել յապոնացու։ Նրա դեմքը տեսնելով՝ մեզ թվաց նույնպես, թե նրա բոլոր շորերը հին են, մազերը անկարգ, փողկապը ծուռը։

Հազիվ վոտը դուրս եր դրել սենյակից, յերբ նրա յետևից պատշգամ նետվեց մի մեծ ծաղկեփունջ և դուռը ծածկվեց այնպիսի ուժով, վոր ապակիները դնդղնդացին, կարծես մոտակայքում պայթած կայծակի հարվածից։

Հաշվապահն այրու բնակարանից հեռացավ այնքան ցրված և այնպես շտապ, վոր հովանոցը մոտացավ այնտեղ և ձեռնթափ ու շփոթված շտապեց իր տեղակը։

Ցերեկոյան թեյին նա չերևաց, իսկ պատավը վըշտացած լինելով, չհետաքրքրվեց, թե ինչու։ Նույնը պիտի կրկնվեր հետևյալ առավոտ, յեթե պատավը չհետաքրքրվեր այս անգամ։

Տեսնելով ճաշարդն ուշանում և թեյին, պատավը գնաց նրան կանչելու։

Բայց հինգ րոպե չանցած՝ վերադարձավ այլայլված ու զարմանքից յերկարած դեմքով և հայտնեց, վոր հաշվապահը տանը չի։

Յետ և ընկերս նետվեցինք հաշվապահի սենյակը։

Յեվ... մենք տեսանք այն, ինչ ամենից անսպասելի և ամենից անհավանական եր։

Հաշվապահը կախվել եր...

Մենք ամեն ինչ սպասում եյինք նրանից, բայց ոչերբեք այդպիսի քայլ։ Սպասում եյինք, օրինակ, վոր նա այլևս չի յերևա այլու աչքին և, իմանալով վոր մեզ վոչինչ հատնի չէ, կշարունակի իր կյանքը նախկին ձևով, կամ ամենաշատը կվողնի ամառանոցն ու կմեկնի Բագու։ Բայց... անհասկանալի հոգիներ շատ կան կյանքում։

Այսպիսի տխուր վախճան ունենալ ահա մեր կտակը։

Յեվ այդ օրվանից տխուր ամառանոցը մեզ համար դարձավ ավելի տխրալի, իսկ մեր տագնապալի օրերն ավելի ձանձրալի։

1915.

«ՉԵՐՄԱՉԱՓ»

Յես մի քիչ ռոմանտիկ բնավորություն ունեմ։ Յերբ տխուր, միակերպ կյանքը ձանձրացնում է ինձ, յերբեմն նստում-մտածում եմ անցյալի մասին, իմ մանկության ու պատանեկան օրերի մասին։

Այսօր ել իմ պատանեկան օրերի վրա մտածելով, հիշեցի մեր դպրոցի խոհարար պարոն Կարապետին, այն փոքրիկ ու վախտ ծերունուն, վոր ահագին ազդեցություն ուներ մեր ուսումնարանում։

Մենք՝ աշակերտներս նրան անվանում եյինք «Չերմաչափ»։ Այդ անունը նա ստացել եր մեր դպրոցի նախորդ սերնդից։ Նրան այդպես կոչում եյին այն պատճառով, վորովհետև նա՝ իր ֆիզիկականով պարզ վորոշում եր տարվա չորս յեղանակների փոփոխությունը։ Գուցե շատերին տարօրինակ թվա, թե այդ ինչպես կարող եր լինել։ Սակայն այդպես եր։ Որինակ, հենց վոր աշունը գար, ծառերն սկսեյին մերկանալ տերևներից և մշուշը շաբաթներով ծածկեր Արարատի գագաթը, պարոն Կարապետը, ցուրտ զգալով, կսկսեր ուսերը սառիճանաբար բարձրացնել, և մինչև ձմեռնամուտ կհասցներ ականջների մոտ. իսկ յերբ գալիս եր իսկական ձմեռը, Արարատյան դաշտի այն կծու ձմեռը, վոր յեղյամը սառցնում և մարդկանց բեղերի և հոնքերի վրա, տալով նրանց ծերունու ֆեր

կատարող դերասանի կերպարանք, և լուսամուտների ապակինները զարդարում է բազմապիսի ծաղկանկարներով,—այդ ժամանակ պարոն Կարապետի ուսերն այնքան ելին բարձրանում, վոր նրա փոքրիկ գլուխը թաղվում եր նրանց մեջ։ Սակայն գարունը բացվելուն պես, յերբ ուսինները սկսում ելին կարմրել և սարյակների առաջին խմբերն յերևում ելին բարտինների կատարին, նրա ուսերը հետզհետե իջնում ելին նորից և մինչև ամառ բռնում իրենց կանոնավոր դիրքը։ Բայց ամառվան շոգերն սկսվելուն հետ, յերբ տաքացած փողոցներում զգացվում եր վառոդի հոտ, պարոն Կարապետի ուսերն սկսում ելին իջնել յուց, և մինչև հուլիս նրանք այնքան ելին իջնում, վոր նրա թևերը, սպանված բազի վոտների պես, ուղիղ կախ ելին ընկնում կողքերից։

Ահա՝ այս հատկությունների համար էլ նրան անվանում ելինք «Ջերմաչափ»։ Բայց, իհարկե, մեզանից վոչվոք չեր համաձակվում նրա յերեսին տալ այդ անունը։ Մենք նրան դիմում ելինք ուղղակի «պարոն Կարապետ» ասելով։

Այս պարոն Կարապետը մի արագախոս ու արագաշարժ ծերունի եր՝ կարճ հասակով և յերկար ձեռներով, վորոնք մինչև ծնկներն ելին հասնում։ Այմուրի լինելու պատճառով, նա գլխից դուրս վոչ մի հոգս և մտածմունք չուներ։ Սիրում եր շարունակ խոսել գլխի կարգ ու կանոնի մասին, և այնքան շատ եր կրկնում «կարգ ու կանոն» բառերը, վոր աշակերտները նրան կպցրել ելին մի յերկրորդ անուն ևս—«կարգ ու կանոն»։ Լինելով վանեցի՝ անչափ սեր ուներ վիճելու. վիճում եր այնպիսի բաների մասին, վոր յերբեք վեճի առարկա չելին լինում։ Կալատաները, դիցուք, աշակերտներից մեկը կհարցներ, թե ինչու նա կիրակի որը չի գնում զբոսնելու։ «Ա՛, զբոսնելու, հեգնում եր նա,—իսկ ի՞նչ ոգուտ կարելի չի ասանձել զբոսնելուց, ասա խնդրեմ...»։ Իսկ յերեք հարցնող աշակերտը լինում եր իմ ընկեր գիշերօթիկներից, նա ավելացնում եր. «Ա՛, զբոսնելու գնամ, վոր այստեղ ամեն ինչ տակն ու վրա անե՞ք... Ջե՛, չեք տեսնի...»։

Ձեվ, իսկապես, շաբաթներով, ամիսներով նա դուրս չեր գնում դպրոցի դարպասից, վախենալով, ինչպես ինքն եր ասում, վոր իր բացակայությունը կարող և խախտել դպրոցի կարգ ու կանոնը։ Նրան միշտ կարելի յեր տեսնել կամ խոհանոցում կամ տեսչի տանը (մեր տեսուչն ապրում եր դպրոցի գավթում) կամ թե բակում շրջելիս, ուր վերակացուների հետ միասին հսկում եր աշակերտներին։ Ձեվ վեր աշակերտի արարմունքը կարող եր վրիպել նրա սուր աչքերից։ «Կարգ ու կանոնով յեղիր,—թափ եր տալիս նա մատը այն աշակերտի վրա, վորը յերգ եր ասում կամ վազում բակում.—կարգ ու կանոնով, հասկանո՞ւմ ես. սա դպրոց է, վարժարան, այստեղ պետք է կարգ ու կանոնով լինել»։

«Կարգ ու կանոնը» նրա մեջ, կարծեք, դարձել եր մոմիս ու արյուն. նույնիսկ կերակուրների մասին խոսելիս՝ ասում եր. «կարգ ու կանոնով կերակուրներ». իսկ յերբ իր բերդոտ կասվին, վորին միշտ թրջած հաց եր ուտեցնում, տեսչի տունը գնալու համար պատժում եր, և մատը թափ տալով կրկնում. «կարգ ու կանոնով յեղիր, անպիտան, կարգ ու կանոնով։ Իմացիր ոմ տանն ես գտնվում։ Այնտեղ տուն չի կարելի մտնել

Լինելով դպրոցի խոհարարը, պարոն Կարապետը առանց մեկի ոգնութեան ինքն էր չեփում բոլոր կերակուրները մեր դիշերօթիկների համար, վորից ոգավում էին և՛ տեսուչը իր ընտանիքով և՛ վերակացուները։ «Կարդ ու կանոնով» առաջնորդվելով, նա սեղանատուն էր ուղարկում այնքան քիչ կերակուր, վոր քաղցած նստում էինք—սոված վեր կենում։ Սրա համար յերբեմն բողոքում էինք մեր վերակացուին, բայց սա միշտ ահանջի կողքով էր անց կացնում մեր բողոքը, վորովհետև յերեկոներն, իր բացակայության ժամանակ, խոհարարը հաճախ փոխարինում էր իրեն։ Ուստի հուսահատված դիմում էինք տեսչին. և յերբ տեսուչը բացատրություն էր պահանջում խոհարարից, սա իր փոքրիկ հասակով կանգնում էր տեսչի առաջ և յերկար ձեռները կողքից կախած՝ հասկացնում էր տեսչին, թե դպրոցում պետք է «կարդ ու կանոն պահպանել»։ «Կարդ ու կանոնը լավ բան է, պարոն տեսուչ. յեթե աշակերտներին շատ կերակուր տանք, նրանք ձեզ չեն լսի. փորձով դիտեմ»։ Ձեվ, մեր ներկայության, պարոն Կարապետը սովորեցնում էր տեսչին, թե ինչպես պետք է կառավարել դպրոցը, ինչպես աշակերտներին յերես չպետք է տալ...

Պարոն Կարապետը հաճախ կատաղում էր և վրդովում պաշտոն։ Բայց՝ բակում աշակերտներին հսկելուց, յերեկոները մեզ էր գալիս դիշերօթիկների ննջարանի լուսամուտների տակ տեսնելու, թե ինչով ենք զբաղված։ Ձերբեմն էլ յերբ վերակացու պ. Միքայելը դնում էր թուղթ խաղալու (այս մենք իմացել էինք մի աշակերտից, վորի քեռու հետ էր խաղում), յերեկոները պարոն Կարապետն էր մտնում մեր նրնջարանը, իմանալու՝ քնել ենք, վատ դրքեր հո չենք կարդում կամ, վերջապես, «կարգ ու կանոնով» ենք թե վոչ։ Նա մեզ մոտ մտնում էր անշշուկ, անձայն, ինչպես դավադիր։ Ննջարանում մոռանում էր իր պաշտոնը և սկսում նկատողություններ անել, բարկանալ.

— «Քնեցեք, տղերք. իսկույն,— ասում էր, յեթե արթուն էինք լինում։

Իսկ յեթե արթուն էինք լինում և լամպը վառթողած՝ նա գլուխն որորում էր.—Ինչո՞ւ լամպը չեք քաշում. սա ինչ կարդ ու կանոն է, այ-այ-այ»։ Ձեթե մեկիս վերմակը ծռված էր լինում, նա բոլորովին վերցընում էր այն ու նորից խնամքով ծածկում, կարծելով թե դա շատ հաճելի յե մեզ, և զարմանում էր, վոր շնորհակալ չենք լինում։

Ընդհակառակը, մենք բոլորս ատում էինք նրան։ Ատում էինք և վախենում միաժամանակ։ Ձեվ վոչ միայն մենք՝ դիշերօթիկներս, դպրոցում ամենքը (բացի տեսչից, վորի տանը ձրի ծառայում էր նա) ատում էին նրան և վախենում միաժամանակ։ Ուսուցիչները նրա հետ չէին խոսում, վերակացուները խուսափում էին նրանից։ Պատմում էին, թե նա տեղեկություններ է հավաքում ուսուցիչների վարած կյանքի մասին և նրանց գաղտնիքները հաղորդում տեսչին։ Պատմում էին նաև, վոր տեսուչը նրա խորհրդով է վարվում։ Թե վորքան ճիշտ՝ էր այդ բոլորը—դժվար է ասել։

Բայց ամենից շատ նրան ատում էինք մենք՝ դիշերօթիկներս. սակայն վախից չէինք կարողանում արտահայտվել և բավականանում էինք միայն նրանով, վոր խոհանոցի մրոտած պատերին կամ ոջախի

չուդունի յերեսին գրում էինք կավիճով. «չափ-չափ-չափ—Ջերմաչափ»։

Մեր այս արարքը, հարկավ, անպատիժ չէր մնում։ Խոհարարը սաստիկ բարկանալով՝ ամենից առաջ պատկառեցնում էր կերակուրները, հետո զեկուցում էր տեսչին անկարգ աշակերտների մասին և սաստկացնում գիշերային հսկողութիւնը հնձարանի լուսամուտների տակ, վորտեղից յերբեմն լերևում էին նրա պրպտող աչքերը, վորոնք հիշեցնում էին պատի ճեղքերից նայող մկների, վոր այնքան զգուշ են լինում և այնպես ուզում են ամեն ինչ տեսնել։

Մի անգամ, սակայն, նրա հսկողութիւնը սաստիկ վրդովեց գիշերօթիկներիս։

Մի յերեկո, յերբ վերակացու պ. Միքայելը պարձալ գնացել էր թուղթ խաղալու, պարոն կարապետը, ինչպես միշտ, անձայն, անշշուկ մտավ հնձարան։ Բոլոր պատկած՝ լսում էինք մեր ընկեր Աբելյանի ընթերցումը։ Նա կարդում էր Զոլային վեպերից մեկը։ Դուռն բացվելու ձայնը լսելուն պես նա գիրքը ղրեց բարձի տակ ու վերմակը քաշեց գլխին։ Պարոն կարապետը վոտների ծայրերի վրա, աչքերը պրպտելով անցավ մահճակալների արանքով և կանգ առավ աշակերտ Աբելյանի մահճակալի մոտ։ Մենք ձևացրինք թե քնած ենք։ Նա մի բոպիկ չափ նայեց Աբելյանին և ապա, ավելի մոտենալով, նրա բարձի տակից հանեց Զոլայի գիրքը և բացականչեց.

— Ա՛հ, դուք այստեղ հեղափոխական գրքեր եք կարդում։

Աբելյանը վեր թռավ տեղից։

— Դա հեղափոխական գիրք չէ, պարոն կարապետ,—ասաց նա հուզված և փորձեց գիրքը խլել խոհարարի ձեռից։

Բայց խոհարարը, պահպանիչ ասող քահանայի նման, գիրքը յերկու ձեռով բարձրացրեց գլխից վերև։

— Լավ կարդ ու կանոն է,—շարունակեց նա,—ել ինչ ասել կուզի... Իմնչ է, դուք ուզում եք այստեղ հեղափոխութիւն սարքել... Լավ, չատ լավ...

—Դա հեղափոխական գիրք չէ, պ. կարապետ,—ձայն տվին աշակերտ հերն իրենց անկողիններից։

—Հապա, հապա ինչ զոհրումար է, վոր հեղափոխական չէ։ Մի քիչ չեմ տեսնում ինչ տեսակ կապ ունի։

— Սա Զոլայի գիրքն է, պարոն կարապետ, Զոլայի,—կրկնում է Աբելյանը և նորից փորձում գիրքը խլելու։

— Ա՛հ, Զոլայի,—չարախնդաց խոհարարը, գիրքը ավելի բարձրացնելով։ Գիտեմ, գիտեմ լավ է այդ Զոլեն. նա ինքն ամենամեծ հեղափոխականն է, ամենամեծ սրիկան։ Ճանաչում եմ ձեր այդ Զոլային, ճանաչում եմ... Բանտը քիչ է նրան...

— Զոլան գրող է, պարոն կարապետ,—ասում էր Աբելյանը և գիշերային շապիկով պատռում խոհարարի չուրջը—Գրող է, հեղափոխական չէ...

Նույնը կրկնում էին և աշակերտներն իրենց մահճակալներից, բայց պարոն կարապետը քմծիծաղ էր տալիս միայն։

— Գիտեմ ինչ գրող է. գիտեմ...

Կարճ միջոցում աշակերտները՝ գիշերային շրեխոտով շրջապատեցին խոհարարին և աշխատեցին գիրքը խլել նրա ձեռից։ Վորքան շատ էին նոր տանում գրքի մասին, այնքան ավելի պարոն կարապետը կաս-

կածում էր, որ վիրքն անպատճառ հեղափոխական է, ուստի և ավելի ևս բարձրացնում այն։ Մեկ էլ, հանկարծ՝ մի զարմանալի ճարպիկությամբ վիրքը կոխեց ծոցը և ձեռքերը կրծքին դնելով, դոռաց.

— Տեղներդ, անպիտաններ։ Կարգ ու կանոնով նստեք...

Տեսչի յերկյուղից և սկանդալից խուսափելու համար, քաշվեցինք մեր տեղերը, իսկ պարան կարապետն իր ավարով հպարտ, արագ-արագ գնաց դեպի դուռը։ Շեմքի մոտ՝ նա յերեսը շրջեց դեպի մեզ և սպառնաց մատը թափ տալով.

— Սպասեցեք, ըմբոստներ, սպասեցեք, ցույց կտամ ձեզ կարգ ու կանոնը...

Ու դուռն ամուր շրխկացնելով՝ անհետացավ։

Լուսամուտներից նկատեցինք, որ գնաց տեսչի տուն։

Տեսչի առանձնասենյակում լույս էր վառվում։

Ո՛հ, ինչ որ էր այդ։ Մեր ննջարանից քանի-քանի պլուխներ ու բռունցքներ ելին թափահարվում նրա յեռանից և տասնյակներ կրճտում անպտրությունից։

Ինչպես և սպասում ելինք, հետևյալ որը մեր ճաշն ավելի պակասից, իսկ տեսուչը խիստ նկատողություն արավ մեզ. ինչ բան և, աշակերտ մարդիկ, փոխանակ դաս սովորելու, սիրալին վեպեր եք կարդում, խոնարհին ձեծում ննջարանում և դուրս գցում։

— Մի քիթ չեք ամաչում, — ավարտեց տեսուչն իր ճառը, բարկացած աչքերը հառելով մեզ վրա։

Ի զուր աշխատեցինք պաշտպանվել. ի զուր փորձեցինք համոզել թե խոնարհին չենք ծեծել. մեզ ոչ-ոք չեր լսում, մեզ ոչ-ոք չեր հավատում։

Ինչքն ամպեր վրդովեց դիշերթիկներիս, որ սիրեցինք հնար մտածել խոնարհիդ վրեժ առնելու։

Ինչքեր ասեք չի հնարում վիրավորված դպրոցականի գլուխը, մանավանդ պավառում։ Եվ աղետ, եվ հիվանդություն չմնաց, որ չցանկանայինք մեր խոնարհին։ Արևլյանը, որ ամենից ուժեղն եր, առաջարկում եր սպանել խոնարհի սիրելի կատվին, մի ուրիշ աշակերտ խորհուրդ եր տալիս գողանալ խոնարհի գլխարկն ու կոշիկները և դեն մի փոսի մեջ։ Այսպես՝ ամեն մեկը մի բան եր ասում, յերբ, վերջապես, չորրորդ դասարանի մի աշակերտ առաջարկեց՝ խոնարհին տեսչի աչքում վարկաբեկելու համար, թաղտուն ալ լցնել կեբակուբների մեջ։

Առաջարկը բոլորին դուր յեկավ։ Աշակերտները հորթի պես ուրախացան։ Վերջապես, վերջապես դրտնվեց մի միջոց անպիտան խոնարհին պատժելու, — մտածում եր ամեն մեկն այդ րոպեին։ Բայց ով կկատարի այդ հանդուգն քայլը։

— Յես, — բացականչեց Արևլյանը կատմած, — յես կանեմ... Այդ բանը թողեք ինձ...

Ժամանակը ձմեռ եր։ լուսամուտների ապակիները սառույց ելին բռնել. յեղյամը սառչում եր մարդկանց դեմքի մազերի վրա և բրդե թելի կտորների նման խաղում ոդի մեջ։ Պր. կարապետի պլուխն արդեն թաղվել եր ուսերի արանքում։ Մի ամբողջ շաբաթ դպրոցը պատրաստվում եր վարպետանց տոնի որը հանդես կատարելու, վորին հրավիրված ելին յեպիսկոպոսը, քաղաքապետը և մի բանասեղծ, վոր մի վոտանավոր եր նվիրել մեր դպրոցին։ Աբելյանը հանդեսի պատմատուքյանը չեր մասնակցում. նա վերարկուի ո-

ձիքն ականջներին քաշած, ազատ ժամանակը շարունակ պատվում եր խոհանոցի մոտերքը. կարծես ուսումնասիրում եր մուտքը, հարմարութիւնները, բայց խոհանոց չեր մանում, վորովհետև պարոն կարապետը, ըստի պատճառով, խոհանոցից չեր հեռանում... վերջապես չկամ հանդեսի որը: Խոհարարն առավոտից մեծ պատրաստութեան մեջ եր, վորովհետև հանդեսից հետո լինելու եր ճաշկերույթ: Ցեկել եյին բոլոր հրավիրված մարդիկ. քաղաքագլուխը, բանաստեղծը, եպիսկոպոսը և յերկու վարդապետ, վորոնք իրար այնքան եյին նման՝ ինչպես յերկվորյակներ:

Դպրոցի բեմը զարդարված եր գորգերով և դույնզգույն լամպերով: Ճաշի հաճից հետո՝ խոսեց և եպիսկոպոսը «մեր փառավոր նախորդաց» մասին և ելի՝ մի յերկու հոգի: Ապա սկսվեց յերգն ու պարահանութիւնը:

Հանդեսը վերջանալու վրա յեր, յերբ դահլիճ մտավ և պ. Կարապետը. նա հագել եր իր տոնորյա զգեստը—սև յերկար կապան, իսկ վզին փաթաթել եր մի կարմիր թաշկինակ: Դահլիճի տաքութեան շնորհի՛վ նա ուսերն իջեցրել եր մի փոքր և սառած հայացքով նայում եր աշակերտներին. կարծես ուզում եր ասել. «կարգ ու կանոնով եղեք, անպիտաններ, հյուրեր կան այստեղ»: Նրա յերեսալուն պես՝ Արեյանը չքացավ հանկարծ և մի քանի րոպեյից նորից հայտնվեց ծալլացված ու կաթսրած այտերով:

Հանդեսից հետո սկսվեց ճաշը: Թե հյուրերը, թե ուսուցիչները և թե աշակերտները մի սեղանատան եյին: Գլխավոր սեղանի գլխին տեղ եր բռնել եպիսկոպոսն իր թիանձև միրուքով. նրա աջ և ձախ կողքերին՝ վարդապետները, հետո քաղաքագլուխը՝ իր պղին շղթան վզին, տեսուչը, բանաստեղծը և ուսուցիչները կարգով: Մեր՝ աշակերտներիս սեղանները առանձին եյին. բայց, չնայած դրան, մենք ուշադրութեամբ հետևում եյինք մեծերի գործերին: Մինչև կերակուրի բերելը սրբազանը պատմում եր սեղանակիցներին, թե ինչպես մի անգամ, մանուկ ժամանակ, ձին քացի լի ավել լրեն և ինչպես ինքն ուշաթափվել և հարվածից... Սեղանակիցները մեծ ուշադրութեամբ հետևում եյին սրբազանի գրույցին և վոչ վոք չեր համարձակվում վորևե խոսքով ընդհատել նրան: Յերբ սպասավորները կերակուրը բերին—խոսակցութիւնը իսկույն գադարեց: Հայր սրբազանն սկսեց միրուքը շփելով սեղանն որոնել: Վոչ վոք կերակուրին չմոտեցավ, մինչև վոր եպիսկոպոսն ինքը չճաշակեց ամենից առաջ: Յեվ քանի վոր մեր կերակուրը չեյին բերել, մենք շարունակ՝ աչքի տակով՝ հետաքրքիր նայում եյինք հյուրերի կողմը: Ամենից շատ մեզ գրավում եր բանաստեղծն իր յերկար մազերով... Յերբ սրբազանն արծաթե գդալով կերակուրը տարավ բերանը, նա գեմքը խժռուեց՝ փրղշտալ պատրաստվողի նման: Յեվ զարմանք բան. նույնպես՝ առաջին գդալից հետո գեմքերը խժռուեցին և վարդապետները և՛ քաղաքագլուխը և բանաստեղծն ու ուսուցիչները, իսկ տեսուչը գունատվից. գունաթափվեցին և մի քանի ուսուցիչներ: Բայց վոչ վոք վոչինչ չեր խոսում: Յեվ առաջինը գործել եպիսկոպոսը յեպով, վոր խլեց լռութիւնը:

— Ինչպես յերևում է,—ասաց նա ծանր ու մի րոպեք շփելով,—ձեր խոհարարը մի քիչ ավելորդ... աղը շատ է արել...

— Այո,—կլկով արին վարդապետները։—Մի քիչ այնպես...

Բանաստեղծն ու քաղաքագլուխը լուռ մնացին։

Այս անգամ տեսուչն ավելի գունատվեց։ Այդ րոպեին նա հիշեցնում էր քննութիւն տվող աշակերտի, որ տրված հարցերին չի կարողանում պատասխանել։ Ուսուցիչները լուռ նայում էին նրան, իսկ նա մեղավոր հայացքով նայում էր հյուրերին և կարծես ուզում էր ասել «Ներեցեք»... Մեղմ տեսուչ... Այդ միջոցին վրքան վողորմելի էլիր դու քո անուշով, քո ակնոցով և սեպաձև միրուքով։

Անհարմար լռութիւնը կպկից դարձյալ յեպիսկոպոսը.

— Վոչինչ, վոչինչ. թողնք մյուս կերակուրներից բերեն...

Ճաշն անցավ լուռ. հանդեսի բարձր տրամադրութիւնը բոլորովին ընկավ։ Ամենքն էլ աշխատում էին ցույց տալ, որ պատահածը վոչինչ բան է, բայց նրբանց շարժ ու ձևերը, հայացքը մատնում էին նրանց։

Ամենից անհանգիստ էր տեսուչը. նա շարունակ կռծում էր ներքևի շրթունքը։ Դա արդեն ապացույց էր, որ սաստիկ բարկացած է։

Աբելյանը հասել էր իր նպատակին, վորի տեսար հետևանքն, հարկավ, չէր նախատեսել։

Հենց մյուս որը խոնարարն արձակվեց պաշտոնից։

Վրքան էլ նա աշխատում էր համոզել տեսչին, վերակացուներին, թե անմեղ է, բայց հիմա էլ ներան չէին հավատում...

Ցերբ նա, իրերը հավաքած, կառուն դրկած, անցնում էր դպրոցի բակով, լալիս էր։ Սակայն աշակերտներից և վոչ մեկը չգացվեց նրա արցունքներից։

— Կերթամ,—ասաց նա դպրոցի մոտ յերեսը դեպի դպրոցը դարձնելով,—կերթամ ուրիշ տեղ,— խոհարար կլինեմ, բայց վախենում եմ, վոր այս դպրոցի կարգ ու կանոնը խախտվի...

Ու գնաց ծեր, փոքրիկ գլուխը ուսերի մեջ խրած։

Նրա գնալուց հետո, դպրոցի «կարգ ու կանոնը» խախտվեց ներանով, վոր փոքրիկ աշակերտներն ազատ շրջում էին բակում, ծիծաղում էին առանց վախի, իսկ մենք՝ դիշերօթիկներս, յերբեմն յերգ էինք ասում մեր տխուր ննջարանում։

Մեղմ «Զերմաչափ»... Արդյոք վորտեղ ես հիմա։ Ցես այժմ պատրաստ եմ ամեն ինչ ներել քեզ...

1916.

ՀՈԳԵՐԱՐՁՈՒՆ

I.

Ուսուցչի ևամակը հոգաբարձուին

Հարգելի պ. Ազաբեկյան,

Ինդրում եմ բարեհաճեք ոռճիկի մասին կարգադրություն անել, որովհետև խիստ կարիքի մեջ ենք։ Ինդրում եմ նաև վառարան շինել տաք, որովհետև ծուխն առաջվանման շարունակ չեթ է տալիս, և դասարանների լուսամուտների ապակիները գցեք, որովհետև ցրտերը մրսում են, այնպես որ հետո հիվանդություններ կարող են պատահել։

Հարգանքով՝

Ավագ-ուսուցչի Մամիկոն Ավալյան։

II

Հոգաբարձուի պատասխանը

Պարոն Մամիկոն,

Ձեր եկ ստացա ձեր նամակը և կարդացի։ Գրում եք, թե կարիք ունեք ոռճիկ եք խնդրում։ Վոչինչ չունեմ։ Ոռճիկ տալը, իհարկե, մեր պարտքն է, կտանք, բայց բանն էս է, որ ցերեկօրեն Մինասը գնացել է քաղաք բժշկվելու։ Ասում են՝ աղիքների հիվանդություն ունի։ Ցերեկ ասածով մի բան չպատահի, ես

ցերեկու որը շատ կարելի չի գա, են ժամանակ ամեն բան կանենք։

Ով գիտե տան համար բաներ են հարկավոր, որ ասում եք կարիք ունեք։

Ցեթե, դրուստ որ, տան համար բաները պետք են, կարող եք իմ խանութից վերցնել, հետո կհաշվենք, վոչինչ։ Ցերկար ժամանակ է, պարոն Մամիկոն, որ էլ խանութ չեք գալի... Ինչպես ցերևում է՝ նեղացել եք։ Բայց հավատացեք, պարոն Մամիկոն, բրինձը հենց այդպես էլ ստացել էինք։ Ցեթե խմանալի մեջը կեղտ կա, ձեզ կտայի, հարցնում եմ... Իհարկե չեմ։ Վոր լավ ապրանքը ձեզ նման պատվական մարդուն չտամ, բա էլ ում պետք է տամ, մեր պատմուխին (ամբոխին)... Մի խոսքով...

Հիմի նոր բրինձ հենք ստացել։ Ցեթե ուզում եք, հաճեցեք տարեք։ Ագուլու լավ տեսակի բրինձ է։ Անցյալ որը տոներները մի փութ տարավ։ Նա շատ եր հավանում։ Ցեթե դուք էլ տեսնեք, դուք էլ կհավանեք։ Բրնձից տավարի ստացել հենք Որդուբադու չեր, Բաղդադի խուրմա և Ցերևանի բուլղ։ Համեցեք. գներն էլ շատ ևժան հեն։

Հետո գրում եք, թե դասարանների լուսամուտները կոտրված են... Եղ հո անցյալ անգամ էլ գրել էիք։ Մրթեն շուշա բզդոը դեռ չի ցեկել քցել... Են անպիտանին տան անգամ ասել եմ, որ դա, և պարմանում եմ, թե ինչու չի գալիս... Ով գիտե անցյալ տարվա հաշիվը չի ստացել, գրա համար է նազ ու տուչ անում։ Վոչինչ. ցես նրան կասեմ. հալաթի կգա խանութ... Ցեթե, վոնց վոր ասում եք, պ. Մամիկոն, դասարաններում շատ ցուրտ է, առայժմ բաց տեղերը յուղած

թուղթ կպցրեր, հետո կտեսնենք։ Ցուցած թուղթը լավ է, համ լիս կլինի, համ էլ քամի չի փչի։

Իսկ ինչ վերաբերում է վառարանին, վոր ասում եք, թե լավ չի վառվում և միշտ ծուխը չետ է տալիս, էդ նրանից կարող է լինել, վոր բուխարիկի մեջ շատ մուր կլիտված կլինի։ Դասից յետը, աշակերտներից մեկին բարձրացրեք կտուրը, թող թոկով կապած մի քար, կամ փետի ծերը մի ավել կապի, կախ տանի բուխարիկի մեջ ու մուրը մաքրի։ Դրանից յետը, յեթե ծուխը էլի լետ տա, նշանակում է բուխարիկի մեջ մի ուրիշ բան կա. կամ քար ընկած կլինի կամ սատկած կատու։ Հերու յել եղպես մի բան եր պատահել։ Վառարանի ծուխը միշտ յետ եր տալիս։ Հերվա ավագ ուսուցիչ պարոն Տիգրանն էլ ձեզ նման շարունակ դանդաղում եր, թե՝ «դասարաններըը ծխով լցվում են, չենք կարում պարապել, ֆլան-ֆատան, շինեցեք»։ Ինչ արինք-չարինք, ծուխը չեր կտրում։ Վերջը, բանից դուրս յեկավ, վոր սատկած կատու յե ընկել բուխարիկի մեջ։ Հիմի յել, ա՛լ դիտե, եղպես մի բան է պատահել։ Դուք ասածս փորձեցեք, նրանից յետը կտեսնենք։

Նամակում հետո գրում եր, թե յերեխաները մրսում են դպրոցում։

Յես կարծում եմ, նրանք վոչ թե դպրոցում են մրսում, այլ հենց դրսից։ Յեթե դուք չթողնեք, վոր նրանք դուրսը այդքան խաղան, լրբությունները անեն, դժվար թե մրսեն։ Յեթե դպրոցում մրսում են, ձեզ եմ հարցնում, էլ դրսից ինչի՞ են խաղում. չէ՞ վոր դուրսը ներսից ավելի ցուրտ է։ Նշանակում է՝ նրանց մրսելու պատճառը կոտրած ապակիները չեն։

Ես էլ պետք է ասեմ ձեզ, պարոն Մամիկոն, վոր ձեր աշակերտները իրենց շատ անկարգ են պահում դուրսը։

Պատահում է անցնում եմ փողոցով, տեսնում եմ ձեր աշակերտները դասերը թողած, պարապ-սարապ մի տեղ հավաքված կամ չանա յեն խփում, կամ հրդռում կամ թե չե ձնթռփի խաղում։ Են որն էլ ձնթռփի մեկը յեկել դիպել է մեր հարսի (այսինքն իմ նշանածի) գլխին։ Եղ դես վոչինչ։ Մի պատահմունք է։ Համա բանն ես է, յերբեմն խաղերի ժամանակ անցնում եմ կողքներից, չեն էլ ասում, թե ո՛վ է անցնողը... Մի խոսքով... Սմեն անգամ յեկեղեցի գնալիս՝ նկատում եմ, վոր ձեր աշակերտները մարդու ընկի մարդատեղ չեն դնում։ Ինչ վոր է։

Յեկեղեցի ասի, միտս յեկավ, պարոն Մամիկոն։ Դիտեք ինչ։ Ես քանի որ է ուրացու Խաչատուրը պատից վեր ընկնելու պատճառով հիվանդացել է, իսկ յերեսփոխն էլ, վոնց վոր ասի, գնացել է քաղաք բժշկվելու, հնարկս վոր խեղճ քահանան՝ իր ծեր հալով ճանապարհ է մենակ ևերար չի գալու. չգիտի դասձմ յերպի, թե՞ փոխ ասի։ Մեր հարսը, այսինքն իմ նշանածը, ասում է, թե խեղճ քահանան, յերբ դասումն է յերդում, փոխն է ծնում, իսկ յերբ փոխն է ասում, դասի խոսքերն են ծնում։ Հիմի, հնարկս վոր, պարոն Մամիկոն, լավ կանեք, յեթե կարող եք դուք, կամ ուսուցիչներից մեկը, գաք քահանային ոգնելու, հետը փոխ ասեք, թե չե՝ խեղճը մեղք է։ Պարապ լինելի, ես ինքս կերթայի, բայց աբի տես վոր, թարսի պես, խառնված եմ, նոր ատացված ապրանքները տեղավորում եմ։ Պարոն Սմբատի ձենը լավ է. լավ կանեք, հենց նրան գրկեք։

Մի բան պետք է ասեմ պ. Սմբաթի մասին, որը իրան ել հայտնեք, թե եզպես չի կարելի, ամոթ է։ Գիտեք ինչ են որը՝ գիշերով մեր հարսի հետ անցնում եմ վերի թաղի փողոցով, տեսնեմ մինը չերպ է առում։ Վատս կախ արի, ասի՝ տեսնենք ես ով է, որ կես գիշերին եսպես երված չերպ է ասում։ Բանից դուրս չկավ, որ չերպողը պ. Սմբաթն եր։

Գիտեք, դա մի քիչ լավ չե, պ. Մամիկոն։ Լսողները վատ բաներ կկարծեն, հենց կկիմանան, թե պ. Սմբաթը սիրահարված է, որ այդպես չերպ է առում մեջ գիշերին։

Ուսուցիչ մարդը պետք է մի քիչ իրեն պահի, որ չասեն թե՝ եսպես է, հնպես։

Որինակի համար, պ. Գարեգինը, որ Անահիտը, միշտ իրար հետ անցնում են փողոցով, միշտ խոսում են ու ծիծաղում...

Դա լավ չե, պ. Մամիկոն, ընկի լավ չե։ Տեսնողները կկարծեն, թե սրանցում մի ինչ-որ բան կա, որ եզպես փսփսում են ու ծիծաղում։

Պ. Գարեգինը, փառք ասածու, ասաված իրեն բախշել, իրա համար կնիկ ունի, նրա հետ ինչքան ուզում է մեն գա... Ուշով ել բան չի ասի, բայց... որինակի համար, ես կնկա տեր մարդ եմ. եթե վեր կենամ ու մի ուրիշ կնկա հետ մեն գամ, ինչ կասեն... Ջեն ասի թե՝ «Տեսեք, տեսեք անամոթին, ինչ բան ու գործի յե. իրա պատկառի կնիկը թողած, ուրիշի հետ է մեն գալի»... Կասեն ու հլա դեռ հետն ել կթքեն։ Հապա... Եզպես պ. Գարեգինին մի քիչ զգուշացրեք, որ խալխը նրա մասին վատ բան չխոսեն։ Մեր հարսը, ես որը ինձ մի քանի բան պատմեց, հաստ հավատալու չի

գալի... Ինչ վեր ու Ցեպածը ասում եմ ձեզ. հիմի դուք գիտեք։

Իսկ ռոճիկի մասին, վոնց վոր ասի, չերը չերեսփոխը, եթե աստծով մի բան չպատահի, քաղաքից գա, կտեսնենք։

Նորաշենի ծխական դպրոցի հոգաբարձու և տանուտերի ոգնական՝
Աթաբեկ Ադաբեկյան։

Չա, պ. Մամիկոն, մոռացա ասել, որ բրինձից, ջրից ու խուբմից սավայի՝ ստացել ենք լավ զելթուն, Թավրիզի քիշմիշ և թազա լիմոն։

Դուք լիմոն, կարծեմ, շատ եք սիրում...

1913.

ՎԵՐԱԿԱՑՈՒՆ

... Ութ ամիս է, ինչ թեմական դպրոցի վերակացու եմ։

Այս պաշտոնն ինձ համար գլուխ բերեց հոգաբարձու Ալանյանի կինը, որ մի պատվական ու բարի տիկին է, և, մի քիչ կարճատես լինելու պատճառով, ակնոց է կրում, չեթե տեսել եք։

Ձերը անցյալ տարի նա մեր գյուղը ամառանոց եր յեկել, յես այնտեղ ծանոթացա նրան, մի քանի անգամ մեր այգուց խնձորներ ընծա ուղարկեցի, աշակերտներիս մոտ բերել տվի անտառից, որ մուրաբա յեփեն (իհարկե այս բոլորը յես արի առանց վորևե ակնկալության, զրկված լոկ հարգանքի զգացմունքից), և մի որ էլ յերբ խոսք ընկավ իմ պաշտոնի մասին, յես ցանկություն հայտնեցի վերակացու լինել վորևե քաղաքի միջնակարգ դպրոցում, քան թե ուսուցիչ մնալ գյուղում։

— Կուզեք, յես գլուխ բերեմ,— ասաց։

— Խնդրեմ. յերախտապարտ կլինեմ։

Ու նա իր խոստումը, շնորհակալ եմ, կատարեց։ Ցավ յես իմ պաշտոնից, պետք է ասած, գոհ եմ. ռոճիկս էլ, փառք աստուծո, վատ չե։

Թե վորքան եմ սիրում պաշտոնս, այդ յերեվում է նրանից, վոր չի պատահել մի որ, վոր յես յեթե մնամ կամ ուշանամ դասից... Յես միշտ բոլորից առաջ եմ գնում։ Յերբեմն նույնիսկ գնում եմ տեսնում ծառաները նոր են վեր կացել... Պետք է այս էլ ասեմ, վոր չի յեղել նույնպես մի դեպք, վոր յես կռվեմ ընկերներիս կամ դպրոցի ծառաների հետ... Այդպիսի բան յերբեք չի յեղել։ Աշակերտների բանը ուրիշ է, իհարկե... Նրանց հետ անհամաձայնություններ պատահում են յերբեմն, ինչ վոր անխուսափելի յե... Բոլոր աշակերտները միատեսակ չեն, իհարկե։ Դրանց մեջ կան մի քանի ղլդուր տղաներ՝ բարձր դասարաններից, վոր քիթներն այնքան բարձր են բռնում, կարծես ամեն մեկը մի փիլիսոփայության դոկտոր է՝ Լայպցիգից յեկած... Դրանք, ամեն որ դասերը թողած, խոսում են ինչ-վոր Լոմբրոզոյի, Շոպենհաուերի և Կարլ Մարքսի մասին... Աշակերտներ և Մարքս... Ձերը բանվորները կամ սոցիալիստներն են խոսում Մարքսի մասին, հասկանալի յե. բայց աշակերտները... Ի՞նչ կապ ունի... Դեռ Պռուշյան չեն կարդացել Մարքսի մասին են խոսում...

Տասը տարի գյուղում ուսուցիչ եմ յեղել և մի անգամ գոնե իմ աշակերտների բերանից «Մարքս» խոսքը չեմ լսել։ Իսկ այստեղ... մարդ չի հասկանում... Ձերը յես դրանց ասում եմ. «Պարոններ, փոխանակ Կարլ Մարքսի ու Լոմբրոզոյի մասին խոսելու, վերցրեք մեր մատենագիրները կարդացեք»,—ծիծաղում են հիմարի պես։

Տգետ, իսկ տղաներ են, իհարկե։

Անցյալ որը դրանցից մի յերկուսը մոտենում են ինձ.

— Պարոն Հեվեկյան,— ասում է մեկը, վեցերորդ

դասարանցի մի ղլղուր տղա,—ասացեք խնդրեմ Մոնբլաննն և բարձր, թե՛ Արարատը։

Ցես ասում եմ.

— Մոնբլանը։

— Մ՛իթե։

— Իհարկե։

Նրանք աչքի տակով նայում են իրար և խնդում այնպես, կարծես թե ես չեմ նկատում։

Ինքնահավան տղաներ են, իհարկե... Շատ ժամանակ խոսում են նույնիսկ կանանց հարցի մասին։

Մի որ էլ այդ նույն տղաները դարձյալ մոտենում են ինձ։

— Պարոն Քելեկյան,—ասում է դարձյալ նույն տղան,—ասացեք խնդրեմ՝ ջրացի քարը իր ամեն մի պատյտի ժամանակ ցորենի քանի՞ հատիկ կարող է աղալ...

Ցես մտածում եմ մի վոքը, վորպես բարեխիղճ մարդ, և ասում.

— Դա ճիշտ չի կարելի վորոշել... Ջրացց կա, վոր կարող է ավելի աղալ, Ջրացց էլ կա, վոր կարող է պակաս աղալ...

Բայց նրանք, նկատում եմ, հեռանալով դարձյալ ծիծաղում են։

Դա, իհարկե, ինձ ամենևին չի վիրավորում, քանի վոր, գիտեմ՝ ոգեւ, խակ տղաներ են՝ հովերով տարված։

Բացի սրանից, չէր այդ աշակերտներին հանդիմանում ես չարությյան համար կամ մի բան հասկացնելու բարի դիտավորությամբ տպատակում եմ մեկին,

ամբողջ դասարանը բողոքում է—այսպես-այնպես, ինչպես կարելի չէ...

Ափսոս գյուղի չերեխաները...

Աշակերտների մասին խոսելով՝ չես մի կողմ թողի գլխավորն ու կարևորը։

Անցյալներում մեր դպրոցում կար մի հանդես։ Տոնում էին պատմաբյան ուսուցիչ Ոթյանի ուսուցչության 30-ամյա հոբելյանը։ Հանդեսը կատարվեց շատ լավ. ամեն տեղից շնորհավորել էին։ Շնորհավորական դրուքյուն եր ուղարկել նույնիսկ կույսերի մայրապետը... Հանդեսից հետո, ինչպես կարգն է, յեղավ ճաշկերույթ։ Շատ մարդ կար ճաշին—մեր հոգաբարձուները, նրանց կանայք (այդ որը դժբախտաբար չեր յեկել տիկին Ալանյանը, կարծեմ հարբուխի պատճառով) և ուրիշ պատվավոր հյուրեր։ Այստեղ եր, ի միջի այլոց, և հոգաբարձու Կաչանյանի աղջիկը՝ մի ինքնահավան պատռված դալդի, վոր հայերեն խոսում է գերմաներենի ձևով՝ «Այրս վախեր մախից»... Իբրև ուզում է ասել՝ «Հայրս վախենում եր մահից»...

Ճաշի ժամանակ այդ պատռվ դալդին նստած եր իմ դեմ ու դեմ։ Նկատում եմ, վոր դա շարունակ ինձ է նայում։ Մտածում եմ. «Սա ինչո՞ւ է նայում ինձ. չլինի՞ մոքում մի բան կա»... «Ինչ էլ ուզում է լինի,—ասում եմ ինքս ինձ,—չես կլինի, չերեխաներ ունեմ...»։ Բայց տեսնում եմ, վոր՝ չէ. հայացքի մեջ բարի դիտավորությունը պակասում է... Ցես շարունակում եմ ուտել և՛ խաղողից և՛ խնձորից, իսկ նա աչքերը չորս արած նայում է ինձ։ «Եհ, ինչքան ուզում է նայի»—ասում եմ մոքումս և շարունակում ուտել։ Ուրիշները խոսում են, ճառ են ասում. իսկ չես հա-

մեստորին լուում եմ և լերբեմն միայն ճաշակում մրգերից. բայց նա չել, այդ ապուշ աղջիկը, աչքը չի հեռացնում. նայում է ինձ, նայում անդադար...

«Ինչ-վոր մի բան կա սրանում», մտածեցի։

Ցեվ խոսպան՝ ճաշկերույթից չանցավ մի յերկու րոպե, մի առավոտ իմ ընկեր վերակացուներից մեկը դպրոցի միջանցքում կանգնեցնում է ինձ և խոսքերը ծամելով ասում, թե յես ճաշկերույթի որը իբր մի քիչ անվայել եմ պահել ինձ հյուրերի մոտ։

— Այսինքն ինչպես,—հարցնում եմ զարմացած, և մտածում, թե ինչ անվայել բան եմ արել։

Ընկերս խոսքն չպատասխանեց։

— Այնպես,—ասում է տատանվելով,—կարծեմ որիորդ Կաչանյանը անցյալ որը մի քիչ դժգոհ եր քեզանից։

— Ինչպես. չի կարելի իմանալ՝ ինչի համար։

Ընկերս նորից տատանվեց. թե՝ «այնպես», և պատմեց, վոր յես, իբր թե, որ. Կաչանյանի ասելով, սովատնից դուրս յեկածի նման, ճաշին մրգի ամանը ուրիշների առաջից քաշել եմ իմ մերուքի տակ (այսպես էլ ասել է՝ «մերուքի տակ») և արագ-արագ կերել մեջը յեղած մրգերը, և իբր թե,—կատարյալ սուտ,—շտապելուց խնձորը կերել եմ առանց կճպելու։

Այդ լսելով՝ յես չկարողացա պահել ինձ և ասի.

— Դա բացարձակ սուտ է... Այդպիսի տաղտուկ որիորդի մազերից պետք է բռնել և փողոցում քարշ տալ... Որիորդ Կաչանյանը լավ կանի իր մասին մտածի, վոր արդեն պատավել է և...

Յես ելի ինչ-վոր խոսքեր ասացի, վոր կարծեմ լսեցին մեր մոտով անցնող ուսուցիչներն ու աշակերտները... Շատ հարկավոր է վոր լսեցին. յես ճշմարտությունն ամեն տեղ էլ կասեմ...

Ընկերս, նկատելով իմ հուզմունքը, աշխատեց հանգստացնել ինձ։ Բայց զրպարտված մարդը կարծր է հանգստանալ... Յես թեև լռեցի, բայց հանգստանալ չկարողացա։

«Այդպես սրիկա. որիորդ Կաչանյանը դրա համար եր նայում ինձ,—մտածում եմ։—Անզգամ...»։

Ցեվ ամբողջ գիշեր քունս չտարավ,—վոնց թե նա կասի՝ այսպես... Անզգամ...

Այս խոսակցությունից մի շաբաթ անցնելուց հետո, մեր տեսուչը, վոր մի բթամիտ ու կամակոր մարդ է, մի որ կանչում է ինձ իր մոտ։

Գնում եմ։ Գրասեղանի առաջ նստած ինչ-վոր գրում է, աջ թեի ժանժիռը սեղանի վրա դրած։ Յերբ ներս մտա, չնայեց էլ, թե ով մտավ։ Դրանով կարծես ուզում եր ցույց տալ, թե՝ տեսնեք-տեսնեք, շատ եմ զբաղված... բթամիտ արարած։

Նա գրում է, իսկ յես նայում եմ նրան ու մտածում, թե ինչի համար է կանչել ինձ։ Գրում է կամաց-կամաց և չի յել ասում, թե՝ «նստիր»... Այնքան անքաղաքավարի յե...

Վերջապես, գլուխը բարձրացնում է և, փոխանակ ինձ նայելու, աչքերը լուսամուտին, խոսում է իր անահորժ ձայնով ու հայտնում, վոր յես, «հակառակ իր կամքի», արձակվում եմ իմ պաշտոնից։

— Մանկավարժական և հոգաբարձական խառը ժողովը,—ասում է նա լուսամուտին նայելով,—այդպես վճռեց։ Այժմ հայտնում եմ ձեզ ժողովի վորոշումը...

Այս խոսքերի վրա իմ աչքերը մթնում են ինչպես թե այդպես։ Ցես ինձ հալաքում եմ և ասում.

— Ներեցեք, չի կարելի իմանալ՝ արդյոք ինչի համար եմ արձակվում պաշտոնից։

Տեսուչը, այդ սաբսրինակ մարդը, լռում է մի փոքր, մտածում և ասում.

— Մ'թթե դա այնքան ցանկալի չէ։

Ալեհուշ հարց. իհարկե ցանկալի չէ։

— Այո. չես կուզելի իմանալ...

Նա նորից մտածում է. մի բան, վոր նրան չի սազում։

— Դուք, իսկապես, ցանկանում եք իմանալ պատճառը,— կրկնում է նա յեղունդներն իրար քսելով։

— Այո, այո։

Այս անգամ արդեն նա յերեսը դարձրեց ինձ և ասաց.

— Խառը ժողովը գտավ, վոր դուք ձեզ առհասարակ անվայել եք պահում, թե դպրոցի պատերի մեջ և թե դուրսը...

Յեթե մի ուրիշը լիներ իմ տեղը, այս խոսքերը լսելով խելքը կթռցներ. բայց յես ինձ այն բոլորովին սառնասիրտ և իսկույն գլխի ընկա, թե ինդոցը վրեժխնդրից է գալիս։ «Պառավ զալդին այստեղ մատն է խառնել», մտածեցի։

— Դուք յերևի նկատի ունեք որիորդ Կաչանյանին,— ասում եմ յես։— Բայց իմացեք, վոր յես ուրիշ կերպ չեյի կարող վարվել...

— Ցես վոչ մի բան նկատի չունեմ,— պատասխանում է նա առանց ինձ նայելու, մանժետը հագնելով։— Դա ժողովի վորոշումն է։

— Հասկանում եմ,— ասում եմ,— բայց չես գիտեմ, թե ժողովը ինչ է նկատի ունեցել։ Այդ ցանցառ որիորդը զրպարտել եր ինձ, յես էլ ասացի՝ նրա մազերից պետք է բռնել և... Այդտեղ ինչ անվայել բան կա... Այդպիսի սառնոտ որիորդի մազերը քաշելը քիչ է...

— Տեսնում եք,— դարձավ ինձ տեսուչը,— դուք այստեղ էլ,— ասում է,— ձեզ անվայել եք պահում։

Ասացեք խնդրեմ, այստեղ ինչ տնվայել բան կա։

Ցես խոսում եյի առանց հուզմունքի, առանց ալմուկի և առանց վորևե բացականչության։ Ցեվ նա ասում է, թե անվայել է։

— Անվայել վոչինչ չկա,— ասում եմ հանդիստ.— յեթե մի այդպիսի պառաված որիորդ ձեզ զրպարտեր, դուք, կարծում եմ, ուրիշ կերպ չեյիք կարող վարվել... Շատ էլ նա հոգաբարձուի աղջիկ է, հայրը վաճառական, բայց սառնոտ է։ Փոխանակ ինձ բամբասելու,— ասում եմ,— ավելի լավ կանեի՝ մորդու դնա...

Իմ այս խոսքերի վրա տեսուչ կոչվածը գեմքը թթվացրեց.

— Դուք իզուր մի բարկանաք,— ասում է,— ոտար որիորդի վրա։ Վոչ մի որիորդ այստեղ գործ չունի, և խնդրում եմ մի ալմկեք...

Ու, այս ասելով, նա դուրս գնաց, թողնելով ինձ իր կաբինետում։

Զարմանալի ոգևոր մարդիկ կան կյանքում... Վորքան ուզում ես քաղաքավարի յեղիր, վորքան ուզում ես զսպված խոսիր, դարձյալ ասում են՝ անվայել ես պահում քեզ։

Մ'թթե ասածներիս մեջ անվայել մի բան կա։

կամ վիրտեզ և տեսնված, վոր մի անպիտան որիորդի պատճառով (թեկուզ նա լինի հոգեթարմուխ աղջիկ) ուսուցչին արձակեն պաշտոնից։

Թեև մեր ուսուցիչներն ասում են, վոր ինձ արձակելու պատճառը որիորդը չէ, բայց—չեմ հավատում։ Ես շատ լավ գիտեմ, վոր խառը ժողովը իր վորոշումն արել է որիորդի ցուցումով։

Ցեղ ինձ հիմա արձակում են մի աղջկա պատճառով... Այսպես էլ անարդարությունն... Հետո ասում են, թե ինչու չեն մարդկի ինքնասպանություն գործում...

Մեր ուսուցիչները և տիկին Ալանյանը խորհուրդ են տալիս՝ նորից գնալ գյուղերը... Բայց վիշ. չես չեմ գնա և չեմ թույլ տա, վոր անարդար կերպով հեռացնեն ինձ, այն էլ մի աղջկա պատճառով։ Ես թույլ չեմ տա... Ցեթե տեսուչն իր պատիվն ունի, չես էլ իմ պատիվն ունեմ։ Ես գուցե ավելի լավ հոր վորդի չեմ, քան նա։ Իմ հայրը համենայն դեպս չեղել է վաճառական, չկեղեցու լերեսփոխ և տանուտերի ոգնական, իսկ նրա հայրը, ասում են, մի հասարակ դերձակ է։

Ինչևէ. դա պարծենալու բան չէ, իհարկե, բայց չես այսպես չեմ թողնի։

Զոքանչս շատ ճիշտ է ասում. խնդիրը պետք է մամուլի նյութ դարձնել։

Այո, պետք է լրագրերում գրել, վոր ամենքն իմանան, թե ինչն ինչից է...

1916.

ԿԱՍԿԱԾ

Թվաբանության ուսուցիչ Արամ Սարոյանն այդ առավոտ զարթնեց սովորականից ուշ՝ հոգնության ու դժգոհության արտահայտող աչքով։ Շտապ հագնվելով նա, առանց կնոջն ու յերեխային նայելու, վոր նստած էին հացի սեղանի մոտ, հոնքերը կիտած գնաց լվացվելու։ Կինը, նրա դեմքին նայելով, իկուզն գուշակեց, վոր ինչ-վոր բան է պատահել ամուսնուն։ Դեռ յերեկ յերեկո, յերբ ինքը պառկած եր արդեն, Արամն ակումբից ուշ յեկավ և, հակառակ սովորության, հետը չխոսեց։ «Արդյոք ինչ պիտի պատահած լինի»,—մտածեց տիկինը յերեխայի աչքերին նայելով, իսկ յերբ յերեսը սրբելով ներս մտավ Սարոյանը՝ նույն մռայլ դեմքով, նա չհամբերեց.

—Ի՞նչ է պատահել, Արամ... ախուր ես յերևում։

Սարոյանը չպատասխանեց։

—Քեզ հետ չեմ... Ինչու՞ չես խոսում... Ուշացել ես... հա... (Մարդը լուռ է)։ Դե, յես մեղավոր չեմ, վոր ուշ ես զարթնել։ Քանի անգամ դու ինքդ ես արգելել, վոր չզարթեցնեմ, յերբ էլ լինի... Ասենք, մեր ժամացույցը կարող է սխալ լինել... են որը, յերբ մայրիկը մեզ մոտ եր—կանգնած եր։

—Ի՞նչ,—տնքաց Սարոյանը,—ինչ մայրիկ...

Նա զոքանչին չեր սիրում. տանել չեր կարողա-

նում նաև, որ կինն ամեն մի առիթով հիշում է նրա անունը։ Տիկին Հռիփսիմեն մոռացավ ասելիքը և տարակուսանքով կմկմաց.

—Ձեռ .. ել ինչո՞ւ ես բարկանում... ասի՝ մեր ժամացույցը կարող է սխալ լինել։ Այդտեղ ինչ կա որ այդպես...

Սարոյանը հոնքերն ավելի վրա տվեց և դարձյալ լռեց։ Կանգնած մի բաժակ թեյ խմեց, ապա ուսերին գցեց վերարկուն և պատրաստվեց դուրս գալ։ Երբ կինը կրկին հարցրեց.

—Լսիր, Արամ, մի թագցնի... ինչ է պատահել որ այդպես..

Սարոյանն այնպես ձևացրեց, իբր թե ոչինչ չի լսում, և դուրս եկավ տնից։

«Զարմանալի չի՛, ինչպես հասկանում է, որ բան է պատահել», —մտածեց նա կնոջ մասին։

Փողոցում՝ դիշերվա անձրևից այստեղ ու այնտեղ հետք էին դեռ փոքրիկ լճակներ։ Ողը խոնավ էր, օրն ամպամած ու սառը։ Թեթև ցուրտ զգալով՝ Սարոյանը վրա քաշեց վերարկուն և քայլերն արագացրեց։ Ճանապարհին նրան թվում էր, թե այդ օրն ամեն ինչ—մարդիկ, կանայք, լերևխանները և անգամ կառքերի ձիերը քնատ են ու գունատ։ Յերբ անցորդները նայում էին նրան, նա գլուխը կախում էր, հոնքերի տակից նայում նրանց կամ անտարբեր ձևանում։ Թվում էր նրան, թե մարդիկ մի տեսակ նեղսրտությամբ ու խորամանկությամբ են նայում իրեն։ Ցերևի հասկանում են, որ գիշերը չի քնել՝ թղթախաղում ինչ գումար է տարվել և հիմա գլուխն ու աչքերն ինչպես են ցավում։ Նրան թվում էր նույնպես,

որ իրեն նայողների հայացքներում ծաղր կա և մի տեսակ հեգնանք։

«Ծաղրի ինչ բան կա,—ասում էր Սարոյանն ինքն իրեն։—Ով ասեք այդպիսի բան չի անում։ Ինչո՞ւ պիտի ծաղրեն... Ինչ հիմար բաներ եմ մտածում» ..

Դպրոցը Սարոյանի բնակարանից հեռու չէր։ Յերբ տաս րոպեից հետո նա ուսուցիչների բակը մտավ, աշակերտներն արդեն անկարգ խմբերով, հարձակվող թշնամու բանակի նման, ներս էին խուժում դասարանները՝ աղմուկով, իրար հրմրելով։ Իսկ ուսուցիչները շեմքի մոտ խմբված՝ զրուցում էին։ Աշխատասիրության ուսուցիչ Բալյանը նրանց մեջտեղը կանգնած՝ հեղինակավոր շարժումներով խոսում էր ինչ-որ։ Սարոյանը չէր սիրում Բալյանին, համարելով նրան մեծամիտ և ինքնահավան. չէր սիրում նրա հեղինակավոր շարժումները, ձայնը և, մանավանդ, ցուցամատով համոզելու սովորությունը։ Յեվ այժմ, տեսնելով նրան խոսելիս, Սարոյանի սիրտը կասկած ընկավ։ Նրան թվաց, թե Բալյանն ընկերների հետ խոսում է իր մասին։

«Յեվ ինչպես եվ կլսունի նման ծամածռություններ է անում,—ասաց նա մտքում։—Մյուսներն էլ ինչպես, ապուշի նման, լսում են նրան»...

Ընկերներին մոտենալով՝ Սարոյանն անխոս բարևեց նրանց և առաջ անցավ՝ աշակերտների լեռնից դասարան մտնելու։

—Այսօր պարոն Սարոյանի արտադրությունը մի տեսակ եր,—նկատեց նրա լեռնից ուսաց լեզվի

նիհար, ակնոցավոր վարժուհին, ռուսական ակցենտով։—Աչքիս մի տեսակ յերևաց. как будто...

—Այո, մի տեսակ եր,—հաստատեց նրա խոսքը յերաժշտության ուսուցիչը, վոր կուրծքը նեղս ընկած, թոքախտավորի դեմքով յերիտասարդ եր։

Դեռ միջանցքում Սարոյանը լսեց այդ խոսքերը և ուզեց յետ դառնալ, ուրախ ժպտալ նրանց, ցույց տալ, վոր իր տրամադրությունը այնքան էլ վատ չի, բայց, մտքում նրանց արհամարհելով, մտավ յերկրորդ բաժանմունքը։ Թեև բանավոր զրպմունքի որ եր, բայց տրամադրություն չուներ հարց ու փորձելու աշակերտներին, ուստի զրավոր տալով՝ սկսեց գնալ սենյակի լայնությամբ, ապա, մի քանի րոպե անց, նստեց, արժունկները դրեց սեղանի վրա և գլուխն առավ ափերի մեջ։ Նայում եր առջևը զրված տետրակներին այնպես, վոր կարելի յեր կարծել կարդում է։ Լռություն եր։ Լսվում եր գրչածայրերի ճռճռոցը, վոր թվում եր սուր յեղունգներով մաքրին են քորում, իսկ հարևան սենյակից գալիս եր գաստառուի բարակ, ճըղճըղան ձայնը։ Ռուսաց լեզվի վարժուհին եր, վոր դաս եր հարցնում և բարկանում մեկ-մեկ. «Ну, так нельзя!»... Իսկ յերբորդ բաժանմունքում աշակերտները շարունակում եկին աշխատել գրչածայրերով։ Բարձրացել եր ընդհանուր՝ անորոշ ու խուլ մի ալմուկ՝ նըման ճպուռների ձայնին, վոր ամառվա յերեկին լըսվում է դաշտում։

Սարոյանը լսում եր այդ բոլորը և կենտրոնացած՝ տետրակին նայում։ Փոքր անց՝ յելավ տեղից, հիշեց Բալյանին, հիշեց նրա հեղինակավոր ու իր համար ատելի շարժուձևերը և սկսեց հուզված անց ու դարձ անել։—Ախ այդ Բալյանը. իրեն շատ և յերեսակայում կարծում և իրենից խելոք մարդ չկա աշխարհում... Հենց գիտի մենակ ինքն և Ռուսսո ու Պետալոցցի կարդում... Կարդալը բավական չի. հարկավոր և ինքնուրույն ու բնական խելք։ Իսկ նրան—աստված տա... Նա սրա-նրա հասցեին խոսել ու բամբասել գիտի միայն... Հետաքրքրական և իմանալ՝ ինչ եր տալիս այդպես խորհրդավոր... Սարոյանը կարծում եր, վոր Բալյանն անպայման իր մասին եր պատմում ընկերներին—Են, թող ինչ ուզում և պատմի. ավ և նրան բանի տեղ դնում... Բայց աբի տես, վոր մեր ապուշները հավատում են նրան։ Իսկ ինձ համար նա մի հողմապաց և, ուրիշ վոչինչ...

Նա կանգնեց լուսամուտի առաջ և մտամփոփ հայացքը սևեռեց հեռուն։—Այո, շատ ուրիշ տեսակն և այդ Բալյանը. հիմա ավագ-ուսուցչի ականջին և հասցրել, յերևի, թե ինչ և պատահել ինձ... Ավագ ուսուցիչն էլ, յերևի, իր պալպական ձևերով, բարեկամական նկատողություն կանի... Վերջապես, նա ինչ իրավունք ունի. չեմ իմ փողն եմ տարվել, նրան ինչ... Կասի՝ ուսուցիչը և այլն... ու կսկսի ճառել բարոյականության, առաքինության մասին... Իսկ Դանիել Սանթուխյանը, Մովսիսյանը և մյուսները ուսուցիչ չեն, վոր ամեն յերեկո ակումբում են լինում և միշտ խաղում են... Հենց անցյալ շաբաթ Ցոլակ Պետրոսյանը չատվից հետուն ռուբլի. ինչու՞ նրան բան ասող չկա...

Այդ ժամանակ աշակերտներից մեկը հանկարծ բղդհատեց նրա մտածումները.

—Պարոն, Մելիքյանը հանգիստ չի կենում, բա

ղաքից նա,—ինձ ասում է՝ «քոսոտ մոզիկ», համ էլ թեվը ծակեց գրչով։

Սարոյանը մոտեցավ սեղանին։

—Ա՛յ տղա ես, ապուշ, չեն հայհոյի,—հանդիմանեց նա աշակերտ Մելիքյանին, վոր գլուխը ամոթից կախել ես կրծքին։—Գործիդ կաց...

Աշակերտները շարունակեցին առաջվա նման թղթերը փորել գրիչներով։ Սարոյանը նայեց նրանց և յերկյուղով մտածեց—չլինի՞ վորևե բան և ասել բարձրաձայն և աշակերտները լսել են։ Հապա ինչու՞ յեն աշակերտ Արբլյանն ու Վահունին այդպես նայում իրեն։ Կարծես զարմացած են։

—Արբլյան, բան ես ասում։

—Վոչ, պարոն։

Դասամիջոցին, յերբ Սարոյանը դուրս յեկավ դասարանից, միջանցքում դեմ առ դեմ հանդիպեց ուսուցչական վարժուհուն, և անրավականություն զգաց։ Վարժուհին պեպսենե քթին ուղղելով՝ դիմեց նրան.

—Պարոն Սարոյան, ձեր ձայնն ինչու՞ չեր լսվում։

—Գրավոր եյի տվել,—պատասխանեց Սարոյանը կարճ ու, աչքերը կկոցելով, նայեց հեռուն։

—Աա՜,—արտասանեց վարժուհին և ակնոցի ապակիների միջից ուշադիր նայեց Սարոյանի յերեսին, ապա շարունակեց իր բարակ, այս անգամ մի տեսակ ցավակից ձայնով։—Բայց դուք հո հիվանդ չե՞ք, պարոն Սարոյան։ Աա՜... Աչքիս մի տեսակ եք յերևում. как будто...

Նրա ցավակից, ավելի շուտ կաբեկից տոնը դուր չեկավ Սարոյանին։

—Վոչ, հիվանդ չեմ,—գարձյալ կարճ ու չոր պա-

տասխանեց նա, և ուզեց հեռանալ, բայց վարժուհին աչես հասկացավ նրա միտքը ու շարունակեց արագ.

—Ներեցեք, գուցե սխալվում եմ, բայց այդպես եք յերևում с виду. Մի տեսակ бледный յեք և, как сказать, կարծեք հիվանդ լինեք.. Չգիտեմ вправду!..

—Վոչ, տիկին, հիվանդ չեմ,—ընդհատեց Սարոյանը վարժուհուն։—Ընդհակառակը, գուցե ձեր աչքին եմ այդպես յերևում։

—Ցես էլ հենց այդ եմ ասում, վոր իմ աչքին մի տեսակ եք յերևում,—ավելացրեց վարժուհին ու յետ նայեց։

Ցեկողը յերաժշտության ուսուցիչն էր։ Մոտենալով՝ նա յել նույն հարցը տվեց Սարոյանին. ինչու՞ յես տխուր, հիվանդ հո չե՞ս. ինչ է պատահել արդյոք, վոր տրամադրությունը մի տեսակ է։

—Ցես էլ как раз այդ մասին եյի հարցնում,—ասաց վարժուհին, պենսնեն նոքից ուղղելով։

Սարոյանն, առանց պատասխանելու, փորձող հայացքով նայեց նրանց ու մտածեց, վոր Բալյանն անպատճառ պատմել է սրանց, թե ինչ է պատահել իրեն, և այժմ սրանք խորամանկություն են անում հետը, գուցե և ծաղրում են... Նա աշխատեց ժպտալ, ցույց տալու, վոր տրամադրությունն այնքան էլ վատ չէ, ինչպես կարծում են։ Թեթև մի ժպիտ, քմծիծաղի պես մի բան յերևաց նրա դեմքին ու չքացավ։ Իսկ յերաժշտության ուսուցիչը, պատասխան չստանալով, փլված-նեբս ընկած կոճղը ուղղելով, հարցրեց կրկին.

—Իսկապես հո հիվանդ չեք...

Սարոյանի հուզումն այս անգամ պապաթնակե-

ոին հասավ։ Նա արհամարհանքով նայեց ուսուցչին ու վարժուհուն, և նրան թվաց՝ դարձյալ, որ յերկուսի դեմքն էլ թագնված, գուսպ ծաղր ու հեգնանք և արտահայտում։ Ի՞նչ. դրանք ծաղրում են իրեն... Ուզում են ծաղրել որ ինքը, իբր թե, այնքան է ազդվել տարված գումարից, որ հիվանդացել և մինչև իսկ...

—Ինչու՞ եք այդպես հետաքրքրվում որ,—խոսեց նա, հուզումից կաթմրկով։—կարծում եք, յերևի... Վո՛չ, ներեցեք, այդ բալյանները կարող են միայն... Իսկ յես՝ մի չնչին գումարի համար՝ յերբեք չեմ հիվանդանա, յերբեք... Ցես հիմար չեմ, վոչ էլ ապուշ։ Շատ լավ եմ հասկանում ձեզ և գիտեմ ով է հանցրել ձեզ այդ բանը։ Թող Բալյանը միամիտ ցես։ յես հիվանդ չեմ և յերբեք չեմ հիվանդանա մի քառասուն ռուբլու համար...

Ցեվ վիրավորված ու հաղթական քայլերով, դռլոխը սովորականից ավելի բարձր բռնած, հեռացավ ընկերներից ու մտավ չորրորդ բաժանմունքը։

Ռուսաց լեզվի վարժուհին ու յերաժշտության ուսուցիչը զարմացած իրար նայեցին...

1913.

ԴԵՐ ՍՈՍԻՆ

Մանուկ որբերից յես մի առանձին սեր ունեմ դեպի ծեր, ալևոր մարդիկ։

Սիրում եմ նրանց պարզ, միամիտ խրատները, նրանց մեջ ու հանդարտ զրույցները անցած-գնացածի մասին, և նրանց նահապետական տեսքը՝ վառած հեղ մխրուքով, որ միշտ հարգանք և ներշնչում ինձ։

Այդպիսի ծերերից եր և մեր հարևան Սոսին, վորի ճերմակ մխրուքը ծածկում եր գրեթե ամբողջ կուրծքը, իսկ գլխի մազերն ողակ-ողակ իջնում եյին մինչև ուսերը։

Նա մի դժբախտ մարդ եր։

Այն որից, յերբ վորդիները մեռան, նա այլևս մազերը չեր կտրում։ Իսկ նրա վորդիները՝ յերեքը միասին մեռան մի տարվա մեջ (յերկուսը պատերազմի դաշտում, յերրորդը՝ փոքրը՝ տիֆից) և նա կնոջ հետ մնաց իր խրճիթում փակված։ Վշտից՝ յերկար ժամանակ նրանք վոչ մի բանի չեյին ձեռնարկում, նույնիսկ յեկեղեցի չեյին գնում, կամենալով ցույց տալ, վոր աստված անարդար վարվեց իրենց հետ։

Վոչ բարեկամների ցավակցությունը, վոչ հարևանների մխիթարանքը՝ չեր սփոփում ծերերի վիշտը, և նրանք նույն տրտմությամբ ամեն որ միևնույն գանգատն եյին անում, թե վոչ մի մեղք չեն գործել, չեն

խնայել խունկ ու մոմը և մատաղը սրբերին, այլ տերն ելի անխիղճ վարվեց։

— Ձերեքից գոնե մինը թողնեք, որ մեր ծուխը ծխացներ,— ասում էին նրանք ու լալիս։

Շուտով վշտից մեռավ և կինը, ու ծեր Սոսին մընաց բոլորովին մենակ։ Ճիշտ և, չկըրար վորդիները և հարսները նայում-խնամում էին նրան, չերբեմն զրուցում էին հետը, բայց գարձյալ որվա մեծ մասը և չերկար անքուն գիշերները նա մեն-մենակ եր։ Տան շեմքին միայնակ նստած՝ շարունակ մտածում եր մըտքերի մեջ խորասուզված։ Արդյոք ինչի՞ մասին և մըտածում, հարցնում էին չերբեմն հարևանները,— նրա՞ մասին արդյոք, թե ով պետք է պահի իրեն ծերության որերին, թե՞ ով պիտի հերկի արտերը... Վոչ, Սոսին այդ մասին չի մտածում. նա ունի չկրար վորդիներ, վոր միշտ կարող են պահել իրան, հերկել իր արտերը և նույնիսկ տեր գառնալ խլճտիքին իր մահից հետո։ Նա այդ մասին չի հոգում։ Նա մտածում եր այն մասին, թե ինչո՞ւ համար ինքը գատարկ աշխարհ չեկավ և գատարկ էլ գնում է աշխարհից։ Մի՞թե տերը շատ հարմարից մի հիշատակ, մի ժառանգ։

Նրա պատասխանը լսելով, հարևանները կամ մըխիթարանքի խոսք էին ասում կամ, ասելու վոչինչ չգտնելով, գլուխները որորելով, լուռ հեռանում էին, թողնելով նրան նորից միայնակ մտածելու։

Ծեր Սոսնի տունը գոնվում եր գյուղի ծայրին, վորտեղից անցնում եր գյուղի մեծ ճանապարհը, վոր չերբեմն ձգտողություն վոլորուններ գործելով, գնում եր դեպի դաշտը և հարևան գյուղերը։ Այս ճանապարհի վրա, ծեր Սոսնի տնից փոքր ինչ հեռու, կար մի մեծ,

վիթխարի կաղնի՝ հսկայական ճյուղերով և խըխըտուն բնով, վորի վրա անցորդները տարինների ընթացքում վորպգրել էին բազմատեսակ գծեր, խաչեր և զանազան տառեր։ Ամայի շրջապատի մեջ այդ ծառը՝ տերևազարդած ժամանակ, հեռվից նմանում եր մի հըսկայական հովանոցի։ Ձիվ իսկապես էլ, շոգ և անձրևոտ որերին նա կատարում եր հովանոցի դեր։ Թե տեղացի անցորդ, թե ուտարական և թե վոտաբորիկ ուխտավոր կանայք մինչև պատապարվում էին նրա հյուրընկալ հովանու տակ։

Ձերբ ծեր Սոսին միայնակ նստում եր իր տան շեմքին, նա հայացքը հառում եր միշտ այս ծառին և լուռ մտածում անվերջ։ Նրա մտածմունքները չերբեմն այնպիսի անշարժություն և ինքնամոռացություն էին հասցնում նրան, վոր հարևանները կասկածում էին, թե չլինի «խեղճ ծերունուն մի բան պատահի»։

Շուտով, սակայն, վերջ տվեց նա իր խորհրդավոր ու մոայլ մտածմունքներին։

* * *

Դա գարնան սկզբին եր։ Ոդի մեջ արդեն զգալի էր աբխնացող հողի հոտը, ուռիները նոր-նոր սկսել էին կարմրել, իսկ սարյակների առաջին խումբը չերկու որ եր ինչ չերևացել եր բարտիների կատարին։

Մի որ՝ վաղ առավոտյան ծերունի Սոսին՝ բահը ձեռին, ինչ-վոր փոսեր եր փորում գյուղի ճանապարհի կողքին— մեծ կաղնու ուղղությամբ։ Նա այդ բանն անում եր լուռ, խորհրդավոր փութկոտությամբ և առանց շուրջը նայելու։ Ճանապարհով անցնող գյուղացիները կանգ էին առնում և զարմանքով նրան

նայում, ինչ և անում այս ծերունին։ Ու բոլորին էլ միատեսակ տարօրինակ ու թվում նրա արածը։

«Խեղճ ալևոր, խելքը չիտ և տվել», ասում էին նրանք իրենց մտքում և կարեկցությամբ հարցնում.

— Եդ ինչ ես անում, Սոսի ապեր։

Սոսի ապերը պատասխանում էր առանց գլուխը բարձրացնելու։

— Փոս եմ փորում։

Պատասխանն ավելի տարօրինակ էր թվում, քան արած գործը։

«Խեղճ մարդ», մտածում էին զարմացած գյուղացիները։

— Իսկ ինչի՞ համար ես փորում, Սոսի ապեր։

— Ուզում եմ ծառեր տնկեմ, — պատասխանում էր ծերունին։

— Ծառ, — զարմանում էին գյուղացիք։ — «Խեղճ մարդ, խեղճ Սոսի ապեր», ասում էին նրանք գլուխներին որորելով։ «Հեշտ բան չի ծերության օրերին մինակ մնալը»...

Մինչ այդ, Սոսի ապերը, անուշադիր գյուղացիների զարմանքին ու տարակուսանքին, շարունակում էր իր գործը, այնպես վար մինչև իրիկուն, ճանապարհի կեսկարութեամբ, պատրաստ էր արդեն չորս փոս, վորոնց մոտ փայլում էր գարնան հյութալի սևահողը։ Իսկ հետևվյալ օրն արդեն ծերունին նրանց մեջ տեղավորեց մի-մի ծառ, վոր վաղ առավոտյան բերել էր մոտիկ անտառից։ Ծառերից կեսկուսը խեղճ էին, կեսկուսը լորի. բարակ, ջահել, մարդաթող ծառեր, վորոնց փայլին տվող մաշկը ցույց էր տալիս, վոր գարնան հյութերն արդեն շարժվել և նրանց մեջ, և շուտով պիտի կանաչեն։

Ծառերը տնկելուց հետո, ծերունին դարի ցանեց նրանց տակ, վոր արմատի հողն ամուր լինի, և ապա սկսեց դույլերով ջուր կրել մոտակա առվից ու ջրել։

Ցավ այնուհետև ամեն որ նրան կարելի էր տեսնել ծառերի մոտ՝ դույլը ձեռին ջրելիս կամ նրանց հսկելիս։ Թվում էր այլևս այն ծերունին չէր, վոր լուռ նստում էր չեմքին ու մխալար մտածում։ կարծես մի ինչ-վոր գվարթություն ու յեռանդ էր յեկել վրան. այժմ նա իր ամբողջ ժամանակը անց էր կացնում ծառերի մոտ և գուրգուրում նրանց մանուկների պես։ Ձեռները քսում էր նրանց բարակ բներին, ճյուղերին և յերբեմն խնդում ինքնագոհ ժպիտով։ Նրա աչքերում ավելացավ մանավանդ այն ժամանակ, յերբ ծառերի վրա յերեսացին առաջին բողբոջները։ Թեև ծառերից մեկը չոր ճյաց, բայց նա դրանից չվշտացավ, վորովհետև մյուս յերեքը գալար էին։ Ծառերի բողբոջները տեսնելով, խնդությունից մի քանի որ շարունակ ծերունու վոտը գետին չէր գալիս։

— Ծառերը կանաչում են...

Նա պատվում էր նրանց շուրջը, որը մի քանի անգամ ջրում, վոր շուտ կանաչեն ու աճեն։ Յերբեմն գառնում էր անցնող գյուղացիներին և ասում.

— Տես, արդեն կանաչում են... Յեկող տարի ամբողջ ծառեր կդառնան, չե՞...

— Իհարկե, ասում էին գյուղացիները, լավ չըհասկանալով նրա ուրախության պատճառը և գլխի յայտ կասկածելով նրա հոգեկան վիճակի մասին։— Միայն թե տավարը չվնասեն... ձամպու վրա յեն...

Իսկապես, նա այդ մասին չի մտածել. — յդ, վո՛չինչ, այնպես կանի, վոր վոչ մի անասուն չմոտենա։

Ու ամեն որ՝ կեռկո, առավոտ, յերբ նախիրը գնում եր հանդը և վերադառնում, նա կանգնում եր ծառերի մոտ, և նրանց կողքով անցնող կովերին ու յեզներին քշում հեռու։ Ցավ այդ բանը նա անում եր այնպիսի աչալրջությամբ ու խնամքով, վոր կարծես հոգում եր ամենաթանգագին բանը աշխարհում։ Յեթե մի կով, յերինջ կամ մոզի թևքվում եր դեպի ծառերը, նա ընդառաջ եր գնում նրան, ձեռները տարածելով և ասում մեղմ հանդիմանանքով.

— Ուր ես գնում, սարսող, ճամփեդ գնա։

Իսկ նախրապանին զգուշացնում եր հաճախ.

— Տես, վորդի, ինպես արա, վոր տավարդ ծառերին չվնասեն։

Նախրապանը խոստանում եր զգույշ լինել, և ծերունին, նախիրն անցնելուց հետո, տուն եր գառնում հանգիստ սրտով։

Յերկու-յերեք շաբաթվա մեջ ծառերը բոլորովին տերևակալեցին։ Ամենից առաջ լորինները ծածկվեցին կարմիր մածուցիկ տերևներով, և ապա մի շաբաթ հետո, թեղին արձակեց իր խալոտ տերևները։ Իսկ նրանց յերեքի տակ միաժամանակ բուսած զարին ցընծում եր արդեն հովերի առաջ։

Ծերունու ուրախությանը չափ չկար. աշխատանքն իզուր չանցավ — ծառերը կանաչեցին. շուտով էլ՝ մի քանի տարի անցնելուց հետո, կմեծանան, կբարձրանան և կսղնու պես շող արևին շվաք, իսկ անձրև որերին հովանի կլինեն անցորդ մարդկանց։ Նա

հրճվանքով շարունակ գյուղացիների ուշադրությունն եր հրավիրում ծառերի վրա, ցույց եր տալիս նրանց տերևները, արմատներին բուսած զարին ու տերևների արմատից յելնող ընձյուղները։ Ցույց եր տալիս և յերբեմն, զարմանում, վոր գյուղացիներն անտարբեր են, չեն ուրախանում այնպես, ինչպես ինքը. ուստի և շարունակ կրկնում եր.

— Մի տեսեք, տեսեք վոնց են կանաչել ե՜...

Փառք շատ, աստված... Շուտով կմեծանան...

***

Անցավ մի քանի շաբաթ։ Ծառերը քանի գնում տերևակալում եյին, զվարթանում և նոր հրճվանքով ու խանդավառանքով լցնում ծերունուս սիրտը։ Իսկ նրանց տակի գարին հետզհետե բարձրանում եր և նրանց տակի տավարի ախորժակը. սակայն, ծերունուս հսկող աչքը մոտ չեր թողնում վոչ մի անասուն։ Յերբեմն անից վախած հորթիկը՝ կարած կապը վզներին, պոչերը տնկած, այգի եյին գալիս ծերունու ծառերին, բայց Սոսի ապոր ձայնը և բարձր հառաչը միշտ խրտնեցնում եր նրանց, և նրանք նորից պոչերը տնկած, վերադառնում եյին յեկած ճանապարհով։ Առաջվա պես ծերունին ամեն որ յերում եր ծառերը և յեռկո-առավոտ միևնույն խոսքերով զգուշացնում նախրապանին.

— Տես, վորդի, ինպես արա, տավարդ ծառերին չվնասեն...

Մի առավոտ էլ նա, սովորականի պես, յերկյուղը ձեռին, դուրս յելավ ծառերը ջրելու և, պես կես ճանապարհին, միտց քարացած։

Այն, ինչ տեսավ, բոլորովին անհավատալի թվաց նրան։ կարծում եր յերազում է, և շուտով այդ յերազը կանցնի... Բայց վոչ, նա պարզ տեսնում է ահա, վոր ծառերի մեկը չկա, մյուս յերկուսը կանգնած են ճիպոտների պես մերկ... Նորից նրան թվաց, թե տեսողությունը խաբում է իրեն, ուստի աչքերը ճակելով՝ նայեց յերկրորդ, յերրորդ անգամ... Չե, աչքերը շատ լավ են տեսնում. ծառերից մեկը կոտրել են. իսկ յերկուսի տերևները կերել են ճղների հետ միասին, կերել են և նրանց տակի գարին։

Բայց այդ յերբ և ինչպես պատահեց. չե՞ վոր յերեկոյան, նախիրն անցնելուց հետո, ծառերն անվնաս եյին, իսկ հիմա նախիրը դեռ հանդ չի գնացել։

Նա ուժ հավաքեց և, վոտները ծանր շարժելով, մոտեցավ ծառերին ու հուսահատ նայեց ճանապարհի յեզերքին՝ աչքերը ծառերին հառած։ Այժմ միայն մոտիկից նկատեց, վոր արմատից կոտրած ծառը՝ դանակով եր կտրած. արմատի մոտ թափված եյին նրա ճյուղերը՝ դարձյալ դանակով կտրատած։ Յերևում եր, վոր մեկը ձեռնափայտ է շինել ալն։ Իսկ մյուս յերկուսը անասուն եր կուժել։ Կողքին յերևում եյին ձիու վոտնահետքեր։ Ուրեմն գիշերը ձիավոր մարդիկ են անցել ճանապարհով...

— Անխիղճ ձիավորներ...

Սոսի ապերը շարունակեց ճեպացած յերկու ծառը ջրել, բայց հույսը կտրել եր արդեն և չեր կարծում, թե առաջվա պես կանաչեն։

Ցավ, իսկապես, ծառերը չեյին կանաչում. նրանց բարակ բների ու կոճված ճյուղերի վրա յերբեմն յերբեմն եյին հատ ու կենտ բողբոջներ, տերևներ և շուտով դեղնում։

Ծառերը չորանում եյին...

Սոսի ապերը մի շաբաթ ևս ամենայն յեռանդով խնամեց նրանց, բայց համոզվելով, վոր չորանում են անհուսալի, նորից թողեց ամեն ինչ և կրկին մտածմունքների մեջ ընկավ։

Նորից նստում եր նա իր դատարկ տան շեմքին և յերկար-յերկար մտածում։

Մի որ ել անկողին մտավ և, մի շաբաթ պառկելուց հետո, մեռավ։

Մահից առաջ մի քանի խոսք ասավ մեկին.

— Ինչպես յերևում է, տերը բարկացել և վրաս... Չի ուզում, վոր մի ժառանգ, մի հիշատակ թողնեմ աշխարհում... Վորդիներս խլեց... ծառերն ել շատ նմարեց։

Այս խոսքերով ել ավանդեց հոգին։

1916.

ՉՄՌԱՆ ԳԻՉԵՐ

Լուռ, արծաթաշող գիշեր է. ձյուն է ու լուսին։ Փայլում է ձյունը տանիքների վրա, փայլում է ցանկապատերին և շողշողում ծառերի ճյուղերին։ Ամեն ինչ վողողված է լուսնի առատ լուսով։

Փոքրիկ քաղաքը քնած է խաղաղ։ Փողոցները դատարկ են. պահակներ անգամ չեն յերևում։ Շները յերբեմն հատ-ընդհատ հաչում են լուսնի վրա և, ուշադրություն չարժանանալով, լռում զայրացած մռռոցով։ Կես գիշերից անց է, բայց քաղաքացի Հակոբի քունը չի տանում։ Թեև անեյակը տաք է, անկողինը փափուկ, բայց և այնպես քնել չի կարողանում։ Այս բանը պատահում է գրեթե ամեն գիշեր։ Ո՛ր յերկար են ձմռան գիշերները. մարդ հոգնում է քնելուց։ Յեվ Հակոբը լուսամուտից նայելով լուսնի առատ լուսին, շողշողուն ձյուներին, մտածում է.—Ինչ լավ կլինի ձմռան գիշերն էլ ամառվա պես կարճ լինի. մարդիկ իզուր ժամանակ չեն կորցնի և կաշխատեն մի բան գլուխ բերել. թե չե անխոս պառկելուց ինչ ոգուտ։ Մտածում է Հակոբը, տնքում է հոգացավ ունեցողի նման և հազում այնպիսի մի հազով, վորով ուշադրություն են հրավիրում կամ ուզում են իմանալ՝ հարևանը քնած է թե վոչ։ Սենյակում նրա հարևանը կինն է, և վորքան էլ Հակոբը հազում է, շարժվում, կինը կարծես չի լսում. քնած է, թե՞ քնած է ձևանում—դժվար է իմանալ։ Սպասում է Հակոբը մի վոքր և էլի հազում։ Նույնը։ Բայց դա խոսելու անդիմադրելի ցանկություն է զգում. նրա գլխում խռնվում են բազմաթիվ մտքեր, կասկածներ, յենթադրություններ. ուզում է հայտնել, ստուգել։ Ու կամաց, քնքշանքով հրում է կնոջը։

— Արուս, այ Արուս։

Կինն անմիջապես չի պատասխանում ճրթում է, ասես յերազի մեջ, գլուխը թիկքում է բարձի վրա և տնքում քնից զարթնողի տնքոցով։

— Ի՞նչ է։

— Քնած ես,—հարցնում է մարդը։

— Ի՞նչ կա վոր...

Ու կնոջ ձայնի մեջ լսվում են դժգոհության շեշտեր։

— Վոչինչ,—ասում է մարդը յերեսը կնոջ դարձնելով.— Ասում եմ՝ տեսնես ես ցրտով գինվորներն ինչպես են սիրում պիրքերում՝ լեռների մեջ, ամայի դաշտում։ Մինչև անգամ գայլեր կարող են յերևալ։

— Հա. չե՞մ իմ, պոզեր,— խոսում է կինն անտարբեր։

— Այո՛այո, քեզ բան եմ ասում, առարկում է Հակոբը.— Մեթե չգիտես, վոր առյուծներն ու ընձառյուծները ձյան գայլեր են յերևում։ Հիմի կկարցնես՝ ինչպես։ Այ այսեմ։ Հեռվից զգում են մարդկային դեակի հոտ և իջնում սարերից, անտառներից...

Մի բոպե լռում է մտախոհ և ապա շարունակում.

— Եհ, պատերազմը շատ վատ բան է, չէ՞ս... Մեկ-մեկ մտածում եմ—լեթե մի որ հանկարծ թշնա-

մին մտածեմ բաղաքին, ինչ ես կարծում, դերձակ Մինասը վճռեց պիտի փախչի. ինքը կաղ, կինը պատճառավոր, հինդ էլ չերեխա. վնչ կառք կարող են վարձել, վնչ սայլ։

— Ջիով կերթան, ասում է կինը. մի բան որ տան մեջ չունեն։

— Ջի՜։ Ո, սիրելիս, ձին ավելի թանգ է... Մեկ էլ փախչելու ժամանակ ով իր ձին ուրիշի կաս վոչ-վոր։ Չէ, նրանց համար շատ, շատ դժվար կլինի։ Մանավանդ վոր կինը պատճառավոր է, չի կարող ձի նստել։

— Թանգ է, չէ լինի, վոտով կերթան, — ասում է կինն ելի անտարբեր։

— Հեշտ է ասել՝ վոտով։ Ապա մի փորձիր ես ձյունին ու ցրտին։ Կարծր ես սկի։

Կինը բարկանում է թեթև ու ձեռը հանում վերմակի տակից։

— Ելի... Ինչո՞ւ մեզ թողած, ուրիշների մասին ես մտածում։

— Դե, մեզ լինչ կա, — ասում է մարդը. — մենք վոտով էլ կերթանք։ Իսկ թե դերձակն ինչպես կանի — չգիտեմ։

— Դե լավ, — չերեսը շուռ է տալիս կինը, — քըշ-նամին չեկավ՝ փախչելը մնաց։

— Ասում եմ՝ չեթե մի որ գա, — պատասխանում է Հակոբն արդարանալու պես։ — Չե վոր մարդ պիտք է մի քիչ հեռուն մտածի։

Կինը նորից թեթև նեղանում է։

— Լավ. թող քնենք, — ասում է չերեսն ավելի շրջելով։

Հակոբը լռում է։ Նայում է լուսնի շողերին, վոր ընկել են հատակին, պատին և շողշողեցնում են պահարանի ապակիները։ Դուրսը քամի չկա։ Լուսամուտի առջևի ձյունածածկ ծառը թեթև չերերվում է և խաղացկուն լույսեր ու սավերներ փռում հատակին։ Լռությունն է. քնած է տունը, քնած են հարևանները, քնած է ամբողջ քաղաքը։ Բայց Հակոբի քունը ղարձյալ չի տանում։ Լռության մեջ անցնում է բավական ժամանակ. նա մեջքի վրա պառկած՝ մտածում է ու կենտանաղ տալիս։ Ապա չերկար նայում է ծառի չերերվող սավերներին ու նորից կամաց հրում կնոջը։

— Արթնա՛։

Կինը տնքում է հառաչանքով։

— Զարթնի՛ն ես։

Կինը զարթնում է ղժվամ. — Ի՞նչ է է...

— Վոչինչ. մի բան եմ ուզում ասել։ Տեսե՞լ ես տերտերանց բակում ինչքան սառույց կա։ Զարմանալի չի, թե ինչո՞ւ չեն մաքրում։ Ենքան չերեխա ունեն, պառավ մայրը, կինը — միշտ մեն են գալիս բակում, և մեկը չի մտածում, վոր կարող են ընկնել, ջնասվել։ Դե ասի ու ես թանգ ժամանակ ըժշկիը ղրանց։ Անմիտներ։ Ցես կաբծում եմ՝ պետք է հասկացնել վոր մաքրեն։ Համ էլ, գիտե՞ս ինչ սառույցը ծառերին կարող է ջնասել։ Ափսոս են։ Իսկ նրանց բակում ծիրանի լավ ծառեր կան...

— Ե՜հ, — ընդհատում է կինը, — ինչ կուզե ըլեն. մեր բակում քիչ սառույց չկա։ Մաքրող ես, մեր սառույցը մաքրի։ Թարը տերտերանց գլխին էլ, նրանց ծառերի լեր։

— Ախր չե՛ք. լավ ծառեր են, ղրա համար եմ

ասում՝ Միթե՞ կ՝ հերու ինչքան հյին բռնել. քիչ եր մնում ճղակոտոր ըլեյին։ Ցեթե ես տաբի չել եղքան բռնեն, հասկացնում պիտի, վոր ճղների տակը տայող տանն։

— Ե՛, քնիր,—ասում ե կինը տրտնջոտ,— եղքան ծառ սիրող ես՝ ինչու՞ մեր բակում մի ծառ չես տնկում...

Հակոբը լռում ե. ուզում ե առարկել կնոջը, վոր իրենց բակում ծառ չի կարող աճել, քանի վոր ջրի արթ չունեն, բայց մի րոպե նոր բան ե ընկնում հանկարծ։

— Բա իմացել ես,—ասում ե աչխուժով.—Տոնոյի կովը ծնել ե, ոբապակաս հորթ ե բերել։ Ինչպես պիտի պահեն — չգիտեմ։ Զարմանալի չե՝ պոչն ել կարճ ե, ասում են։ Մի թիզ։ Ցեթե ամառը ճանճերը վրա տան՝ վռնդ պիտի անի։ Չը՞։ Բոռերը կխեղդեն անպատճառ...

Կինը չի լսում այլևս. նա քնած անքուն ե, ասես ծանր բեռի տակ։ Լռում ե Հակոբը կնոջ քնաձայնը և նայում նորից լուսնի շողերին։ «Այո, բոռերն անպատճառ կխեղդեն, ցեթե պոչը չերկարի», մտածում ե նա։

Ժամանակն անցնում ե լռության մեջ և լռությունը, թվում ե, հոսում ե։ Հակոբն իր ականջներում խուլ, շատ խուլ խշշոց ե լսում։ Ծառի շվաքն այժմ ընկել ե պիտացի պատին, ուր լուսյաներ ու սավերներ են խաղում նորից։ Ցերեկի դուրսը դարձյալ քամի կա։ «Այո, անշուշտ, քամի կա, մտածում ե Հակոբը.— իսկ քամին հիմա ծառերին ջնաս ե։ Տերտերանց ծառերն ել հենց քամու առաջն են»...

Քամին, ինչ ջնասները ասեք վոր չի պատճառ. քամին, մտածում, ե Հակոբը։ Ո, ցեթե այդ քամին հանկարծ հոգի դառնա՝ ինչեր ասես չի անի։ Մանավանդ ցեթե հրդեհ լինի քաղաքի վրևից թռչում։ Ինչ հրդեհ։ Լուցկու կայծը մենակ բավական ե, վոր քաղաքը կրակի ծով դառնա։ Դա կարող ե պատահել հենց մի վորևե ծխնելուլզից։ Քամին ել հո միշտ հակառակ ե ծխնելուլզներին։

— Աստված վոչ անի, ցեթե ես քամու ժամանակ վառվող բուխարիկ լինի, ասում ե Հակոբն ինքնիրեն և մտածում այն անփույթ տանտերերի վրա, վոր ծխնելուլզները չեն մաքրում ձմեռնամուտին... Չեն մաքրում և ստանում են պատիժը։ Բայց ցավն այն ե, վոր նրանց հետ տուժում են ուրիշներն ել։ Ու Հակոբը մտախոհ շարժում ե գլուխը բարձի վրա, ապա զգուշությամբ ձեռը դիպցնում կնոջ կողին։

— Աթուս...

Կինը չի լսում։

— Արուս,—կանչում ե Հակոբն ավելի բարձր։

Արուսն այս անգամ զարթնում ե մեծ դժկամությամբ և թոնթորում ե ինչ-վոր։

— Արուս,—սկսում ե Հակոբը հոգատար ձայնով, ուշադրություն չդարձնելով կնոջ քրթմնջոցին.— Մի բան եմ հարցնելու. դու կխմանաս, վորովհետև բալկոնում շատ ես լինում...

— Կարճ կարի,—ասում ե կինը։

— Ասում եմ՝ գուցե տեսած լինես,— շարունակում ե մարդը,—չես կարծում եմ տեսած կլինես, վորովհետև բալկոնից կերևում ե։ Կարապետ ագեն ես տարի իր բուխարիկները մաքրել ե ավելի քեռ չի։

Կինը դժգոհ շարժուձեւեր է անում.

— Ի՛, Արուսն ուրիշ բան չունի, աչքը կարապետ աղի բուխարիկների վրա պիտի պահի։ Գլուխը քարը կարապետ աղի չէ, նրա բուխարիկների չէ։

— Չե՛, ախը մի լսիր. գիտես ինչ կա,—հասկացնում է Հակոբը կնոջը,—լեթե չի մաքրել, խայտառակ բան է կլինի։

— Ի՞նչ,—հարցնում է կինը բարկացած։

— Ի՞նչ, մի՞թե չես հասկանում ինչ կպատահի, լեթե մաքրած չլինեն։ Են էլ քամու ժամանակ։ Բավական է բուխարիկներից մեկը վառվի, էլ հնարավոր է հանգցնել։ Ու հետո, գիտե՞ս, ինչ կլինի։ Կվառվի վրէ միայն նրա լերկու հարևանի տունը. կվառվի ամբողջ կահկարասին, կվառվի աղջկա բաժինքը, ու միանգամից կքանդվի լերկու տուն։ Ասում են՝ աղջիկը մի տան բաժինք ունի։ Հետո, ներքև կվառվի գինին, կոնյակը... Ու ամբողջ վերի թաղը։ Հասկանում ես...

— Եհ, հերիք է,— բարկանում է կինը, այլևս չկարողանալով իրեն պահել,—խելքի դարդարաբը չես։

— Ասում ես էլի,—վշտանում է Հակոբը քիչ լռելուց հետո,— ինչպես դարդ չանես, լերբ մի անփութութեան պատճառով՝ քաղաքի ամենալավ տունը և մի ամբողջ թաղ կարող է վոչնչանալ։ Ինչպես դարդ չանես, լերբ քավոր Բարսեղը հրեն գետնախնձոր և առել, կեսը ցրտաշաբ և դուրս յեկել։ Կամ...

Կինն այլևս չի լսում։ Ճրթալով թեքվում է մյուս կողքի վրա ու քնում։ Իսկ Հակոբը կնոջ այդ վարմունքից դժգոհ՝ շարունակում է մտածել, թե վորպիսի հրեղեն կատաղանա քաղաքում, լեթե կարապետ

աղի ծխնելույզն իսկապես մաքրված չլինի։ Փոքր ինչ սակայն, նրա մտածումները խանգարում են մկները, վոր վազվզում են առաստաղում ու տախտակների աղմկում այնպես, վոր թվում է քարեր են գլորում վերև։

Լսելով մկների աղմուկը, Հակոբը հառաչում է և մտածում, թե արդյոք ինչպես են ապրում մկներն առաստաղում։

— Տեսնես ինչով են կերակրվում պրանք այդ չոր տախտակների մեջ,— ասում է նա մտքում ու շարունակում մտածել։

1919.

Ճ Ա Շ

Ժամը չորսն է։

Սոլոլակ թաղը ճաշում է։

Որվա այս պահին Թիֆլիսի այդ հարուստ թաղի արտաքին տեսքը խաղաղ է, ինչպես գյուղը հնձի ժամանակ։ Փողոցների և զբաոեղյակների ծանրախոհ կյանքըն ու շարժումն անցել և սեղանատները, ուր, մարդկանց ձայներից բարձր՝ հնչում է ափսեների, պատառաքաղի և դանակների զնգոց։ Սպասավորները մեկը մյուսի յետևից չել ու մուտ են անում խոհանոցից սեղանատուն, սեղանատնից խոհանոց։ Տիրում է մաքրութիւնն, լիութիւնն ու ձևականութիւնն։ Մարդիկ ուտում են ծանր և խոսում անվրդով։

Տոհմական քաղաքացի այրիացած Լևոն Ազիզյանը նույնպես ճաշում է իր սեփական տան յերկրորդ հարկում։ Ընդարձակ ճաշասենյակի յերկար սեղանի մոտ, վորի վրա կարող է ճաշել քսանից ավելի մարդ, նա նստած է մենակ՝ կուրծքը ծածկած սպիտակ անձեռոցիկով, վորի մի ուսերը խրել է ոձիքի մեջ։ Նրա յետևում, աջ վոտի վրա հենված, կանգնած է նրա սպասավորը, մոտ քառասուն տարեկան, ճերմակ գոգնոցով մի մարդ, վոր միաժամանակ կատարում է և՛ խոհարարի պաշտոն և՛ դռնապանի գործ։

Պարոն Լևոնը, դանակն ու պատառաքաղը ձեռքին,

դանդաղ ճաշում է և միևնույն ժամանակ խոսում սպասավորի հետ։ Ջավակները չընկնելով և ծերութեան մոտեցող հասակում կնոջից զրկվելով, յերկու տարի յե ահա միշտ մենակ է ճաշում։ Բամբասանքից ու կողոպուտից ազատ ինալու համար, նա յերբեք ճաշի չի հրավիրում ազգականների ու ծանոթների, և ամեն որ ճաշը սկսում ու վերջացնում է սպասավորի հետ խոսելով։

— Գրիգոր, վո՞րտեղից ես առնում այս միսը,—գոռնում է հանկարծ սպասավորին։

—Սալդաթսկի բազարից,—պատասխանում է սպասավորը թեքվելով և այնպիսի ձևով, կարծես տերը ծանրը է լսում։

— Ո՞ւմից։

— Դարչոյից։

— Ո՞վ է այդ Դարչոն։

— Միս ծախող։

— Հը՛մ,—գլուխը կախելով շարունակում է ուտել պ. Լևոնը.—Վոչինչ միսը լավ միս է, բայց մի քիչ յուղոտ է։

Սպասավորը զարմացած ուղղվում և կանգնած տեղը և նորից թեքվում դեպի տերը։

— Ցերեկ դուք ասիք, վոր ժարկոյի համար յուղոտ միս առնեմ,—հիշեցնում է նա։

— Այո, ասացի, բայց վոչ այսքան յուղոտ։ Ցուղոտ միսն այնքան էլ լավ չէ ժարկոյի համար։ Այս տեսակ միսը կարելի յե գործածել չխլթմայի կամ սոուսի մեջ, բայց վոչ ժարկոյի, հասկանո՞ւմ ես, վոչ ժարկոյի...

Նա նորից շարունակում է ուտել։

— Մյուս անգամ էլ այսպիսի միս չառնես,—ասում է նա քիչ հետո.—Հանգուցյալն ամենևին չէր սիրում

այսպիսի մին... Չե՞ս հիշում։ Ասում եր, վոր այս տեսակ մինը վնաս է։ Յեվ շատ ճիշտ եր ասում հանգուցյալը. յերբ ժարկոյի մինը յուղոտ և լինում, մի տեսակ ծանր և մարսվում... Հասկանում ես...

Սպասավորն անշարժ կանգնած նայում է տիրոջ ալեխառն մազերով գլխին, շարժվող ծնոտաներին և մտածում, վոր հանգուցյալ տիրուհին, իրոք, մի քիչ հի սիրուն։

— Հետո, Գրիգոր, գիտես ի՞նչ,—ձեռքը բարձրացնում է պարոն Լևոնը.—դու մինը շատ ես չափում, այնպես վոր՝ գեներալների պես ի՛ րվում և... այն ի՞նչ, ասպես չպետք է անել. պետք է չափել այնպես, վոր մի համը վրեն ինա... Մի անգամ կլուբում ժարկոյ եմ կերել՝ շատ լավն եր. թեյը, բանն այնպես տեղը, համով... հետո ել մի յերկու կտոր սերկևիլ...

Պարոն Լևոնը մի պատառ մինս կտրելով սկսում է հանդարտ ծամել։

— Մեր կլուբի խոհարարն առհասարակ շատ ընտիր կերակուր է յեփում,—շարունակում է նա.—և դա հասկանալի յե. մարդը ուսս է, աշխարհ տեսած, հո մեր հայերի պես չի, վոր դամից դուրս են գալիս՝ խոհարարուհյուն անում... Դու չնեղանաս, Գրիգոր, յես քեզ չեմ ասում... Յեթե ուզում ես, յես նրան կասեմ, վոր մի քանի բան սովորեցնի քեզ։

Գրիգորը մի վոտից հենվում է մյուսին և կոկորդը մաքրում։

— Դուք են որն ել խոստացաք, վոր կասեք, բայց մոռանում եք,— նկատում է նա ժպտալով։

— կասեմ, Գրիգոր, կասեմ,—հանգստացնում է պարոն Լևոնը սպասավորին,—կասեմ, հենց վաղը կասեմ բայց դու յել յուղոտ մինս չառնես...

Գրիգորը նորից նայում է տիրոջ գլխին, շարժվող ծնոտաներին ու մտածում, վոր տերը միշտ խոստանում է «վաղը», բայց միշտ ել մոռանում է։ Նա նորից կոկորդը մաքրելով ուզում է մի բան ասել, բայց լռում է՝ տիրոջ ձեռքի շարժումը տեսնելով։

— Գրիգոր, մյուս անգամ այդ Գարչոլին տար, վոր ժարկոյին համար լավ մինս տա, առանց վոսկորի... Իմ կողմից խնդրի, թող սուկի տա...

— Սուկին ժարկո չի ըլի, պարոն,—ասում է Գրիգորն ամաչելով, վոր նկատողություն է անում տիրոջը։

— Ինչո՞ւ չի լինի,—զարմանում է պարոնը սպասավոր ի խոսքի վրա,—ընդհակառակը... կլուբում միշտ յեփում են, շատ լավն է լինում...

Այս ասելով, նա ձեռքով նշան է անում, վոր սպասավորը վերցնի ամանը։

— Սա վերցրու, կատլետը բեր տեսնենք,—ասում է նա, մեջքը աթոռի թիկունքին հենելով ու հառաչելով։—Յեթե կատլետն ել սրա պես լինի, Գրիգոր, նշանակում է՝ այսօրվա ճաշդ լավ չի...

Գրիգորը վերցնում է տիրոջ թիրմացքը և գնում խոհանոց։ Մի քանի րոպեից նա վերադառնում է և կատլետը դնում տիրոջ առաջ ու յերկյուղով մտածում, թե այս նոր բաժինը ինչպես դուր կգա։

Պարոն Լևոնը մի քանի րոպե լուռ ճաշում է։ Սպասավորը, նրա յետևը կանգնած, զարձյալ նայում է նրա թիկունքին, գլխին ու ծնոտաներին, վորոնց շարժումից շարժվում են և նրա ականջները։

— Գրիգոր։

— Հրամմե՛ն։

— Կաթլեան այս ինչ յուզով ես պատրաստում,— հարցնում է պարոն Լևոնը վշտալի դեմքով։

— Կովի յուզով...

— Կովի՞... բայց ինչու՞ այսպիսի համ է գալիս։ Կարծես յերեք որվա կերակուր լինեն, այնպես ծանր է...

Սպասավորը դուհատված նայում է տիրոջը և լռում։ Նա չի ուզում պատասխանել վորովհետև նրան թվում է, վոր յեթե պատասխանի, պարոնը նոր հարցեր է տալու, ուստի և լռում է։ Իսկ պարոն Լևոնը շարունակում է մի առ ժամանակ հանդարտ ուտել։

— Գիտես ինչ, Գրիգոր,—ասում է նա քիչ հետո, գլուխը պնակից բարձրացնելով,—այսորվա կաթլեսը այնքան էլ լավ չի, համ յուղն է կծված, համ էլ աղը շատ ես արել...

Գրիգորն զգուշությամբ հազում է։

— Ներո՛ր յերեկվանից քիչ եմ աղ գցել,—ասում է նա ամբողջ իրանով առաջ թեքվելով.—յերեկ վոր ասիք՝ աղի յե, դրա համար ես աղը շատ քիչ եմ գցել։

— Ընդհակառակը,— ասում է պարոն Լևոնը,— քեզ միայն թվացել է, թե քիչ ես գցել։ Յեթե քիչ գցած լինելիր, այսպես չեր լինի։—Նա սրտի խորքից հառաչում է։—Ե՛, հանգուցյալի մահից հետո, դու կերակուրներն այնքան էլ լավ չես պատրաստում, Գրիգոր։ Յեղբ հանգուցյալը կենդանի յեր, հսկում եր, խորհուրդներ եր տալիս, և դրա համար կերակուրներն այնպես լավ ելին դուրս գալիս։ Իսկ հիմա... (Նա նորից հառաչում է)։ Յես ասել եմ, ելի կասեմ, Գրիգոր, վոր հայ խոհարարը կարգին կերակուր յեփել չգիտի... Հալը, խկապաս, պետք է ճնա ռանչպար, և վոչ թե խոհարար

դառնա... Հայը կարող է, ճիշտ է, առևտուր անել, մերգ ծախել, բայց խոհարարությունը նրա բանը չի. հայը քուֆթից բացի ուրիշ բան չի կարողանում յեփել։ Իսկ խոհարարը, Գրիգոր, ամեն բան պետք է իմանա, ամեն բան... Հասկանո՞ւմ ես... Խոհարարությունն էլ արհեստ է, ինչպես դերձակությունը, ինչպես վոսկերչությունը... Խոհարարը պետք է հասկացող լինի... Հասկանո՞ւմ ես...

Գրիգորի շրթունքները դողում են, հայտնի չե՝ յերկյուղից թե հուզմունքից։

— Յեթե չեք հավանում, պարոն,—ասում է նա կերկերուն ձայնով,—յես կերթամ, ուրիշին բռնեցեք... Հինգ տարի Մերզոյևի տանն եմ յեղել, միշտ գոհ են մնացել, հիմի...

— Յես ոո քեզ չեմ ասում, հիմար,—խնդում է պարոն Լևոնը։—Յես ընդհանրապես եմ ասում, վոր հալը խոհարարություն չգիտի. նա կարող է միայն լավ բանվոր լինել յերկաթուղու վրա կամ վոտնաման սրբող փողոցներում, իսկ խոհարար կամ սպասավոր՝ յերբեք... (Նա մի փոքր լռում է)։ Ա՛յ, դու յեղ, ճիշտ է, խոհարարություն և սպասավորություն ես անում, բայց ձեվը չգիտես, Գրիգոր... Գիտես, որինակ, թե վորքան պետք դցել մի ֆունտ մսին, գիտես, թե ինչ տեսակ յուղն է լավը. իսկ դա հասարակ բան չի... Յեթե մի խորհուրդ տվող չլինի քեզ, դու միշտ կսխալվես, Գրիգոր... Ա՛յ, ինչ եմ ասել, ուրիշ բան են ռուսն ու վրացին։ Նրանք ստեղծված են հենց խոհարարության համար. մաքուր, ժիր, հասկացող...

Գրիգորի շրթունքները նորից դողում են։

— Յեթե չեք հավանում, վրացի բռնեցեք,—ասում

և նա այս անգամ հուզված, դողացող ձայնով,—կերթամ։

Ու, խոսքի կեսը բերանում, ուղղվում է դեպի դուռը։

— Սպասիր, Գրիգոր, սպասիր.—կանչում է պարոն Լևոնը։

Բայց Գրիգորը չի կանգնում։

— Դուք ամեն որ ինձ չեք հավանում,—շարունակում և նա նեղացած դեպի դուռը գնալով,—ես կարող եմ գնալ. ուզում եք որս բռնեցեք, ուզում եք վրացի. միևնույն է... Ցես կերթամ ..

Սակայն չի գնում։ Վերջին խոսքերն արտասանելով՝ կանգնում է դռան մոտ՝ անբավական ու դժգոհ դիրքով։

— Ի՞նչ հիմարություն,—լեռ և դառնում պարոն Լևոնը.—ձեր ես ուզում գնալ։

— Կերթամ ուրիշ տեղ։

— Ի՞նչ հիմարություն ..Բեզ ինչ են անում, այ աղա, որ այդպես նեղանում ես։

Գրիգորը հուզմունքից չի խոսում։

Պարոն Լևոնը շարունակում է.

— Որ ուզում ես գնալ, բա այս բաներն ով պիտի հավաքի,—ցույց և տալիս սեղանի չորսկի ամանները,—ես հո չեմ կարող... Լավ, ասենք, գնացիր, բա փողդ ինչ ես անելու. ես հո քո փողապահը չեմ...

Այս խոսքերի վրա Գրիգորն առաջ է գալիս։ Նրա դեմքն արտահայտում է վախ ու անհանգստություն։ Նա մտածում է, որ տաբիներով հավաքած գումարը՝ հարյուր հնսուն մանեթ, որ պետք է կնոջն ուղարկի՝ պարտքը տալու և մի կով առնելու համար, տիրոջ մոտ է. առանց այդ գումարը ստանալու ինչպես կարող է գնալ։ Առաջ գալով՝ կանգնում է սեղանի քով։

— Փողը տվեք, պարոն,—խնդրում է նա,—տվեք, ավելի լավ է գնամ...

— Դե լավ, լավ,—ասում է պարոն Լևոնը,—հիմարություններ մի անի։ Արի սեղանը հավաքիր, հետո...

Գրիգորն անխոս հավաքում է սեղանի չորեսը. ամանները տանում է խոհանոց, մրգերը դնում է պահարանը, սփռոցը թափ է տալիս պատշգամում, հետո գալիս կանգնում է տիրոջ առաջ, վոր դրամն ստանա։

— Ի՞նչ ես ուզում, Գրիգոր,—հարցնում է պարոն Լևոնը, ընդհատելով մտածմունքները հանգուցյալ կնոջ մասին։

— Փողը...

— Փողը՛...Փող հիմի վորտեղից... Սպասիր, չորը կլինի, են ժամանակ կտամ... Ի՞նչ, չլինի—ուզում ես գնալ... հիմար մի լինի,—խնդրում է պարոն Լևոնը,—ձեր ես գնում. քո տեղը մարդ կա, վոր դու գնում ես... Հիմար մի լինի։ Մի թեթև խոսքից ինչու՞ ես նեղանում... Արի այստեղ։ արի ավելի լավ է քեզ ասեմ, թե ինչ պետք է առնես եգուցվա ճաշի համար, արի։

Ցեվ պարոն Լևոնը բազմոցի վրա պառկելով՝ թելադրում է Գրիգորին, թե ինչ պետք է գնել վաղվա ճաշի համար։

— Կառնես իշխան,—ասում է նա ցուցամատը շարժելով.—յոթելու ժամանակ վրան մի քանի ճու կկոտրես. բայց ճուն շատ չեփես։ Շատ չեփելուց համը կկորչի... Իշխանից հետո կառնես գառան միս՝ ոմլետի համար, և տոլմացու։ Տոլմեն կեփես տերևով, բայց բրինձ քիչ կգցես... Հետո կառնես մի լերկու ճուտ՝ իրիկվա

համար։ Կառնես կանաչի՝ թարխուն, բողկը... Ցեթե հնդկահավ պատահի—ա՛ռ. մյուս որ պետք կգա. կարելի չե տապակել...

Մի քանի րոպե անց՝ պարոն Լևոնը սկսում է ննջել, իսկ Գրիգորը գնում-է խոհանոց և մտածում տիրոջ մոտ ճաշած հարյուր հիսուն մանեթի մասին և այն մասին, թե ինչպես անի, որ վաղվա ճաշը դուր դա տիրոջ։

Ցև այսպես ամեն որ...

1916։

Վ. ՃՈՒԱԿԱՆ ՄԱՐԴԸ

— Բավական է այլևս։ Գնամ պիտի և ասեմ.— «Պարո՛ն, տվեք իմ հասանելիքը»... Այո, այդպես էլ կանեմ։ Թող նեղանա՝ Սառը ջուր շատ կա... Անհամթ. ամեն որ «հսոր-եգուց, հսոր-եգուց», և վերջը չկա «հսոր-եգուցին»... Աբիբա՛։ Փող ես պարտ՝ տո՛ւր, չես տալու—առա—չեմ տալիս... Այն ժամանակ անելք կիմանամ, թե չե՝ տանել-բերել ու խարշլ... Ինչդ լավ գիտես, միջոցներից զուրկ ուսանող եմ և միակ յեկամուտս պատագինն է... Պարարտ խոզ է ինքը, կարծում է՝ յես էլ նրան պես ապահով եմ և ամեն որ կ ա կ ա ո յեմ խոմում։ Վախց չե, բուռթ արարած... Հետո յել վիճում է, թե ինչո՞ւ յեն հեղափոխություն անում։ Հեղափոխությունն... Գեղեցիկ ախմարին հեղափոխությունը քիչ է...

Խոսում եր ուսանող Արշամը իր փոքրիկ, մի լուսամուտով սենյակի յերկայնքը չափելով և, ինչպես դերը սերտող դերասան, անդադար կրկնում միևնույն խոսքերը։ Զայրույթից նրա դեմքը ծամածռվում եր շուտ-շուտ, իսկ ձեռները ծալվում եին բռունցքի։ Նա վրդովված, զայրացած եր վաճառական Թևոսի դեմ, վոր ամսից ավելի ձգձգում եր նրան հասանելիք գումարը։ Ցերեք ամիս անընդհատ նա պարբասել եր վաճառականի վորդուն և ամսից ավելի յեր անա տղան

քննութիւն տալով՝ ընդունվել եր չորրորդ դասարանը. բայց հայրը, հայտնի չե ինչու, ձգձգում եր դասավարձը։ Այնինչ Աբշամի հույսը այդ ստանալիքն եր։ պիտի դներ մի շարք բաներ՝ սպիտակեղեն, գլխարկ, կոշիկ, մանավանդ կոշիկ, կոշիկ... Հագինը կարկատանների տակ կորցրել եյին արդեն իրենց իսկական յերեսը։ Դա բավական չեր մեկի տակն ու յերեսը քթի մոտ բաժանվել եյին իրարից և քայլելիս շարունակ բաց ու խուփ եյին լինում յամաք ձգված ճենաոի յերախի նման։ Ձեվ մի քանի որ եր ահա նա տակն ու յերեսը թելով կապում եր իրար ու այնպես յեկնում փողոց։

«Սա խայտառակութիւն ե», ասում եր Աբշամն ինքն իրեն, կոշիկներին նայելով։ Լավ ե. ինքը բոբիկ ման գա, վաճառական Թեվոս Պողոսյանը իր փողը բանեցնի։ Ցնծա, ուսանող Աբշամ... Բայց հերիք ե, ինչ ել լինի, այսոր պիտի վերջացնել։ Այո... պիտի վերջացնել...

Մի քանի րոպեյում կոշկի թաթը կանեփի թելով կապելով՝ արագ դուրս յեկավ փողոց և քայլերն ուղղեց դեպի վաճառական Թեվոսի տունը։ Որը կիրակի յեր։ Ամենայն հավանականութիւնամբ վաճառականը տանը պիտի լիներ։ Ժամը տասն ե... Յերևի Թեյ ե խմում հիմա... մտածում եր Աբշամը փողոցում ու շուտ-շուտ կոշկի թաթին նայում։ Թվում եր նրան, վոր բոլոր անցորդները, ամբողջ քաղաքը նայում ե իր Թեվով կապած կոշկին... Ու, չնկատվելու համար, վոտը յերկար ժամանակ յետ եր պահում և մեկեն առաջ գցում, աշխատելով վորքան կարելի յե արագ քայլել։ արագ, արագ... Նա դիտել եր, վոր արագ քայլողի վոտնաձանի արատները չեն նկատվում. բայց արագ քայլելիս ել՝ Թեվի հանգույցը վոտի տակից շարունակ ընկնում եր յերեսը... Են, գոնե ամպած լիներ... Բայց հակառակի պես պայծառ արև եր. փոշու հատիկն անգամ յերևում եր մարդկանց շորերի վրա... Ցեվ չկար մեկը անցորդների մեջ, վոր իրեն՝ Աբշամի նման անճառնի, այլանդակ կոշիկ ունենար, այն ել՝ Թեվով կապած... Այո, մեծ համբերութիւն և իր կողմից — փողը թողնել ուրիշի ձեռի և շրջել այսպես... վայ, ներողութիւն կանես, պարոն Թեվոս, այսոր իսկ ամեն ինչ պիտի վերջացնես...

— Այո, մինչև վոր հաշիվս չվերջացնի, տանից դուրս չեմ գալու, — վճռեց նա։

Պետք եր այդ միջոցին դիմել, վորովհետև ձեռին ճոպանել եր ընդամենը՝ մեկ ռուբլի հիսուն կոպեկ։ Հաշիվ յերեք-չորս որվա ապրուստ... Ստանալիքը, սակայն, կարող և միաժամանակ ապահովել իրեն։ Ըստ քում հաշիվ անելով՝ նա շարունակ կրկնում եր.

«Այդպես՝ այսոր կամ յերեկ»։

Պատշգամում նրա առջևն յելավ իր աշակերտը. ուռած այտերով մի տղա, արդեն դպրոցական շորերով։ Ուսուցչին տեսնելով՝ նա ամաչկոտ ժպտաց, վորով սակս ներողութեան եր խնդրում, վոր հայրը այսքան ժամանակ փողը չի տվել և նա ստիպված յեկել և նորից... Այդպես թվաց Աբշամին, վոր իր հերթին ժպտալով բարևեց աշակերտին և, կապած կոշիկը յետ դնելով, հարցրեց. «Հը, գործերը վո՞նց են»։ Տղան նորից ժպտաց, և Աբշամին կրկին թվաց, վոր նա ամաչում և հոր արարքից։

— Տո՞ւն և հայրիկդ։

— Այո, համեցեք։

Արշամը հոնքերը կիտած, կռվի պատրաստվողի տրամադրությամբ, մտավ ներս։ Վաճառականն ու կինն զբաղված էին մի գեղջկուհու հետ հաշիվ տեսնելով։ Գյուղացի կինը, մատները ծալելով՝ հաշվում էր, թե ինչ և անում մի փութ յուղը և յերկու փութ պանիրը։ Թևվոսը սև թավ հոնքերի տակից նայում էր գեղջկուհու վայտի նման չոր մատներին և միաժամանակ համրիչի հատիկները դումարում։ Արշամին տեսնելով՝ նա գլխով արավ—«խնդրեմ» —և ձեռի շարժումով հրավիրեց նստել։

«Լավ ժամանակ չեկա», մտածեց Արշամը, նըստելով. «վճարումների որ և—ել մերժել չի կարող»։ Ցավ գոհ, որ այսպիսի պատեհ ժամանակ չեկավ, տկանջը նրանց զրույցին՝ սկսեց նայել տան կահերը։ Թեև մի քանի անգամ յեղել էր այդ սենյակում, բայց նրան թվում էր, որ ամեն բան չի տեսել։ Սենյակը լիքն էր իրերով, և ամեն ինչ մաքուր էր, կոկ ու իր վիճակից, կարծես, գոհ։ «Իրենց վոչ մի բանը պակաս չեն անում, բայց ուրիշի վարձը ինչպես են ձգձգում», մտածում էր նա շուրջը նայելով, և նրան թվում էր, որ բոլոր այդ իրերը՝ բազկաթոռները, առիքից կախված ջահը, պատկերները, բոլորը, բոլորը ավելորդ են, և նրա համար են միայն, որովհետև մյուս վաճառականների տներում։ Եվ կան դրանցից։

— Հաշիվը պարզ ա,—ասավ գեղացի կինը մատները ծալելով, և հայտնեց վորքան և հասնում իրեն։

— Հիմա յես ուզում,—հարցրեց վաճառականը։

Գեղջկուհին զարմացավ. ինչպես թե. իհարկե։ Հապա ինչու յե յեկել...

Վաճառականը ծոցագրպանից հանեց թղթադրամները և մի քանի րոպե լուռ, ինքնամփոփ հաշվելուց հետո, գլուխը բարձրացրեց հանկարծ։

— Պ. Արշամ, մի յերեք ռուբլի չեք ունենա։

Ուսանողը ուսերը վեր քաշեց և ժպտաց։ Յերեք ռուբլի՞... Ուզեց հասկացնել, վոր յերեք յերեք ռուբլի ունենար՝ ել ինչու՞ պիտի գար այստեղ, բայց նայելով իրեն ուղղված դեմքերին, մանավանդ Թևվոսի կնոջը, մըտածեց, վոր դրանք՝ բոլորը կարող են կարծել, թե ինքը դիտամբ և անփող ձևանում, ավելացրեց.

— Յերեք չունեմ. մոտս կա միայն մեկուկես...

— Վոչինչ. տվեք խնդրեմ,—ասավ վաճառականը, շարունակելով հաշիվը։

Արշամը յելավ, վարտիքի գրպանից հանեց դրամները, դրեց Թևվոսի առջև, աշխատելով կապած կուշիկը թագցնել վաճառականի կնոջից, վորը շարունակում էր անհանգիստ, շուրթերը սեղմած նայել իրեն։

«Յերևի սա յել և ամաչում, վոր վարձս ուշացրել են», մտածեց Արշամը և, վորպեսզի տիկնոջն ավելի ամոթ չպատճառի, նայվածքն ուղղեց «Ռուս-յապոնական պատերազմին»։

Յերբ գյուղացի կինը, ստացած դրամը շրջապեսի գրպանը դնելով՝ ուրախ-ուրախ գնաց դեպի դուռը՝ վաճառականը գարձավ ուսանողին։

— Ի՞նչ կհրամայեք, պ. Արշամ... Յերևի դասապնի համար – հա՞։

«Դե վոր հասկանում ես—ել ինչ ես հարցնում», ասաց Արշամը մտքում և, նորից տանտիրուհուն նայելով, ժպտաց.

— Իհարկե...

Ցեվ ուզեց շարունակել, բայց վաճառականը կանխեց.

— Ափսոս եվ անփոդ ժամանակ չեկաք, — պլուխը շարժեց նաև — Այ, չեթե այդ կ'կանիչ մի քիչ շուտ գայիք... Ափսոս. չեղածը ձեզ կասլի... Նեղութիւն չլինի, խնդրեմ, վաղը յերեկոյան շնորհ բերեք խանութ կամ այստեղ, իսկ չեթե վոչ այստեղ լինեմ, վոչ խանութում, Գասպարյանի պրատենյակը պիտի՞ք — Ազատութեան փողոցի վրա — այնտեղ կլինեմ, Խնդրեմ... Այդ մեկուկեսն եվ, իհարկե, միասին կսատանաք...

— Այդ վոչինչ... Բայց դուք... ժպտաց Աբշամը, — գիտե՞ք...

Ցեվ ուզում եր յուրյց տալ թևերով կապված կոշիկը, նկարագրել իր նեղ վիճակը, սակայն, նայելով տանտիկնոջ, վոր աչքերը խոնարհել եր գետին (յերևի ամոթից, ինչպես թվաց Աբշամին), նա անհարմար համարեց այդ տիկնոջն ավելի չամաչացնելու համար, և ասավ.

— Բայց և այնպես... իհարկե...

— Այո, իհարկե. հույս ունեմ, չեք մոռանա...

— Ցես այդ չեյի ուզում ասել, — ընդհատեց նրան Աբշամը, — այնպիսի բաներ կան, գիտե՞ք...

— Այո, գիտեմ, իհարկե, կարիքի մեջ եք. բայց տեսաք ելի, ձեռիս դուժարը գնաց... Վաղը խնդրեմ։

Աբշամը դարձյալ ժպտաց, և վորպեսզի իր մաշին վատ կարծիք չկազմեն, վորպես անքաղաքավարի մեկի, լռեց մի րոպե և ապա հարցրեց.

— Իսկ ժամը քանիսի՞ն, չեթե կարելի յե իմանալ...

— Ժամը՞։ Այսպես՝ յոթից մինչև իննը։ Ցես այդ ժամանակ ազատ եմ լինում, խնդրեմ... Այսօրվա մեկ ու կեսն ել, իհարկե...

Աբշամը, աչքը տանտիկնոջ յերեսին, վեր կացավ և, կապած կոշիկը նրա աչքից թագցնելով, յելավ սենյակից։

Յերբ դուրս փողոց յեկավ, նա մի րոպե կանգնեց վաճառականի տան առջև ու զայրույթով նայեց վերի հարկին։

Ա՛խ, չեթե կինն այնտեղ չեր լինի՛...

1917.

ՓՈՐՁԱՆՔ

Գյուղաքաղաքի հիվանդանոցի նախասենյակը լի էր ամեն հասակի և ամեն տեսակի այցելուներով—կին, մարդ, աղջիկ, յերեխա... Շատերը, տեղ չլինելու պատճառով, կանգնած էն. վոմանք անհամբեր հերթի էին սպասում բժշկի ընդունարանի դռների առջև։

Քրտինքի, արեխի և յոդոֆորմի հոտ է գալիս։

Անկյունում յերկու մարդ նստած խոսում են կարմիր նստարանին նստած։ Նրանցից մեկի (վոր ունի սև մազերով հաստ գեմք, խիտ հոնքեր և չինացու քթի) ալ ձեռը կապած է կրծքին։ Իսկ մյուսի (վորը ունի ալեխառն փոքրիկ միրուք, հարաշարժ աչքեր և մեջքին արծաթե բարակ գոտի) գլուխը կապած է ըսպիտակ փաթաթանով։

— Յես զարմանում եմ, Պետրոս աղա,—ասում է չինացու քթով, ձեռքը կապած մարդը իր հասակավոր հարևանին.—յերկու որ առաջ տեսա քեզ վողջ-առողջ, այսոր գլուխդ փաթաթած։ Ի՞նչ է պատահել...

— Ել մի հարցնի, Ավետիս,—ասում է Պետրոս աղան գլխի փաթաթանը շոշափելով։

— Կռի՞վ է պատահել, ինչ...

— Ի՞նչ կռիվ, ի՞նչ բան։

— Հապա ինչից յեղավ եդ։

— Մի փուչ բանից։

— Վռնց թե. վեր ես ընկել...

— Ինչ վեր ընկնել, ախպեր. իմ պարոն ծառան է խփել. պարզերես կենա...

— Ծառան. են Մինասը թե՞ Դավիթը։

— Դավիթ է, ինչ անասուն է,—ասում է Պետրոս աղան նեղացած և նորից շոշափում գլխի փաթաթանը։

— Են վոր այդին պահում է։ Ինչու՞ խփեց ախր...

— Յերեկ իրիկուն գնացի այգի, փեսը վերկալավ ու տուր թե կտաս գլխիս մեջտեղը։

— Վահ,—պարմանում է Ավետիսը,—առանց գես ու դենի՞... չեմ հասկանում...

— Իհարկե Չես հասկանա։ Յերեխ բանը գլխից չասես, թարս դուրս կգա,—ասում է Պետրոս աղան աչքի պոչով նայելով մյուս նստողներին։—Դու գիտես, վոր եղ Դավիթ է, ինչ փուչ կենդանի չէ, մեր այդին պահում է, ու դրա համար ամսական հինգ մանեթ եմ տալի, հացն էլ ինձանից. իսկ ամսական, ամեն

— Վոնց թե,—ասում եմ,—բա վոր դու չդիտես, ով գիտի։

Ջեն չի հանում։

Դեռ եղ վոչինչ, վոր մեծ ծառերի խնձորներն էլին պակասում. ավելի վատ յեկա, յերբ մի որ էլ տեսա՝ Ռուսեթի մի թեթև ծառ կա, նրա խնձորներն էլ պակասեցին։ Եղ ծառը առել եմ վարդանի տվից։ Մի որ դա յեկավ, թե՝ «Պետրոս աղա, մի խորոմ խոտ տուր, խոտ չունեմ»։ Ասի՝ «տար, համա քու այգու պատրուսներից մեկը կտաս»։ Մարդը խոստացավ ու տվեց։ Ես տարի եղ ծառը բոլ բռնել եր։ Ինքը կարճ, թեթև բան է, բայց լավ բռնել եր։ Կարկուտը շատ մասը թափեց, բայց մի քիչ էլի մնաց. եղ քիչը համբարեցի, դուրս յեկավ հիսուն-հիսուներկու հատ։ Ես քանի որը վոր գնացի այդի, ասենք ամեն որ եմ գնում, համա ես վերջին անգամը վոր գնացի, տեսա եղ ծառի խնձորը պակաս. համբարեցի՝ դուրս յեկավ 48 հատ։ Կանչեցի եղ անիծած Դավթին։

— Արի հատեղ,— ասում եմ։

Վազելով յեկավ ու դիք դպանակի պես առաջին տնկվեց։

— Ինչ է, աղա։

— Աղեն աչքդ հանի։ Ա՛յ ապա, ասում եմ, ես ծառի խնձորներն ո՞ւր են։

— Վրեն է, ուր են,— ասում է,— աղա։

— Վոնց թե վրեն են,— ասում եմ,— հատեղ հիսուն, հիսուն յերկու խնձոր կար հիմի 48 հատ է, վո՞ր ջհանդամն են գնացել։

— Ցես ինչ գիտեմ, աղա։

Ասում է ու ծառին է մոտիկ անում. մեկամ թե նոր է տեսնում։

— Բա վոր դու չդիտես, էլ ով գիտի, ասում եմ,— էլ ինչի՞ այդի պահող ես, վոր չգիտես։

— Ջգիտեմ,— ասում է,— աղա։

Ասում է ու էլի ծառին է մոտիկ անում, վոր աչքերս չտեսնի։

— Ամեթ է—,ասում եմ,— ա՛յ ապա, հոգուդ մեղք մի անի. թե ուտում ես, ասա՝ ուտում եմ. հո յես բան չեմ ասում դրա համար։

— Ջե,— ասում է,— աղա, ուտում չեմ։

— Վոր ուտում չես,— ասում եմ,— բա ո՞ւր են գընում, կամ գողանում են կամ ուտում ես. ուրիշ էլ ինչ կա. հո յերկինք չեն թռչում։

— Ջե,— ասում է,— աղա. վո՛չ ուտում եմ, վո՛չ գողանում են։

— Եղ վոնց կլինի,— ասում եմ.— յերկուսից մեկը՝ կամ ուտում ես, կամ գողանում են՝ դու չես տեսնում։

Ջե վոր չե՛։

— Վո՛չ ուտում եմ, վո՛չ էլ գողանում են։

— Թող եդպես լինի,— ասի մտքումս, ու մտածում եմ, գուցե չի ուտում, բայց ծախում է. կամ, շատ կըելի յե, գողանում են, ինքը քնում է՝ չի տեսնում... Վերջապես, ասում եմ, պետք է իմանամ՝ այդիս գող է մտնո՞ւմ, թե չե...

Եսպես մտածելով հասա տուն ու յեղածը պատմեցի սանամորդ։ Նա յել ասավ, վոր ծառան ուտիլ չի, բայց շատ կարելի յե՝ գողանում են, ինքը քնած է լինում։ Եղ էլ վոր նա ասավ, մտածեցի՝ լավ մութը մթնելուց հետո՝ թագուն մտնեմ այդի, խնձոր քաղեմ,

տեսնեմ եղ անիծածը ինձ նկատում և, թե չէ. յեթե նկատի--ն ե՝ լավ և մտիկ տալի այգուն, թե չէ հո՝ այդիս անտեր և, գողերը թալանում են։

Մտածեցի ու ասի։

Հիմի, քավոր Ավետիս, դու կասես թե չես մի քանի խնձորի համար գարդ եմ անում։ Սկի յես չեմ իմ գարդը խնձորները չեն. թքած խնձորների վրա։ Յես ուզում եմ իմանալ այդիս գող և մտնում, թե վոչ։

Հենց նդպես, յերբ մուրթը լավ մրնեց, մի փետ վեր կալա, դուրս յեկա տանից ու ճամփա ընկա գիպի այգի։

Մութ, շատ մութ գիշեր եր. ենպես մութ, վոր աչք աչքի չի տեսնում։

Յերբ այգուն մոտեցա՝ սիրտս տրպպաց. մի տեսակ վատ բան զգացի։ Լավ կլիներ հենց եղ ժամանակ եղ յետ դառնայի, եղ ես բանը չեր պատահի. բայց կարծես ստանան բոթից թե՝ գնա, գնա, գնա...

Յես եղ մտածեցի—քանի վոր յեկել եմ, մտնեմ մի վորձեմ եղ անիծածին. տեսնեմ նկատում և թե չէ. յեթե չնկատի, վայն յեկել և իրեն տարել, պոչը կկըտրեմ. թող ուր ուզում և գնա։

Եսպես մտածելով՝ մոտեցա այգու պատին։ Մոտեցա ու լոք տվի վրովը, ու հենց լոք տվի թե չէ, յերկու քար,—վատ ելին ղրվածծ, ինչ եր—իրար հետ ընկան պատից... Յես մտա այգի ու կանգնած ականջ ղրի։ Ասում եմ՝ տեսնեմ մարդու ձեն-ձուն, վոտի ձեն լսվում և թե չէ։

Հենց մտել ու մտածում եյի, մեկ եղ տեսնեմ վոտի ձեն լսվեց։ Մինը դեպի ինձ եր գալիս։ Աչի ով գիտի հենց գող և։ Բայց չէ։ Յեկավ մոտի մի քիչ հեռու կանգնեց ու ձեն տվեց։

— Ո՞վ և։

Ասողն եղ լիրը լրբի վորդին եր։ Ձենից են բոպիկին ճանաչեցի, բայց ձեն չհանեցի. ասում եմ՝ ով գիտի հենց ենպես հավարի յե գոռում, առանց բան տեսնելու։

— Ո՞վ ես,—ձեն տվեց նորից։

Յես ելի ձեն չեմ հանում։

— Նա փենթփենթաց, հայհոյեց, հեր ու մեր քաշեց ու նորից։

— Ո՞վ ես,—ասում ե,—դուրս արի։

Յես թարսվել կողքի յեմ ընկել ու ձեն չեմ հանում։ Ասում եմ՝ իրանից դուրս և գոռում. քարերի ձենը լսել ե՝ դրա համար։

— Դուրս ես գալի, թե չէ,—մին ել գոռաց նա։

Ու հենց եղ գոռալը տեսա... Մեկ ել—փռռալով մի հատ փետ յեկավ ու տրաքեց գլխիս։

— Վայ, անիծվես դու,—ասի ու գլուխս բռնեցի։

Գյադեն ձենիցս ճանաչեց ու ծռաց սառած. ել ձեն չհանեց։ Բիչ հետո տեսնեմ՝ գլխիցս արուն և գալի։

— Վայ,—ասի,—յես քու... ես ինչ փորձանք բերիր գլխիս։

Գյադի լեզուն կապ և ընկել. բան չի խոսում։ Վերջը կմկմաց։

— Աղա,—ասում ե,—յես ինչ գիտեյի դու յես...

— Աղեն աչքդ հանի,—ասում եմ,—լիրը լրբի վորդի... Շատ ել քեզ ասել են այգուն մտիկ անես, պետք ե, ուրեմն, փետը քաշես մարդ սպանես...

— Ինչ ես ասում,—զարմանում է Ավետիսը կապած ձեռով իր չինական քիթը տրորելով։

— Հապա,—հառաչում է Պետրոս աղան գլխի փաթաթանը ուղղելով—եանկց փորձանք բերեց իմ գլխին են լիրբ լրբի վորդին...

— Պետրոս Միրզոյան,—կարդում է հիվանդների ցուցակը սպիտակ շոր հագած յերիտասարդ ֆելդշերը և հայտում է Պետրոս աղայի կողմը։—Հերթը ձերն է։

Պետրոս աղեն գլխարկը վերցնելով՝ դնում է կրնատակը և մտնում բժշկի մոտ...

1913։

ԿԱՄԱՑ ԽՈՍՔ...

Հենց իր անվանակոչության որը ս. Գևորգ յեկեղեցու յերեսփոխ, ծխական դպրոցի հոգաբարձու, Մարդասիրական ընկ. անդամ, քաղաքային դումայի իրավասու, սահմանադրական հանձնաժողովի նախագահ և անատեր ու պատվավոր քաղաքացի Դավիթ Դանիելյանի առաջները ցավում եյին սաստիկ։

Ծանր սկսել եր դեռ նախընթաց որը, բայց այդ առավոտ ավելի սաստկացավ, այնպես, վոր նա չկարողացավ վոչ վոքի ընդունել։ Տեսնելով ցավը շատ է նեղում, կինը խորհուրդ տվեց՝ գնալ առաջնաբուժի մոտ, բայց Դանիելյանը, վոր առաջ եր առհասարակ առաջնաբուժներին, չուզեց գնալ վորովհետև մի անգամ նրա ցավող առաջի տեղ հանել եյին առողջը։

— Համենայն դեպս, գնա,—առաջարկում եր կինը,—գուցե մի դեղ տան։

— Չեմ գնա,—ասում եր Դանիելյանը նեղքին ծնոտը բռնած, անց ու դարձ անելով,—չեմ գնա. կարող եմ, ինքդ մի բան արա... Ո՛խ-ո՛խ-ո՛խ... սպանեց, Մարիամ, սպանեց...

Այդ տեսնելով՝ տիկ. Մարիամն սկսեց կոլծատրել իր գլուցած մեջոցները։ Ամենից առաջ սոխ խորովեց և ամուսնու առաջների վրա դրեց, հետո աղի ջրով բերանը վողողել տվեց, վերջը մի մեծ մախաթ դրեց կրակը

և նրանով ատամները դաղեց, բայց ցավը չանցավ ամենևին. ինչ-որ մի անհայտ ձեռք, ասես շիկացած ասեղներով, ծակծկում էր պարոն Դանիելյանի ներքին ծնոտը։

Ցավ պ. Դանիելյանը՝ ցավից գլուխը բռնած, մերթ անհանգիստ անց ու դարձ էր անում, մերթ պառկում բազմոցի վրա և մի առժամանակ լուռ նիրհում։

Տիկին Մարիամը, ձեռները կրծքին դրած, հուզարկավորի դեմքով նայում էր ամուսնուն և վշտանում, որ ոչինչով չի կարողանում օգնել։

— Սպանեց, Մարիամ, սպանեց,—կրկնում էր Դանիելյանը ծնոտը սեղմելով.—Այն ձվ է, Մարիամ, այնպես բարձր խոսում. ի սեր աստծո, ասա՝ լռեն. իմ գլուխ լուծը չեն տեսնում...

Ամուսնու խոսքերի վրա տիկ. Մարիամն անցավ մյուս սենյակը և սաստեց այնտեղ գտնվող իր յերկու աղջիկներին։

— Կամաց խոսեք. չեք տեսնում՝ հայրիկի ատամները ցավում են,—ասաց նա այնպիսի ձայնով, կարծես տանը աննկատ լիներ։

Աղջիկները մեղավորի պես լռեցին, և այնուհետև յերեք նրանցից մեկը կամ մյուսը, մոր պատվերը մոռացած, ուզում էր բարձր խոսել կամ բերանը բանում էր ծիծաղի, մյուսը սաստում էր խսկույն.

— Կամաց... հայրիկի ատամները ցավում են...

***

Կեսօրին Դանիելյանին այցելության եկավ տեր-Հովսեփ քահանան և, տեսնելով իր սիրելի յերեսփոխի գլուխ-լուծը, խորհուրդ տվեց՝ ազով շաղախած մոխիր դնել ատամների վրա։

— Իսկույն կանցնի,—ասավ նա,—անձամբ փորձել եմ. ինձ էլ պատահ աղախինս խորհուրդ տվեց։ Դա լավ միջոց է, կարգս վկա. փորձեցեք և կտեսնեք...

Քահանայի գնալուց հետո կատարեցին և այդ խորհուրդը, բայց ցավը չմեղմացավ անգամ. առաջվա պես ներքին ծնոտը, ասես, ուզում էր պոկվել տեղից։

— Սպանեց, Մարիամ, սպանեց,—ասում էր Դանիելյանը գլուխը տարուբերելով.—Այն ինչ աղմուկ է բակում, Մարիամ. ի սեր աստծո, այն ինչ աղմուկ է...

Տիկին Մարիամը ձեռները կրծքին, անձայն քայլերով դուրս գնաց տանից, սաղուղներով իջավ բակը և, հուզարկավորի նույն բեկված ձայնով, խնդրեց խաղացող դպրոցականներին աղմուկ չբարձրացնել։

— Այնպես, մի քիչ կամաց խոսեք... Դավիթ քեռու ատամները ցավում են։

Յերեխաները մի առ ժամանակ խաղացին անձայն, բայց հետզհետե մոռանալով տանտիրուհու պատվերը, նորից աղմուկ բարձրացրին։ Այդ պատճառով տիկ. Մարիամը կրկին իջավ բակը և նորից խնդրեց յերեխաներին, վոր «կամաց խոսեն». ապա մտավ դռնապան Սիմոնի խուցը և պատվիրեց, վոր Թուլչոտ յերեխաներին աղմկելու։

— Թող մի քիչ այնպես կամաց, կամաց խոսեն. պարոն Դավթի ատամները ցավում են...

***

Յերեկոյան դեմ ցավը ավելի սաստկացավ, այնպես վոր պարոն Դանիելյանը մի բաժակ թեյ անգամ չկարողացավ խմել։ Տեսնելով բոլոր միջոցներն ապարդյուն անցան՝ նա հուսահատված սկսեց մտածել մահ-

վան մասին և այն մասին, որ մարդիկ չեն կարողանում մի միջոց գտնել ատամի ցավի դեմ։

— Ցես զարմանում եմ,—ասում էր նա կնոջը՝ գլուխը բռնած քալլելով,—այդ գիտնականները մի գլուխ անդադար ու անպետք բաներ են հնարում։ Ինչի՞ էն պետք, որ ինչակի համար, հեռախոսը, ալերոպլանը, գրամաֆոնը... Մարդիկ առանց դրանց ապրել են ու առանց դրանց կապրեն էլ... Նրանք՝ այդ գիտնական կոչվածները մարդու ցավերի, մարդու առողջությանը հարկավոր բաների մասին չեն մտածում ամենևին. ուֆ...

Խոսում էր պ. Դանիելյանը և անցուդարձ անում սենյակում, իսկ տիկ. Մարիամը ձեռները կրծքին, նույն հուզարկավորի դեմքով, լուռ լսում էր նրան և նիրհում թեթևակի. և այնքան նիրհեց, որ հենց նստած տեղն էլ քնեց։ Վորքան էր քնել—չգիտեր, մեկ էլ ականջն ընկավ մարդու ձայնը.

— Մարիամ, ա՛յ, Մարիամ, այն ով և այնպես գոռում. խոր ատածո, գլուխս տրաքեց, մի տես...

Տիկ. Մարիամը, յերապի մեջ, աչքերը բաց արավ, միքանի անգամ հորանջեց ու ականջ դրավ։

Հարևան բնակարանում մեկը բարձր ու պիլ ձայնով յերգում էր և շուռ-շուռ կրկնում. «Հիմի՞ յել լռենք, յեղբարք»...

— Լռիր, լռիր,—ասաց Դանիելյանը ինքն իրեն, անցուդարձը շարունակելով։

— Ցերգողը դերասանն է,—ասավ տիկ. Մարիամը, կրկին հորանջելով։

— Ով ուզում է լինի, խոր ատածո, գլուխս տրաքեց...

Տիկին Մարիամը մութ միջանցքով, ձեռները պա-

տերին քսելով, մտավ պերասանի բնակարանին և դուռը թակեց։

— Ո՞վ է, մանք,—լսվեց դերասանի բարիտոնը։

— Ցես եմ, պարոն,—ասավ տիկին Մարիամը վարժուհյուն խնդրելու յեղանակով.—յես եմ, Մարիամ Բագրատովնան։ Ցեմի կարելի յե, պարոն, միքիչ կամաց յերգեցեք. պարոն Դավթի ատամները ցավում են...

* * *

Այսպես յերեք որ ու յերեք գիշեր շարունակվեց պ. Դանիելյանի ատամների ցավը։ Յեվ յերեք որ ու յերեք գիշեր թե՛ ատեր, թե՛ բակում, թե՛ հարևան բնակարաններում լսվում էր տիկին Մարիամի ձայնը.

— Սր՜ա... կամաց խոսեք. պարոն Դավթի ատամները ցավում են...

1913.

ԱՆԱՅԻ ԱՂՈՒՏԸ

— Ինչ ուզում եք ասեք, վարժապետ, ձևն ևնքան էլ վատաակը բան չի, վոնց վոր կարծում եք,— ասում եր Կաճաճկուսի նախկին քեռխվա Դավո բիձևն, չիբուխը քաշելով։ —Ձեմ ասում թե՝ ձևը բոլորովին հենց ոգուտ ա։ Չե, ախպեր. յես էլ բանը չեմ ասում, քանի վոր ձևն ունի իրա վատաները էլ։ Որինակ, յերբ, ասենք, գազանակը վեր ունես ու մեկին անտեսի թակես, նա, իհարկե, պարզ բան ա, կվատավի. կամ ձևը կկոտրի կամ վոսը, կամ գլխին ցավ կտա կամ մեջքին... Բայց յերբ ձևում են ևնպես —քաղաքավարի կերպով, խրատելու կամ բան իմանալու, դա յել, իհարկե, զուր չի, իրա ոգուտն ունի։ Հիմի կասեք եղ վոնց։

— Հա, եղ վոնց։

— Ա՛յ թե վոնց... Մի անգամ, ախպերս վոր գուբ եք, մեր գյուղականներից մինը՝ Խառատանց Մաթոս կասեին՝ գիշերը գնում ա Ճարտարանց Պետոյի դարմանը կնքում (գողանում)։ Առավոտը Պետոն տեսնում ա դարմանին ձեռ աված։ Ասում ա՝ նառեղ մի բան կա— անպատճառ գողացել են։ Դե-գրեն – իրը (հետքը) գըտնում ա։ Գտնում ա ու գնում եղ Մաթոսի գռանը կանգնում։

— Մաթոս,— ասում ա,— ինձանից հո դարմանդ չես տարել։

— Չե, ասում ա, — դարմանդ ինչիս ա պետք։ Ձես դարմանդ չունեմ վոր...

Նա թե՝

— Չե։ Ինչի՞ պըտի տանեմ վոր։ Տանում եմ պըտխես ածե՞մ։

— Ով ա իմանում,— ասում ա Պետոն,— թե տարել ես՝ ասա. ինչ կա վոր, հարևան մարդ ենք. ըլի վոր մի յերկու կմոց էլ հարկավորված ըլի։

Մաթոսը յերդում-կրակն ա ընկնում, թե. չե, են տանք-կբերեք վկա, յես բանից խաբար չեմ։ Նառեղ Պետոն բարկանում ա։

— Բա սրան ինչ կասես,— ասում ա,— վոր իրը քու դուռն ա գալի։

— Այ մարդ, դու ոսի շան ես,— նեղանում ա Մաթոսը։— Ով գիտի գիշերը թաբա ես քնել։

Խոսքերն իրար ա հասնում. նա նրան՝ դուլ նա նրան՝ հերն ու մեր։ Բիչ ա մնում իրար տան։ Հարևանները չեն թողնում, կռիվը մեջ ա ընկնում։

Եղ ժամանակ էլ յես քյոխվա ի։ Պետոն յեկավ պանդատ, թե եսպես-եսպես։

— Արի,— ասում ա,— ինքդ տես. իրը նրա դուռն ա կնում։

Մի գիրը վեր կալա՝ գնացի։ Տեսնում՝ դրուստ վոր իրը Մաթոսի դուռն ա կնում ու կտրվում... Տնաքանդի խելքն ենքան չի կտրել, վոր գողությունն անելուց յետը իրն էլ ա կորցնի։

Մարդ զրկեցի եղ Մաթոսին կանչելու։ Յեկավ։

— Մաթոս,— ասում եմ,— Պետոյից դարման ես առե՞լ։

— Չե,— ասում ա,— դարմանն ինչիս ա պետք։ Յես դարման չունեմ վոր...

— Այ տղա, — ասում եմ, — իզը քու դուռն ա պա-
լի, ուբռնալ մի։

Նա թե՝

— Շատ էլ պալիս ա։ Ուզում եք, մարդս մոխիկ
արեք։

Մոռնում ենք մարդը։ Դարմանը դարմանից վոնց
չկիս։ Ինքը Բելասոն էլ գա՝ գլուխ չի հանի։ Գոմն
ենք մոխիկ անում։ Ելի եղպես. տավարը դարման ա ու-
ում. ինչ իմանաս ում դարմանն ա — իրենն ա, ուբռիլ։

— Դե, Մաթոս, — ասում եմ, — առանց զամազալի
խոստովանի, վոր Պետոյի դարմանը դու չես տարել
Յեթե դու չել չես տարել - մենա՝ դողուքյունը քու ատունն
ա մտել։

Նա՝ չէ վոր չե։

— Յես դարման չեմ տարել, վոչ էլ իմ ատունը
դարման ա մտել։ Գնացեք ձեր գողը գտեք։

Եսպես մենք՝ հա, նա՝ չե։ Տեսա վիզը չի առնում,
գլխին ասի՝ բանի գրան, ն ա ր ա խ ա տ ը քցի։

Մինչև իրիկուն գրան պահեցի, իրիկունը նորից
հարց ու փորձ արի։ Ելի վիզը չառավ. ես տարումը բան
կա, են քարումը կա, ինձանում բան չկա։

Տղանիքին ասի.

— Դե վոր եղպես ա, գրան մի քանի ավելք։

Տվին, վարժապետ, ելի չխոստովանեց։

— Մին էլ ավելք, — ասի։

Ես անդամ չերկուսով վրա չկան, վոր աչքը վա-
խեցնեն։

Ելի քարի պես պապանձվել ա, ձեն չի հանում։

— Ապա, — ասում եմ, — ա գլխամեռ, խոստովանի ու
պրծի ելի։

Ո՞վ կա ասում։ Թե ես վհան իրանով ա տալի,
նա էլ ենպես։

— Դե վոր խոստովանում չի, — ասի, — տարեք նո-
րից փակեցեք։

Մի որ ու պիշեր էլ պահեցինք։ Եքսի իրիկունը
նորից կանչեցի։

— Մաթոս, — ասում եմ, — վերջին անգամն եմ ա-
սում. խոստովանում ես՝ խոստովանի, խոստովանում
չես՝ գործը գտտարան կտամ, ինքս էլ վկա կկանգնեմ,
վոր գարմանը դու չես տարել, քանի վոր իզը քու դուռն
ա գալի։ Գղիրներն էլ են կողմից են հաստացնում, վոր
քարը գոգիցը վեր ածի, խոստովանի, թե չե հետո վատ
կըլի։ Բայց եզ անիրավի ապեն սկի ձեն չի հանում։

Յես համբերով մարդ եմ, վարժապետ, բայց վոր
համբերաթեվնից հանում են — բարկանում եմ։ Ես ան-
դամ էլ Մաթոսի եզ իրան ասածի բնավորութեվնը ինձ
բալկացրեց։

— Տղեք, — ասում եմ, — գրան մի քանի ավեք, վոր
հանից իրան ասածի չա...

Հիմի ի՞նչ եք կարծում, վարժապետ, ձեծն ոպե՞տ
ավեց, թե ճլաս... Իհարկե, ոպուտ, — ձիծաղեց քյոխվան
չիբուխը վառելով։ — Հենց վոր ապիքը մի լավ գավե-
սին, դա գոռաց.

— Բավ ա, — ասում ա, — ձեզ մատաղ, չես եմ տա-
բել. բավ ա... ել տալ մենք... չես եմ տարել...

— Դե հանենց, — ասում եմ, — թեզ ասելիը՝ պրծնե-
լիը ելի. ինչու համար ես գալ տեղը չարչարվում...

Ու եսպես ամեն բան իմացա. իմացա, թե ինչ ժա-
մանակ ա՞ գնացել գարմանը գողանալու, ինչքան ա
գողացել ու վորտեղ ա պահել...

Ու հետո ասում եք թե՝ ծեծն սկի ոգուտ չունի։ Ես ձեզ որինակ։

Հա, ես էլ ասեմ, վոր ամեն բան իմանալուց յետը՝ դրան նորից փակեցինք, վոր առավոտը բաց թողնենք։ Բայց արի տես—սարսաղն եղ գիշեր վախից վեր ա ընկնում-մեռնում։ Դու մի ասի՝ ինչես ա կարծում թե՝ գործը դատարան պըտի տանք, վոր իրան Սիբիր ղըրկենք։ Սարսաղ մարդ...

Եսպես սարսաղ մարդիկ մեր գեղերում շատ կան, վարժապետ։ Կարծում են թե՝ ամեն հասարակ բանի համար Սիբիր են ղրկում։ Եգպես էլ Մաթոսը...

Ողորմի իրան...

1917.

ԻՆՓԻՆԵՐԻ ՄԱՅՐԸ

Բարձրահասակ էր, վոսկրոտ ու սևազգեստ։ Խիտ, սև հոնքերի տակից նայում էին յերկու փոքրիկ սուր աչքեր. իրար սեղմած բարակ շուրթերը և բազմաթիվ կնճիռները՝ դեմքին տալիս էին խոժոռ արտահայտություն։ Խոսում էր բարձր, հեղինակավոր, առարկություն չվերցնող ձայնով։ Թվում էր տղամարդ և կնոջ շոր հագած կամ խառապահ կրոնավոր։ Գյուղացիք հարգանքով «ապի» էին ասում նրան. տերտերը՝ տեր Ղազարը նույնիսկ՝ նրա մասին խոսելիս ուրիշ կերպ չէր արտահայտվում, քան յեթե «մեր Յեղսի ապին»։ Այդ հարգանքը նա ձեռք էր բերել դեռ հանդուգյալ ամուսնու՝ գյուղի միակ հարուստ Բաղչի-բեկի կենդանության որով և այժմ շարունակվում էր վորդու շնորհիվ, վոր լինժիներ էր Բագվում։ Յերբ նա սևազգեստ ու բարձրահասակ, սև շալը թևին՝ անցնում էր գյուղի փողոցներով,—մարդիկ, կանայք հարգանքով կլուծ էին տալիս նրան կամ շտապում էին թագնըվել.—«Յեղսի ապին գալիս ա»... Շատերն աշխատում էին անկարդ չերևալ նրա աչքին, վոմանք խուսափում էին, վոր իրենց բանի չդնի... Իսկ յեթե Յեղսի ապին մի բան ասեր կամ մի բան խնդրեր—դժվար էր մերժել։

Կիրակի որերը նա կանոնավորապես հաճախում

եր յեկեղեցի և դիք ու անշարժ կանգնում կանանց բաժնի առաջին շարքում, ինչպես մի հրամանատար իր վաշտի առաջ, և վոչ մի կին չեր համարձակվում նրանից առաջ կամ նրան հավասար կանգնել։ Ու բոլորը հետևում էին նրան. չերը խաչակնքում եր, իրենք էլ անում էին նույնը։ Ամենից առաջ Յեղսի ապին եր մտանում խաչը համբուրելու, իսկ ժամերգությունից հետո՝ տերտերը ամենից առաջ նրան եր մոտենում։

—Ի՞նչպես ես, Յեղսի ապի... Ինժիներից ինչ խաբար...

— Վոչինչ, շնորհակալ եմ,—պատասխանում եր Յեղսի ապին գլուխը ծանր ու մեծ շարժելով։—Ինչինարս լավ ա...

Յեղսի ապու միակ վորդին ինժիներ եր Բաքվում. նա շաբաթական նամակներով խնդրում եր մորը՝ թողնել գյուղը և տեղափոխվել քաղաք՝ իր մոտ. Յեղսի ապին չեր համաձայնում, և ամեն անգամ տիրացու Մարկոսին դրել եր տալիս, թե տեղափոխվել չի կարող, թե այստեղ ծնվել ե, այստեղ էլ կմեռնի. «քաղաք գամ, վոր ունեցածս շներից ու դելերից ըլի... Չե, քանի սաղ եմ՝ կմնամ հասել, իմ մարդու ոճաղբի տակ և նրա ծուխը կծխացնեմ»... Ու չեր գնում։ Ապրում եր իր յերկու հարկանի տունը մեն-մենակ, բոլոր գոների վրա կողպեքներ եր գնում, և բոլոր բանալիները բերում-կախում եր իր մահճակալի վերևը։ Փնեղուց առաջ դարպասի դուռը փակում եր յերկու տեղից, կապած յերկու շունը բաց թողնում։ Նա տանը մարդ չեր պահում, վախենալով վոր կարող են գողություն անել... Տունը թալանելու յերկյուղից՝ նա նույն իսկ չեր ուզում մի շաբաթով հյուր գնալ վորդուն ու հարսին։

Բայց վորդին էլ չեր մոռանում մորը։ Ամեն-ամիս ուղարկում եր նրան յերեսուն ռուբլի «ծախի փող», և փողի հետ էլ գրում եր միշտ. «Ապի, դու արդեն ծեր ես. չչարչարվես լոստանում, բանում։ Ինչ ուղարկում եմ՝ ծախի»... Այս գրում եր նրա համար, վորովհետև լավ գիտեր մոր ընավորությունը. գիտեր, վոր նա չի ուզում տեսածից զրկվել. ուզում է անտեսությունը դյուզում շարունակել նախկին ձևով, այսինքն՝ ինչպես մարդու որով եր։

— Յես ուրիշի ձեռին չեմ կարող մոիկ անել,—ասում եր նա հաճախ. ու բանջարանոցում ցանում եր կաղամբ, բազուկ, սոխ, կտուկ, ամսական ու տարեկան բողկը։ Խնամում եր այգու ծառերը, նոր պատրաստներ եր անել տալիս, վոր «ծառը ծառից չկորվի», այսինքն՝ չնչին մի պատառ ծառ չորանա, նրա տեղ չհնձելը պատրաստ լինի... Այսպես եր Յեղսի ապին։ Կովեր ու գոմշակովեր եր պահում, յուղ ու պանիր եր անել տալիս, վոր «աչքը տեսածից չընկնի»։ Վար ու ցանք ուներ։ Չեր թողնի հողերը «խամ» մնան. աշնանը ցել եր անում և գարնանը ամենից շուտ ցանել տալիս։

Բայց ինչպես եր Յեղսի ապին մեն-մենակ հաջողնում այս բոլորը. ծեր կին՝ ինչպես եր կարողանում և՛ հող ցանել և՛ բանջարանոց գցել և՛ հավ ու սագ պահել...

Իհարկե, Յեղսի ապին այս բոլորը մենակ չեր անում և վոչ էլ փողով։ Նա այդ ամենն անում եր, իհարկե, ուրիշների ոգնությամբ, գլխավորապես այն

գյուղացիների, վորոնք աշխատող ունելին Բագվում՝ նավթահանքերում, ուր կառավարչի պաշտոն ուներ և Ցեղսի ազու վորդին՝ ինժիներ Աղբաշովը։ Իսկ գյուղի կեսը դրեթե մարդ ուներ Բագվում.--մեկի վորդին եր աշխատում այնտեղ, մյուսի յեղբայրը, յերբորդի ամուսինը... Յեվ ահա գարունը բացվում եր թե չե, այսինքըն յերբ ձյուները հալ եյին ընկնում և հողն սկսում եր գոլորշի շնչել,—Ցեղսի աղին հաշիվ եր տեսնում, թե ում տնից մարդ կա Բագվում, ում պետք է դիմի վարելու, ցանելու համար։ Յեվ բարձրահասակ ու սևաղգեստ, ինչպես մարմնացած լրջություն կամ ինչպես խստակրոն պառավ մի կույս, սև շալը թևին դուրս եր գալիս տնից և հանդիսավոր, հանդարտ քայլերով անցնում գյուղամեջ և առաջին պատահող գյուղացուն (իհարկե նրան, վորը վորդի ուներ Բագվում) հարցնում.

—Հը, ղադեն, ձեր հեռավորից ինչ խաբար։ Նամակ, փող ստանում եք... Հաջողակ ե...

Նա ակնարկում եր Բագվում գտնվող նրա վորդուն կամ յեղբորը։

— Խի չե, Ցեղսի աղի. շնորհակալ ենք. ստանում ենք...

— Ինձանից մի շնորհակալ ըլեք,—պատասխանում եր Ցեղսի աղին հանդարտ,—ինջինևրիցս շնորհակալ ըլեք, վոր սարի պես կանգնած ա ձեր գլուխների թիկունքին... Նա վոր Բագվում չըլի՝ ով տեղ կտա մեր գեղի աղերանց։ Ինձանից չե, մաշաղ, ինջինևրից շնորհակալ ըլեք...

Ու սիրալիր, կարեկցանքով հարց ու փորձում եր, թե ինչ են անում տանը, ինչպես են յերեխաները,

տավարը։ Յեվ յերբ հարց ու փորձը վերջանում եր, ասում եր, կարծես ի միջի այլոց.

— Գիտես, Սրապիոն, մեր հանդի հողն ևս տարի պիտի դուբդանես։

Գյուղում սովորություն եր—յեթե Ցեղսի աղին մի բան եր ասում, պետք եր կատարել։

— Աչքիս վրա, աղի ջան։

— Բայց լավ կվարես, այ Սրապիոն։ Մարակ տեղ թողիր կամ գլխահանուկ արիր՝ ինջինևրիս կգրեմ, աղիդ լավ աչքով չի նայի։

Այս խոսքերն ազդում եյին, և Սրապիոնը խոստանում եր, վոր լավ կվարի, թող Ցեղսի աղին հանգիստ լինի... Այնուհետև Ցեղսի աղին—բարձրահասակ, սևազգեստ ու սև շալը թևին—գնում եր մի ուրիշի մոտ, թե՝ Սրապիոնը վարելու չի իր հողը, թող նա յել պա ցանի ու տափանի... Ցեթե այդ մեկը դժկամություն եր ցույց տալիս, հիշեցնում եր Բագվում աշխատող վորդուն կամ յեղբորը և իր ինջինևրին, վոր լավ աչքով չի նայի նրանց։ «Լավ, աղի ջան, կանենք»,—ասում եր դժկամակողը մեղմացած։ Այդպես եր լինում և՛ քաղհանին, և՛ հնձի և՛ կալի ժամանակ։ Ցեղսի աղին իր հողերն ու բոստանը վարում-ցանում եր բոլորից վաղ, հավաքում եր բոլորից շուտ։ Ամենքը կատարում եյին նրա ցանկությունը, վախենալով, վոր նրա վորդին՝ ինջինևրը Բագվում կարող է վատ աչքով նայել իրենց պարբերներին... Բայց լինում եյին և այնպիսիները—տարեկան մի քանի հոգի միայն—վոր խուսափում եյին Ցեղսի ազու դիմումներից կամ ձգձգում եյին նրան տված խոստումը,—այդպիսիներին Ցեղսի աղին զրկում եր բարյացակամությունից,

կանչում էր սիրացու Մարկոսին (վորի վորդին նույնպես բազվում էր ծառայում) և ասում. «Տիրացու, մի թուղթ բեր, ինչինեբիս նամակ գրի»... Տիրացուն, վոր թուղթն իրանից ձրի քարտուղարությունն էր անում, թանաք ու թուղթ էր բերում, վրաս մեղանի յերեսին և սպասում Յեղսե ագու թելադրանքին։ «Գրի,—ասում էր Յեղսե ապին, քթախոսի տուփը հանելով,— գրի ինչ վոր կարգն ա, հետո յես կասեմ...»։ Տիրացուն գրում էր սովորական սկիզբը. «սիրելի իմ վորդի... Նախ և առաջ մենք կանք... սուս ասածած, վոր դու յել լինես... Յեթե կհարցնես մեր վորպիսությունքը»... Գրելով այսքանը՝ սիրացուն կարդում էր բարձր, վորից հետո Յեղսե ապին ավելացնում էր. «Հա, յեթե կհարցնես մեր վորպիսությունքը—մենք լավ ենք. բայց Ակոբջանանց Ղուկասն ես յերկու որը ինձ շատ բարկացրեց... Գրի՝ քոսոտ եշը չտավ, վոր ագունը ջահացը տանենք... Գրի՝ նրա սիսպոր տղա Լազարին գործից դուրս քցի»... Կամ՝ գրել էր տալիս.— «Բազումնց Զինավորի հետ ես տարի արաղ քաշեցինք։ Անամոթը թունդը վերցրել ա իրեն, անպետքը տվել ինձ... Աբրհամի տղա Մաթիկոնը սրա վեսան ա... Սա—գործից դուրս անեն»...

Վոչ-վոքի գործից դուրս չելին անում, իհարկե. վորդին նրա այդ դիմումները թողնում էր անպատասխան։ Բայց գյուղացիներին ազդում էր այդ սպառնալիքը (մանավանդ յերբ սիրացուն պատմում էր գրած նամակի բովանդակությունը). նրանք վախենում էին և տալիս էին գործը։ Յեվ գրանից էր, վոր գյուղում սովորույթ էր գարձել.—յեթե Յեղսե ապին մի բան էր ասում, պետք էր կատարել

Մի անգամ, սակայն, Յեղսե ապին անհաջողության հանդիպեց, վորը նրան շատ վրդովեց...

* * *

Ամառային մի շոգ որվա Յեղսե ապին, ինչպես միշտ, բարձրահասակ, սևազգեստ, ծանր ու հանդարտ գնաց Պալասանց Հոռոմի տունն՝ նրա տղին՝ Սամսոնին տանելու, վոր գա բանջարանոցը ջրի։ Սամսոնը, վոր մի քանի տարի աշխատում էր Բազումում, մի ամսով յեկել էր գյուղ՝ հանգստանալու։ Յեղսե ապին նրան տեսել էր արդեն և մորը շնորհավորել. միաժամանակ հետաքրքրվել էր Հոռոմից, թե Սամսոնը «բան» բերե՞լ է արդյոք։ Իմանալով՝ բերել է, Յեղսե ապին ակնարկել էր, թե այդ ամենի համար պարտական են, իհարկե, իր ինջինեբին։

— Քանի նա Բազումն է,—ասել էր նա Սամսոնի մորը,—մեր գեղի տղերքը գոռտրկ տուն չեն դա։

— Շնորհակալ ենք, Յեղսե ապի, հասատատ միտս...

— Ջե, Հոռոմ ջան, ինձ մի ասի, ինձ մի ասի. ինջինեբիս որշնի, վոր ձեր տղերանց գլխից անպակաս լըլի,— ասել էր Յեղսե ապին ու թվել, թե գյուղից ովքեր են «ինջինեբի սայից» հաց ուտում։

Յեղսե ապին լավ հիշողություն ուներ. մատների վրա հաշվելով, թե ում հերթն է գործ կանչելու, հանկարծ մեկն ընկավ Սամսոնը։ Յեվ այժմ գնում էր ու մտածում, վոր Սամսոնը պարապ է—կգա, մանավանդ վոր նրա մայրը վաղուց, քաղհանից հետո, իր համար բան չի արել։ Մտածելով Սամսոնի մասին՝ Յեղսե ապին զարմանում էր, վոր նա, ուսառելությունից զարձող

այս աղանների նման, կլորակի ոլորը չկեղեցի չի դալիս և, ինչպես պատմում էին, շարունակ գնում է գետափի ավաղների վրա պառկում մերկ կամ անտառի չեվուտում մեկնված վիրք և կարդում: Այդ բոլորը շատ տարօրինակ էր թվում Յեղսի ապուն. «Աստ ուտուդենա ես, ինչ ես, վոր վիրք ես կարդում, — զարմանում էր նա.— կամ թե ակլոր ինչի՞ ես պահում ավազների վրա: Դա ինչ բան ա...» Ու մտածում էր այդ մասին էլ խոսել Սամսոնի կամ մոր հետ:

Հոռոմը՝ գլխարոր կապած մի նիհար կին, շամքին նստած՝ լոքու վոչխարները շարում էր թելի վրա: Նկատելով՝ Յեղսի ապին դեպ իրեն և գալիս՝ նա հարգանքով վեր կացավ կիսով չափ և հիշելով ամառը յերկու անգամ կատարած քաղհանը՝ ամով մտածեց, թե չլինի պատավը նորից քաղհանի յե կանչելու:

Յեղսի ապին ծանրաքայլ, հանդարտ առաջ յեկավ և անխոս, յեպիսկոպոսի նման, դլխով բարևեց Հոռոմին: Բարևն առնելով՝ Հոռոմը վազեց նեթս աթոռ բերելու:

— Շնորհակալ եմ, Հոռոմ Ջան,— ու Յեղսի ապին, փեշերը հավաքելով, ծանր նստեց Հոռոմի բերած աթոռին և խաղաղ նայվածքը պատից բակում:— Լորի յես շաբուն, հա... վոնց ա լորիդ ես տարե...

Հոռոմը գանգատվեց, վոր լորին լավ չի այս տարի, իսկ կաղամբի վրա շատ թրթուռ կա:

— Իմն էլ մի բան չի,— ասաց Յեղսի ապին, ու նորից շուրջը նայեց:— Ուրիշ վոնց ես: Սամսոնը վոնց ա: Վաղուց ա չեմ տեսել: Դեռ պիտի հիան, թե շուտով դնալու յա:

— Չի, ապի Ջան, դես յերկու շարաթ էլ կմնա:

— Հա. էլ լավ ա, վոր մնում ա. կմխիթարի քեզ: Ինչ ինես ա՝ վոր մի չի գալիս տեսնի՝ սաղ ես, մեռած: Շատ ապրի. լավ ա անում, վոր մնում ա: Տղեն եզպես կըլի...— Ու նորից շուրջն և նայում, տանը:— Գիտես, Հոռոմ Ջան, ինչի յեմ յեկել: Բոստանս չորացել ա: Ասում եմ մի գա՝ ողավարի ջրի, քանի ջուրը ազատ ա:

— Խի չե, ապի Ջան, խի չե... Կգա: Վոր քու խաթրին էլ չպահի, ում խաթրը պիտի պահի:

Յեղսի ապին դժվեց.

— Իմ խաթրը չե, Հոռոմ Ջան, ինչինելիս խաթրը... Վոնց վոր ինչինելս լրանց ա ոգնում գալիս բուխյան մեջ, թող լրանք էլ մի բերան լինեն ոգնեն, վոր ինչինելս իմանա ենանց՝ ուրախանա. .

Խոսակցության մեջտեղին անից դուրս յեկավ Սամսոնը՝ մոր նման մի նիհար տղա, գեմքը չհյոտ ու յերկար. գլուխը բաց էր, մազերը, տակից խուզած հագի քաթանե բլուզը անզոտի յե ու ճմռթված, և ձեռին էլ մի գրքույկ կար: Յերեսում էր մնջքին պառկած կարգալիս և յեղել: Նա դուրս յեկավ, շամքում կանգնեց մի պահ և կողքանց նայեց Յեղսի ապուն, վոր վեհ ու խրոխտ նստել էր բարձր աթոռին, և մորը, վոր փիշերը գետնին փռած՝ խոնարհել էր նրա առաջ և ակնածանք ու հարգանք դրսևել:

— Բարով, Սամսոն Ջան,— շուռ յեկավ Յեղսի ապին գեպի շամքը:— Վոնց ես, այ տղա: Բա մի բարով, աստծու բարին էլ չկա... Մի ես ասում մեր Յեղսի ապին ածղ ա, մեռած: Մի որ չես գալի տեսնես վոնց եմ: Բա ինչինելս եզպես ա ձեզ համար...

Սամսոնն էլի կողքանց, թռչունի պես մի աչքով նայեց Յեղսի ապուն:

— Ի՞նչ կա վոր, Յեղսի ապի։

— Հեչ, գու սաղ ըլես, ինչինևբս սաղ ըլի, Սամսոն ջան։ Բաստանս չորացել ա։ Ասում եմ՝ գաս մի քիչ ջրես ոտավարի... Ուրիշի կասեի, բայց բոլորն էլ գործի տեր են, համ էլ նրանք շատ են բան արել։ Մի որ էլ, ասի, մեր Սամսոնն ինձ ոգնի,—դարձավ Յեղսի ապին Հուսմին,—ինչինևբս նրան շատ ոգնած կըլի...

Սամսոնը դարձյալ թռչունի պես կողքանց, մի աչքով նայից Յեղսի ապուն և ձախ ձեռը կանթից մինչքին.

— Ասում ես գամ ջրեմ...

— Չա, ոտա ջան, հա։ Բանը վեր կալ—պնանք։

— Ե, ինչո՞ւ պիտի չես գամ վոր, Յեղսի ապի. ինչու համար, հլա ասա տեսնենք,—ասաց Սամսոնը կես հանաք, կարծես, կես լուրջ։

— Ինչո՞ւ։—Յեղսի ապին տարակուսած նայից նրան։—Ինչինևբիս խաթրու։

— Ինչինևբիդ խաթրո՞ւ...

Յեղսի ապին դարձյալ տարակուսած նայից նրան։ Այդ ձևի հարցերը նրան տարօրինակ էլին թվում։

— Ինչինևբիդ խաթրո՞ւ,—կրկնից Սամսոնը, և նրա կապույտ աչքերում ու չեչոտ յերեսին խազաց մի նենգ ժպիտ։—Լավ ես ասում, Յեղսի ապի։ Բա ինչո՞ւ քու ինչինևբը չի գալիս իմ խաթրու մի որ մեր բոստանը ջրի...

Յեղսի ապին հոնքերը պռասեց ու զքվից։

— Վռնց թե...

— Չա ելի. իմ խաթրու թող գա մի որ մեր քաղհանը անի, խմորը հունցի, վոնց վոր մերս ա ոտում քեզ համար...

Յեղսի ապին անհամ կոպկրը թարթից. սկզբում՝ մի վայրկյան նրան թվաց, թե Սամսոնը հանաք և ասում, ուզից նայնիսկ ժպտալ, բայց իսկույն էլ լըրջացավ և ժանր սուր աչքերը հառից Սամսոնի յերեսը. նայից նրա չեչոտ դեմքին, քաթանե վերնաշապկին, ձևի պըճին ու տնքաց.

— Լավ։ Եսենց ես ինչինևբիս պատիվը պահում... Ամեն քեզ, Սամսոն ոտա, ամեն... Եվ էլ ինչինևբիս լավությունը՝...

Սամսոնը ժպտաց.

— Ի՞նչ լավություն...

— Բա են վոր բազվում ծառայում, վոր ես աշխատում՝ ում շնորհի յա...

Սամսոնը ծիծաղից։ Մայրը, զուկը դցած, աչքավունքով եր անում նրան՝ ձեռը բերանին դնելով, վոր լռի, վոր վատ խոսքեր չասի։ Բայց Սամսոնը մորը չեր նայում. նա ժպտում, ծիծաղում եր ձեռը կոպկին կանթած։ Յեվ այդ ժպիտը, ծիծաղը դուր չեր գալիս Յեղսի ապուն։ Ու նա տաքացավ ավելի

— Չը՞, դե ասա տեսնեմ ո՞ւմ շնորհի յա...

— Ո՞ւմ շնորհի, —առաջվերը բայ արավ Սամսոնը։—Ի՛մ շնորհի յա, ապի ջան, իմ շնորհի... Բուրաստվոյ մաստերի մոտ աշխատում եմ—վոչ են տալիս, չեմ աշխատում—չեն տալիս։ Բա... Իսկ ինչ վերաբերում է քու բոստանը ջրելուն—կգամ, իսկ չեմ գա, ապի ջան. քու ինչինևբը գա մեր բոստանը ջրի, նրանից հետո էլ չես կգամ ձեր բոստանը կջրեմ. իսկ չեմ գալ..

— Ջենդ կարի, ձենդ կարի,—ձայնը բարձրացրեց Յեղսի ապին։—Ինչինևբս քու թայը չի, ավաբա՜...

Հարևան կանայք, աղջիկները, վոր հետաքրքրու-

թյամբ հետևել էին, թե ուր և գնում Յեղսի ապին,— այժմ տներից, բակերից դուրս եկած, հարդալեր հեռավորության վրա, ականջ էին դնում նրա ու Սամսոնի խոսակցությանը, որ հետզհետե դառնում էր բարձրաձայն։

Յեղսի ապին տաքացավ. նա չերբևք այդպիսի խոսքեր չէր լսել իր և ժողովրդի հասցեին. նստած տուղը շնչեց քթածակերով, շուրթերը հուզ տված նայեց Սամսոնին, նայեց հավաքված հարևաններին ու մեկին չելավ տեղից։

— Լավ,— մատը թափ տվեց նա,— լավ, Սամսոն ապա։ Որ եղպես ա՝ հենց եսօր ինչիներիս գրեմ՝ գործից դուրս քցի քեզ։ Հենց եսօր...

Սամսոնն էլի ծիծաղեց.

— Գրի, ապի ջան, գրի ինչքան ուզում ես...

Յեղսի ապին, որ մի քանի քայլ էր արել արդեն, Սամսոնի վերջին խոսքերի վրա, յետ դարձավ հանկարծ ու մատը թափ տվեց նորից.

— Լավ, Սամսոն ապա. հնպես բան անեմ, որ էլ վոտդ Բագուն չտեսնի. լավ...— Ապա հանդարտ դարձավ Հառումին։— Էդ տեսնում ես, Հառում. տղեդ գրքեր ա կարդացել, անախորժություն դառել։ Յեթե ինչիներիս գլուխը մի բան ա չեկել՝ տունդ գլխիդ փուլ կածեմ...

Նա արագ շուռ եկավ ու քայլեց արագ։

Հավաքված հարևանները՝ մարդ, կին, աղջիկ՝ յերկյուղով նայեցին դայլայած Յեղսի ապու յետևից, մըտածելով, որ դրա վերջը վատ կլինի Սամսոնի համար։

Նույնը մտածում էր Հառումը՝ ծնկանը խրելով։

Իսկ Սամսոնը միայն ծիծաղում էր։

* * *

Յեղսի ապին տունն յեկավ բարկացած և անմիջապես մարդ ուղարկեց տիրացու Մարկոսի յետևից։ Յեվ յերբ տիրացուն յեկավ՝ նա, ժողովուրդ անուշով, թե լացրեց մի նամակ, ուր, ի միջի այլոց, գրել տվեց. «Յեղիա մեր վարպետությունից հարցնես, յես կասեմ քեզ, որ Պալոսանց Հառումի տղա Սամսոնին գործից դուրս պիտի անախորժություն ա դառել։ Կանչեցի բոստանը ջրելու վրէ մեկն չեկավ քոռ մահի տարածը, հլա պես պետռ խոսքերով անպատվեց քեզ... Եսպես-ենպես... թե թող քո ինչիները պա իմ բոստանը ջրի... Սիտեն ջան, հնպես արա, որ նրա վոտն էլ Բագու չտեսնի...»։

Նամակն ուղարկելուց հետո՝ Յեղսի ապին համոզված էր, որ Սամսոնն էլ Բագու չի կարող գնալ, և այդպես էլ ասում էր ամենքին։

Բայց յերկու շաբաթ չէր անցել, լսեց, որ Սամսոնն արդեն Բագու յի գնացել։

— Թող գնա. յերկու որից յետ կգա. էլ նա Բագու չի տեսնի...

Բայց անցան շաբաթներ, ամիսներ— Սամսոնը յետ չեկավ։ Ընդհակառակը, խոսում էին, որ նա գործ էլ իր գործին և, «բուրավոյ մաստերի» մոտ, և մոր համար նորից վոզ և ուղարկել։ Այս անգամ Յեղսի ապին մի նոր նամակ գրեց ժողովուն, թե ինչու իր խնդիրքը չի կատարել—ինչու Հառումի տղին թողել և նորից գործի մտնի։ Ինժեներից պատասխան յեկավ. բայց Սամսոնի մասին ոչինչ չէր գրում, այլ խնդրում

եր եկիր վար ալին թողնի տունն ու բնականը և գա իր մոտ...

Յեղակ ալին գարձյալ չկնաց, ու վոչ ել պատասխանեց վորդու նամակին։ Յեվ մի որ ել, աշնան մի ցուրտ որ, պառկեց անկողին։ Տերտերն ու ախրացուն գրեթե ամեն որ այցելում էին նրան ու խորհուրդ տալիս, վոր լավ կանի վորդու մոտ գնա, կամ, չեթե ուզում է, վորդուն կանչեն։

— Չեմ ուզում, տերտեր ջան։ Չե՞ Եղիան վորդուս մոտ գնալ չեմ ուզում։ Քանի վոր նա իմ խոսքը գնահատը ավել—են անախորժելուն դուրս չբզեց— յես ել նրա մոտ չեմ գնա...

ԿԱՏՈՒՆԵՐ

I

Ամեն մարդ առհասարակ սիրում է մի բան. մեկը ձագերի, մյուսը՝ թռչուններ, յերրորդը՝ յերեխաներ։ Մարդ ել կա՝ գրքեր։ Իսկ նկարիչ Թաթոսը սիրում էր միայն կատուներ։ Յեվ վոչ միայն ինքը, նրա կինը՝ սիրելին Նաթելը նույնպես, ամուսնու հավասար, սիրում էր այդ «տանու կենդանիներին», ինչպես նա ինքն էր անվանում կատուներին։ Յերբ, վոր ժամին ել մտնելիր նրանց տուն—քեզ կդիմավորեր կատուների մի ամբողջ յերամ. մեկը դուրս կգար թախտի տակից, մյուսը՝ մահճակալի, յերրորդը կյատակեր լուսամուտից, չորրորդը դուրս կթռչեր պահարանի կիսաբաց դռնից, հինգերորդը հարևան սենյակից... այսպես մինչև ութ-ինը կատու—դեղին, սև, մոխրագույն, սև ու սպիտակ կամ վագրի պես սև շերտավոր, մեկը մյուսից մեծ, մեկը մյուսից հետաքրքիր՝ քեզ պիտակոս, ճանաչելու կհատուցին, կքսվեյին վարտիքիդ տուտերին, կոշիկներիդ. յեթե վռնտեր վրա կանգնելով՝ կճգվեյին գետի ձեռդ, սպասելով՝ արդյոք ուտելիք չե՞ս տա իրենց... Յերբ նստեյիր՝ նրանք, շրջան բալորած, կնըստեյին յեթե թաթերի վրա ու կնայեյին քեզ անհամբեր ունկնդիրների նման կամ՝ կթվար ուզում են ուսումնասիրել քեզ, թե ինչ բնավորության տեր ես—

բարի՛ լեա, չա՛ր... Ու լեթե ձեռդ քսելիր մեկի մեջքին, իսկույն կթուչներ ծնկանդ վրա ու պոչը կբարձրացներ փաղաքշանքի համար: Ինչ հետո՝ պրան կհետևեր մի ուրիշը—կնատեր մյուս ծնկանդ և նուչնալես կսպասեր շոյանքի... Ապա յերբորդը, չորերդ ճանկռտելով, կբարձրանար ուսդ. չորրորդը կկախվեր թևիդ...և այլն: Այդ նշան ևր, որ դու բարի յես, իսկ տանտերերի կարծիքով՝ կնշանակեր կատուները սիրեցին քեզ, ու ինքդ կդառնայիր տանտերերի սիրելին... Իսկ յեթե կատուները չմոտենային կամ պարզապես խրտնեյին—տերերը քեզ կհամարեյին չար մարդ, որ կատուներն անդամ հոտկռտում են այդ ու չեն մոտենում:

Բայց յեթե նկատեյին, որ կատուները մոտենում, մոնրմռնում են քեզ, իրենք՝ մարդ ու կին կգրկեյին նրանց մեկ-մեկ ու կխայտխայեյին:

— Ջանի՛կս, ջանի՛կս...

Ու կհամբուրեյին նրանց դլուխը, դունչը: Կպատմեյին դանազան դեպքեր մեկի կամ մյուսի կյանքից. կպատմեյին հիացած, սքանչացած, աշխատելով, որ դու ևս հիանաս նրանցով:

Ամուսիններից, ասկայն, հատուկ խնամքով եյին վերաբերվում մայր կատվին, որի անունը Շամո յեր. մյուսներին սիրում եյին, բայց նրան տալիս եյին առանձին պատիվներ: Ամեն որ նրա համար գնում եյին վոչխարի սպիտակ թոք, յերբեմն տալիս եյին կաթը, իսկ մյուսներին՝ ինչ պատահեր... Շամոյին խնամքով եյին վերաբերվում այն պատճառով, որ իրենց առաջին կատուն եր և վորովհետև վերջերս նրան մեծ դժբախտություն եր պատահել: Մի քանի որ նա կորած եր. նկարիչը վորոնելով գտավ խոհանոցի մի քունջում

չորս ձագ կողքին, վորոնք դեռ կույր եյին: Այդ տեսնելով՝ նկարիչն ուրախացավ, հաց թրջեց, հում միս վերցրեց ու տարավ խոհանոց, և մի կես ժամ չափ այնտեղ նայում եր կույր ձագերին, աշխատելով գուշակել, թե ի՛նչ գույնի կատուներ են լինելու նրանք: Շամոյին կերակրելուց հետո՝ նա դուրս յեկավ խոհանոցից. բայց հազիվ նստել եր աշխատանքի, հանկարծ ստրոբինակ ազմուկ լսեց խոհանոցից—կատվի կատաղի փշաոց և հուզված մռռոց: Յենթադրելով՝ մյուս կատուներն են մտել այնտեղ, կանչեց. «Աբի՛, աբի՛, աբի՛»... (Այդպես եյին կանչում ամուսինները կատուներին): Նրա ձայնի վրա բակում յեղած կատուները ներս թափվեցին լուսամուտներից, բայց փշաոցն ու մռռոցը չդադարեց խոհանոցում, այլ ընդհակառակը, ավելի սաստկացավ: Նկարիչն ստիպված յեղավ գնալ խոհանոց: Գնաց և ի՛նչ տեսավ—շունը մտել եր խոհանոց և պոչը տնկած մռռում եր կատվի վրա, իսկ կատուն, խոհանոցի մեջտեղը կանգնած, մեջքն ուռցրած, բացած ճանկերով թաթը բարձրացրել եր շան դեմ և, թվում եր, ուզում և թռչել շան վրա... Ձեվ իսկապես. հենց վոր նկարիչը վոտը դրեց խոհանոցի շեմքից ներս, կատաղվեց անսպասելի բան. Շամոն, արդյոք սիրոջ ներկայությունից սիրտ առնելով, թե արդեն շատ պրպված լինելով, կայծակի արագությամբ՝ մի թռիչքով ցատկեց տեղից, ընկավ շան վրա ու գիշատիչի մոլեգնությամբ, սկսեց ճանկռտել նրա գլուխը, ականջները և, դժվար եր տեսնել, թե ել վնրտեղը—այնքան արագ եր գործում նա շան վրա: Շունը կլանչ-կլանչում եր և չգիտեր ինչ անել: Փախչեր դուրս—նկարիչը շեմքում կանգնած եր, ուստի, գլուխը

կոբցրած, կառուն մեջքին պառավում էր խոհանոցում ու կլանչում ալխոտով։ Կառապն, չհոնված տեսարան էր և այնքան անակնկալ, որ նկարիչը չէր իմանում ինչ անել։ Շունը շատ դես ու դեն ընկնելուց հետո, վերջապես, մտավ սեղանի տակ. կառուն, սեղանին դիպչելով, յաակից յած ու վազից ձագերի մատ։ Իսկ շունը նկարչի վոտների արանքով փախավ դուրս։ Նա փախավ, բայց կառուն սատկիկ անարևկված էր— կողերը բարձրանում-իջնում էին, վոտները դողում. բերանը բաց պառկից ձագերի կողքին ու սկսից լիզել նրանց։

Այս բոլորը կատարվից այնքան արագ, որ նկարիչը ժամանակ չունեցավ մի բան անելու։ Բայց յերբ շունը վախավ՝ սկսից, ձեռը կառվի մեջքը քսելով, վերթարել և սիրտ տալ նրան

— Վոչինչ, վոչինչ...

Դեպքից անցել էր յերկու թե յերեք որ, մի առավոտ Շամոն փափուկ-փափուկ քայլերով մտավ նկարչի սենյակը և սկսից ախուր մռռոցով, կողերն ու դունչը քսել նրա վոտներին, հետո բարձրացավ ծնկներն ու դունչը դիպցրից ձեռներին։ Ու ամեն անգամ նրան քավելով թե դունչը նրա ձեռներին դիպցնելով՝ Շամոն իջնում էր սիրտ ծնկներից և մի յերկու քայլ անում դեպի դուռը, նորից չհետ դալիս, կարծես կանչում էր սիրտը՝ իրեն հետևելու... Այդ մի քանի անգամ կրկնվելուց հետո, վերջապես, նկարիչը, վոր լավ գիտեր, թե ինչ է նշանակում կառուների այս կամ այն շարժումը, հասկացավ, վոր կառուն իրեն կանչում է։ Մարդ ու՝ կին գնացին նրա յետևից։ Շամոն գնում էր, յետ դառնում, նայում տերերին և նրանց վրա ուրախությունից պոչը շարժում։ Տեսավ, որ նրանք հետևում են իրեն։ Բայց մայր-կառուի անհանգստությունն այնպիսի չէր, վոր Թաթոսին ու Նախիլին շատ հետաքրքրեց, և նրանք հետևեցին նրան, տեսնելու թե ինչ կա կառուների այս կամ այն վարմունքն առհասարակ նրանց շատ էր հետաքրքրում։

Յերբ ամուսինները մտան խոհանոց, Շամոն թռավ-բարձրացավ իր բունը և ձագերից մեկին՝ վրից բռնած բերից-դրից նկարչի վոտների մոտ, հետո բերից յերկբոդ ձագը և նույնպես դրից սիրտ վոտների մոտ՝ առաջին ձագի կողքին, ապա բերից յերրորդը, չորրորդը։ Բոլորին յած գնելուց հետո՝ նա կանգնեց ու խեղճ-խեղճ, կարծես սեղավոր թե ապերասող հայացքով, նայեց ձագերին, տերերին... նայեց, նայեց սիքանի անգամ ու ախուր մլավեց... Ամուսինները բան չհասկացան։ Կառուն շարունակեց փոխե-փոխ նայել ձագերին ու տերերին և ախուր մլավել։ Այս անգամ մարդ ու կին կռացան, վերցրին ձագերին ու սկսեցին վայելել... Այն հանդամանքը, վոր Շամոն վոչ մի կերպ չընդդիմացավ ձագերը վերցնելուն, նկարիչն ու կինը մտածեցին, թե մի բան կա, վոր նա ձագերը տալիս է իրենց. ուրիշ ժամանակ հազիվ է մոտ թողնում. այսոր ինչ է պատահել արդյոք։

Բան չհասկանալով՝ նրանք փոքրիկներին զրին յած, և այժմ նկատեցին, վոր նրանց աչքերը բացվել են և նրանք թռչել են, նիհարած (քանի որ առաջ, նրանք ավելի լավ տեսք ունեցին) և, բացի դրանից, շարունակ մլավում էին և կախվում մոր սաինքներից։ Բայց մեկը հազիվ բերանները դրած՝ մյուսն էին բերան առնում։ Մայրը թռչել էր տալիս, վոր մտածեն,

ձձեն, բայց ինքը մլավում եր պաշտպել ու տերերին նայում։ Իսկ փոքրիկները շարունակ անհանգիստ քըրքըրում եյին մոր կուրծքը, ասես մի բան գտնելու...

Այդ տեսնելով՝ նկարիչը բացականչեց.

—Ա՜խ չունե՛ խեղճը...

Յեվ, իսկապես, Շամայի կաթը, ինչպես վերջը պարզվեց, շատ հետ կավելուց հետո՝ ցամաքել եր վոտից։ Տեսնելով, ուրեմն, ձագերը թուլացել են սովից և ինքը կերակրել չի կարող—դիմում եր տերերի ողնութեյան։

Նկարիչն ու կինը կաթ ճարելի և ավին ձագերին։ Բայց մեծ դժվարութեյամբ եյին կարողանում ուտեցնել նրանց. դունչերը մոտեցնում եյին ամանին, սակայն փոքրիկների բեղիկներն եյին թրջվում միայն և նրանք, մռութները թափ տալով, կաթի ցայքունը շաղ եյին տալիս նկարչի ու կնոջ վրա—նրանց շորերին, ձեռներին, յերեսին։ Տեսնելով փոքրիկները այդպես չեն ուտում, ամուսինները հնարեցին կերակրելու նոր յեղանակ.—Թաթոսը բռնում եր կատվիկներից մեկին, բերանը բանում, իսկ տիկին Նաթելը՝ թեյի դդալով կաթ եր լցնում։ Շուտով, սակայն, այդ միջոցն էլ անհարմար նկատելով, ձեռք բերին սեռին պատուկ, անցրին գա մի փոքրիկ շշի պլատ և սկսեցին այդուհետև պրանով կերակրել։ Այս բոլոր զոհողութեյուններին ներկա յեր լինում մայր-կատուն ինքը, և յերբեք պզտիկութեյան չեր հայտնում։ Թեթև անհանգստանում եր միայն, յերբ տեսնում եր ձագերից մեկն ու մեկը չի կարողանում պատուկը ձձել բայց յերբեք չեր բարկանում. այլ ընդհակառակը, յերախատուգիտ աչքերով հետևում եր այն բոլոր շարժուձևերին, վոր անում եյին տերերը։

Յերբ կերակրումը վերջացնում եյին, Շամոն ձագերին, նրանց վրի մորթուց բռնած, մեկ-մեկ առնում-առնում եր բունը, հետո այնտեղ պառկում եր ինքը՝ ձագերին կողքն առած։ Տաքացնում եր նրանց իր մարմնով, փայփայում թաթիկներով և լիզում նրանց մեջքը, գլուխը, կուրծքը...

II

Փոքրիկ կատուները կամաց-կամաց աշխուժացան և, քանի վոր տերերի ձեռքով եյին կերակրվում, կարճ ժամանակում մոերմացան նրանց. և այնուհետև ուր նրանք գնում եյին՝ հետևում եյին, ուր նստում եյին՝ թռչում եյին նրանց գրկը կամ քսվում եյին նրանց շորերին ու վոտներին, վոր շոյեն իրենց։ Յեվ նկարիչն ու կինը շոյում, փաղաքշում եյին նրանց, ու իրենց զգում հպարտ, գրեթե չերջանիկ յերբ փոքրիկները՝ մորը թողած՝ փայփայանք եյին փնտռում իրենց մոտ։ Նրանք վերցնում եյին ձագերին, ձեռները քսում նրանց գլուխը, մեջքը. խաղում եյին հետները՝ յեթեն վոտների վրա կանգնեցնելով կամ պոչերը քաշելով. հետո՝ ուզղակի խանդաղատանքով՝ վերցնում եյին ու համբուրում։

Դժվար և ասել—մարդն էլ ավելի սիրում պրանց թե կինը. գուցե յերկուսն էր հավասար. բայց և այնպես, յերբ կատուների մասին խոսք եր լինում, միշտ ասում եյին.

— Թաթոսի կատուները...

Ինչպես մյուս կատուներին, այնպես էլ փոքրիկ-

ներին նրանք անուններ դրին — «Մատաոն», «Նապո», «Դապո» և չորրորդին, որ կապիկ էր՝ «Այչի»... Որոշեցին (դույլ կազմելու հնարանքով) մեզ էր դալիս աղբկա նպատով։ Փոքրիկ կատուների մեջ կար մեկը, սակայն, որին ամուսիններդը սիրում էին ամենից ավելի — դա Մատաոն էր՝ ուռներն ու վիզը ճերմակ, իսկ մեջքը մուգ-մոխրագույն ու սև շերտերով. դա բոլորից դեղեցիկ էր, շատ ժիր, ճարպիկ ու չարաճճի։ Կպատահեր, որինակ, նկարիչը գրազված կլիներ վրձինը ձեռին — Մատաոն կխեթաթ թաթով կզարկեր նրա ձեռին ու կկանդներ, կսպասեր, որ նկարիչը գործը թողնի և խաղա հետը։

— Դե լավ, սպասի՛ր, սպասի՛ր,— կասեր նկարիչը։

Բայց Մատաոնը չէր սպասում. նա նորից թաթով զարկում էր նկարչի ձեռին ու չարաճճի աչքերով նայում, թե ի՞նչ և անելու։ Ձերը նկարիչը չէր լսում, նա խաղը շարունակում էր այնքան ժամանակ, մինչև որ Թաթոսը կարվում էր գործից ու դրկում իրեն։

— Սավաշ՛կ, ավազա՛կ,— ասում էր նա, կատվի առաջին թաթերն իրար զարկելով։

Ու խաղամ էր հետը. գնդակը գլորում էր հատակին, Մատաոնը վազում էր բռնում. մյուս կատվիկները նույնպես գալիս-միանում էին խաղին, ու սկսվում էր մի անպին իրարանցում—բոլորը միասին թռչում էին աթոռների վրա, մանում մահճակալների տակ... Յոհաննեսից գալիս էր ուրիկն Նաթելը, հավաքվում էին և մյուս կատուները՝ փոքրիկի խաղը դիտելու։

Յերբեմն փոքրիկները, մեծերի նման, դուրս էին գալիս բակում՝ ծառերի տակ գրոսնելու. մանում էին

թփերի ու կանաչների մեջ, պատրում էին պատերի տակ՝ արևից անելու կամ գարան էին մտնում ծիտ որոնելու. մայր կատուն սովորեցնում էր ձագերին ինչպես պետք է որս անել։— Մի անգամ ծառի մի անթև ճուտ էր ընկել ընից, Շամոն հոտած բռնեց, բայց չկերավ։ Ճուտը ծլծլում էր, մայր-ծիտը թռթռալով պտտվում էր կատվի շուրջը՝ ձագին ազատելու... Բայց Շամոն ճուտը չէր ուտում. նա, աչքը մայր-ծտի վրա, ծլծլացնում էր բերնով բռնած ճուտը, որ մայրը ավելի մոտենա, որպեսզի նրան ևս բռնի։ Յեվ փոքրիկ կատուները մոր հետ դիրք մտած՝ պատրում էին մայր-ծտի մոտենալուն։ Յեվ յերբ նա այնքան մոտեցավ, որ կարելի էր բռնել, Շամոն բերանի ճուտը դցեց հանկարծ ու հարձակվեց մոր վրա, բայց... բռնել չկարաց. իսկ մինչ այդ, կատվիկները բռնեցին գետին ընկած անթև ծտին ու վազեցին տուն... Մեկ-մեկ էլ փոքրիկները, մեծերի նման, որս անելու հավար, բարձրանում էին ծառերը և, չկարողանալով իջնել, մնում էին։ Այդ լսելով՝ տիկին Նաթելը կանչում էր խնդալով.

— Աբի՛, աբի՛ աբի՛...

Կատուները ու կատվիկները խնդում էին՝ թփերի միջից, ծառերի վրայից, պատի տակից—խմբով թռչում էին իրար յետևից, խուժում լուսամուտից ներս, դուրս էին իրար յետևից, սպասելով, թե ի՞նչ և անելու... Բայց նախ քան վերև բան տալը՝ տիրուհին ասում էր.

— Չը՛, բան եք ուզում հա... դե, սպասեցեք, բերեմ...

Կատուները յետևն թաթերի վրա—շարքով նըստում էին լուսամուտի գոգում և իրենց գծավոր աչ-

քերով հետևում ամրուհուն, իսկ մեքանչիսը բերանները թեթևակի բանալով՝ դունչերը մաքրում էին լեզվով։

Քնում էին կարպետի կտորների կամ հատուկ մինդաբների վրա՝ լուսամուտի գոգում, սեղանին կամ հատակին։ Մաստանը, իր մինդարից բացի, ուրիշ տեղ չէր քնում. չէթե այդ մինդարը տեղը չէր լինում, փընտռում-գտնում էր և առաջներով բանած՝ քաշ տալիս իր անկյունը ու... պառկում գլուխը փորին դրած։ Աստվոտները նա զարթնում էր շան հաչոցից. աչքերը բանալով նայում էր շուրջը, ձգվում էր՝ յերկարշամ, յերկարշամ... հետո մեջքն ուռցնում-դարձնում էր ուղտի սապատ, ապա լեզվով դունչը մաքրելուց յետը՝ թաթերը քսում էր մազերին, բեղերին ու թռչում լուսամուտը. լուսամուտից նայում էր դուրս, այն կողմը, ուր կապված էր լինում շունը, վորը ցերեկը մինչև հաջում էր իր վրա և վորին յերազում տեսնում էր յերբեմն իր յետևից վազելիս... Նայում էր Մաստանը, տեսնելու, թե նա չի չքացել արդյոք... վորովհետև մի քանի ժամանակ առաջ նրա տեղը կար մի բարկացկոտ շուն, վորը մի առավոտ Մաստանը տեսավ չքացել էր հանկարծ։ Այդ օրը Մաստանը շատ ուրախ էր. նույնիսկ մտավ շան բունը, բայց ծանր հոտից դուրս յեկավ գլուխը թաթ տալով... Մի քանի որ հետո կորած շան փոխարեն բերին այս նոր շունը։ Յեվ այժմ Մաստանը, աստվոտները զարթնելիս, նայում էր, թե արդյոք սա յել չի չքացել առաջինի պես... Տեսնելով շունն իր տեղն և և հարևանի ագռաւինը ավելում է բակը—Մաստանը լուսամուտի գոգից թռչում էր ցած ու վազում տիրոջ մոտ։ Բարձրանում էր նկարչի անկողնի վրա,

գլուխ-գլուխ քայլերով մոտենում էր տիրոջ յերեսին և պնչով մեկ-յերկու, մեկ-յերկու խփում նրա կզակին։

— Ա՛, —բացականչում էր նկարիչը, աչքերն ու բերանը բանալով։—Ժամանակն և վեր կենալու։

Մաստանը նրա կրծքին նստած՝ գլուխը թափ էր տալիս, իբրև թե «այո»։ Նկարիչը մի յերկու անգամ ձևաը քսում էր կատվի գլուխը, հետո, նրա դունչը համբուրելով, վեր կենում... Նա հագնվում էր, իսկ Մաստանն ու մյուս կատուները հետևում էին նրա բոլոր շարժումներին. գիտեին, վոր ժիլետը հագնելուց հետո՝ պետի լվացվի, մազերը սանրի, ապա ուտելու բան տա իրենց. ուստի հետը գնում էին լվացարանի մոտ, իսկ յերբ յերեսը սրբում էր, մազերը սանրում և սրբիչը կախում պատից—նրանք ճանկերով ձգում էին թաշտոի վարտիքի տտասերը, հրավիրելով նրա ուշադրությունը։

— Հիմա, հիմա...

Նկարիչը գնում էր մյուս սենյակը, կատուները նստոտում էին և սպասում. գիտեին, վոր այնտեղից պետի բերի մի կամ թրջած հաց՝ նեղ ու յերկար ամանի մեջ։ Իսկ յեթե այդտեղից չէր բերում—գնում էր հետու տեղ, ու այնտեղից բերում մեծ, մեծ կտոր մի, վորը գլխավորապես սպետակ թուք էր լինում։ Այդ տեսնելիս՝ կատուները, վոր մինչ այդ սպասում էին լուսամուտում կամ պատշգամում նստած,—խմբով վազում էին նկարչին ընդառաջ, և նրան շրջապատած՝ շուքով գալիս տուն։ Յեթե պատահեր կատուներից մեկն այդ ժամանակ ճանկը դներ նկարչի վարտիքին, թաշտոը նեղացած կտնդ կտռներ.

— Հը՛, համբերութիւնդ հասաւ և. չես կարող մի բոպէ դիմանալ, մինչև առաւ հասնենք...

Անհամբերը դուրսը կախում էր և լսորից յետ ընկնում։ Այդպիսի հանդիմանութիւններ նրանք առած-հում էին և առնը, յեթե իրենց անկարգ էին պա-հում ուտելու ժամանակ, յեթե իրար ձեռից խլում էին ուտելիքը կամ վոտ դնում ամանի մէջ։ Մանաւանդ հանդիմանութիւն էր առանում նա, ով ուշանում էր կերին։

— Բեզ էլ վոչինչ չկա, — ասում էին Թաթոսն ու կինը, — ուտելու ժամանակ յեկ բաժինդ կեր, կա-րող ես սպասել մինչև ճաշ...

Յեվ յերբեմն ուշացողին՝ խրատելու համար՝ զըր-կում էին կերից... Այդ ուշացողն ամենից շատ լինում էր Մատոսը, վոր սիրում էր գնալ հարևանի պար-տէզը։ Հաճախ գնում էին կատուները հարևան տան բակը, այնտեղ էս՝ ծառերի՞ տակ վոչ անելու։ Պատի մոտ յեղած լորենու ճղներով բարձրանում էին պա-րիսպը՝ վազում մի քանի քայլ ու յատակում ցած։ Հա-րևանի այդ բակը, չգիտես ինչու, ամենից շատ դուր էր յեկել Մատոսին. մեկ էլ տեսար ջոկվեց ընկերներից, լորենին ճանկռտելով՝ բարձրացավ պատը և... անհե-տացավ։

Հետո պարզվեց, վոր մենք այնտեղ յերկու դեղ-ձանիկ ուներ՝ վանդակների մէջ. և քանի վոր ամառ էր—նա այդ վանդակները կախում էր պատշգամում։ Սիրում էր Մատոսը գնալ այդ պատշգամը ու նայել վանդակներին. այդ թռչուններն էլ զրավում էին նրան։ Մատոսը թռչուններ տեսել էր ծառերի վրա, տա-նիքներին, ոդում թռչելիս, բայց այդպես փակ— յեր-

բեք... ու հափշտակված եր—այնքան հեշտ էր թվում նրանց բռնելը. չեմ ես մի քիչ, մի քիչ ցած լինեին և վանդակի ճաղերի արանքը լայն, վոր նա կարողանար դուրսը կախել ներս... Հարևանի պարտէզը մանա-լիս՝ ամեն անգամ Մատոսը վազում էր պատշգամ ու փորը գետնին՝ նայում վանդակներին։ Յերբ դեղին դեղձանիկները թռչկոտում էին թառից-թառ—նա հե-տաքրքրութիւնից ծալ էր լինում. թռչելով պատչ-գամի ճաղերի վրա՝ փորձում էր մագլցել այնտեղ և վեր... Բայց միշտ անհաջող. նեբված այտունը սկի նման չէր ծառի—շատ էր սլկուն, և ճանկ չէր բռնում։ Մի վանդակին չհասնելով՝ գնում-կանգնում էր մյուսի տակ, նայում հափշտակված, պոչը շարժում ինքնամո-ռացութեան մէջ—Ախ, կարողանար հասնել... Ինքնա-մոռացութենից զարթ էր գալիս այն ժամանակ, յերբ տան դուռը բացվում էր և դեղձանիկի տերը՝ մորուքով մի մարդ, բերանից ծուխ արձակելով՝ դուրս էր գա-լիս պատշգամ ու բղավում. «փիշտ»... Այնքան անար-կում չէր լինում այդ ձայնը և ձայնին հետևող վտիտ թպղոցը, վոր Մատոսը յատկում էր ճաղից ու իրեն պցում պարտեզ... Այդ էր պատճառը, վոր վերջերս նա ուշանում էր թե՛ նախաճաշին և թե՛ ճաշին։

Յեվ նկարիչն էլ չէր իմանում, թե ուր և լինում։

III

Բայց մի օր Մատոսը կորավ հանկարծ։ Առա-վոտը վաղ դուրս գնաց և էլ տուն չեկավ։ Նա չեկավ նախաճաշին, չեկավ և ճաշին։ Մարդ ու կին պատշգամից կանչեցին փոխ փոխ, ձայն ավին։ Չերևաց։ Ապա վո-րոնեցին նրան բակում, թփերի մէջ, ծառերի վրա.—

դուցե ծիտ է բռնում, դուցե մի բան է պատել, դուցե բանի մեջ է ընկել կամ վտանգին թել է փաթաթվել... Անցան—նայեցին ամեն տեղ, մտածեցան՝ անդամ շան բնին.—դուցե շունը բռնած լինի ու խեղդած... Մատանը չկար ու չկար։

—Ջեռա բան չի բռնում, Թաթոս.—ասաց Նաթելը։

— Իմա էլ—վրձինը ցած դրեց Նկարիչը։

Ու միասին դուրս եկան վորոնելու։ Կատուներից մի քանիսն ուղեկցում էին նրանց, և յերբ տերը կամ տիրուհին ձայն էին տալիս, կանչում,—նրանք կանգնում էին խլշած ու պոչերը շարժում։ Իսկ մայր-կատուն՝ Շամոն մլավում էր ու ականջ դնում։ Մի քանի անգամից հետո՝ նրա ձայնի՝ վրա հանկարծ հարևան պարտեզից լսվեց մի թույլ մլավոց։

—Ենտեղ է,—բացականչեց Նկարիչը, մատը դեպի հարևան պարտեզն ուղղելով, և նրա դեմքը փայլեց ուախությունից ու հրճվանքից. և մինչ Նաթելը կհավաքեր իրեն, Թաթոսը ինչպես կար—գլխարաց ու ժիլետով—դուրս վազեց բակից և նետեց իրեն հարևանի բակը և այնտեղից ուղղակի պարտեզ։ Դեռ հեռվից Նկատեց Մատանին պարտիզի խորքում՝ պատի տակ։ Կանչեց.—կատուն տարօրինակ շարժում էր անում, բայց տեղից չէր շարժվում։ Թաթոսը մոտեցավ. Մատանը մի քայլ առավ՝ յետ վտանգ տալով։ Այդ ժամանակ միայն Թաթոսը գլխի ընկավ, վոր խփել են, յերևի գլուխ համար չի կարողացել տալ։

Տիրոջը տեսնելով՝ կատուն մլավեց և մի յերկու կաղկած քայլ արավ դեպի նա։

— Մատանը...

Յերբ Նկարիչը կատուն գրկած վերադառնում էր

Նկատեց գրպանի գեղձանիկները տան պատշգամում։ Թաթոսն առաջներում շատ անգամ էր յեղել այդ բակում. բայց այժմ միայն Նկատեց, վոր այնտեղ գտնվում գեղձանիկներ կան վանդակների մեջ... Պատշգամում՝ ձեռները յետևը դրած շրջում էր պատարանի նոր քարտուղարը, վորը մի ամուրի մարդ էր մոխրագույն մորուքով ու կապույտ ակնոցով։ Նկարիչը տեսնելով նշում էր գրան, բայց չգիտեր, վոր նա գեղձանիկներ ունի և վոր նա մինչ ճաշ գտնվելու է լինում, իսկ ճաշից հետո իր որը կարճում է և գեղձանիկների հետ զբաղվելով։

Պատշգամի մոտից անցնելիս՝ գրպիրը կանդնեցրեց Թաթոսին և հարցրեց վրդով.

—Այդ կատուն ձերն է։

Յեվ նրա մոխրագույն մորուքը դողաց, իսկ աչքերը կապույտ ապակիների տակ փայլեցին տարօրինակ փայլով։

—Իմն է,—պատասխանեց նկարիչը հանդարտ,—ինչ կա վոր։

—Խնդրեմ այնտեղ պահեք, վոր ջուտ չտան։

—Ի՞նչ ջուտ...

—Այն, վոր շարունակ անհանգստացնում է գեղձանիկներիս։

Նկարիչն իսկույն գլխի ընկավ, վոր Մատանին, յերևի, քարտուղարն և խփել բայց վոչինչ չասաց—նրա ուբախությունն անքան մեծ էր կատուն գտնելու պատճառով։

Այդ յերեկո ամուսիններն ուրախությունից վազ-վազ գրկում էին Մատանին, դնում սեղանին,

հիանում նրա վզի ճերմակով, մեջքի մոխրագույն ու սև շերտերով, չալ դնչով ու խոսում հետը.

— Վճռտեղ եյիր, անպիտան... այ քեզ, այ քեզ...

Ու հանաքով խփում էյին Թաթևերին, հետո համբուրում այդ Թաթևը:

Թե նկարիչը, Թե կինը, ինչպես ասինք, բոլորից ավելի սիրում էյին Մաստանին: Ամենալավ բանը—մսի լավ կտորը նրան էյին մատուցում, ամենից ավելի նրա հետ էյին զբաղվում. շորից կարած գնդակը կամ Թևի կծիկը գլորում էյին հատակի վրա, և յերբ Մաստանը վազում եր նրանց յետևից—նկարիչն ու կինը խնդմնդում էյին հաճույքից, ծափ տալիս. յերբեմն վոգեվորության մեջ նկարիչը վրա յեր ընկնում՝ լռնում Մաստանին ու համբուրում, ապա տալիս կնոջը:

Մի քանի որ Մաստանին չԹողին դուրս, մինչև վոտը լավանար: Բայց վորպեսզի չախբեր, ամուսիններըը զբաղեցնում էյին նրան—գնդակ էյին գլորում, առանձին համեղ բաներ էյին տալիս ուտելու: Բայց Մաստանի աչքը շարունակ դուրսն եր. նա հիշում եր զբաղբի արևոտ պատշգամը, գնդճանիկներին և կարոտով նայում դուրս:

Յերկրորդ որը նրա կալուԹյունն անցավ, իսկ յերրորդ որը, յերբ նորից քայ Թողին նրան—Մաստանը Թուկոտելով դուրս յեկավ պատշգամ և մի քանի րոպե քույրերի ու մորաքույրների հետ խաղալուց հետո՝ նրա մոխրագույն կերպարանքն աներևութացավ հարևան պարտեզի յետև:

Պարտեզից ցատկելուն պես՝ Մաստանը իրեն նեռանց գրագրի մեծավոր պատշգամը— ատրճանակներից

բարձրանալով՝ մի վոստյունով իրեն գցեց ճաղերի այն կողմը:

Դեղձանիկներն այնտեղ էյին՝ սյուներից կախ վանդակների մեջ: Ինչպես միշտ, Թուկոտում էյին ձոպից-ճոզ և մի աչքով նայում Մաստանին, վոր ուրախությունից, հետաքրքրությունից վարձում եր կրկին մագլցել սյունն ի վեր և հասնել դեղձանիկներին... Գուցե հիմա կարող է... Բայց իզուր: Հրճվանքով նա Թուկոտից պես ու պես—զարձյալ անհաս էյին դեղձանիկները և անմատչելի... Մաստանն ուրախանում եր, վոր փոքրիկ Թևավորներն իրեն տեսնելով՝ Թուկոտում էյին վախից: Այդ բանը նրան ավելի համարձակ եր դարձնում, և շարունակում եր խաղերն ու մագլցությունները: Դարձյալ ոշտնում եր ճաչերին և այն ժամանակ եր միայն դնում տուն, յերբ լսում եր միրուզ քավոր մարդու վոտնաձայնը:

Յեվ մի որ ահա, ճաշից հետո, յերբ ամենն ՆաԹելը ճաշի սեղանը հավաքում եր, Մաստանը տուն յեկավ սաստիկ ընկճված՝ ականջները կախ, որմանդլուԹյունն ընկած: Տիկին Նաթելն խնդուն վրա վազեց ու գրկեց նրան: Մաստանը շատ Թույլ և նսեմված եր կարողանում գլուխը վրան պահել: Տիկինը վախացած ձայն ավեց մարդուն.

— Թաթոս, մի արի տես իրեն և պատահել Մաստանին:

Թաթոսը նկարը Թողած՝ մանր ու ժիր քայլերով, շատակերության վրձինը ձեռին, գուրս յեկավ աշխատանոցից և մոտեցավ կատվին:

Մաստանը կանգնած՝ գլուխը ցածի պես Թե-

քում եր դես ու դեն, և նրա մի աչքից արցունք եր վազում։

— Ախ՞լ ևն։

— Յերևի։

Նկարիչը դիմից կատվին, շոշափեց, նայից աչքերին։ Կատուն թուլանում եր հետզհետե։ Նա անքում եր, գալարվում և բերանը բանում ու բարակ լռվով շուրթերը լիզում։

— Ով գիտե վատ բան ե կերել։

— Յես վոր չեմ ասել,— արդարացավ կինը։

Յերևկյան դեմ Մատոսանի դրությունն ավելի վատացավ, և նկարիչը նրան վերցրած՝ վազեց բժշկի մոտ։

Բժիշկը, մարդու բժիշկ լինելով, նեղացավ նախ, վոր կատուն իր մոտ են բերել («ինքն անասնաբույժ չէ»), բայց հետո քննելով հայտնեց, վոր թունավորված ե յերևում, և խորհուրդ տվից անմիջապես թան խմեցնել ու գլխի վրա կախել։

Այդպես ել արին։

Բայց Մատոսանը, քանի գնաց, թուլացավ և մի քանի ժամ անց սատկեց.

«Թունավորում», — մտածեց Թաթոսը այդ բոլորից հետո,— վճռակ կարող եր թունավորվել և ձվ կարող եր անել այդ»...

Հանկարծ նա հիշեց գրագրին ու դուրս վազեց սրընթաց։

— Ո՞ւր, Թաթոս,— ձայն տվից տիկին Նաթելը մարդու յետևից։

Թաթոսը չպատասխանեց։

Առանց յետ նայելու՝ դուրս վազեց պլոտաբաց։

Նա վերադարձավ քառորդ ժամ հետո — հանդստացած ու գոհ դեմքով։

* * *

Առավոտը դատարանի դրադիրը տեսավ իր վանդակները չարդված, դեղձանիկներն ապանված,— ու պարմացավ, թե ով կարող եր անել այդ։

Իսկ Թաթոսն այդ ժամին փոս փորից պարտիզում, Մատոսանին թաղից այնտեղ և մի քար գլխից վրան ու գրեց. «Մատոսան — մեռավ մի տարեկան հասակում»...

ԹԱՓԿՈՋ ԵՆՏՈՆԸ

I

Անհասկանալի բաներ շատ են պատահում կյանքում։

Այդպիսի մի բան էլ պատահեց մեր ծեր ժամկոչին, որին ամենքը «քեռի Անտոն» էին կանչում։ Ճիշտն ասած, նա իսկապես և՛ ժամկոչ էր, և՛ դերեզմանափոր։

Այդ փոքրիկ քաղաքում, որի տները մի հարկանի չեն, կտուրները տափակ և փողոցները ծուռ ու կեղտոտ, որի խանութներից շատերը ցուցանակ չունեն և ընտանիքների մի մասը ինքնագիր, այդ փոքրիկ քաղաքում քեռի Անտոնը յերկար ժամանակից ի վեր, կատարում էր այդ յերկու պաշտոնը և բնակվում գերեզմանատան յեկեղեցու սենյակներից մեկում։

Այն սենյակում, որի մեջ ապրում էր նա, կար փայտյա մի մահճակալ, ուր քնում էր, կար կավից շինած մի կրակարան, որի վրա յերբեմն թեյ էր եփում իր համար, և մի յերկար սեղան, որի վրա դնում էին քաղաքի մեռելներին՝ յեկեղեցում, և որի վրա ճաշում ու ընթրում էր նա՝ կնունք, հարսանիք և մեռել չեղած ոբերին։ Իսկ կնունք, հարսանիք և մեռել հազիվ չէին լինում։ Հարուստները դնում էին Թիֆլիսում մեռնում, յերիտասարդները չէին պատկվում,

կնուհքները էլ շատ սակավ էին, որովհետև քաղաքի կանայք ինչ-որ պես էին հնարել յերկար չերեխա չբերելու համար։

Այսպես էր մտածում ծեր ժամկոչը։

— Ե՜հ, վատ ժամանակներում ենք ապրում,— հաճախ գանգատվում էր նա տիրացու Սարգսին, վաճառական հարսին, որը նրա շրթներն էր լսանում, կամ մանրավաճառ Մխիթարին, որից յերբեմն շաքար, թեյ և նավթ էր գնում։

— Չա, հա,—համաձայնում էին նրանք,— վատ ժամանակներ են...

— Եվ չկա առաջվան ոգևորությունը,— շարունակում էր ծեր ժամկոչը։—Առաջ ուրիշ բան էր, մարդիկ առատաձեռն էին. աշխարհը լի, բոլ... պատահում էր՝ կնունք էիր գնում, ինչքան ուտում էիր՝ քեզ տալու պրանից յետո էլ տանդի մեջ կերակուր էին լցնում, գաստով հայ էին տալի քեզ՝ «առ, տանը կնե»... Հարսանիք էիր գնում՝ նժանապես. փողը չկի էին տալի, հայը չկի իսկ մեռել չեղած ժամանակ հո... փողի ու հայի վրա ննջեցյալի շրթներն էլ էին քիչ տալի քեզ՝ «տար»... Հենց մենակ պալենից, դուք նրան չեք ճանաչի, ոսրսրի հոգուն,— մի րաֆ ո ո ե ղ ե ա*) չէր եառնի մենակ երանից, չէլը մեռավ, տատունդինդ մանեթ ոգուտ տայար։ Հինգ մանեթ գերեզման վարելու համար ավին, իսկ պալտոն էլ հանդուցյալի կինը ենպես բաշխեց ինձ։ Եղ պալտոն էն ժամանակ ծախեցի մեր պետը Յերևի ապայի վրա՝ տասը մանեթի, վոր օխտը կլոր տարի հագավ... Իսկ հիմի եդպես բան վորտեղից. ճրագով էլ ման գաս,

*) Հաշտարար դատավոր։

չես գանի... Եհ, ժամանակները փոխվել են հիմա .. շատ են փոխվել։

Յետ ձեր ժամկոչը հառաչում էր հաբատութիւնը կորցրած մարդու պես։

Այսպիսի խռովակութիւնների ժամանակ Վռամեան հարսը, սիրացու Սարգիսը կամ մանրավաճառ Միհրակը յերբեմն հարցնում էին.

— Ինչպես յերեում է, քեռի Անտոն, դու շատ փող կունենաս հավաքած։

— Փո՛ղ. վո՛րտեղից... վոր փող ունենայի, ել ինչ։ Յերանի չեր ունենայի... Հիմի դուք կասեք՝ «Քեռի Անտոնը մենակ մարդ է, շատ ծախս չունի, շատ որ ուրիշի հաց է ուտում, ինչո՞ւ չպետք է փող ունենա»... Չե, դուք տեղը ձեր հոգուն մեղք մի՛ք անի։ Շատ ել մենակ, համա ելի մի տան չափ ծախս ունեմ, ինչքան չըլի, տունն իրանն ուզում է։ Ամիսը մի գրվանքա նայի՛ր է գնում, կես գրվանքա շաքար, չայ, դես-դեն, ուրիշ մանր-մունր ծախսեր են լինում... Առաջ, յերբ քեռի Ոսկիը կենդանի էր, ողորմի իրան, վռանամաններս ձրի կարկատում էր, իսկ հիմի Նիկոլի մոտ եմ գնում, կարկատանն ել ինքս եմ տանում, համա ելի յերկու կըռունկ կպցնելու համար տասը կապեկ է վերցնում։ Բա՛...

Նա լսում էր մի փոքր, ունկնդիրներին հայում և ավելացնում.

— Միշտ եղպես ասում ե՛ք՝ «քեռի Անտոնը փող ունի, փող ունի», ժուլիկն մինն ել հանկարծ կիմանա, թե դրուստ վոր ունի... Չո՛ւր տեղը ձեր հոգուն մեղք մի՛ք անի...

— Եհ, ժուլիկներից վախենում ես,— ասում էր նրան սիրացուն կամ մանրավաճառը։

— Ամեն մի կարգին մարդ ժուլիկից ու գողերից, իհարկե, կվախենա,—պատասխանում էր քեռի Անտոնը։—Ժուլիկն ու գողերը հենց նրա համար են, վոր մարդիկ վախենան և զգուշ լինան։

Յետ, իսկապես, չգիտես ինչու, նա գողերից ու ավազակներից շատ էր վախենում, և ամեն անգամ, յերբ որը մթնում էր, վոտքը խաղաղվում և լուռթյան մեջ տարածվում էր մոտակա գետի անվերջ խշշոցը, քեռի Անտոնն ամուր փակում էր սենյակի դուռը, յետևից դեմ դնում յեզան լծի չափ մի փայտ ու մեծ մի քար և, յերեսը խաչակնքելով, մտքումն արտասանում «Տե՛ր, փրկյա ղես ամենայն չարի»։

Ժամհարութիւնից և գերեզման փորելուց զատ, քեռի Անտոնը զբաղվում էր և մի ուրիշ դործով։ Քաղաքի բնակիչները նրան հաճախ տեսնում էին գետափին, այնտեղ, ուր թափվում էր քաղաքի աղբը։ Տեսնում էին, թե ինչպես ձեր ժամկոչը աղբի մեջից հավաքում էր յերկաթի կտորներ, ծուված մեխեր, հին պայտեր, կողպեքներ ու մաշված վռանամաններ։

Յերկաթեղենը ծախում էր գաղջին Մաթոսին, վռանամանները՝ կոշկակար Նիկոլին։ Ազատ ժամերին առհասարակ նա գնում էր գետափը և յերեկոյան գոնդերը տալու միջոցին գրպանները ու փեշը լիքը վերադառնում տուն։ Մի անգամ էլ, գետափից վերադառնալու ժամանակ, տեր-Հովսեփը նկատողութիւն արավ, թե այդ գրպտունքը բնավ չի համապատասխանում նրան։ Ժամկոչը պատասխանեց.

— Ինչ կա վոր, տերտեր. քանի վոր վո՛չ մեռել

կա, վոչ կնունք, պարապ նստելուց էլ ինչ ոգուտ; յերբ կարելի յե մի քանի կոպեկ ձեռք բերել...

Ցեվ, իրավ, նա ձեռք էր բերում կոպեկներ, ու ամեն անգամ այդ կոպեկները և մյուս ծառայությունների վարձը ստանալու որվա յերեկոյին նա, ալեհեր գլուխը բայ, նստում էր յերկար սեղանի քով և մյուս լամպի լուսով ինչ-վոր հաշիվներ տեսնում էր խցում։ Հաշվում էր յերկար, մի անգամ համբառնը՝ համբում յերբորդ, չորրորդ անգամ։ Ցեվ յերբ հաշիվը ուղիղ էր լինում, քանկներից մեկը դնում էր գրպանը, իսկ մի ուրիշը, ամենայն զգուշությամբ, կոխում սենյակի պատի ճեղքը, վորի բերանը ծածկում էր հարմարեցրած մի քարով։ Ցեվ ամեն անգամ, քանկը պատի ճեղքը դնելիս, նա ասում և մաքում. «Ո՞վ դիտի, բան ե, յեթե ժուլիկն մեկը դա դուռը կոտրելով ինձ թալանի կամ ապանի, դոնե սա կմնա»...

Ցեվ վոր որը քեռի Անտոնն իր յեկամուտից զոհ էր լինում, վոր շատ սակավ էր պատահում,—լուս շրջում էր գերեզմանաքարերի արանքում, ինչպես հովիվը իր մակաղած հոտի մեջ, և մաքում ինչ-վոր հաշիվներ տեսնում։ Իսկ զժգոհ որերին,—վոր շատ հաճախ եյին պատահում,—նա մարդկանց հետ պրեխ չէր խոսում և յեկեղեցու կեղտն ու փոշիները թոշնում էր առանց որրելու։ Այդպիսի որերին զանգերի ձայնն էլ էր փոխվում։ Նրանց հնչյուններն անկարգ խառնվում եյին իրար և նրանք, շատախոս կանանց նման և հառաչում եյին, և՛ ճչում և նվում զանգավոր ձայներով։ Կարծես ձեր ժամկոչը իր բոզոքն էր հայտնում վոքրիկ քաղաքի ժլատ բնակիչներին, վորոնք վոչ մեռնում եյին, վոչ պակվում, վոչ կնունք անում։ Այդպիսի որերի յերեկոներին, նա առանց ընթրելու և առանց վոտները քորելու (այս նրա սովորությունն էր, վոր բանեցնում էր միայն զոհ ժամանակ), մտնում էր անկողին և խոր հառաչանքով վերմակը քաշում գլխին։

Ցեվ ամեն անգամ, քնելու ժամանակ նա շշափում էր արխալուղի գրպանները ու ծոցը, և ապա արխալուղը խնամքով ծալում ու դնում գլխատակը։ Դիշերները զարթնելու միջոցին, և թե առավոտները, յերբ վեր էր կենում անդից, զարձյալ նայում էր գրպանները, տեսնելու՝ հո բան չի կորել արդյոք, վորովհետև միշտ վատ յերազներ էր տեսնում իր գրպանների մասին։

Պատահում էր՝ փողոցում թե յեկեղեցում, ժամերգության ժամանակ, նրա ձեռն իրեն-իրեն գնում էր դեպի գրպանները։ Այդպիսի դեպքերում, յերբ նկատում էր իրեն նայող կա, սկսում էր գրպանի մտերքը քորել կամ ձեռքն արագ հեռացնում էր և, ջերմեռանդ բարեպաշտությամբ հոգալով, յերեսը խաչակնքում։ Սակայն, մի քանի րոպեից հետո ձեռքը նորից գնում էր դեպի գրպանները։

Բայց մի անգամ անա թե ինչ պատահեց քեռի Անտոնին։

Մի որ էլ այդպես,—չարաթ որ էր,—կեսորին, մեռել թաղելուց հետո,—քեռի Անտոնը ձեռը գրպան տարավ, դիրեզմանն վորելու համար ստացած վարձը քսակի մեջ դնելու, և հենց այդպես էլ՝ ձեռը գրպանում մնաց քարացած։

Նրա դեմքն ընդունեց մի այնպիսի արտահայտություն, վորպիսին ունենում և այն մարդը, վորը

առաւօտեան մէջ, հանկարծ, անսպասելի տառնում է իր ամենասիրելի եղակի մանչան բոթը։

II

Այն, ինչ այդ ժամին պատահեց քեռի Անտոնին և ինչ զգաց նա, այդպիսի մի բան պատահել էր նըրան և այդպիսի մի բան զգացել էր նա կնոջ կենդանութեան օրով, շատ տարիներ առաջ։

Յետը կինը կենդանի չէր, քեռի Անտոնը նկատեց մի առաւօտ, որ քահիկից տաս կոպեկ և պակաս։ Նա հասատատ դիտեր, որ այդ փողը ինքը չի ծախսել և զրպանումն էր, բայց թէ ինչ էր լինել, չէրկար ժամանակ չէր կարողանում ըմբռնել։ Սակայն, ինչպես հետո պարզվեց, այդ տաս կոպեկը զրպանից տանել էր կինը և խուրմա գնել շրջիկ մրգավաճառից։

Այս առթիվ ամուսիններուի մէջ ծագեց մի վիճ որը տևեց չորս ամիս։ Քեռի Անտոնը պնդում էր, որ կինը միշտ այդպես, պարբերաբար իր զրպանից փող է գողացել, և այդ ասելով մի առ մի հիշում էր զըրպանից զանազան ժամանակ կորած փողերը։ Մի անգամ կորավ տասնուհինգ կոպեկ, մի ուրիշ անգամ քսան, հինգ, էլի տաս... Կորուստը թվելուց հետո, ժամերն ավելացնում էր, թէ «մի տեղից որ գողութիւն արին, տնտես էլ խեր չի տնա»։ Իսկ կինը յերդվում էր բոլոր սրբերի անունով, «աւետ-կերեք»-ով և Հիսուսի որորոցով, թէ առաջին անգամն է, որ ինքը, առանց նրան հայտնելու, վերցրել է այդ տասը կոպեկը։

Յետ նրանք այս մասին վիճում էին թէ մենակ ժամանակ և թէ հարևանների ներկայութեամբ։ Վիճի

հետևանքն այն եղավ, որ կինը՝ Նազոն վեր կացավ մի որ ու անխոս գնաց հորանց տուն, և այնտեղ էլ մնաց մինչև մահը։ Իսկ քեռի Անտոնը իր սեփական տունը, որ ցածր ու ճաքած պատերով տնակ էր՝ յերկու սենյակից բաղկացած, քրեհով տվեց՝ զարմանալուց, ու տեղափոխվեց յեկեղեցու սենյակներից մեկը, ուր և ապրում էր մինչև հիմա։

Այժմ էլ ձեռը գրպանը տանելով, նա նույն բանն զգաց, ինչ զգացել էր տարիներ առաջ։ Այժմ վոչ թէ տաս կոպեկ էր պակաս գրպանից, այլ ամբողջ քսակը՝ միջի գումարով։

Առաջին պահ այդ բանը նրան թվաց անհավանական, բայց յերբ յերկրորդ, յերրորդ անգամ ձեռը տարած գրպանը, զարմանքից արձանացավ։

«Չլինի կորել է,—անցավ նրա մտքով։—Բայց վընց կորավ, որ չմացա... Չէ. կարելի չէ այսօր չկրած եմ գրել»—տաց ինքն իրեն։

Ու նայեց արխալուղի յերկրորդ գրպանը։ Նրա ձեռքն ընկան մի քանի ծռած մեխեր, կոճակներ ու թելեր։ Բսակը չկար։

Քեռի Անտոնն ավելի զարմացավ։

Նա լավ հիշում էր, որ քսակը այդ օրն առավոտյան գրպանումն էր։ Գրպանումն էր և գնելուց փորելու ժամանակ և այն ժամանակ, յերբ յեկավ տուն, յերբ մտավ յեկեղեցի, յերբ բարձրացավ զանգակատունը։ Այո, այս բոլոր ժամանակ, մինչև մտած յերեխայի ղազաղը յեկեղեցուց դուրս տանելը և թաղելը, քսակը գրպանումն էր։ Նա լավ հիշում է...

«Բայց ով է խմանում,—մտածեց քեռի Անտոնը,—

շատ կարելի չէ՝ սխալ եմ. շատ կարելի է՝ տանն եմ թողել, միտս չէ... կարող է պատահել չէ՞...

Յետ մտածելոյ, որ կարող է բարձի տակ թողած լինել, ինչպես մի քանի անգամ էլ պատահել էր, ու այդ մտածելով՝ արձակից դռիկից կապած բանալիները և սենյակի կողպեքները (նա սենյակը փակում էր յերկու կողպեքով) բանալով՝ մտաւ ներս։

Մանելով տուն, նրա առաջին գործն էղաւ բարձի տակ նայելը։

Այդտեղ, քրտինքից դեղնած չթերևս բարձի տակ, ղրված հին լվացքի և հոտթի թոկեր՝ չոկ-չոկ կապած, յերեխայի մորթե դղակ և լայնեղը մի գլխարկ՝ առանց ժապավենի, մեջտեղը ծակ։ Հետո ինչ-որ փալասներ՝ առանձին-առանձին ծալած, փաթաթած։

Մեկ-մեկ վերցնելով՝ քեռի Անտոնը գննում էր իրերը և հետո էլ խոսում ինքն իրեն։

— Ես թոկերն են, ես հէչ. ես էլ են անպգամ Աթանէսի հոտթի թոկն է. լիրր, քանի անգամ եմ ասել՝ հոտթը բաց մի Աոդնի գերեզմաններուն մէջ... Ես էլ վարժապետի շլապն է. ես էլ հէչ... Էհ, ես էլ տեբացվի ազուռան է, հերն անիծած, թող ճիա... Ես ինչ է. հա... Ջրի մատ պտած շորն է... ով գիտի վերքի փաթաթան է յեղել, որ ետես հոտ է գալիս... Զուր տեղը հենց ենտեղ չէլացի... Թող ճիա, պարապ ժամանակ գուլպաներիս հետ կլվանամ...

Այս ասելով՝ ապիտակ վիրակապը գլխից անկյունում ընկած տոպրակի վրա, ուր մի խառը գուլպաների հետ կային և հին լաթեր։

Վարանումն ապարտելով՝ նա ավելի պարմացաւ, քան առաջ։

Բանին այլևս չէր։

— Զարմանալի է,—ասաց ինքն իրեն։—Անեծք քեզ, չար սատանա։

Նա թքելով՝ խաչակնքեց յերեսը և վարժնումը շարունակից դուշակի տակ, յենթադրելով թե քսակը բարձի տակից հետաքրքրությամբ սատան կլինի աչտեղ։

Դուշակի տակ շատ բան չկար։ Այլտեղ իրար կողքի տափակ ղրված հին յեղան և ձիու պայտեր, բաբակ թևկեր, կնոջ, տղաժարդու և յերեխայի կիսամաշ դուլպաներ, դուլպայի կապիչներ և այծի մի մորթի։

— Ես թղթի տոպրակները թող ճնան, Միխակին կտամ,—շարունակից նա ինքնախոսությունը առաջվա նման իրերը մեկ-մեկ դիտելով։—Ես էլ են սրվա շանից խլած իծի մորթին և... Թուռ, հոտ է գալիս... Ես գուց վռնտ չորանա, որ վարդանք չընկնի մինչև շաների գալը...

Յետ ժամտարը թքտտելով՝ իծի մորթին վռնց այն յերկար սեղանի յերեսին, որի վրա յենկոզած դնում հին քաղաքի մեռելներին և որի վրա կարվում ճաշում էր ինքը։

Դուշակի տակը պեսպեսաց հետ նրան տվրից մի տոպր հատատ թղթատ ի մէջտ վիժած բզզոց

Զարմանալի կերտ է...

«Ով գիտե տափակի տակ ընկած մտածելը նա... Յետ այս միտքն ատանձին հավատալով թվաց նրան, որ իսկապես կատարվել է, չոքեց գետնին և գլուխը կռնելով սահմանափակի տակ՝ աչտեղից մեկը վեր հանեց, քրտինքով դղրդած թաշկ հին, ձեռ ու փոքր

անզուգական վոսնամաններ, վորոնցից մեկի չերեսն եր ճղված, մյուսի տակի կաշին չկար, չերրորդի ճիտքն եր կտրված, և այնքան շատ ու բազմազան եյին, վոր կարելի չեր կարծել, թե ժամեարի սենյակը մի ժամանակ կոշկակարի արհեստանոց և չեղել։ Վոսնամաններից հետո, տախտի տակից հանեց սարդինկայի թիթեղյա արկղիկները, վորոնց կափարիչները կիսով չափ տակավին կպած եյին չերեսներին. հանեց գաբաձյալ ձիու և չեղյան պայտեր, դռների ողեր, փականներ և մեծ ու փոքր, զանազան ու պարզ շղթեր։ Այս բոլորի վրա նոտած եր բարակ, միապաղաղ փոշի։ Ամենից վերջը հանեց մի զույգ հնամաշ կրկնակոշիկներ, վոր նվիրել եր Ներսես տեր-Մինասը՝ մի խորհրդավոր զգացնիք պահելու համար։ Կրկնակոշիկները տեսնելով, մտածեց դրանք կարգին սրբել մի որ և մյուս վոսնամանների հետ տանել կոշկակար Նիկոլի վրա ծախելու։

Տախտի տակը և այս բոլորը դիտելուց հետո, քեռի Անտոնի հուսահատությունն ու զարմանքը կրկնապատկվեց։

Բանակն այստեղ ել չկար։

Նա բարկացած յելավ չոքած տեղից, ձեռներով սրբեց ծնկների փոշին և վոսներով նորից տախտակի տակը հրեց բոլոր իրերը, իրար յետևից թքելով։

«...Տեսնես վորտեղ եվալը ընկել, վոր չի իմացել. իր հետ այդպիսի բան լ՚երբ եր պատահել...

«Զարմանալի յե», — արտասանեց կրկին, ճակատի քրտինքը սրբելով։ Ապա մտածեց, վոր կարող և յեկեղեցում կամ զանդակատանը ընկած լինել։

— Ախր չէ՞ վոր ժամից հետո Ջիբիա եր, — ասաց ինքն իրեն, և այդ ասելով, այնուամենայնիվ գնաց մտավ յեկեղեցի, նայեց իր կանգնելու տեղը՝ դռան մոտ, և այն տեղերը, վորտեղից անցել եր, — քահանաների զասը, խորանը. բարձրացավ վերնատունը, վորտեղից զանգերն եր քաշում, ապա իջնելով՝ պտտեց յեկեղեցու շուրջը և, այդտեղ ել վոչինչ չգտնելով, քայլերն ուղղեց դեպի հենց այդ որը թաղված յերիտասարդ պերեզմանի կողմը։

Ջեռները մեջքին՝ նա մի քանի անգամ գնաց-յեկավ պերեզմանի կողքով, հետո կանգնեց և մտապրաղ նայել սկսեց փոքրիկ պերեզմանի թարմ հողաթմբին, վորի վրա դեռ փռված եյին արցունքով թրջված ծաղիկները։

Ժամեարը կրկին գնաց-յեկավ և նորից կանգնելով՝ պարզել պերեզմանին նայեց մի ակնոցների մոտամփոփ հայացքով, վոր հատուկ և միայն գյուտ անող և վոճիր նյութող մարդկանց։

Յեվ այստեղ գեռևս Անտոնի դլխով հանցավոր մտքեր անցան։

III

Պերեզմանին նայելու միջոցին նրա մտքում հանկարծ մի հուշ ծագեց։ Հիշեց հանկարծ մանրավաճառ Մխիթարին և, նրան հիշելով մտածեց, վոր շատ կարելի յե՝ քսակը վալը դյուտ լինեն հենց նրա խանութում։ Ջի՞ վոր այսոր առավոտյան կես ֆունտ շաքար գնեց նրանից...

Նա քայլերն ուղղեց դեպի շուկա։

Մտնելով մանրավաճառի խանութը, ժամեարը բարևեց խանութպանին և, այստեղ վորոնողի նման,

աչքերն սկսեց պտտել խանութի հատակի վրա։ Խանութպանը, վոր սպիտակ, բայց կեղտոտ գոգնոցով և թևերը յետ քշտած, լայն դեմքով մի մարդ եր, այդ ժամանակ թաց ձեռներով պանիր եր կշռում։ Ընդունելով ժամկոչի բարևը, նա, առանց նայելու թե ով և յեկողը, ասաց.

— Հը՛, ինչ կա, քեռի Անտոն։

Ժամկոչը՝ մտածմունքներով տարված, վոչինչ չպատասխանեց։ Այդ բոպեին նա մտածում եր, թե ինչպես սկսի խոսակցությունը, վոր խանութպանից մի բան իմանա քաղցր մասին։ Ուստի սկզբում վոչինչ չասաց. սպասեց մինչև վոր պանիր գնող աղջիկը հեռացավ, ապա հայտնեց, վոր այսոր ինքն ախտատես յեղավ մի յավալի դեպքի։

— Ի՞նչ դեպքի, հետաքրքրվեց խանութպանը ձեռները գոգնոցով սրբելով։

Ժամկոչը պատմեց, թե հենց նոր փողոցում տեսավ մի ուռւս կնոջ լաց լինելիս։ Ինչու՞ յեր լաց լինում... Այսոր ում-վոր խանութում բան առնելու ժամանակ՝ փողամանը կորցրել և։

— Ե՛հ, յես ել հենց իմացա ուրիշ բան և պատահել, ձիժ ածից խանութպանը։ Գանգրի աչքը լուս։

Ժամկոչն ուշադիր նայեց խանութպանի դեմքին և մտածմունքի մեջ ընկավ։

— կարծեցի՝ քեզանից և բան առել, խոսեց նա։ Ձեթե գտել ես՝ սկի չտաս, ասաց աչքի տակով խանութպանին նայելով և սպասելով, թե ինչ պիտի ասի։

Խանութպանը պատասխանեց.

— Եսոնց վոր ընկած ըններ, հասել ել կըներ... Իսկ յերբ պտնամ, նրան ինչու՞ յես տալի, հազիր քեզ կտամ։

Յեվ խանութպանը ձիժ ածից։

Ժամկոչը նորից մտածմունքի մեջ ընկավ։

— Ա՛խ և իմանում, կարելի յե վեր և գցել, գոնե յել չտանջելով՝ ապրի հետ սըրել ես...

— Աստղ և, վոր չտանջես։

— Ա՛խ և իմանում եղպես բան շատ և պատահում... Ապրե վեթտեղ ես ածում, կարելի յե հետը գնե ես ածել։

— Մեր ապրը հրեն, ձեռքը դեպի անկյունը մեկնեց խանութպանը։ Ես յերեք որ և սկի գնե չենք ածել...

Ժամկոչը գնաց դեպի անկյունը և սկսեց ձեռներով խառնել ապրը, վոր բաղկացած եր ձմերուկի ու սեխի կճեպներից, դեղձի կորիզներից և ինչ-վոր անձև ու անորոշ նյութերից, վորոնց մեջ կային և հավի վոտներ, և՛ տանձի կոթեր և թղթի կտորտանք։

— Չե, նստեղ բան չկա, ասաց ժամկոչը կատյան տեղից բարձրանալով։

Խանութպանը, վոր սկսել եր հաշիվ տեսնել այլևս վոչինչ չհոտից՝ գործի մեջ խորասուզված լինելու պատճառով։

Ժամկոչն սպասում եր, վոր նա կհետաքրքրվի այդ կորուստով։ Բայց բոլորովին անտարբեր մնաց և նույն իսկ ձիժ ածից։—«Ի՞նչ սառը մարդ է», մտածեց ժամկոչը և, խանութից դուրս գալով, դիմեց Վռնկանի հարսի տուն։

Կես ճանապարհին, սակայն, նրա դիմում ժա-

պես մի միլիոնատեր մեռաք, և նա շտապով նետվեց դեպի գետափը, ուր յեղել և հենց այդ առավոտ՝ մանրավաճառի խոնութիից վերադարձրել։

Այո, շատ կարելի յե հենց քսակը այնտեղ և վայր ընկել։ Ո՛վ և իմանում...

Գետում լողանում էին մի խումբ մանուկներ, որոնցից մի քանիսը մերկ, ինչպես Միքել-Անջելոյի Դավիթը, կանգնած էին գետափին։ Քեռի Անտոնին տեսնելով՝ նրանք ձայնեցին իրար. «ժամտարն յեկավ, ժամտարն յեկավ», ու բոլորը միասին ջուրը նետվեցին։

Ժամտարն անխոս անցավ նրանց մոտով և գնաց դեպի ապրանքները։

Դա փոս ընկած մի նեղ տարածություն էր։ Յերկար տարիներ այդտեղ էր թափվում քաղաքի բակերում հավաքվող ապրը, որը փտում էր իրար վրա և դարշահոտություն տարածում շուրջը։

Այդ միջոցին, յերբ ժամտարը մոտենում էր ապրանքարին, մի դեր, մինչև ծնգքը ցեխոտված խոզ կնճիթով ակոսում էր ապրը։ Քեռի Անտոնին տեսնելով, նա դժգոհությամբ մրթմրթաց և, ինչպես ժամտարին թվաց, անբարտավան կերպով շարունակեց իր գործը։ Խոզի այդ արհամարհանքը գրգռեց ժամտարի բարկությունը և նա մի քար վերցնելով՝ նետեց դեպի նա։

Խոզն անագին ղոռոքով հեռացավ։

Իսկ քեռի Անտոնը, ընդունելով հանդերձ, որ քսակը չի կարող ընկած լինել այդտեղ, այնուամենայնիվ, ինչպես կորուստ ունեցող յուրաքանչյուր մարդ, որ հավատում է ամեն մի անհավանական հավա-

նականության ու հրաշքի, մի վոքը պլպլալով այդտեղ, շուռտով հեռացավ, հետը տանելով նոր գտած մի բանալի և դեղի մի շիշ։

Ժամտարի հուսահատությանը չափ չկար։ Քանի գնում՝ կորած քսակը նշանակություն ևր ստանում նրա աչքում և ավելի յեր գրգռում կորուստի մեծությունը։

Զարմանալի չե. ինչպես ընկավ, վոր չմացավ. այդ ինչպես պատահեց... Յեթե մի յերեխա կորցներ, կքաշեին կձնձեին, թե ինչու զգուշ չի յեղել, իսկ ինքը, մի ահագին մարդ՝ որը ցնբենկով կորցրեց իր քսակը... Յեվ քիչ փող չկար մեջը. ամբողջ յոթ ռուբլի վաթսունյերկու կոպեկ... Յերկու-յերեք պեբեզման փողեա, յերկու-յերեք կնունք գնաս, այդքան փող հավիվ ստանաս... Հենց քսակն ինքը մի բան արժեր, թե վոչ... շատ ել հին ևր... Յեթե Վռականի հարեևն մի այդպիսի քսակ կարել տաս, կասի կես արշին կաոր և հարկավոր, վոնց վոր ասում ևր, թե մի շապկի համար յերեք արշին և պետք... Վոնց չե. հորն ողորմի...

Յեվ ժամտարն սկսեց հիշել քսակում յեղած փողերը։ Նրա մեջ կար մի հինգանոց թղթադրամ, յերկու ալտմի ժանեթանոցներ, յերեք քսան կոպեկանոց և մի յերկու կոպեկանոց։ Սրանցից բացի քսակում կար յերեք փուլ և յերկու աչքանուլունք, վոր նուչնպես դեռատիում ևր գտել։

Վերադառնալով տուն, ժամտարը գտած բանալին ու դեղի շիշը դրեց տախտի տակ և նորից սկսեց վորոնումը անհյակում ու յեկեղեցու բակում, մինչև յեկեղեցական ժամերգությունը։ Ժամերգությունից հետո շարունակեց նույնը մինչև ժանգատը։

Բայց քահանան չգանվեց։

Իսկ տերը մութը բոլորովին իջավ, ընդարձակը լռեց և լուսիյան մեջ տարածվեց գետի միապինակ խշշոցը, մթան հետ միաժամանակ ժամհարի վրա իջավ մի այնպիսի հուսահատություն, որպիսին պղում են առաջին որը բանտում փակված մարդիկ։ Նրա հուսահատությունն աճում էր ավելի անդաժդությունից։ Ի՞նչ անել հիմա՝ ուր գնալ, վերադառնալ... չէ՞ որ ամեն տեղ էլ տեսավ, ամեն անկյուն էլ նայեց... ժամհարը փայտով խառնեց կրակարանի մոխիրը։ դարձ պատահմամբ ընկած լինի գրա մեջ... Ե՜հ, վոչինչ չկա...

Նա ձեռքն վայրկյանին նրա գլխով անցավ այն միտքը, որ առաջին անգամ ծագեց լերևակալ գերեզմանի մոտ։

Հա, շատ կարելի է, արտասանեց նա, թեև ինչ-որ բան դեպավ են ժամանակ, որը կշտամ նման չէր, քարի էլ նման չէր...

Այվ ժամարն ընկավ մտածմունքի մեջ։

Ամառ անձրևում, տախտի վրա նստած, լերկար մտածում էր նա, իսկ գիշերն անցնում էր կամաց կամաց, և խավարի մեջ կարծես լսվում էր նրա թևերի թե քաղցրերի նուրբ շրշյունը, որից ասես խշշում էին և ժամհարի ականջները։

Նա, մտածելով, լերբեմն շարժում էր ձեռներից մեկն ու մեկը, ասես ճանճ քշելու համար։ Նրա զբաղում գիշատիչ ու վրտանդավոր մարդու։

Յերկար մտածելուց հետո, լերբ գիշերն արդեն բավական անցել էր, ժամհարը բարձր վերցրեց, դուրս հեկավ սենյակից և գնաց դեպի գերեզմանները՝ վճռական ու հաստատ քայլերով, ինչպես մի մարդ, որ գնում է իր վորոշումն իրագործելու։

Լուռ գիշերվա ամպդող լույսի տակ գերեզմանատան տապանաքարերը հիշեցնում էին կովերի նախիր, որ տափաստանում հատած հանգստանում է վորոճալով։ Փոքրիկ փայտը, ինչպես լերևում էր, բռնել էր վազուց։ մարդկային վոչ մի ձայն չէր լսում և բոլոր լուսները նվագել էին արդեն։ Այս ու այն կողմից լսվում էր միայն շների կենտաանջ։ Լավում էր և գետի ձայնը, վոր հոսում էր լեկեղեցուց հարյուր քայլ հեռու։ գիշերվա լուսիյան մեջ նրա խշշոցն ավելի ուժեղացել էր։ Լսվում էր՝ աշնան կաստակի հոգմեղմ տակ շտաչում և մի վիթխարի անտառ։

Ժամհարը բարձ ձեռին կանգնեց լերեկայի գերեզմանի մոտ և, լսելիքը լարած, շուրջը նայեց սուղող հայացքով։

Վոչ վոք չկար։ Յեվ ով պետք է լիներ այս ժամին պիշերին։ ամբ գործն է հասել, վոր այս ժամերը պտ գերեզմանատուն... Ժամհարն զգուշությամբ մեկ էլ նայեց շուրջը, ապա մի հայացք գցեց փոքրիկ գերեզմանի վրա, և բարը գողաց նրա ձեռքում։

Ինչպես լերևում էր, նա տատանվում էր անվճռականության մեջ. կանգնած տեղը վտանգը մեկ ահագին էր գնում, մեկ լիտ, իսկ բարի կշիռը մեկ ամուր սեղմում էր ձեռում, մեկ թուլացնում։

Մի քանի րոպե տատանվելուց հետո, քեռի Ան-

տունը հանկարծ հիշեց ինչ-որ կարևոր մի բան և բոլոր ձեռքն շտապեց տուն։

«Հա, կարող է ննջեզ լինել»։

Մտնելով տուն, վառեց յեկեղեցու մոմերի մնացորդներից մեկը և, դողդողացող ձեռքն բռնած, շրթերի վրա կաթկթեցնելով, մոտավ յերկար սեղանի մոտ...

— Չկա, չկա, ոչինչ չկա,—ասաց նա հուսահատ, դժգոհ ու վրդով ձայնով, վարոնումը վերջացնելուց հետո։

Ու կրկին՝ բոլոր ձեռքն, դուրս յեկավ տնից։ Այս անգամ նրա մկանունքները լարված էլին և ձեր քայլերն ավելի վճռական։ Նա նորից դիմեց դեպի յերեխայի գերեզմանը։

Յեվ մի քանի րոպե անց՝ նա արդեն քանդում էր այն։

IV

Յերբ, անընդհատ ու լարված գործելով, հասավ պատգին, ձեր ժամկոչը մի խոր շունչ քաշեց, ապա վերսկսեց աշխատանքը կրկնապատկված յեռանդով։

Հասնելով գերեզմանի հատակին, ուր միայն յերեք-չորս մատնաչափ հող էր մնացել, նա այդ հողը վերցնելով բահի մեջ, զգուշությամբ շուշափում, խառնում էր և դուրս շպրտում։

Յեվ այդպիսով, յերբ գերեզմանում այլևս ածուխի հող չմնաց, քան Անտոնն ուժասպառ հենվեց գերեզմանի պատին. նրա ճակատի տաք քրտինքը սառեց խնդուն, և ժամարարն թվաց, իբև ճակատին սառույցի բյուրեղներ չարվեցին։

Նա կրկին խորը շունչ քաշեց։

Բանին այդտեղ էլ չկար։

Այն ինչ՝ սա նրա վերջին հույսն էր, ամենավանական հույսը։ Նա ոչ մի կասկած չուներ, որ քսակը գերեզմանում պետք է լինի։ Չոր կասկածում, որբամենաև յերեխայի թաղումից հետո միայն չքացավ։ Դրանից դուրս՝ նա ուներ ավելի զորավոր պատճառ կարծելու, որ քսակը անշուշտ գերեզմանում պետք է լինի։ Այդ պատճառն այն էր, որ յերբ ինքը յերեխայի դագաղն իջեցնելուց առաջ մոտավ գերեզմանը, նրան պատահեց յերբեք չպատահած մի դեպք։ Փոսը մտնելու ժամանակ ժամարի վոտը ծալվեց և նա յերեսի վրա փռվեց գերեզմանի հատակին։ Յեվ հենց այդ միջոցին, նրա շրթերն իրարով անցան, և նա զգաց, որ ինչ-որ մի բան դիպավ թևին։ Յեվ այդ բանը ոչ հողի կոշտ էր, ոչ քար։ Յեթե կոշտ կամ քար լիներ՝ նա, անշուշտ, ցավ կզգար. բայց նա ոչինչ չզգաց, և դրա փոխարեն ականջի ձայն լսեց միայն, նշանակում է դա քսակն էր, որ իր վայր ընկնելու պահին, ընկավ արհավուղի գրպանից։

«Բայց ո՞ւր է հիմի, ինչո՞ւ չի յերևում», — խորհեց հուսահատության մեջ մտածում էր ժամարարը, ձեռները գերեզմանի հատակին քսելով։

Ու վորոնից յերկար, քրթմնջալով, հուզված ու քրտնաթաթաված։

Ապա, լսելով աքլորների կանչը հավաքներից և, նկատելով պլշերն անցնում և արշեն, նա վերսկսեց բահի աշխատանքը՝ այժմ գերեզմանը լցնելու համար։

«Կկարծեն թալանելու համար եմ քանդել», — անցավ նրա մտքով։

Յեվ այս միաքը սաբսաթեցրեց նրան։

Ու մկանուներնները լարած, ֆիզիկական սաստիկ պրպտման մեջ, սկսեց հողը լցնել գերեզմանը՝ բահով, վոտով, միաժամանակ ամբողջ մարմնով ու գլխով անհնարին ու ավելորդ շարժումներ անելով։ Շատպլուց՝ շատ անգամ բահն առնչ հողի չեր մեկնում գետի վրա, և այդ պատճառով շուռ-շուռ առաջ եր տրվում, կարծես մեկը թիկունքից բռնում եր նրան։

Շատպլուց՝ նա մոռացել եր ամեն ինչ. և կտրած քառակը, և առնը և իրեն։ Նրա գլխում այժմ գալարվում եր միայն մի սաբսաթեցնող միաք, թե ան՛ն ուր վոր է լուսը կբացվի և մարդիկ կգան...

Յերբ փոսը բոլորովին լցվեց, նա՝ շրթունքները սեղմած, հոգաթումբը շինեց նորից, քարը գրեց գլխատեղը, իսկ ծաղիկները թփի վրա այնպես, ինչպես գրված եյին առաջ։

Այս բոլորն անելուց հետո, նա շատպով, բահը ձեռին, գնաց սենյակը և, առանց հանվելու, պառկեց առաջին։

V

— Ես ինչ բան և, տիրացու. ով գիտի ժամնարը քնով և անցել, վոր մինչև հիմա զանգերը չի քաշում,— ասում եր քահանան յեկեղեցու բակում։—Մի տես ինչ և անում։

Տիրացուն գնաց ժամնարի դուռը ծեծեց.

— Բեսի Անտոն, քեսի Անտոն,—ասաց նա.— վեր կաց, զանգերը քաշելու ժամանակն և։

Ներսից ձայն չլսվեց։

Տիրացուն նորից կանչեց.

— Բեսի Անտոն, ա՛յ քեսի Անտոն. վեր կաց, տերտերը կանչում և։

Կրկին պատասխան չկար։

Մոտեցավ քահանան, դուռը ծեծեց, ձայն տվեց, և նույնպես մնաց անպատասխան։

Յերբ դուռը բաց արին՝ ներս մտան, նրանք ժամնարին գտան տախտի վրա յերկար մեկնված։ Նրա ձեռներն ու շորերը հողոտ եյին։ Նրանց տեսնելուց ու ձայնից ժամնարը բոլորովին չշարժվեց։

— Ո՛վ գիտի ուշագնաց և յեղել, ասաց քահանան և քթախոտի տուփը հանելով՝ մոտեցրեց ժամնարի քթին։

Այդպես եր ստուգում նա մարդկանց մեռած կամ ուշագնաց լինելը։

Ժամնարը չշարժվեց և քթախոտի հոտից։ Այդ ժամանակ միայն քահանան ու տիրացուն հասկացան, վոր մեռել և։

Իսկ թե ինչից այդ չիմացան. չիմացան և այն, թե ինչու ժամնարի ձեռները հողոտ եյին։

Քահանան յենթադրեց, վոր ժամնարը մեռել և սաստիկ մի ցավից, վորի պատճառով յերևի, յերևակ վրա չե ընկել և գետինը քանդել. ահա ինչու ձեռները հողոտ են։

Իսկ տիրացուն յենթադրեց, վոր ժամնարին ըսպանել են յերևի յեկեղեցու գողեր։ Մարդիկ են յեկել յեկեղեցին կողոպտելու, ժամնարը զգացել և նրանց, նրանք էլ, յերևի, գետին են գցել խեղճին և գլխին հատել։ Ու հենց գետին ընկած միջոցին, նա ճանկրտել և հողը։ Ահա ինչու ձեռներն ու շորերը հողոտ են։

Նրանք արին և ուրիշ շատ յենթադրություններ,

բայց մեկ ղրանցից վերն եր հավանական՝ դժվար և ասել: Իրողությունն այն եր, որ ժամերը մեռել եր...

Այսպես ահա մի անհասկանալի մահով մեռավ քեռի Անտոնը, փոքրիկ քաղաքի այն ծեր ժամկոչը:

Նրա մահից չերեք որ հետո, ախրայու Սաթիկը պերեսմանների արանքում, ապրանի համար յեղինջ քաղելու ժամանակ, մի մամուպատ տապանաքարի մոտ գտավ մի կիսամաշ շորի քսակ, որի մեջ կար ընդամենը յոթ ռուբլի վաթսուն կոպեկ դրամ, չերեք դեղին փուլ և չորկու աչքահուլունք, այն աչքահուլունքներից, որ մաղ ու խախալ ծախող բոշաները վաճառում են գավառցի և գյուղացի կանանց՝ չար աչքերի չար զորությունը խափանելու համար:

1915.

ՌՈՄԱՆՏԻԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

I

Դուք հարցնում եք ինչպես յեղավ այս բոլորը— ինչպես ապրավեցի... Դրա պատմությունը չերկար է և փոքր ինչ խճճված:

Իմ մանկության որերը տարիները չես անցրել ամեն հորեղբոր տունը: Այդ ժամանակները նա բավական տավար ու վոչխար ուներ, որոնց պահելու, խնամելու համար ինքը պահում եր չերեք-չորս նոքար: Յերեքը ղրանցից շարունակ տաբի դոմերումն եյին լինում և տուն գալիս եյին շատ ուշով—հաջիվ ամիսը մի անգամ, այն էլ այն ժամանակ, յերբ իրենց կամ չոների ուտելիքը հատնում եր, կամ էլ, յերբ տավարին ու վոչխարին ապ եր լինում պետք: Իսկ չորրորդ նոքարը միշտ տան գործին եր—ցանքին, հնձին. տայր եր բանեցնում, ջուր կրում, փայտ կոտրում կամ այդ ծառերին նայում: Սա մեր կողմի թուրք գյուղերից եր, անունը Ալի—մի շատ ժիր, լեռնցի տղա: Հայերեն խոսում եր այնպես, որ հազիվ զժվար եր ջոկել: Հորեղբորս «ապեր» եր ասում, մորս ու հորեղբորս կնոջը՝ «ալի», հորեղբորս աղջկան՝ կատաբին՝ «քուչուկ»: Մի քիչ էլ թաշալոսաով եր ու պրծնամոլ: Թեև նոքար, բայց սիրում եր կոկ հագնվել ու

զուգվել. մանավանդ կվրակին ու ատրները: Մինչդին կապում եր արծաթի կոճակներով զոտի, վոտներին՝ գործովի շալից պատիչներ, վերևը հասնում էին մինչև ծնկները: Մեծ սեր ուներ և զինքին: Ունեցածը մի հատարակ պաշտոն եր, բայց պահում եր զարմանալի խրնամքով: Հենց վոր պարապ եր լինում, պաշտոնը ձեռն եր առնում ու սրբում մոխրով կամ սպիտակ հողով. հետո ճարպ եր քաշում ու դնում պատյան.

— Եսպես մանգ չի բռնի...

Հարեգրայրս նրան գոմերը չեր ուղարկում, վորովհետև տավար պահելու համար անփորձ եր համարում, իսկ ուրն համար—ա պ ա ռ կ ա ր. Յեվ, իրոք, պատակար ու աշխատասեր տղա չեր Ալին. կպատահեր—առավոտից մինչև չորեկո հուշտ կաներ, հետո կգար՝ ջուր կրեիր, փայտ կջարդեր, ագա, չերը մոբին ընկներ, չամուտ չլիներ վիրցրած՝ կերթար ուրն տղեի խնճորի այգին հսկելու, վոր խնձոր չպոռնան... Բայց նրա ընդունակությունը միայն այդ բաներով չեր սահմանափակվում: Կարելի չե ասել՝ նրա ձեռից ամեն ինչ գալիս եր—արևից եր զործում, քանդված պատեր եր շինում, սայլի կտրած մասեր եր նորոգում, շվի չեր անում, մինչև անգամ պարում եր հարսանեքներում... Արժեր տեսնել, չերը չուխի փեշերը գոտիկը խրած, պաշտոնը գոտիկից կախ-ծուլ եր լինում՝ մի ձեռն ուկանջին, մյուսը մեջքին կռնթած: Թե այդ աշխուժության և թե հավատարմության համար հորեղբայրս սիրում եր նրան: Վոչ միայն հորեղբայրս, բոլոր անդիներն էլ սիրում էին Ալուն: Ե ս նրան սիրում էի առանձնապես այն պատճառով, վոր շվիներ եր շինում ինձ համար և անտառից հազարճ ու մոս եր բերում

չուտ-չուտ: Բերում եր և, ինչպես զրից բերած ամեն բան, տալիս եր հորեղբորս աղջկան—Կատարին:

— Ա՛ռ, քույրիկ. բեխանց համար եմ բերել:

Կասեր ու կժպտար ամաչկոտ:

Կատարը դեռ չհասել աղջիկ եր. մի քանի անգամ յղիվել էին նրան ուզելու, հորեղբայրս չեր տալիս, պատճառաբանելով, թե՝ «ժամանակ չունինք», «պատրաստ չենք»... Բայց իսկական պատճառն այն եր, վոր տանը բան անող կին չկար. մայրս հիվանդ եր, շատ ժամանակ անկողնից չեր յղնում, իսկ հորեղբորս կինը՝ գարնան սկզբից մինչև ուշ աշուն՝ տարումն եր լինում. այդ պատճառով Կատարն եր անում տան գործը—լվացք, կերակուր, քաղհան. . Դա մի շատ համեստ, հեզ աղջիկ եր. թեև հազիվ քսան տարեկան, բայց խուսափում եր առհասարակ աղջիկների հասարակությունից, զուռավոր ու խշխշան շորեր հագնելուց (նոր շորը միշտ լվանում եր և այնպես հագնում), ու հագածն էլ շարունակ սևազույն եր լինում: Այսպես եր մեր «քույրիկը»: Լինելով, սակայն, տան միակ աշխատող կինը, դա չեր, վոր հորեղբորս չափ բան ու գործ չեր դնում Ալուն:

— Ալի, վազի ջուր բեր... Ալի, փետ արա...

Ալին վազում եր ջուրը, Ալին փայտ եր կոտրում... Մի խոսքով՝ դա նույնչափ լսում եր «քույրիկին», վորքան և հորեղբորս: Յեվ դա հասկանալի չեր, իհարկե. տան գլխին մեկ անտեսուհին Կատարն եր: Յեվ Ալին, ինչպես հորեղբորս, այնպես էլ լսում եր նրան. ու Կատարն էլ պակաս չեր անում նրա հացն ու կերակուրը. մինչև իսկ լվանում եր շորերը, մի բան, վոր ընդունված չեր մեր տանը: Նոյեմբերի շո-

բերը լվանա՞լ...այդպես բան չկար: Բայց Կատարը լվանում էր: Մի անգամ, չկրր մայրս նկատեց, թե ինչպես և «մաղին տալի» Ալու շորերը լվանալ —Կատարը պատասխանեց.

— Ինչ կա վոր. Ալին ասածու տակդած չի՞...

II

Ամառն էր—խնձորի լավ ժամանակը: Բայի մոբիլա, վոր էլի անքանքում էր, բոլորս պատշգամումն էյինք քնում, իսկ Ալին պարտեզի ծառերի տակ: Հոբերդարյս ու չես պառկում էյինք տախտերի վրա, իսկ Կատարն իր անկողինը քցում էր հատակին: Նա հորից շատ էր ամաչում. մինչև նա չքներ, ինքն անկողին չէր մտնի, թեև մեր տախտերի ու նրա անկողնի արանքում կախված էր մի հին մեղար, վոր վարպուշի տեղ էր ծառայում:

Հիշում եմ ամառային այդ խաղաղ, պայծառ գիշերները... Լուսինը լողում է կապույտի մեջ. հեռվից՝ գետափի ճահիճներից լսվում են գորտերի կռկռոցը, քամին բերում է հնձած խոտի հոտ, ծառերը շշշում են հանդարտ, իսկ հատած խնձորները թափվում կամ, ինչպես մեզանում են ասում, «կաթում են» իրար յետևից—թը՛փ, թրը՛թ,—թվում էր մեկը յերկնքից, ընդմիջումներով, դգուշությամբ քարեր և քցում ցած:

— Բալրիկ, խնձոր ընկավ,—ասում եմ Կատարին:

— Սուս, թող ապերը քնի,—ասասում է նա ինձ: Նորից խնձոր է ընկնում—թը՛փ...

— Բալրիկ, մեկն էլ ընկավ:

— Լավ. քնիր, առավոտը կուտես: Թող ապերը քնի,—պզուշացնում է նա վերջին անգամ, և ինքը, լուսնին նայելով, ականջ է դնում, թե ինչպես են ընկնում խնձորները պարտիզում:

Յես քնում էի՝ առավոտվա խնձորների մասին մտածելով: Մի անգամ, սակայն, մի խաղաղ գիշեր, դուս չտալով յերկար ժամանակ: Հորեղբայրս վաղուց խռմփացնում էր, իսկ յես պառկած լսում էի ընկնող խնձորների ձայնը պարտեզից ու մտածում, թե ընկնող խնձորը տեսնես քաղցր խնձորներից է, թե թթվաշ... Մեկ էլ լսեցի, թե ինչպես Կատարը շարժվեց մեզարի յետև, վեր կացավ, հագնվեց ու անձայն քայլերով իջավ պատշգամից: Խաղաղ գիշեր էր. լուսինը մերթ յերևում էր ամպերի տակից, մերթ թաքնվում: Յես պատշգամի ճաղերի արանքով նայեցի Կատարի յետևից... և լուսնի՝ ամպի տակից ընկնող լուսով նկատեցի, վոր նա գնաց պարտեզ... Նա գնում էր արագ ու զգուշ քայլերով և շուռ-շուռ յետ նայում: Տարօրինակ թվաց, թե ինչու՞ յե Կատարն այդ ժամին պարտեզ իջնում. բայց յենթադրեցի, թե մի գուցե գնում է խնձորներ հավաքելու: Ուզում է, յերևի, հավաքի պահի, վոր յես առավոտը ընկերներիս չբաժանեմ, ինչպես անում էի հաճախ և հաճախ էլ հանդիմանություն էր ստանում... Այսպես յենթադրում էի այն պատճառով, վորովհետև ամեն առավոտ յերբ զարթնում էի ու վազում պարտեզ, հաճախ տեսնում էի թափված խնձորները հավաքած, ու միշտ այնպես էլ կարծում, թե հավաքողը հորեղբայրս է, բայց վոչ Կատարը: Դրա համար նրա պարտեզ գնալը հետաքրքրեց ինձ. տեսնենք ուր և ո՞նց հավաքած խնձորը կամ վորտեղ է պահում: «Ա՛յ թե ոմ է հա-

վաքում խնձորը», մտածեցի ու, պլուխս բարձից վեր բռնած, ճակերի արանքով նայեցի պարտեզի կողմը... Անցյալ մի քանի րոպե—կատարը չերևաց. անցյալ էլի մի այդքան—դարձյալ չկա։ «Ով գիտի խնձոր շատ կա, դրա համար է ուշանում»,—մտածում եմ ու, հետաքրքրությունից լարված, աչքերս չորս արած նայում լուսնի լուսով, ասես կաթնամշուշով վոսկեված պարտեզին։ Նայում եմ ու ականջ դնում. հեռվից ինչ-վոր անորոշ, խուլ ձայներ են լսվում. գյուղի վոսկոյում ճռնչում է մի սայլ, հարևանի բակում բառաչում է մի հորթ և ծղրիդները փոխ առ փոխ ճըռռացնում են պատշգամի ծայրում։

Բավական ժամանակ անցյալ (թե վորքան—ըմբռնվար է ասել, բայց այդ ժամանակն ինձ թվաց հավիտենության չափ յերկար, յերկար), վերջապես, կատարը յերևաց. նա զգուշությամբ դուրս յեկավ ծառերի տակից, նայից շուրջը, նայից պատշգամին, իմ կողմը ու, յերևի, մարդ չնկատելով, գրեթե վազե վազ յեկավ ժռռավ անկողին...բայց առանց խնձորի... Դա ինձ զարմացրեց։ «Ով գիտի պահել է ծառերի տակ»,—մտածեցի յես ու, առավոտը վնասելու վորոշումով, քնեցի...

Մի քանի որ անց, մի այդպիսի խաղաղ գիշեր ինձ զարթեցրեց մի անսովոր շարժում՝ պատշգամի մեջ։—Հորեղբայրս գիշերվա շորերով՝ ինչ-վոր բան եր քաշ տալիս դեպի տուն և ժանչոցը հագիվ զսպում կոկորդում. Լիրը, անզգամ... Թու...

Նրա ձայնը, գեմքը սարսափելի յեր։ Սկզբում ինձ թվաց՝ խնձորի գող է բռնել, նրան և քաշ տալիս ու թքռտում. բայց հետո, ուշադիր նայելով, ճանաչեցի—կատարն եր. լուռ, յերեսը ձեռներով ծածկած։

Ի՞նչ եր պատահել, ինչո՞ւ յեր հորեղբայրս նրան քաշ տալիս—չհասկացա։ Նա այնպես եր բարկացած, վոր ձայն հանել չհամարձակվեցի. ավելի շուտ՝ զարմանքը տարել եր ինձ։—Հորեղբայրս՝ Իրիցանց Անտոնը քաշ է տալիս իր աղջկան... Ինչո՞ւ։ Այսպիսի բան չեյի տեսել յերբեք։ Նա այնքան եր սիրում աղջկան, վոր հիմա նրա այդ վարմունքը, ծանր խոսքերը, թքռտելը—այլանդակ յերազ եր թվում ինձ։ Ինձ ապշեցնում եր և այն, վոր կատարն ինքը ձայն չեր հանում։ Հայրը ձգում եր նրա թևից, մազերից, քացի յեր տալիս մեջքին, կողերին... բայց կատարը լուռ եր, անտրտունջ, ինչպես փայտ... Քաշ տալով ու հայհոյելով՝ հորեղբայրս կատարին դցեց տուն, դուռը վրան փակեց ու ինքը, շորերը հագնելով, իջավ պարտեզ։ Զարհուրելի յեր նրա կերպարանքն այդ րոպեին. կատարյալ սեակնած ամպ։ Ո՞ւր եր գնում կես-գիշերվա այդ ժամին—գժվար եր հարցնել, խմանալ։ Բայց նա պատշգամից իջավ մի կատաղի վճռականությամբ ու աներևութացավ պարտեզի ծառերի մեջ։

Յես այլևս չկարողացա քնել։ Կատարված գեպքի խորհրդավորությունը յերկար տանջում եր իմ մանուկ ուղեղը և ցնցում նյարդերս։ Իսկ ներսը՝ սենյակում մայրս իր հիվանդությունը մոռացած, շարունակ հոգոց եր քաշում ու ծնքում.

— Վայ, հողն իմ գլխին, խայտառակվեցինք... վայ, քոռանամ... Ինչ պըտի առնի մորը...Ինչ պրտի առնի...

Ջեյի հասկանում ինչ և կատարվել. մորս հարց-

նել ել չելի համաբաժակվում, բայց պգում եյի, վոր մեծ դժբախտութիւն և պատահել...

Մինչև առավոտ հորեղբայրս չերև այ։ Առավոտը չերևաց և Ալին. սպասեցի, վոր գա միասին գնանք ապրյուրը Ջրի—չեկավ. յեղները արոտ տանելու ժամանակն յեկավ—դարձյալ չերևաց։ Վերջապես, յերբ հորեղբայրս յեկավ մռայլ, յես հարցրի.

— Ալին ուր ա, ապեր։

Նա աչքերը բարկութիւնեմ խեթեց վրաս։

— Յեղնիքը սոված են ախր...

— Ջենդ կտրի,—բղավեց նա։

Յես լռեցի ու մի կողմ քաշվեցի հորեղբոր բարկութեան վրա զարմացած։ Յես յեղների վիճակով հետաքրքրվում եյի միայն նրա համար, վորովհետև վախենում եյի Ալին հետս տեղ գնացած լինի և ինձ ուղարկեն յեղներն արածելու, ինչ վոր լինում եր յերբեմն և ինչ վոր յես չեյի սիրում։ Այնա ինչու, յերբ հորեղբայրս դուրս գնաց, նույն հարցով անմիջապես դիմեցի մորս.

— Ալին ուր ա գնացել, մայրիկ։

— Ջենդ կտրի, հողեմ նրա գլուխը,—յեղավ մորս պատասխանը։

Յերբեք մայրս այդպես չեր խոսած Ալու մասին։

Յես լռեցի, չհասկանալով թե ինչու միանգամից հորեղբայրս ու մայրս բարկացած են և չեն ուզում խոսել Ալու մասին։ Զեյի հասկանում և այն, թե ինչու Կատարին վռակել են կողքի սենյակում։

Ճաշի մոտ սարից յեկավ հորեղբորս կինը—ալին՝ այլայլված ու դժգույն։ Նա սովորաբար սարից քիչ եր գալիս, իսկ յերբ գալիս եր՝ հետը մի յոթ տոպրակով քամած մածուն, բաղարճ ու նոր պանիր եր բերում, և մեզ յերեխաներիս անվերջ համբուրում, խոսեցնում։ Այս անգամ—վոչ մի բան. յեկավ պատառկածնեն ու մռայլ և վոչ մի խոսք մեզ հետ։ Այդ ել տարօրինակ եր, ինչպես հորեղբորս ու մորս վերաբերմունքը։ Գալուն պես հորեղբայրս տարավ նրան մորս անկողնի մոտ և այնտեղ յերեքով (մեզ՝ ինձ ու յեղբորս, դուրս արին սենյակից), մեզանից թագուն, ինչ-վոր խոսեցին մի քանի րոպե, վորից հետո ալին (հորեղբորս կինը) ավելի մռայլ ու հերսոտ իրեն գըցեց աղջկա սենյակը. քիչ հետո լսեցինք, թե ինչպես նա հայհոյում, անիծում և Կատարին ու հառաչում։

— Գետինը մտնի, Կատար աղջիկ, գետինը մըտնի... Ել վռնց պըտի բնաս աշխարհին... Ել վռնց պըտի բնաս...

III

Այդ օրն ամբողջ և թե հետագա օրերը մերոնք խոսում և իրենց պահում եյին այնպես, կարծես տանը ննջեցյալ եր դրված։ Կատարը ճում եր փակված։ Վաքքան ել մերոնք աշխատում եյին կատարվածը ծածկել, սակայն դա անկարելի յեղավ։ Իմացա վոչ միայն յես, այլ և հարևանները. սկսեցին խոսել այն մասին, վոր մեր Կատարը սիրել և Ալուն և դիշերները տեսակցութեան և ուռնեցել նրա հետ՝ ծառերի տակ։ Յեվ ահա մի այդպիսի տեսակցութեան ժամի՝ հորեղբայրս վրա յեր հասել։

Ալին փախել եր, Կատարը—բռնվել։

Հորեղբորս կինն այլևս սար չդնաց (նրա տեղ վար-

ձով ուղարկեցին մի հարևան կին)։ Կատարի աշխատանքն այժմ նա չեր անում, վորովհետև Կատարը, դեպքի գիշերից հետո, ել մարդու չերես չեր դուրս գալիս, և մայրն որը մի քանի անգամ մտնում եր նրա սենյակն ու անիծում.

— Գնա՛ինը մտնես, Կատար աղջիկ, գնա՛ինը... Մարդը կորվել եր, թուրքն եր սպանե՛լ—լսում եյի հաճախ նրա ձայնը պատշգամում։

Ցեվ վորովհետև Կատարը լռում եր շարունակ, մայրը բորբոքվում եր ավելի ու շարունակում նախատինքը։ Նա խոսում եր չերկար, խորտակված ու խուլ ձայնով, վոր ասածը մարդ չլսի։

— Բա դու սկի չմտածեցիր, աղջի, վոր նա թուրք ե, դու խաչապաշտ։ Այ խաչը խառվ կինա գլխիդ, նը՛... Ցես հիմի վոնց չերևամ մարդամիջը...

Մեր ընտանիքի համար ծանր, հոգեմաշ որեր եյին։ Հորեղբայրս ամոթից, գլխարկն աչքերին եր գցել և մարդու հետ չեր խոսում։ Ցեվ առնասարակ բոլորը տանը խոսում ու շարժվում եյին այնպես, կարծես կողքի սենյակում մեռել լիներ։ Մերոնք հարևաններին տուն չեյին գնում և նրանց տեսնելիս՝ աչքները դիտին եյին գցում։ Իսկ թաղի չերեխաները, չերբ հետս թշնամանում եյին խաղի ժամանակ, ինձ վիրավորելու համար ասում եյին.

— Թուրքի խնամի, թուրքի խնամի...

Այս բոլորը դեռ վոչինչ։ Շուտով պարզվեց մի ուրիշ բան, վոր ցնցեց մեր ընտանիքը։ Պարզվեց, վոր Կատարը չերեխա ունի։ Ցեվ այդ պատճառով նրան տեղափոխեցին յախատուն և դուրը վրան փակեցին։ Նը-

բան տալիս եյին հաց, ջուր, կերակուր, բայց դուրչնչեյին թողնում. առենք՝ նա ինքն ել դուրս չեր գալիս։ Ցես որը մի քանի անգամ նայում եյի յախատան դռան ճեղքերից, տեսնելու ինչ և անում Կատարը։ Ցեվ ամեն անգամ տեսնում եյի նրան յախատան կլոսախավարում յախերի վրա նստած՝ ծնկները չերկու ձեռքով գրկած, միաք անելիս։ Նրա գլխաշորի տակից չերևում եյին խճճված մազերը, գեմքը թվում եր փոքրացած ու նիհարած։ Կատարին կերակուր տալիս եր մայրը. դուռը բանում եր, ուտելիքը (հաց, ջուր կամ կերակուր) գնում շնմքի այն կողմը և դուռը նորից վրա քաշում։ Ցես չերբեմն թագուն հետևում եյի նրան, տեսնելու, թե ինչպես և ընդունելու Կատարը հացն ու կերակուրը, և ամեն անգամ նկատում եյի միևնույնը— մայրն անիծում ու չանչում եր Կատարին, բայց միշտ հետևում եր աչքերը գոգնոցի ծայրով սրբելով...Ինձ պատվիրել եյին մարդու բան չասեմ, թե վորտեղ և Կատարը։ «Ցեթե հարցնեն վոնտեղ և,—խրատել եր մայրս,—կասես՝ «սարումն ա»։ Ամեն հարևան սար չեր գնում, վոր ասուգեր ասածես ճիշտ լինելը, և հետո՝ սարում մեր հարեանններից գրեթե չկային. այնպես վոր ասածես կարող եյին հավատալ։ Ցեվ, իրոք, չերբ խնամում եյին սարումն և—շատերը հավատում եյին կարծես։ Բայց մի որ մեր հարեանուհի Ցերկար Ցեղանոը ծիծաղից խոսքես վրա.

— Սարո՛ւմ—գոչեց նա Պողոսանց Շողերին,— Նանոզ հո ավելի վատ կըլի։ Ալին հենց սարումն ա հիմի...

Շատ բան եյին խոսում հարեանները, բայց դրա-

ձո

տից քիչ բան եր հասնում հորեղբոր ականջը։ Փողոցում յերեխաները յերբեմն հարցնում էին ինձ.

— Ձեր վեսեն վորտե՞ղ ա...

Ասում էին, ծիծաղում ու վախչում։

Մի անգամ այդպիսի խոսակցության վրա հասավ հորեղբայրս։ Տղաները չարախնդացությամբ շրջապատել էին ինձ և հարցնում էին, թե յ՞երբ և լինելու կատարի ու թուրքի հարսանիքը։ Յես ամոթից ու զայրույթից, չիմանալով ինչ անել, հայհոյում էի. «Կուրբ, լրբեր...շան լակոտներ»... Մեկ էլ անկատելի մի ձեռ ուսս թափ տվեց։

— Դու ևսեղ ինչ գործ ունես, հը՞,—լսեցի հորեղբոր բամբ ձայնը։

Տղաները փախան, իսկ յես վախից կուչ յեկա։

— Ել քեզ լակոտների հետ չտեսնեմ,—ականջս ձգեց նա։

Մեկ-մեկ էլ հարևանուհիները գալիս մեր տուն և, ինչ-վոր գործի մասին խոսք բանալով, հետաքրքիր ագահ աչքերով նայում էին կողքի սենյակին։ Յես այդ բանին ուշ չէի դարձնում, բայց լսեցի, թե ինչպես հորեղբորս կինը զանգատվում և մարդուն, վոր հարևանուհիները գալիս են և «աչքերը չորս արած» նայում, տեսնեն ինչ կա, վորտեղ և «ևն գլխամեռը»։

Հիմա տանը կատարին ուրիշ կերպ չէին կանչում, բայց յեթե «ևն գլխամեռը»։

Հորեղբայրս, լսելով հարևանուհիների հետաքրքրքրության մասին, կարգադրեց՝ նրանց այլևս մեր բակը չթողնել, իսկ «ևն գլխամեռին»—դուրս։

Առաջին որերը կատարը պարապ եր ցախատանը, հետո նրան գործ տվին—մի տոպրակ լիքը հավի փետուր, վոր քաշի։ Այնուհետև նա զբաղվում եր դրանով—մեկ-մեկ քաշում եր փետուրները և լցնում տաշտի մեջ։ Դրան ճեղքերից տեսնում էի, թե նրա նիհար մատներն ինչպես են մաքրում փետուրը։ Դունատ դեմքը մտածկոտ եր միշտ ու տխուր։ Երան նայելիս՝ խղճում էի, վոր դուրս չի գալիս և, առաջվա պես, ել չի պատում պարտիզում, խնձոր չի քաղում։

— Բուլբիկ, խնձոր կուզե՞ս,—հարցրի մի որ դրան ճեղքից, յերբ մտածկոտ մարդ չկար։

Նա տատծա, կարծես, լավ չլսեց, բայց իմ կողմը նայելով՝ հարցրեց.

— Սենո, դու՞ յես։

— Յես եմ, քուլբիկ... Խնձոր կուզե՞ս, բերեմ։

— Բե՛ր։

Գնացի պարտեզ, վերնաշապիկիս ծոցը խնձոր լցրի ու բերի կատարին. նա խնձորները դռան ետևում դրեց նախկին տեղը—փետուրի տոպրակի ու տաշտի մոտ։

Յեվ այնուհետև, դրեթե ամեն որ, մերոնցից ծածուկ, խնձոր էի տալիս նրան։ Կատարը մի յերկու խոսք եր ասում ու լռում։ Հարցնում եր ինչպես և մայրս, ինչ են խոսում դուրսը։ Յես ամեն բան, ինչ-որ կա, չէի ասում. բայց մի որ նա կանչեց, նստեցրեց ինձ իր մոտ ու ասաց.

— Սենո, յեթե մի բան հարցնեմ քեզ, մարդու հո բան չե՞ս ասի։ Հը՞.

— Չե։ Ինչ յեմ ասում։

— Հը, չես ասի, չե՞,—հարցրեց նա ու կարմրեց։ Յես կրկին խոսք տվի, վոր վոչ-վոքի բան չեմ

ասի։ Նա հանգստացավ կարծես և, գլուխը կախ գցե-
լով՝

— Սևնո ջան,—ասաց կամաց, այնպես կամաց, կարծես վախենում էր մեկը կարող և լսել։—Ալին վիր-
տեղ ա...

— Ալին... Չեմ իմանում. վաղուց չկա։

— Դրուտան ասա, Սևնո ջան... Ինչ են խոսում նրա մասին։ Զդիտե՞ս։

— Չե. բան չեն խոսում։

Նա տխրեց ու գլուխը քաշ արավ, և չես նկատե-
ցի, թե ինչպես արցունքի կաթիլներ ընկան նրա աչքերից։

Յես, առհասարակ և մերոնք, չդիտեինք իսկապես-
ը և Ալին։ Շուտով, սակայն, նրա տեղն իմացանք։ Հարևան տղաները նրան տեսել էին անտառում, և Ալին նրանց հանձնարարել էր հետևյալը. «Ասացեք Իրիցանց Անտոնին (այսինքն՝ հորեղբորս), թե լսել եմ, որ կաթարին ծեծում ա. Թող վերջ տա, թե չե»... Ու սպառնացել էր սպանել հորեղբորս։ Այդ լսելով՝ հորեղբայրս շատ բարկացավ, բայց միաժամանակ կաս-
կածեց, թե չլինի հարևանի տղաները այդ բոլորը դիտմամբ, ծաղրելու համար են ասել .. Բայց դա պըժ-
վար էր սուտկել։ Նրանք այնքան լուրջ ձևով էին ասել, որ մեղադրել դիտավորյալ բանի մեջ—դժվար էր։ Այսպես թե այնպես՝ հորեղբայրս շատ բարկացավ այդ լուրի վրա։ Ու մի քանի որ վրդովված էր, չգի-
տես Ալիի վրա, լուր բերող տղաների, թե՞ կաթարի... Ուտում էր միշտ չկայնացած, մռայլ բարկանում էր աննշան բանից ու ճչում. իսկ յերբ անցնում էր յա-
խտանի մոտով—թքում էր ատմուկով. «Թուռ». Այն-

պես բարձր, վորպեսզի կատարը լսի իր բարկությունը։

— Դրա յերեսից ծաղրատեղ եմ դառել,—ասում էր նա։—Թուրքը չէր համարձակվի եղպես բան ասել։ Շան լակոտները ծաղրում են ինձ...

Բայց հորեղբորս կատածն ի զուր էր ապտների մասին։

IV

Մեր կողմերում աշնանը սովորություն կա, վոր պյուղացիք խմբերով—մարդ թե կին, մեծ թե փոքր—տոպրակներ առած գնում են անտառ՝ վայրի տանձ, խնձոր հավաքելու։ Տանձը «թթու յեն գնում», իսկ խնձորը պահում են ձմռանի մեջ և ձմռան ուտում տաք վառարանի մոտ։ Յեվ ձմեռն այնքան համով են թվում այդ տանձն ու խնձորը, վոր անեցիք խլում են իրար ձեռից։

Այդ աշնանը մի որ ընկերներիս հետ յես էլ գնա-
ցի տանձի։ Վերցրի մի փոքրիկ տոպրակ, հայ ու պա-
նիր, ու ճոնապարհ ընկանք։ Վորովհետև անտառի պռնկի տանձենիները, մոտիկ լինելով, վաղուց քաղ-
ված էին, այդ պատճառով գնացինք առաջ, անցանք բավական տարածություն,—«անտառատ» - այսինքն չը-
քաղված ծառեր գտնելու։ Քանի գնում էինք, ծառ-
երը քաղված էին լինում. այնպես վոր շատ հեռա-
ցանք, մտանք բոլորովին անտառի խորքը, և այնտեղ, խիտ ծառերի արանքում՝ թփուտների մեջ գտանք մի տանձենի, վորը պտուղներով ծանրաբեռ, ճղներն այն-
պես էր իջեցրել, վոր հեռվից նմանվում էր յեղևնու. միայն կատարն էր անկված... Ուրախ-ուրախ բար-
ձրացանք, թափահարեցինք գրեթե բոլոր ճղները, հե-

տո իջանք և սկսեցինք ծառի տակ փռված տանձը հավաքել ու կիսուկները անել, որ տոպրակները լցննենք։ Այտեղ աբդեն՝ տանձ հավաքելու պրծում՝ վոչ մի կարգ չկա. ով ինչքան հավաքում է—իրենն է, ու ամեն մեկը վորքան կուռանդ ու հնար ունի—պրծ ի դնում շատ հավաքելու. մարդը պառնում է չորս ձևռքանի, այնպես արագ և աշխատում։ Վոչ մի տեղ, գուցե, մարդու ազատութիւնն այնպես չի երևում, ինչպես, որինակ, այսպիսի բաներում, երբ պիտի, որ ինչքան հավաքի—իրենն է։ Մարդ ընկնում է ինքնամոռացութեան մեջ և միայն մի բան է մտածում—հավաքել, հավաքել, հավաքել...

Ծառը թափ տալուց հետո մի այսպիսի ինքնամոռացութեան մեջ եյինք մենք, երբ աննկատելի մատևցան մեզ երեկ հոգի... Յես թփերի մեջ եյի. աշխատում եյի վորքան կարելի չի շատ հավաքել, այդ պատճառով չկողնների կերպարանքը լավ չնկատեցի։ Մոտենալով՝ նրանք հարցրին.

— Ի՞նչ եք անում, ապեր։

— Տանձ ենք հավաքում,—պատասխանեցին տըղաները, առանց հավաքումն ընդհատելու։

Խոսողի ձայնն ինձ ծանոթ թվաց, և յերբ տղաները պատասխանեցին,—յես թփերի արանքով նայեցի դեպի չկողները և տեսա... ծառի տակ կանգնած եր մեր Ալին՝ դաշույնը գոտիկից կախ և մի թափանչա ուսը գցած... Վախից տանձահավաքը թողի և լուռ նստեցի թփերի մեջ։ Մտքովս անցան հազար ու մի բաներ—չեթե ինձ տեսնի, ինչ կանի աբդյոք. չի ծեծի, չի հայհոյի և ... գուցե սպանի... Հրացանով ահագին կեր նա, սարսափելի. մանավանդ գնդակը՝ մտա-

պատիլ եր, գուլպը գցել. թվում եր նրհարել և, չերկարել ու վայրկեանացել։

Մինչ յես թփերի մեջ մտածում եյի, Ալին ու ընկերները նստատեցին խոտերի վրա։ Ալին հարցրեց ընկերներից, թե ինչ կա պլյուշում։ Տղաները, առանց հավաքումն ընդհատելու, պատասխանեցին—«վոչինչ»... Նրանք Ալիին եյին ճանաչում, Ալին՝ նրանց... Վերջապես, հարց ու փորձը հասավ մեր տանը։ Ալին հարցրեց, թե իրիցանք վոնց են...

— Իրիցանք... ասաց տղաներից մինը՝ Սիրուհանց Պետին ու ձայն տվեց ինձ։—Սենո, ապեր, Ալին ձեր մասին ա հարցնում...

Սիրտս խփեց կրծքիս. սկսեցի դողալ։ Ի՞նչ պիտի լինի, տեր աստված!... Թվում եր աշխարհը մթնում է, և յես կտրվում եմ հոգից։ Թաքնվել այլևս չեր կարելի... Ջևացրի, թե շատ եմ զբաղված և իբրև թե լավ չլսեցի ու ձայն տվի, թե ի՞նչ կա։

Այս անգամ, ընկերներից փոխարեն, կանչեց Ալին ինքը։

— Սենո՛, հասել ապի հլա...

Յես, տանձը վերնաշապկիս փեշը լիքը, դուրս կեկա թփերից, մի թաղուն ահ սրտիս։

Սակայն, սպասածիս հակառակ, Ալին ինձ դիմավորեց ժպիտով ու սրտաբաց.

—Հը՞, վոնց ես, ալ տղա,—ասաց նա մեզմ, սրտալիր։—Տանձի՞ յես յեկել...

Ու փայփայանքով ձեռը մի քանի անգամ անցքիս խփեց։

Յերբ փեշիս տանձը լցրի տոպրակը, Ալին հարցրեց

— Ձերանք վճռոյ են։

— Վոչինչ. լավ են։

— Մերդ վճռոց ա. լավացել չի։

—Չե՞ դեռ պառկած ա։

Ալին խոսում էր, չես աչքի տակով նայում էլի նրան և դգում, նկատում էլի, վոր նա անհանգիստ է. աչքերը շարունակ շրջում էր դես ու դեն և, թվում էր, ինչ-վոր բան է ուզում ասել—չի կարողանում։ Վերջապես նա հրացանը ծնկներին դրից ու կամաց, ավելի կամաց, քան առաջ—հարցրեց խորհրդավոր ձայնով.

—Կատարն ի՞նչ ա անում...

Նայեցի նրա մազմազոտ դեմքին ու հայացքս իջեցրի։

— Բմբռել ա քաշում...

Նա լռեց, շրթերը սեղմեց իրար և նորից դես ու դեն նայեց։

— Սենո,—խոսեց նա հանկարծ,—հորդրերդ հո նրան չի՞ ծեծում։

Յես գլուխս շարժեցի.—Չե։

— Մերը՞։

Յես գլուխս նորից շարժեցի.—Չե։

— Ա՛յ, Սենո,—ասաց նա խնդրելու և սպասելու պես—Դրուսան ասա—ծեծո՞ւմ են թե չե...Չի՞... Բա յես լսել եմ, վոր ծեծում են։

Հավատացրի, վոր Կատարին վոչ-վոք չի ծեծում։

Չհավատաց։

— Դե ասա «մորս արևը»։

— Մորս արևը։

Ալին հանգստացավ կարծես, գլուխը քորեց՝ ինչ-վոր մոքի յուռնից ընկած ու նորից հարցրեց.

— Բա հիմի վո՞րտեղ ա Կատարը։

— Մեր տանը։

Նա փորձող հայացքով նայեց ինձ։

— Սուտ ես ասում, Սենո,—բարկացավ Ալին։—Ինձ ասել են, վոր հերդ նրան ջախատունն ա դցել ու ամեն որ ծեծում ա։ Իրուսան ասա...

Յես գլուխս քաշ դցեցի։ Զգիտեմ—ինքնասիրությունս, թե մեր տան պատիվը—թույլ չեր տալիս, վոր պատանիքներ հայտնեմ նրան։ Բայց նա ամեն բան գիտեր արդեն։ Վո՞րտեղից... Նա կարծես հասկացավ զրույցս։ Նորից մեղմացավ, էլի մի քանի հարց տվեց, հետո վեր կացավ, հրացանը ուսը դցեց ու թեք պատ ավեց վզովս։

— Սենո ջան, հորեղբորդ կասես, վոր ինձ տեհար եսաեղ... կասես, վոր Կատարին ծեծի վոչ.. թե չե—վատ կըլի...Իմացա՞ր... Հետո,—նա ձայնը իջեցրեց ու թեքվեց ականջիս.

— Սենո, մի բան ասեմ—կկատարի՞ս։ Հը՞...

— Ասա։

Նա նորից ընկավ ականջիս.

— Կատարին կասես, վոր... վոր... դարդ չանի... լաց չըլի... Իմացա՞ր...

Նրա ձայնը դողաց։ Նայեցի—աչքերը լիքն էին արցունքով. բայց աշխատում էր զսպել իրեն. աչքերը փակեց, դուրս ցնկած արցունքները սրբեց մատների ծայրով ու, գլուխը կախ դցելով, սկսեց սրբելներով կապերն արձակել։ Ինձ թվաց, այդպես ավրալ, վոր ընկերները արցունքները չտեսնեն։ Բայց նրանք թափվում էին տրեխների վրա...

V

Յես առն յիկա ընկերնէրէյս ավելի պակաս ատնձով։ Յիկա հուզված և, չկարողանալով հուզումս պահել, ամեն բան պատմեցի մորս, բացի այն հանձնարարութիւնից, որ վերաբերում եր Կատարինե։ Իսկ մայրս իր հերթին պատմեց հօրեղբօրս։

Հօրեղբայրս բարկացավ, վրդովեց.

— Յես նրան ցույց կտամ, թուրքի լամուկին։ Հինց հիմի կերթամ պրէստավին կհայտնեմ, լրին բռնել կտամ...

Ու հուզված դնաց-յիկավ անդադրում։

Դնաց-յիկավ մի քանի անգամ ու դարձավ ինձ.

— Եդպես էլ ասավ, որ ինձ հայտնես, հա՞։

Յես վախից գլխով արի միայն։

—— Ասում ես թվանքո՞վ եր... հետո էլ յերկու տղա կայլե՞ն...

Յես նորից գլխով արի։

Նա էլի դնաց-յիկավ մտածումների մէջ։

— Ուրիշ էլ ի՞նչ ասավ։

— Ուրի՞շ... ուրիշ էլ բան չասավ,—ասի յես և դգացի, թե ինչպես կարմրում եմ։ «Բայց չէ, մտածիցի, ինչ էլ լինի, Կատարի մասին ասածը չեմ հայտնի»։

— Լա՛վ։ Յես նրան ցույց կտամ,—ինքաց հօրեղբայրս և նորից դարձավ ինձ.—Իսկ դու ի՞նչ գործ ունեցիր անտառում. քեզ ո՞վ եր գրկել հը՞... Լավ բան համար չես գնա... Բարի խոթարներ ա բերել ինձ համար։ Էիրը։ Մեկ էլ դու մերին գնա, քեզ ցույց կտամ...

Նա ուզում եր բարկութիւնը թափել իմ գլխին, բայց յես, յետ-յետ գնալով, ծլկվեցի կիսաբաց դռնով։

Այդ գիշեր մերոնք չքնեցին համարյա, ու ամենից ավելի յես, չնայած շատ նման հոգնած եյի։ Բոլոր ժամանակ մտածում եյի՝ Ալու ասածը հայտնե՞մ կատարին թե՞ վոչ, կամ յեթե հայտնեմ—ի՞նչպես, ի՞նչ ձևով...

Առավոտը, սակայն, յերբ հօրեղբայրս դուրս յեկավ տնից, յես պատշգամից իջա և մտա յախատուն։ Կատարը նստած փեսուր եր քաշում՝ վրան-գլուխը փեսրի մեջ թաթախված։ Ինձ վոր տեսավ—զարմացավ։ Այցելութիւնս հերթից դուրս եր և անակնկալ։ Նա աչքերը հառից յերեսիս, սպասելով ինչ եմ ասելու։

— Բուլբիկ,—սկսեցի առանց այլևայլի,—յերեկ գնացել եյի մերին՝ տանձի... Ալուն տեսա...

Կատարը գլուխը թողից ու հոգոց քաշից, նրա կուրծքը բարձրացավ-իջավ, բարձրացավ-իջավ մի յերկու անգամ և գեմքը կարմրեց.

— Տեսա՞ր... խոսեցի՞ր... ի՞նչ ասավ...

— Ասում եր՝ ասա «գարդ չանի», «լաց չըլի»...

Կատարը գլուխը կախեց ու լռեց.

— Ի՞նչ եր անում,—հարցրեց նա քիչ հետո...

Պատմեցի, վոր մենք տանձ եյինք հավաքում, նա մտատյալ յերկու մարդու հետ։ Ջոխին էլ «թվանք» կար։

— Թվա՞նք...

Նորից մտախոհ նայեց գետնին և, տեղնելով, ուզում եմ գնալ, կանգնեցրեց.

— Սենո, ուրիշ էլ ի՞նչ ասավ։

— Ուրիշ... էլ բան չասավ։ Եղբանը, ասավ՝ անպատճառ կասես։

Այս խոսքերիս վրա Կատարի սխուր գեմքը պայծառացավ հանկարծ, իսկ աչքերը փայլեցին ինչ-վոր կրակով։

Յես, վախենալով, վոր հորեղբայրս վրա կհասնի հանկարծ, շտապեցի դուրս, բայց Կատարը նորից կանդնեցրեց, այս անգամ արդեն շեմքին։

— Սենո, մեկ էլ չ՚երը ես գնալու մերին։

— Մերի՞ն...Զգիտեմ,— պատասխանեցի, էլ չասելով, թե հայրը արգելել է։

— Յերբ վոր գնալու ըլես, ինձ ասա,—խնդրեց նա.——Չե՞, Սենո. կասի՞ս...

Յես խոստացա, էլ չհարցնելով թե ինչ եր պատահու...

VI

Վորքան էլ հորեղբայրս սպառնար, թե անտառ գնալու համար կպատժի ինձ, յես այնուամենայնիվ դրանից չեյի վախենում. յերբ էլ ուզեյի, կարող եյի գնալ ու գնալս թագցնել։ Շատ եր պատահել՝ թագուն գնացել եյի վորևե տեղ ու խաբել, թե խաղում եյի ընկերներիս հետ կամ լողանում... Բայց մինչ այդ, այսքանը մինչև յես անտառ կերթայի—պատահեց մի դեպք, վոր հորեղբորս սաստիկ կատաղեցրեց։ Թեև սեպտեմբերի վերջն եր, բայց յես ու հորեղբայրս, ասոսջվա պես, քնում եյինք դեռ պատշգամում, նախ նրա համար, վոր ծառերը հսկենք, յերկըսուդ, վոր ներսը դեռ չեր գրավում. Մանավորապես ինձ հաճելի յեր պատկել պատշգամում ու նայել նայել աշնան ջինջ յերկնքում վառվող աստղերին։ Վորքան խորհրդավոր ու դյութական եյին աստղերն այդ ժամանակ... Հաճախ այնպես եր թվում, թե նրանք պրնգում են յերկնքում, ձայնակում են իրար և որոշ ասում ինձ... ու իմ մանուկ սիրտը ճխում-ճախրում եր աստղերի նվագից, քուն եր մտնում աստղային յերազով և քնի մեջ թռչում աստղային վոլորտներում։ Իսկ ամպ գիշերը սիրտս տխրում եր, և յես առավ ելի նայում գիշերվա մթին։

Յեվ ահա, իմ անտառ գնալուց մի շաբաթ անց, մի այդպիսի մութ գիշեր յես զարթնեցի—հորեղբորս անհանգիստ ձայնից.

— Ո՞վ ա... ովկա եդեդ...

Քնաթաթախ աչքերս բաց արի և տեսա հորեղբայրս, անկողնում նստած, ականջ եր դնում ինչ-վոր բանի ու ձայն տալիս. «Ո՞վ ա»... Պատասխան չստանալով՝ նա իջավ տախտից և, գիշերային շորերով, բոբիկ մտեցավ պատշգամի ճաղերին։ Յերեսը դեպի ուսը թեքած՝ ականջ դրեց նորից։ Վոչ մի ձայն։ Յես նույնպես ականջ դրի՝ ան առած սրտով։ Վոչինչ չեր լսվում։ Ինձ թվաց խնձորի գող և մտել բաղը, հորեղբայրս լսել և՝ զարթնել։

— Ո՞վ ա, ամի,—հարցրի հետաքրքիր։

— Վոնց վոր մարդ մտավ մեր հայաթը։ Դու լսեցի՞ր։

—Չե։

Նա մի վոռը կանգնեց մտածումների մեջ, հետո շատ յեկավ դեպի անկողինը։

— Ասենք, յեթե մարդ ըլներ, շունը կհաչեր,—ասաց լինքն իրեն, ու նորից շուռալվից վերմակի

տակ, քթով ծանքալով ու գլխի շորն ուղղելով (քնելիս նա թաշկինակ էր կապում գլուխը, որ չմրսի)։

Ձեր ծնցել, սակայն, մի յերկու րոպե, նա նորից անհանգիստ շարժվեց տեղում։

— Սենա, պարթևն ես, — շշնջաց խորհրդավոր։

— Հա։

— Բա չե՞ս լսում։

— Ի՞նչ։

— Խոսելու ձեն չե՞ս լսում։ Մեկը կարծես խոսում է, չե՞...

Յես լարված լսողությունս պարձա. հարևանի շունն էր միայն կենտանջ տալիս իրենց բակում, և էլ բան չէր լսվում, բայց այն կարծիքը հայտնեցի հոբելյարին, որ այդ խոսակցությունը, դուցե, Մաթոսանց (հարևանի) բակումն է։

— Չէ՛. նրանց խոսելու ձենն ասոնց չի գա։ Հենց ա մեր հայերումն են խոսում...

Նորից լռեց ու լսելիքը լարած՝ թիկն տվեց բարձին։

Յես նույնպես ականջ դրի։ Յեվ այս անգամ, իրոք, խոսակցության ձայն լսեցի, որովհետև շունը հանկարծ դադարեց հաչելուց։

— Ինչ ասում եմ՝ դնանք,— ասում էր մի ղուսպ ձայն։

— Վայ. վոնց կըլի. չե՛, չե՛,— պատասխանում էր մի ուրիշ ավելի ղուսպ ու նվազ ձայն։

Գիշերն, ինչպես ասի, մութն էր. անաստղ, անլուսին, և մի բարակ հով էր խաղում պարտիզում. ծառերը սոսափում էին մերթ այնքան մեղմ, կարծես հավի նորելուկ ճուտեր էին ավազում հեռվում, մերթ համա-

տարած և ուժգին, թվում էր հանկարծակի անձրև և ծեծում նրանց, և այդ պատճառով խոսակցության ձայնը մերթ լսվում էր պարզ, մերթ կտրվում։ Հետաքրքրությունն ընդհատեց կրկին հարևանի շունը, որ հաչից մի յերկու բերան ու լռեց։ Ապա կրկին խոսց տվից։

— Ինչ ասում եմ՝ գնանք։

— Ախր ուզում եմ՝ չեմ կարող,— պատասխանեց բարակ ձայնը։

— Խի՞ չես կարող։

— Դուռը փակ է ախը...

— Դա հիչ։ Ուզենամ ես սանթին կկոտրեմ... Դու են ասա, կատաբ, գալիս ես...

Այս խոսքերը կիսատ մնացին։ Հանկարծ հոբելյարս այնպես զոռաց, որ յես ծուլ յեղա տեղիս մեջ։

— Շուն...

Թռավ տախտից, մի ակնթարթում վերցրեց բարձի տակ պրած պաշտոնը ու պլշերվա շորերով իջավ, վոչ թե իջավ, այլ նետվեց ուղղակի սանդուղներից դուռ։

Յես նույնպես վեր թռա։ Հազիվ վոտս հատակին եյի դրել—պատշգամի տակ լսվեց մի ճիչ, ինչ-որ բանի թխկոց և ապա՝ վոտների թփթփոց։ Ելի վախից, չկարողացա շարժվել. լսում էի չորացավ հանկարծ և այն տեսա միայն, թե ինչպես պատշգամի տակից յերկու սոված վագեցին դեպի պարտեզ ու չքացան ծառերի մեջ. կապած շունը հաչից ու հախտուն վրա պրծավ փախչողներին... Այնուհետև թե ինչ եր կատարվում,—վոչ տեսնում եյի, վոչ լսում. շունը հաջոցով լցրել էր պարտեզը... Վորոշ ժամանակ հետո

սակայն, ծառերի տակից դուրս չնկավ մինչ և շարժվեց դեպի տունն։ Այժմ, վորովհետև աչքերս սովորել էին մթան, տեսողին ճանաչեցի. հորեղբայրս էր՝ սպիտակ շորերով, դաշույնը ձեռին։ Բայց նա, փոխանակ պատշգամ բարձրանալու, մերկ դաշույնը ձեռին, նորից պատշգամի տակ մտավ։

— Անամոթ։ Անզգամ,— լսվեց նրա խուլ ձայնը։ — Թուռ...

Նա խոսում էր Կատարի հետ, բայց վորովհետև հուզմունից խոսք չէր գտնում ասելու, թքում էր շարունակ։

Ցես դողում էի—հանկարծ չսպանի Կատարին. ինչ սարսափելի բան կլիներ։ Ցիվ ուրախանում էի, վոր դեռ թքում և ու կզկտուր խոսքեր ասում։

— Թուռ, թուռ նամուսիդ,—կրկնում էր նա։—Դու պիշիրները... Դու ուզում ես փախչել Թուրքի հետ... Թուռ...

Նրա ասածներից չես այն հասկացա, վոր Ալին չեկել էր Կատարին փախցնելու, բայց հորեղբոր վրա հասնելով՝ չէր կարողացել։

Առավոտը Կատարին գտանք ուշաթափ ընկած։

Դրանից հետո մի քանի որ մեր տունն էր գնում-գալիս տատիս Շողերը։ Ցերևում էր, ապա մոնում Կատարի մոտ ու մնում ժամերով։ Չգիտեի իսկապես ինչի՞ էր գալիս, բայց հետո գյուղի չերեխաներից իմացա, վոր Կատարը չերեխա չի բերել. վոմանց ասելով՝ մեռած. մյուսների ասելով՝ կենդանի չի չեղել, բայց տատիները, հորեղբորս պահանջով—կացնով սպանել և ու հենց նկուղում թաղել։

Այդ որվանից չես ստրատիում էլի նկուղ մտնելուց. ավելի շատ խուսափում էի նրանից, վորովհետև նրա մոտով անցնելիս՝ ինձ այնպես էր թվում, թե սպանված չերեխան պիտի ճչա ու վեր կենա հողի տակից...

Բայց պիշիրվա դեպքը միայն ըրանով չվերջացավ։ Այդ մասին հորեղբայրս հայտնեց պրիստավին և խընդրեց (այդպես ասաց նա տանը և տատից, վոր մարդու բան չասենք), վոր մերոնց և մեր տունը աղաղռվեն Ալու հարձակումներից։ Զգիտեմ ինչ էին հայտնել և ինչպես, բայց գյուղում, ըրանից հետո, պատմում էին (չեղել էին և տեսնողները), վոր ստրաժնիկները պատում էին անտառներում—Ալուն բռնելու։

Ամիսներ անցան, նրան բռնել չկարողացան։ Վոմանք ասում էին՝ սպանել են արդեն, վոմանք էլ թե՝ փախել է...

Վերն էր ճիշտ—դժվար էր իմանալ։

VII

Անցան տարիներ. ծերերը մեռան, փոքրերը մեծացան... Մեռավ հորեղբայրս, մեռավ մայրս... Մի խոսքով՝ շատ բան փոխվեց գյուղում. չես էլ մեծացա դարձա քսան տարեկան։ Հայ-թուրքական կռվին՝ յուրիշների հետ ինձ էս տարան կռիվ։

Ցերկար չեմ նկարագրի այդ կռիվները, վոր չեղան երզրումից մինչև Լոռի. միայն այնքանը կասեմ, վոր 2-րդ հետևակ գունդը, ուր ծառայում էի չես, թևև կիսից ավելին կորցրած ու քայքայված, բայց կռվում էր առանց հանգիստ առնելու։ Նշանավոր էր մեր կռիվը

Ա-ի մոտ։ Յերկու որ մինք կամ մղեցինք թուրքերի դրոշը, կերդուդ որը, սակայն, նրանց թիկնանց շարժումով մեր գնդի մի մասը գերի ընկավ։ Դրանց հետ եմ և կամ։ Զինաթափեցին մեզ, ինչպես կարգն է, և տարան գեղի իրենց բանակատեղը։ Ճանապարհը զբաղում եր անտառով, իմ հայրենի անտառներով, որոնց ամեն մի ծառը, արահետն ու կածանը մանկուց ծանոթ եր ինձ։ Մեզ ուղեկցում էին հրացանով պինված ասկերներ։ Յերբ հասանք անտառի խորքը—մերոնցից մեկն ասաց ակրոտիյամբ.

— Մի մի կաթիլ ջուր ըլեր...

—Մեքիչ գենը աղբյուր կա,—հուսադրեցի կամ։—Յեթե թողնեն, կխմենք...

Մեր հայերեն խոսակցությունը լսեց մի հատ կավոր թուրք, վոր քայլում եր մեր կողքին, ու զարձավ ինձ։

—Դու վորտեղացի՞ կամ, վոր ես տեղերքը ճանաչում ես։

— Մոտիկ գեղից։

Նրա գեմքը մազմազոտ եր ու արևից ոսկացած, աչքի մեկը ցավագար ու կուչ կեցած, իսկ ականջի տակ մի յերկար սպի կար, ըստ յերևույթին զարշուրյի հետք։ Այդ բոլորը նրան տալիս էր մռայլ, ահարկու տեսք։ Նա, կուչ կեցած աչքն ավելի խփելով, մյուսով ուշադիր նայեց ինձ. այնպես անհավոր եր այդ մի հատիկ աչքի նայվածքը, կարծես մեկը պարույր եր պատում սրտիս մեջ. մարմինս սարսուռ անցավ։

— Դու ուսմունցից ես,—հարցրեց նա հայերեն, բառերը պանդուխտ գրեթե վանկերով արտասանելով։

Յես ավի մեր անուն-ազգանունը։

— Հորոզբերդ սող ա,—վրա բերեց նա հանկարծ։

Ինչպես պարզ յերկնքից կայծակ սյաքի—զարմանքը պատեց ինձ, և զարմանքի հետ միասին մի լուրջ վախ ու հետու ուրախություն։ «Սա ձվ ե, վոր ճանաչում է հորիզբորս—հանկարծ նրան թշնամի գուրս կամ, գուցե, բարեկամ»,—անցավ մտքովս, ու պատասխանեցի, վոր հորեղբայրս մեռել և չորս տարի առաջ։

— Կնիկը՞, —շարունակեց նա իր հարց ու վորձը։

— Նա սաղ ա։

Թուրքը գլուխը կախեց, ու մի ան ժամանակ լուռ քայլում եր իմ կողքից։ Հետո հանկարծ գլուխը բարձրացրեց։

— Անգաջ արա, —ասաց կամաց։—Ասում եիր ջրի տեղ գիտե՞ս։

— Գիտեմ։

— Վորտե՞ղ ա։

Յուզյ ավի աղբյուրի ուղղությունը։

Նա թես բռնեց ու դուս քաշեց ընկերներիս միջից։ Ապա հայտնեց մյուս ասկերներին, վոր ինքը ասում ծարավ ե և յես աղբյուրի տեղ գիտեմ, գիտե յուզյ տամ իրեն։ Յերկյուղը պատեց ինձ. ինչու՞ յես ասում ինձ. ծարա՞վ և իրոք, թե վատ մտադրություն ունի։ Զլինի՞ միտոց թշնամի կամ և ուզում է վրեժխնդիրը լինել ինձնից։ Աղբյուրը ընկերներիս հետ վտանգավոր խոսքերը—պայմանական չեն, և աղբյուրը պատրվակ չի արդյոք։ Աղբյուրը բալորիս մեկ-մեկ չեն սպանելու այսպես։ Մի վայրկյանում անթիվ յենթադրություններ. մեկը մյուսից մռայլ ու ահարեկող...

Ցերը, - նա հրացանը պատրաստ բռնած, իսկ չես անդրնը,—գերիների խմբից բաժանվելով մոտենք արահետը, թուրքը նորից խոսք բացեց հորեղբոր ու նրա հինգ մասին, իսկ ցերը արահետով գնացինք բավական տեղ ու մտանք ծառերի խուռթյան մեջ, նա հարցրեց.

—Իսկ կատարը՞... սաղ ա...

«Սա ոչ է, վոր կատարին էլ է ճանաչում»։

— Դու նրանց վճրտեցից ես ճանաչում,—ասրա սրի չես։

— Ցես նրանց տանը... նոքար եմ եղել... Ալին եմ...

Ու մեյն դարավոր ծառերը վեր չեզան, թե ինչ կատարվեց հետո։

Ալին, հրացանը նետած, վախթվել է ինձ ու համբուրում է. «Ա՛յ, Սենո ջան...Վայ, Սենո ջան... Եդ ինչ մեծացել ես, ա...»։ Ու արցունքները վազում են աչքից վազած ցերեսով և կորչում մերուքի մազերի մեջ. գեմքը դարձել է բարի ու խոստուն։ Աչքն ու սրին էլ սարսափելի չեն թվում։

— Հորդրեղդ վատ վարվեց ինձ հետ, Սենո, շատ վատ։ Բայց ափսոս էլի, վոր մեռել է։ Մերդ էլ ափսոց. լավ կնիկ եր։

Ապա խոսեց կատարի մասին. ամաչելով պատմեց իր ցերը, վերջը հավատացած, ցերևի, վոր ցես բան չգիտեմ։ Հարցրեց, թե ինչպես է ապրում կատարը, ոչ է պահում նրան։

Լսելով կյատարը լավ է և ապրում է մեզ ցեղրայրներիս մոտ—նա գլուխն իջեցրեց, և արցունքի ցերկու կաթիլ գողացին նրա չխուղած մերուքի վրա ու ընկան ցած։

Մի ամ ժամանակ ցերկուսս էլ լուռ եյինք—խոսք չեյինք գտնում ասելու։ Առաջին խոսողը գարձյալ Ալին յեղավ։ Նա կանգնավ, հրացանը վերցրեց և այն խոսքերը, վոր ասաց, ինձ թվաց յերազում եմ լսում։

— Դե, Սենո ջան, եղ մի կաղնի. գնա... փախի...

Ու ցույց տվեց, թե ինչպես փախչեմ-հեռանամ, վոր փորձանքի չհանդիպեմ։ Կարող եմ անտառով բարձրանալ սարի գլուխը և այնտեղից իմնել մեր գեղը, իսկ նա ամեն հրացան կարձակի, թե փախա...

— Գնա. կատարին էլ կասես՝ Ալին... շատ բարով ա անում...

Ասաց և ծոցն ու գրպանները վորոնեց։ Ցերկար վորոնելուց հետո՝ հանեց մի դանակ և մեկնեց ինձ, վոր կատարին տամ։

— Ասա՝ Ալին ասեց... Դե, գնա, Սենո ջան...

Ցերը թաղնվեցի խիտ ծառերի ու թփերի մեջ, յեսևից լսեցի հրացանի կրակոց. մեկ, ցերկու, ցերեք... անտառը լցվեց արձագանգի ղոմուկով, ապա ամեն ինչ լռեց։

Ցես վազում էլի խիտ, անթափանցելի անտառով. ընկնում էլի, վեր կենում, ու մտցնում մերշ գեպի վեր, գեպի վեր... Շուրջս վոչինչ չեյի գգում. լսում էլի սրտիս զարկը միայն և արյան հոսանքը քներակներիս մեջ...

Ահա ինչպես ազատվեցի...

Այս բոլորից հետո՝ յես հաճախ մտածում եմ մարդկային սրտի մասին։

Ո՞վ կարող է ասել ինչ բան է մարդկային սիրտը... սերը...

Դուք հարցնում եք կատարի մասին։

Յերբ Ալու նվերը տվի նրան — կատարը յերկար խոսք չեր գտնում ասելու։ Հետո միայն նրա աչքերը խոնավացան և նա, նվերը ձեռին սեղմելով, լաց յեղավ անխոս...

Մինչև այսօր էլ կատարն այդ նվերը պահում է իր շորերի մեջ։

Յեվ այդ մասին չես պիտի միայն ու լինքը։

1919.



ՅԱՆԿ

	էջ
ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆ	5
ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ	24
ԱՆՏԱՌՈՒՄ	39
ՇԱՔԱՐԱՄԱՆ	76
ՊԱՊՆ ՈՒ ԹՈՌԸ	83
ԲԱՐԵԿԱՄՆԵՐ	91
ՄԱՅՔԵՐԻ ՎՐԱ	97
ՈՐԻՈՐԴ ՄԱՐԻԱՄԸ	105
ՍՈՒՏԸ	115
ՀՐԵՇՏԱԿԸ	120
ԿԱՏԱԿ	130
ՋԵՐՄԱՋԱՓԸ	145
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆ	158
ՎԵՐԱԿԱՅՈՒՆ	164
ԿԱՄԿԱՆԴ	173
ԾԵՐ ՍՈՍԻՆ	181
ՋՄՌԱՆ ԳԻՇԵՐ	190
ՃԱՇ	198
ՎՃՌԱԿԱՆ ՄԱՐԴԸ	207
ՓՈՐՁԱՆՔ	214
ԿԱՄԱՅԻ ԽՈՍՔԵՐ	221
ԾԵԾԻ ՈԳՈՒՏԸ	226
ԻՆՃԵՆԵՐԻ ՄԱՅՐԸ	231
ԿԱՏՈՒՆԵՐ	245
ԺԱՄԱԿՈՋ ԱՆՏՈՆԸ	264
ՌՈՄԱՆՏԻԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	287

ՀՀ Ազգային գրադարան
NL0333158

30083